



**CR
RC**



Այս հետազոտությունը իրականացվել է Եվրասիա հիմնադրամի ծրագիր հանդիսացող և Նյու Յորքի Կարնեգի Կորպորացիայի կողմից ֆինանսավորվող Հետազոտական Ռեսուրսների Կովկասյան Կենտրոններ (ՀՌԿԿ) - Հայաստան կենտրոնի Հետազոտական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Սոցիոլոգիական հետազոտության վերլուծություն

“Հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաները Հայաստանի Հանրապետությունում”

Ներկայացված է՝ ՀՌԿԿ-Հայաստան

Ներկայացված է ծրագրի ղեկավար,
Ս. Գ. Թ.՝ Մասիս Պողոյանի կողմից
Email: mpoghoyan@yahoo.com,
Հեռ. 091 302931

Դրամաշնորհ # C05-7115

Երևան, Հայաստան, 2006-02-10

Շնորհակալական խոսք

ՀՀ-ում հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների ուսումնասիրությունը ենթադրում է լուրջ դժվարություններ ոչ միայն թեմայի գիտական այլև քաղաքական նշանակության պատճառով: Ունենալով պրոբլեմի ուսումնասիրության ժամանակ վերոնշյալ դժվարությունների հաղթահարման փորձը՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ծրագրի իրականացմանը նպաստ ունեցած փորձագետներին, ՀՌԿԿ-Հայաստանի ղեկավար՝ Հ. Մանասյանին, ինչպես նաև կազմակերպության և սույն հետազոտական ծրագրի աշխատակազմի անդամներին, որոնք բարեխղճորեն կատարեցին իրենց աշխատանքը:

Աշխատանքի համառոտ շարադրանքը

Աշխատանքը պարունակում է ՀՀ-ում կիրառվող բոլոր հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների սոցիոլոգիական, միջառարկայական վերլուծությունը: Այն հետաքրքրություն է ներկայացնում քաղաքական սոցիոլոգիայի, կազմակերպությունների և կառավարման սոցիոլոգիայի, իրավական սոցիոլոգիայի և միկրոսոցիոլոգիայի տեսանկյունից: Բովանդակության հերթական բաղադրիչներն են ադմինիստրատիվ ռեսուրսի, ճնշումների, ընտրաձայների գնման, զուգակցված, կոգնիտիվ, հանձնաժողովների աշխատանքների շահադիտական կառավարման, կարծիքի գանգվածային կարգավորման, ընտրարդյունքների իրացման և մակրոմակարդակի բազում տեխնոլոգիաների մանրակրկիտ նկարագրությունը և սոցիոլոգիական վերլուծությունը: Վերլուծությունում մեծ տեղ է հատկացված տեխնոլոգիաների տարրերի փոխկապակցվածության շարադրմանը, որոնց մի մասը իրենցից նույնպես տեխնոլոգիաներ են ներկայացնում, մյուս մասը դրանց վրա ազդող գործոններ: Շարադրման ժամանակ առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նյութի մատչելիության և կիրառելիության, էմպիրիկ նյութից բերված օրինակների և մեջբերումների, ինչպես նաև տեխնոլոգիաների դրսևորումների վրա: Տեխնոլոգիաների և դրանց վրա ազդող գործոնների մանրակրկիտ վերլուծությունից հետո ներկայացված են դրանց դեմ պայքարի հնարավոր եղանակները, որոնք բաժանված են չորս հիմնական խմբերի՝ օրենսդրական բարեփոխումներ, ինստիտուցիոնալ ինժեներիա, իրազեկության աշխատանքներ և քաղաքական լուծումներ: Աշխատանքն ամբողջացված է վերջում ներկայացված եզրակացություններով:

Հենվելով կատարված վերլուծության վրա մշակվել են նաև քարոզչական նյութեր, որոնք նախնականում կարող են հրատարակվել որպես բրոշյուր, իսկ հետագայում սոցիալական հեռուստա և ռադիո գովազդով, ասեկոսների և այլ ցանցային տեխնոլոգիաներով տարածելի նյութերի մի մասը կազմել: Աշխատանքի արդյունքում մշակվել է նաև հասարակության ընտրական իրազեկության բարձրացմանն ուղղված նյութեր, որոնք կարող են մեծ քանակով բազմացվել և տարածվել, ինչպես նաև օգտագործվել իրազեկման դասընթացների ժամանակ:

Աշխատանքում արտահայտված տեսակետները հեղինակին են և կարող են չհամընկնել աջակից կազմակերպությունների դիրքորոշումներին:

Բովանդակություն

| | |
|--|-----------|
| Նախաբան | 6 |
| Հնտագոտության մեթոդաբանությունը | 8 |
| 1 Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը..... | 11 |
| 1.1 Ադմինիստրացիայի «յուրային» մասը և ադմինիստրատիվ քարոզչությունը | 13 |
| 1.2 Ընտրողների «յուրայնացումը» բարեգործության շահադիտական իմիտացիայով 15 | |
| 1.3 Հովանավորչության իրականացում | 16 |
| 2 Ճնշումները ընտրաինստիտուտի սուբյեկտների վրա..... | 19 |
| 2.1 Ադմինիստրատիվ ճնշումը ընտրագործընթացում | 19 |
| 2.2 Ճնշումը մասնագիտական գործառնությունների շահարկմամբ: | 20 |
| 2.3 Կրիմինալի կիրառումը «համոզելու» համար | 20 |
| 2.4 Հոգեբանական ճնշումը ընտրատեղամասում | 21 |
| 2.5 Կոմպրոմատային տեխնոլոգիաները | 22 |
| 2.6 Ճնշումների օգտագործմանը նպաստող գործոնները..... | 24 |
| 2.7 Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման և ադմինիստրատիվ ճնշումների դեմ պայքարի որոշ առանձնահատկություններ | 25 |
| 3 Ընտրաձայների գնում ընտրողներից | 27 |
| 3.1 Ընտրողների կաշառումը փողով | 28 |
| 3.2 Ընտրողների կաշառումը նախօրոք..... | 28 |
| 3.3 Ընտրողների կաշառումը տեղում | 29 |
| 3.4 Ընտրողների այլընտրանքային կաշառման մեթոդները | 30 |
| 3.5 Ընտրողների ցուցակների կազմումը, գումարի չափը | 31 |
| 4 Զուգակցված տեխնոլոգիաներ..... | 32 |
| 4.1 Կլիենտելական կապերը մեծամասնական և համամասնական թեկնածուների միջև 32 | |
| 4.2 Էլեկտրատի սոցիալական վիճակի չարաշահումը..... | 33 |
| 4.3 Ընտրությունների ապաքաղաքականացումը..... | 34 |
| 4.4 «Կարուսել»..... | 36 |
| 5 Էլեկտրատի վարքի կարգավորման տեխնոլոգիաների հետ զուգացվող կոգնիտիվ տեխնոլոգիաներ..... | 37 |
| 5.1 Ընտրությունների կանխորոշվածության և իրենց ձայնի աննշանության համոզմունքի առաջացումը ընտրողի մոտ..... | 37 |
| 5.2 Կաշառման էության խեղաթյուրումը..... | 38 |
| 5.3 Համոզվածի պարտավորեցում | 39 |
| 5.4 Ընտրության գաղտնիության վերաբերյալ թերահավատությունը և գաղտնիության իրական խախտումները | 40 |
| 5.5 Անպաշտպանության զգացման շահարկում | 41 |
| 5.6 Ընտրակաշառման նորմավորումը..... | 42 |
| 6 Ընտրական հանձնաժողովների շահադիտական կառավարումը..... | 44 |
| 6.1 «Հանձնաժողովի յուրայնացում». հանձնաժողովի ձևավորման կարգի շահարկմամբ | 44 |
| 6.2 «Հանձնաժողովի յուրայնացում». հանձնաժողովների և վստահված անձանց կաշառումամբ | 46 |
| 6.3 Մեքենայություններ հանձնաժողովի և վստահված անձանց գործելակարգի շահարկմամբ | 47 |
| 6.4 Պատասխանատվության վերացականությունը..... | 48 |
| 6.5 Հանձնաժողովի պրոֆեսիանալ թերորակություն | 52 |
| 6.6 Դիտորդական խմբերի լոյալացում | 53 |
| 6.7 Ընտրաձայների սխալ հաշվարկ | 54 |

| | | |
|-----------|---|-----------|
| 6.8 | Մեքենայություններ ընտրացուցակի և ընտրողների հետ..... | 54 |
| 6.9 | «Դավադիր պայմանավորվածություն». ձայների բաժանումը հանձնաժողովի անդամների միջև կամ ցանկալի թվի նկարումը վերջում | 56 |
| 6.10 | Նպատակաուղղված թերացումներ ընտրությունների նախապատրաստական շրջանում..... | 56 |
| 6.11 | Քվեների հաշվման գործընթացի շահադիտական հայեցողական լուսաբանում . | 57 |
| 6.12 | Տեղամասային ընտրությունների անվավերացման ակցիաներ | 58 |
| 7 | Նասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաներ | 59 |
| 7.1 | Տեխնոլոգիաների էությունը | 59 |
| 7.2 | Կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաների դրսևորումը նախընտրական քարոզչության ժամանակ | 60 |
| 7.3 | Կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաների դրսևորումները ընտրությունների ընթացքի լուսաբանման և հետընտրական քարոզչության ժամանակ 61 | |
| 7.4 | Պսևդոսցիտոլոգիական հարցումների զանգվածային հրապարակում..... | 62 |
| 7.5 | Լրատվամիջոցների անհավասար մատչելիություն բոլոր քաղաքական ուժերի համար | 62 |
| 7.6 | Լրատվամիջոցների շահադիտական կողմնորոշումը..... | 63 |
| 7.7 | Անպատասխանատվությունը..... | 64 |
| 8 | Ընտրության արդյունքների հրացում | 65 |
| 8.1 | Նակամիտինգային տեխնոլոգիաներ..... | 65 |
| 8.2 | Կեղծում ենք մենք մեզ. հետընտրական բողոքի ակցիաների կանխում՝ կեղծիքներին հնարավորին չափ շատ մարդ ներառելով | 66 |
| 9 | Մակրոտեխնոլոգիաներ | 68 |
| 9.1 | Սցենարներ..... | 68 |
| 9.2 | Դեմոկրատականություն չապահովող ընտրական ինստիտուտի հայեցակարգ... | 70 |
| 9.3 | Վերալետական կառույցների իշխանության դեմոկրատականության հիմնահարցը ՀՀ-ում 71 | |
| 10 | Ընդհանուր գործոններ | 72 |
| 10.1 | Իշխանության երեք թևերի փոխադարձ վերահսկողության և անկախության պրոբլեմը..... | 72 |
| 10.2 | Քաղաքական դաշտի չկայացվածությունը և քաղաքական ուժերի հակվածությունները | 73 |
| 10.3 | Քաղաքական կամքի բացակայություն՝ վերացնելու հակադեմոկրատական տեխնոլոգիաների կիրառումը..... | 75 |
| 11 | Նակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ պայքարի հնարավոր եղանակները ՀՀ-ում | 77 |
| 11.1 | Օրենսդրական փոփոխություններ..... | 78 |
| 11.1.1 | Դատական իշխանությունների կողմից իշխանության մյուս թևերի գործունեության վերահսկողությունը..... | 78 |
| 11.1.2 | Ընտրական հանձնաժողովների կազմման եղանակի փոփոխություն..... | 79 |
| 11.1.3 | Մեծամասնական տեղերի նվազեցմամբ ապաքաղաքականների թվի նվազեցում | 81 |
| 11.1.4 | Ընտրական հանձնաժողովների պրոֆեսիոնալ մասնագիտական գործունեության վրա հենվող ինստիտուտի ստեղծում | 82 |
| 11.1.5 | Պայքարը այլընտրանքային երեսփոխանության դեմ..... | 83 |
| 11.2 | Ինստիտուցիոնալ վերակառուցման միկրոսցիտոլոգիական մոտեցում | 85 |
| 11.3 | Իրազեկության և նախապատրաստական աշխատանքներ ընտրատուբյեկտների հետ | 87 |
| 11.4 | Աշխատանք քաղաքական ուժերի հետ. քաղաքական լուծումներ..... | 89 |
| | Եզրակացություններ..... | 90 |

Նախաբան

Քաղաքական ընտրությունների պրակտիկական բոլոր նրկրներում ցույց է տվել, որ բոլոր թեկնածուները փորձում են հաղթել գրեթե ամեն գնով: Տարբեր հասարակություններում ընտրական օրենսգրքերը թույլ են տալիս տարբեր չափով կանխել անթույլատրելի մեթոդների օգտագործումը: Մյուս կողմից ընտրական մշակույթները և մի շարք այլ գործոններ դժվարեցնում են նմանատիպ մեթոդների կիրառումը ընտրական օրենքների չարաշահմամբ: Արդյունքում, թվում է, թե ընտրությունների դեմոկրատականությունն ապահովված է օրենսդրական և սոցիոմշակութային երաշխիքներով:

Սակայն քաղաքական ուժերի իշխանության տենչը «անչափ» է: Միևնույն ժամանակ, օրենսդրությունները կատարյալ չեն, իսկ սոցիոմշակութային փաստերը կարող են ծառայել ոչ միայն անցանկալի մեթոդներին դեմ, այլև կիրառվել դրանց օգտին: Անհրաժեշտ է ուղղակի մանրակրկիտ պլանավորել համապատասխան քայլեր, գտնել դրանց իրականացման եղանակները, լուծել դրանց իրականացմանը խոչընդոտող պրոբլեմները տարբեր ոլորտներում, ընտրել դրանց ճիշտ հաջորդականությունը և ճիշտ գույակցել միմյանց հետ: **Այսինքն՝ կիրառել տեխնոլոգիա:** Եվ եթե ցանկությունը մեծ է, իսկ հնարավորությունը բավարար, արդյունքը գրեթե ապահովված է:

Քաղաքական ընտրությունների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ ընտրահինաստիտուտի գործառնության ժամանակ գործում են տեխնոլոգիաներ, որոնք էականորեն ձախողում են դեմոկրատական ընտրությունները և դեմոկրատիան ընդհանրապես: Այդ տեխնոլոգիաները, որոնք կարելի է բնութագրել որպես հակադեմոկրատական, առկա են նաև ՀՀ-ում և հենվում են ընտրությունների սոցիալական ինստիտուտի առանձնահատկությունների՝ օրենսդրության թերությունների, ընտրական մշակույթի, հասարակության մեթափիտեի, քաղաքական ուժերի ունեցած դիրքորոշումների, քաղաքական կամքի և որոշ այլ գործոնների վրա: Խոսելով այդ տեխնոլոգիաների մասին այսուհետ ինկատի կունենանք դրանց հայաստանյան տարբերակները:

Սույն հետազոտության ընթացքում պարզվել են բազմապիսի տեխնոլոգիաներ, որոնք իրենց հերթին հարուստ են տարատեսակներով: Յուրաքանչյուր տեխնոլոգիա ներառում է որոշակի տարրեր կամ գործոններ որոնք նրբեմն իրենք նույնպես տեխնոլոգիաներ են ներկայացնում իրենցից, որոնք շահարկվում կամ օգտագործվում են տեխնոլոգիաների իրագործման ժամանակ, ինչ նպատակով էլ շահագրգիռ ուժերի կողմից խթանվում է այդպիսի գործոնների առկայությունը: Դրանք հատկապես կիրառվում են պայքարի եղանակների մշակման ժամանակ:

Պայքարի եղանակների նկարագրությունը հարուստ է բազմապիսի գաղափարներով, որոնք առաջացել են ինչպես հետազոտության տվյալների վերլուծության, այնպես էլ ինֆորմացիայի ստացման գործընթացում: Աշխատանքում այդ գաղափարները հասունացվել են տարբեր չափով: Աշխատանքը առավել մեծ արդյունավետություն կունենա, եթե այդ գաղափարները վերածվեն կոնկրետ ծրագրերի, որոնց իրականացումը էականորեն կարող է կանխել հակադեմոկրատական տեխնոլոգիաների զարգացումը:

Պահպանելու համար աշխատանքի անաչառության, հավաստիության աստիճանը և ուրույն կիրառական արժեքը, հնարավորինս խուսափել ենք մեծամասամբ ոչ հայաստանյան փորձի վրա շարադրված տեսական գրականության մեջբերումներից, որոնք ՀՀ իրականությունն արտացոլելու համար քիչ կիրառելի են և վերլուծությունը հնարավորինս կատարվել է իրականությունից վերցված էմպիրիկ նյութի հիման վրա: Հակադեմոկրատական տեխնոլոգիաների ՀՀ իրականությունն արտացոլող էմպիրիկ տվյալների վրա հենվող աշխատանքների բացակայությունը սույն աշխատանքը դարձնում է առաջինը: Կարծում ենք այն կարող է հիմք հանդիսանալ հայաստանյան իրականության համար կիրառելի տեսական մոդելների կառուցման համար և խուսափել օտարերկրյա

մոդելների անարդյունավետ կիրառություններից, որոնք պրակտիկայում հաճախ հանգեցնում են ձախողման:

Աշխատանքը հենվում է որակական հետազոտության արդյունքների վրա և նպատակ չունի գնահատել տեխնոլոգիաների էականությունը հայաստանյան ընտրությունների արդյունքների համար, ինչպես նաև գտնել դրանց կիրառման մեղավորներ: Աշխատանքը բացարձակապես չեզոք է քաղաքական շահերի տեսանկյունից և հետապնդում է գուտ գիտական նպատակներ, միևնույն ժամանակ հավակնում է լուրջ ներդրում ունենալ **քաղաքացիական հասարակության և դեմոկրատիայի հայկական մոդելի** զարգացմանը ինչպես տեսությունում, այնպես էլ ՀՀ պրակտիկայում:

Վերջում ցանկանում եմ իմ խորին շնորհակալությունը հայտնել ծրագրի բոլոր փորձագետներին արժեքավոր համագործակցության, ինչպես նաև ծրագրի աշխատակազմին տքնաջան և պրոֆեսիոնալ աշխատանքի համար:

Հետազոտության մեթոդաբանությունը

Դեմոկրատիայի, որպես գաղափարի, հայեցակարգի և իրականության կայացման դարավոր ճանապարհին ձևավորված մեկնաբանություններից առավել կիրառելիև ստացվել է ներկայացուցչական դեմոկրատիան: Ներկայացուցչական դեմոկրատիայի հիմնական հայտանիշներն են՝

1. Իշխանության ձևավորումը ժողովրդի կողմից, վերջինիս կամքի՝ քաղաքական, իրավական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական և այլ առումներով ազատ դրսևորման գործընթացում:
2. Ներկայացուցչականության սկզբունքի իրական գործառնությունը՝ ընտրազանգվածի ներկայացուցիչների և նրանց կողմից ընտրազանգվածի շահերի իրական համամասնություններով ներկայացվածության առումով:

Վերոնշյալ հիմնաբարային պայմանների ապահովման մեխանիզմը ժամանակակից հասարակություններում ենթադրաբար պետք է լինի հասարակության սոցիոմշակութային, տնտեսական և քաղաքական համակարգերի հետ ադապտացված և հղկված օժանդակությունը: Սակայն պրակտիկան ցույց է տալիս, որ այդ հղկվածությունը և ադապտացիան զարգացման այն աստիճանին չեն հասել, որպեսզի ապահովվի դեմոկրատիայի սկզբնական գաղափարի իրականացումը: Իրավական, քաղաքական, սոցիոմշակութային և տնտեսական համակարգերի փոխադարձ թերհղկվածությունը գրեթե բոլոր հասարակությունների ընտրական պրակտիկայում շահարկվում է ամեն գնով իշխանության ձգտող ընտրասուբյեկտների կողմից՝ ավելի հեշտացնելու իշխանության նվաճման գործընթացը իրենց համար: Կախված այդ հղկվածության աստիճանից, առաջանում են ընտրահիստիտուտի թերգործառնություններ և տարբեր չափի շեղումներ դեմոկրատիայի հայեցակարգից:

Եղանակները, որոնցով իրականացվում է ընտրահիստիտուտի թերությունների ծառայեցումը իշխանության նվաճման գործընթացին և որոնք հակասում են դեմոկրատականության հայեցակարգին իրենց կատարելագործված, արդյունավետ վիճակն են գտնում **հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաներում**: Վերջիններիս վնասակարությունը դեմոկրատական արժեքների համար ժամանակակից հասարակությունում ընդհանրապես և ՀՀ-ում մասնավորապես, հրամայական են դարձնում դրանց վերլուծությունը, դրանց դեմ պայքարի ուղիների մշակումն ու իրականացումը: Այդ հրամայականի կատարման ուղղությամբ լուրջ քայլեր անելու նպատակով էլ իրականացվում է սույն հետազոտությունը:

Հետազոտության նպատակն է նկարագրել ՀՀ-ի ընտրական պրակտիկայում կիրառվող հակադեմոկրատական տեխնոլոգիաները և դրանց դրսևորումները, ապահովել համակարգված ինֆորմացիա դեմոկրատական ընտրություններին և քաղաքական պայքարում ժողովրդավարությանը խոչընդոտող «տեխնոլոգիաների» վերացման ծրագրերի մշակման համար և առաջարկել տեխնոլոգիաների կանխման եղանակներ:

Այդ նպատակով լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. Տրվել է ՀՀ-ում նախորդ ընտրությունների ժամանակ կիրառված քաղաքական տեխնոլոգիաների մանրամասն վերլուծությունը և դրանցից յուրաքանչյուրի գնահատականը ժողովրդավարությանը խանգարելու տեսանկյունից: Այս խնդրի իրականացման ժամանակ հիմք է ընդունվում դեմոկրատականության երկու հիմնական չափանիշներին տեխնոլոգիաների համապատասխանությունը: Տեխնոլոգիաների բացահայտման ժամանակ, ուշադրություն է դարձվել հետևյալ նախնական հնարավոր տեխնոլոգիաների խմբերի վրա՝ ճշգրտելով դրանք և վեր հանելով տեխնոլոգիաների ուրիշ խմբեր:

- 1.1 Ընտրական հանձնաժողովների գործառնությանն ուղղված տեխնոլոգիաներ
- 1.2 Հասարակական կարծիքի ձևավորմանն ուղղված տեխնոլոգիաներ
- 1.3 Ընտրասուբյեկտների մոտիվացմանն ուղղված տեխնոլոգիաներ
- 1.4 Օրենսդրության շահարկման վրա հենվող տեխնոլոգիաներ

- 1.5 Ընտրությունների սոցիալական ինստիտուտի հայաստանյան առանձնահատկությունների վրա հենվող խառը տեխնոլոգիաներ
2. Յուրաքանչյուր տեխնոլոգիայի նկարագրման ժամանակ շեշտադրվել են այն հիմնական գործոնները, որոնք նպաստում են տեխնոլոգիաների արդյունավետությանը: Տեխնոլոգիաների վրա ազդող գործոնների բացահայտման ժամանակ, ուշադրություն է հրավիրվել հետևյալ նախնական հնարավոր գործոնների վրա՝ ճշգրտելով դրանք և վեր հանելով այլ գործոններ:
- 2.1 Քաղաքական ուժերով պայմանավորված գործոններ
 - 2.2 Քաղաքացիների գիտակցությամբ պայմանավորված գործոններ
 - 2.3 Օրենսդրական դաշտով պայմանավորված գործոններ
 - 2.4 Աշխարհաքաղաքական և տարածաշրջանային փոփոխություններով պայմանավորված գործոններ
3. Առաջադրվել է քաղաքական պայքարում ժողովրդավարության համար առավել վնասակար տեխնոլոգիաների դեմ պայքարի եղանակներ՝ ուշադրություն դարձնելով դրանց առկայությանը նպաստող գործոնների վերացման և չեզոքացման վրա: Տեխնոլոգիաների տեխնոլոգիաների դեմ պայքարի ուղիների բացահայտման ժամանակ ուշադրություն է հրավիրվել հետևյալ նախնական հնարավոր ուղղությունների վրա՝ ճշգրտելով դրանք և վերհանելով այլ լուծման ուղղություններ:
- 3.1 Առաջարկել օրենսդրական դաշտում անհրաժեշտ փոփոխությունները
 - 3.2 Առաջադրել շահագրգիռ քաղաքական ուժերի հետ տարվելիք աշխատանքների հիմնական ուղղություններ
 - 3.3 Մշակել քաղաքացիների իրազեկության մեծացման և օրինական քաղաքական շահերի պաշտպանության ընդունելի ձևերի նկատմամբ ակտիվության բարձրացմանը նպաստող տեղեկատվական և խորհրդատվական նյութ
 - 3.4 Առաջադրել այն հետազոտական և կիրառական խնդիրները, որոնց հետագա լուծումը կբերեր պրոբլեմի առավել ամբողջական լուծմանը

Տեխնոլոգիաների բացահայտման ժամանակ տարբերակված ուշադրություն է դարձվել ընտրողների վարքի կարգավորման, հանձնաժողովների գործառնության կարգավորման և կարծիքի կամ հասարակական գիտակցության կարգավորման տեխնոլոգիաների վրա, որոնցից ընթացքում ածանցվել են այլ տեխնոլոգիաներ:

Հետազոտությունն իրականացվել է երեք հիմնական փուլերով, որոնցից յուրաքանչյուրում համապատասխանաբար իրականացվել են նախնական փորձագիտական հարցում, հարցում ֆոկուս խմբերի մեթոդով և եզրափակիչ փորձագիտական հարցում:

Հետախուզական փորձագիտական հարցումը նպատակ ունի նախնական ինֆորմացիա ստանալ նախկին ընտրությունների ժամանակ կիրառված տեխնոլոգիաների և դրանց արդյունավետության վրա ազդող գործոնների մասին հիմնական հետազոտության գործիքների և տակտիկայի մշակման նպատակով:

Այս փուլում իրականացվում է փորձագիտական հարցում ընտրություններում ներառված քաղաքական ուժերի կազմակերպիչ աշխատողների, քաղաքական գործիչների հետազոտողների և վերլուծաբանների հետ: Փորձագիտական հարցումը անց է կացվում՝ ապահովելով մինիմալ ներկայացուցչականություն բոլոր աչքի ընկնող քաղաքական ուժերից, ինչպես համամասնական, այնպես էլ մեծամասնական պատգամավորական, պրեզիդենտական և տեղական ընտրությունների ժամանակ կիրառված տեխնոլոգիաներին քաջատեղյակ մարդկանց շրջանում:

Փորձագետների ընտրությունը կատարվում է ձևակոյտի մեթոդով: Ձևակոյտի ժամանակ թեկնածուներին առաջարկվում է, որպես փորձագետներին ընտրության չափանիշ ընդունել նրանց քաջատեղյակությունը՝ ներկայացվող հարցաթերթի հարցերին պատասխանելու համար: Հաշվի առնելով այս ոլորտում նախկինում կատարված փորձագիտական խմբերի ձևավորման արդյունքները՝ նպատակահարմար է խմբի մեծությունը սահմանափակել 25-ով:

Փորձագիտական հարցումը անցկացվում է երկու հարցաթերթով՝ ստանդարտացված և ֆոկուսացված հարցաթերթերով: Ինֆորմացիայի պակասի պատճառով և հնարավորին չափ բազմաբնույթ ինֆորմացիայի ստացման նկատառումով նպատակահարմար է հիմնական հարցադրումների պատասխանները ստանալ ֆոկուսացված հարցազրույցի միջոցով:

Ֆոկուս խմբի մեթոդով հարցումը անցկացվում է նկարագրելու համար տեխնոլոգիաների դրսևորումները քաղաքացիների աչքերով, քաղաքացիների դիրքորոշումները այդ տեխնոլոգիաների նկատմամբ, ինչպես նաև այն գործոնները, որոնք դրդում են նրանց մասնակից լինել այդ տեխնոլոգիաներին կամ տրվել դրանց: Ֆոկուս խմբերի միջոցով նաև բացահայտվում են փորձագիտական հարցման ժամանակ նկարագրված երևույթների կոնկրետ դրսևորումները և մանրամասները: Այս եղանակով հնարավորություն ենք ստանում ճշգրտելու և ստուգելու փորձագիտական տվյալները՝ դիտարկելով դրանք այլ օբյեկտի տեսանկյունից: Մասնավորապես կազմվում են քաղաքացիների խմբեր և դաշտային ազիտատորների խմբեր՝ ձևավորված նախկին ընտրությունների ժամանակ այդ աշխատանքով զբաղված մարդկանցից:

Հիմնական փորձագիտական հարցումը ունի հետևյալ նպատակները՝

1. Հստակեցնել նախորդ հարցման տվյալների վերլուծությունից անհասկանալի մնացած հարցերը:
2. Ստանալ ֆոկուս խմբերից և փորձագիտական հարցումներից ստացված տվյալների մշակման և վերլուծման ժամանակ առաջացող հարցերի պատասխանները
3. Հարաբերակցված գնահատման տեխնիկայով փորձաքննության ենթարկել արված եզրակացությունները

Այս հարցման արդյունքում հստակեցվում են թիրախ խմբերի հետ աշխատանքների կոնկրետ եղանակները և սահմանները, նախապատրաստվում են վերջնական վերլուծությունների հիմքերը: Այս փուլի ժամանակ փորձագետների խումբը ներկայացվում է մինչև 8 հոգի: Ընտրությունը կատարվում է դեռևս նախնական հարցման վերջում ըստ հարցաթերթում արժարժվող հարցերին փորձագետների պատասխանելու իրազեկության և կարողության:

Դեկֆյան տեխնիկայի միջոցով ողջ նյութը անցել է բազմակի փորձաքննություն՝ ներառելով նոր առաջարկություններ, համալրումներ և շտկումներ: Այս առումով վերջնարդյունքը, ըստ էության, հնարավորինս ամբողջական և ինֆորմացիայով հարուստ է, ինչը նկատելի է ինչպես նկարագրության, այնպես էլ առաջարկվող լուծումների բազմապիսիությանը և բազմատեսակությանը: Վերջինս աշխատանքը դարձնում է արժեքավոր գաղափարական և տեղեկատվական հիմք հատկապես նոր ծրագրերի կազմման նպատակով օգտագործելու համար:

1 Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը

Ի տարբերություն այլ քաղաքական ուժերի, որոնք մասնակցում են ընտրություններին, այն քաղաքական ուժերը որ տիրապետում են ադմինիստրատիվ ռեսուրսի, ունեն փայլուն առավելություն ընտրություններում հաղթելու համար: **Ադմինիստրատիվ ռեսուրսը այն ռեսուրսն է, որ քաղաքական ուժը կարող է օգտագործել որոշակի պաշտոնի տիրապետելու, դրա լիազորությունները և փաստացի ի պաշտոնն ազդեցությունը օգտագործելու շնորհիվ:** Ադմինիստրատիվ ռեսուրս ասելով ինկատի ունենք կազմակերպությունների անձնակազմը՝ ղեկավարությունը և աշխատակազմը, դրանց տարածքները, ֆինանսական և տեխնիկական ռեսուրսները, հասարակությունում դրանց ունեցած ֆունկցիոնալ ընկալումները և իրական լիազորությունները: Այս ամենը լուրջ միջոցներ են իրենցից ներկայացնում և էական առավելություններ տալիս ադմինիստրատիվ ռեսուրսի տիրապետող քաղաքական ուժերի համար, որոնք ոչ միայն իշխանամետ ուժերն են: Ադմինիստրատիվ ռեսուրսը կարելի է բաժանել **պետականի և մասնավորի:** Այս երկու խմբերը ունեն էական տարբերություններ իրենց ընձեռած հնարավորությունների, կիրառելիության և արդյունավետության առումով: Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը ընտրական նպատակներով հանդիսանում է օրենքի խախտում և դեմոկրատական սկզբունքներից չի բխում, սակայն լայն կիրառում ունի շատ երկրներում, այդ թվում և Հայաստանում:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը առաջնային տեղ է զբաղեցնում դրանց տիրապետող քաղաքական ուժերի նախընտրական ռազմավարության ընտրության ժամանակ և շատ երկրներում հանդիսանում է համար առաջին ցանկալի տեխնոլոգիան հատկապես այն ուժերի համար, որոնք առավել ազդեցիկ ադմինիստրատիվ ռեսուրսի են տիրապետում: Նման հակվածությունը բացատրվում է այս եղանակի քիչ ծախսատարությամբ և մեծ արդյունավետությամբ՝ հատկապես պետական ադմինիստրատիվ ռեսուրսների պարագայում, քանի որ պետական ռեսուրսն ունի որոշ առավելություններ մասնավորի նկատմամբ: Այսինքն քաղաքական ուժերը ձգտելով քիչ ծախսեր կատարել, առաջին հերթին հնարավորության դեպքում աշխատում են օգտագործել ադմինիստրատիվ ռեսուրսը, որի չբավականեցման դեպքում միայն, որպես հավելյալ մեթոդներ օգտագործվում են այլ տեխնոլոգիաներ¹:

Պետական ադմինիստրատիվ ռեսուրսի ուժը նախ կայանում է ղեկավար անձնակազմի իշխանամետ լինելու և իշխանությունների հետ ընդհանուր շահեր ունենալու մեջ, ինչի համար նրանք միանշանակ շահեր հետապնդելով լուրջ մտոիվներ ունեն իրենց հիմնարկների տիրապետած բոլոր ռեսուրսները և գործունեությունը ծառայեցնելու հանուն որոշակի քաղաքական ուժերի վերարտադրմանը իշխանություններում: Արդյունքում ադմինիստրացիայի ղեկավարության՝ իշխանությունների հետ ընդհանուր շահեր ունեցող մասը, որը ազդեցիկ է և բարձր պաշտոններ է զբաղեցնում, տարբեր լծակների կիրառմամբ ծառայեցնում է իր աշխատակազմի մյուս մասը՝ **ոչ յուրային մասը**, հանուն որոշակի գործունեության: Աշխատակազմի ոչ յուրային մասի օգտագործումը ընտրությունների ժամանակ նրանց կողմից իրականացվում է ոչ բացահայտ, իսկ երբեմն բացահայտ ճնշումներ ենթադրող քարոզչության միջոցով²: Այդ քարոզչության մի մասը իրենից օրենքի խախտում է ներկայացնում, իսկ մյուս մասը, մեր տեսանկյունից, դեմոկրատական գործընթացի խոչընդոտ է, որի կանխումը մեծ նպաստ կունենար նաև օրենքով այդ պրակտիկայի արգելմանը:

Առ 01.10.2005թ. կատարված բոլոր լրացումներով և փոփոխություններով ՀՀ Ընտրական Օրենսգիրքը՝ այսուհետ Օրենսգիրք, ուղղակիորեն արգելվում է քարոզչության որոշ

¹ **Հարցվող*** Եթե կարող են առանց փողի անել, էլ ինչի փող ծախսեն: Ունեն ռեսուրս, աշխատողներ, կիրահանգեն, ինչ ոչ պետք է կանեն....

² Տես ադմինիստրատիվ ճնշումներ:

տեսակներ: Մասնավորապես համաձայն Օրենսգրքի հոդված 18, 4-րդ կետի՝ արգելվում է քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝

1. պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև դրանց աշխատակիցներին՝ իրենց աշխատանքային պարտականությունը կատարելիս.
2. սահմանադրական դատարանի անդամներին, ՀՀ ռադիկալության և ՀՀ ազգային անվտանգության ծառայության, դատախազության մարմինների աշխատակիցներին, զինծառայողներին.

Եթե ընդունենք, որ օրենքի այս կետի ընդունման հիմքն է հանդիսացել ադմինիստրատիվ ճնշման միջոցով քարոզչության կանխումը, ապա հարց է առաջանում, թե ինչու նման կետ չի գործում մասնավոր հաստատությունների համար: Եթե իշխանությունները ենթադրաբար կարող են նման քարոզչություն ծավալել, նույնը կարող են անել նաև ընդհանուր ազակցող ադմինիստրատիվ ռեսուրսի տիրապետող ուժերը իրենց մասնավոր հաստատություններում: Օրենսգիրքը արգելում է նաև ադմինիստրատիվ ռեսուրսի այլ տիպի կիրառումներ:

Համաձայն հոդված 22-1-ի քաղաքացիական, հայեցողական պաշտոններ զբաղեցնող, պետական ծառայող հանդիսացող թեկնածուները նախընտրական քարոզչությունը իրականացնում են ընդհանուր հիմունքներով՝ սույն հոդվածով սահմանված սահմանափակումների հաշվառմամբ.

1. արգելվում է նախընտրական քարոզչության իրականացումը պաշտոնական պարտականությունները կատարելիս կամ պաշտոնեական դիրքի ցանկացած չարաշահումը ընտրությունների ժամանակ առավելություն ստանալու համար.
2. արգելվում է նախընտրական քարոզչության նպատակով իրենց ծառայողական պարտականությունների իրականացման համար տրամադրված տարածքների, տրանսպորտային և կապի միջոցների, նյութական ու մարդկային ռեսուրսների օգտագործումը, բացառությամբ «Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով պետական պաշտպանության ենթակա բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կիրառվող միջոցառումների:

Ենթադրվում է, որ պաշտոնատար անձը ի պաշտոնե տիրապետած միջոցները չի կարող օգտագործել նաև այլ թեկնածուի աջակցելու համար:

Երկրորդ առավելությունը, որ ներառում է ադմինիստրատիվ ռեսուրսը հիմնարկների տիրապետած նյութական միջոցները և աշխատանքային ռեսուրսներն են, որոնք ընտրությունների մոտ ընկած ժամանակաշրջանում ապօրինաբար տարբեր պատրվակների տակ ծառայեցվում է նախընտրական նպատակներով: Արդյունքում ադմինիստրատիվ ռեսուրսի տիրապետող ուժերը ունենում են բազմաթիվ գրասենյակներ իրենց աշխատակիցներով, որոնք ընտրություններին մոտ ընկած ժամանակահատվածում աշխատում են հանուն որոշակի թեկնածուների կամ քաղաքական ուժերի: Առավել կիրառական են գյուղապետարանների, դպրոցների և այլ կրթական հաստատությունների ռեսուրսը: Այս քաղաքական ուժերը արտոնյալ վիճակում են հայտնվում այն առումով, որ ստիպված չեն լրացուցիչ տարածքներ վարձել, ստեղծել նոր աշխատակազմեր և կայացնել դրանք: Ընդ որում օգտագործվում են ընտրությունների ընթացքում որոշակի տեխնոլոգիաներում «մասնագիտացած» արդեն փորձառու պաշտոնյաներ, աշխատանքային խմբեր: Սրան են ավելանում մեքենաները, տեխնիկան և այլ միջոցներ: Կարևոր է նշել, որ նշված բոլոր ռեսուրսների կիրառումը հիմնականում քողարկված, ոչ բացահայտ և օրենքով արգելված է:

Հաջորդը ֆունկցիոնալ լիազորություններն են, որ ունեն հիմնականում պետական ադմինիստրացիայի տարբեր հիմնարկներ՝ ուժային կառույցներ, իրավապահ մարմիններ, կրթական հաստատություններ և այլն, որոնք շահարկվում են ի նպաստ որոշակի քաղաքական ուժերի:

Եվ վերջապես պետական տարբեր մարմինների միջոցով իրենց ֆունկցիոնալ լիազորությունների շահարկմամբ ճնշումն է այլ ոչ պետական մարմինների վրա՝ մասնավոր ձեռնարկություններ և այլ իրավաբանական անձինք, որպեսզի վերջիններս իրենց ադմինիստրացիան նույնպես ծառայեցնեն իշխանական քաղաքական ուժերին³:

³ Տես ադմինիստրատիվ ճնշումներ:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը ենթադրում է պաշտոնական դիրքի չարաշահումներ, իշխանության երեք թևերի՝ օրենսդիր, գործադիր և դատական մասերի միակենտրոնություն և փոխադարձ վերահսկողության նպատակային բացակայություն: Վերջինիս միջոցով իրականացվում է հովանավորչությունը, որը ենթադրում է անպատժելիություն և աջակցություն ապօրինություններին:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման դրսևորումներ են հարկային մարմինների ճնշման միջոցով մասնավոր ադմինիստրացիաների նպատակային կառավարումը և քարոզչությունը, Տիմ-երի, դպրոցների և այլ հաստատությունների կողմից ճնշումները, դատախազության կողմնակալ աշխատանքը և այլն: Այս դրսևորումների այն մասը, որոնք իրականացվում են բացահայտ ճնշումների միջոցով, մենք կքննարկենք ճնշումներ մասում: Իսկ այստեղ անդրադառնանք ադմինիստրատիվ ռեսուրսների կիրառման մյուս դրսևորումներին: Վերջիններս նույնպես կարող են ենթադրել ճնշումներ, որոնք սակայն քողարկված են:

1.1 Ադմինիստրացիայի «յուրային» մասը և ադմինիստրատիվ քարոզչությունը

Կազմակերպությունների կամ հիմնարկների աշխատակազմը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Յուրայիններ
2. «Կախվածներ»
3. Նամոզվողներ
4. Սկզբունքայիններ
5. Ընդիմադիրներ

Նշված խմբերից յուրաքանչյուրը ունի իր դիրքորոշումը ղեկավարության և ընտրության հանդեպ, դրանք պայմանավորող մտածելակերպ և իրազեկության աստիճան, որոնք կքննարկենք ստորև:

Յուրայիններ: Ադմինիստրացիան ունի մարդկանց զգալի մի մաս՝ յուրայիններ, որոնք պատրաստ են քվեարկելու իրենց ղեկավարության աջակցությունը վայելող կուսակցության կամ թեկնածուի օգտին և ունեն սուբյեկտիվ դրդապատճառներ: Այդ դրդապատճառներն արտացոլված են նրանց հետևյալ մտածելակերպով⁴. հիացմունք, համակրանք ղեկավարության հանդեպ, սուբյեկտիվ արդարացում ամենատարբեր հարցերում, պատրաստակամություն նրանց համար պայքարելու, իդենտիֆիկացիա ղեկավարության հետ կամ միևնույն շրջանին պատկանելության զգացում:

Այս մտածելակերպը նաև ունի ծայրահեղ դրսևորումներ⁵: Խոսքը կաշառակերության, պաշտոնական դիրքի չարաշահման կամ պետական, հանրային ունեցվածքի համատեղ յուրացման մասին է հիմնականում: Եթե հաշվի առնենք յուրայինների ընտանիքները և ազգականներ, ապա պարզ կդառնա, որ ադմինիստրացիան լուրջ քարոզչական ուժ կարող է իրենից ներկայացնել: Յուրաքանչյուր «յուրային» պաշտոնյա կրում է քարոզչության իր ֆունկցիան, թե աշխատավայրում ոչ յուրային մասին «յուրայնացնելու» համար, թե ընտանիքում և մերձավորների շրջանում: Վերջինիս արդյունավետությունը պայմանավորված է այդ յուրայինի՝ իր մերձավորների շրջանում ունեցած ստատուսով: Ադմինիստրատիվ քարոզչությունը ունի իր արդյունավետությանը նպաստող երկու գործոն՝ առաջինը աշխատակազմի մշտական, երկարատև շփումներն են միմյանց հետ և օրվա մեծ մասին աշխատավայրում անցկացումը, որը հնարավորություն է

⁴ **Նարզվող*** Իմ գործը ինձ ձեռնառու է: Եթե էսպես շարունակվի, պիտի որ դեռ ավելի լավ լինի: Չեմ դժգոհում. կարողանում եմ ընտանիք պահել: Անչափ շնորհակալ և երախտապարտ եմ ղեկավարությունից, որ ինձ էս գործը տվել են: Իրենց գործերին որ հաջողություն լինի, մեզ էլ լավ կլինի:

⁵ **Նարզվող*** ...ինչ անում են լավ են անում, ամբողջ աշխարհն է դա անում, ով է իրանցից լավ տղա, որ անի, իրանք չանեն:

տալիս երկարատև քարոզչական աշխատանք տանել կոլեկտիվի առանձնահատկությունները կիրառելով: Երկրորդը ադմինիստրատիվ քարոզչության գույզակցումն է ադմինիստրատիվ ճնշումների հետ, որոնք կատարվում են վերահասի կողմից: Յուրայինների աշխատանքները առնչվում են մյուս բոլոր խմբերի հետ՝ «կախվածների», համոզվողների, սկզբունքայինների և ընդհանադիրների հետ, յուրաքանչյուրի հետ յուրովի:

Կախվածներ: Աշխատանքային կոլեկտիվը սովորաբար ենթադրում է մարդկանց խումբ, որոնք ավելի լավ տարբերակ չեն տեսնում իրենց համար, քան լոյալ լինելը ղեկավարությանը: Նրանց լոյալությունը առաջին հերթին պայմանավորված է ոչ թե նրանց համակիր լինելով ղեկավարությանը, այլ այն բանով, որ կրում են ղեկավարության կողմից բացասական սանկցիաներ ստանալու վտանգը ոչ լոյալ վարքի դեպքում: Այդ սանկցիաները պայմանավորված են նրանց խոցելի կողմերով կամ տարբեր հարցերում կախվածությամբ: Մասնավորապես պրոֆեսիոնալ անկատարությամբ կամ ղեկավարության սուբյեկտիվ որոշումների լայն հնարավորություններով, որոնք օբյեկտիվ հիմք կարող են հանդիսանալ աշխատանքային առաջընթացի արգելակման, այս կամ հարցի չլուծման, վարչական տույժերի կամ աշխատանքից հեռացման համար: Կախվածության գործոնի օգտագործման հետ գուցա հեռ այս խմբի հետ իրականացվում է նաև քարոզչություն՝ ղեկավարության դիրքորոշման ինչպես սուբյեկտիվ, այնպես էլ օբյեկտիվ նպատակահարմարության համոզմունք առաջացնելու համար: Լոյալությունը շատ դեպքերում ցուցադրական է, եթե չկա բացահայտման վտանգ: Լոյալության դրդապատճառները նկատվում են հարցվողների մտածելակերպում⁶:

Կախվածների հիմնական վարքաձևը առերևույթ օգնությունն է, մյուսներից ետ չմնալու, ղեկավարության աչքը մտնելու համար, որը երբեմն ուղեկցվում է ներքին ընդվզումով և երկակի գործունեությամբ: Կախվածները նաև գործիք են հանդիսանում աշխատակազմի մյուս մասի հետ աշխատանքների համար, մասամբ ներառվում են բնակչության հետ աշխատանքներում: Ուժային կառույցների հիմնական անձնակազմը կախվածների տիպիկ օրինակ է: Նրանք քվեարկում են հրամանով, ինչ-որ առումով կարելի է համարել ոչ թե ճնշման հետևանքով քվեարկող, այլ իշխանություններին «պատկանող» քվեարկողներ, որոնք միահամուռ են իրենց քվեարկություններում և նրանց ընտրությունը միանշանակ իշխանամետ է:

Համոզվողներ: Սրանք աշխատակազմի այն մասն են կազմում, որի վրա կախվածության լծակը առանձնապես չի գործում, քանի որ նրանք կամ չունեն կոնկրետ խնդիրներ, որոնց լուծումը ղեկավարությունից է կախված, կամ չեն վախճնում բացասական սանկցիաներից՝ ունենալով դրանք կանխելու կամ հակահարվածի հնարավորություն, ինչպես նաև աշխատանքային այլընտրանքներ: Այս խմբի հետ աշխատանքներն ունեն երկու ռազմավարություն՝ նրանց վերածումը կախվածների և համոզվողների՝ նրանց կողմից ղեկավարությանն աջակցության օբյեկտիվ և սուբյեկտիվ նպատակահարմարության համոզմունքի առաջացում: Օբյեկտիվ համոզմունքը առաջացվում է զանգվածային քարոզչության համանմանությամբ և փաստարկներով: Սուբյեկտիվ շահագրգռվածությունը առաջացվում է կամ կոնկրետ խոստումների մեխանիզմով կամ ակնկալվող օբյեկտիվ փոփոխությունների հետևանքով համոզվողի հետաքրքրությունների ինքնաբերաբար բավարարման հեռանկարով՝ երկու դեպքում էլ գործում են ադմինիստրատիվ քարոզչության եղանակները:

Ադմինիստրատիվ քարոզչությունը ներառում է աշխատավայրում բուկլետների և այլ նյութերի բաշխումը, փակցված նյութերի առկայությունը, ոչ ֆորմալ միջավայրերում

⁶ **Հարցվող*** Ես չեմ կարող հակառակվել ղեկավարությանը: Ինչ գործ ունեմ: Յանկացած պահի կարող եմ աշխատանքից հանել, հետո որտեղ եմ աշխատելու էս դժվար օրերին: Աշխատանք գտնելը հեշտ բան չի: Հազիվ հետները լեզու եմ գտել: Հարցեր ունեմ լուծելու, գոնե դրանք անեն, հետո տեսնենք ինչ կլինի: Ավելի լավ է ցույց տաս, որ դու էլ ես փորձում ինչով կարող ես օգնել: Շատերը մենակ խոստանալով աչքներն են մտնում: Ավելորդ գլխացավանք է. հիմա փոքր երկիր է, մի բուռ ժողովուրդ, մի բան ասում կամ անում ես, մյուս օրը սաղ աշխարհը իմանում է: Մեկ է, վերջում հատ-հատ հիշում են, թե ով ինչ օգնություն ցույց տվեց: Չնայած մարդիկ կան, որ խոստանում են, բայց իրականում ուրիշին են օգնում:

ծավալվող քննարկումները և խմբային հոգեբանական ճնշումը «ոչ յուրայինների» վրա: Այն ներառում է նաև հիմնարկում ադմինիստրացիայի կողմից թույլատրված միջոցառումները և հանդիպումները: Այդպիսի քարոզչություն իրականացվում է պետական կառավարման համակարգի հաստատություններում՝ կառավարություն, աշխատակազմեր, նախարարություններ, տարածքային կառավարման մարմիններ և այլն: Դրանք առավել արդյունավետ են ուժային նախարարություններում՝ ոստիականություն, բանակ և այլն:

Փորձագետների հավաստմամբ ադմինիստրացիայի յուրային մասի կողմից տարվող ազիտացիան և բերում է այն բանին, որ ադմինիստրացիայի բավական մեծ մասը յուրայնացվում է իրենց ընտանիքներով և մերձավորներով հանդերձ: Մնացած մասի յուրայնացումը տեղի է ունենում ադմինիստրատիվ ճնշումների միջոցով: Դժվար է առանձնացնել ադմինիստրացիայի այն մասին, որը քվեարկում է քարոզչության հետևանքով այն մասից, որը քվեարկում է ճնշման հետևանքով, քանի որ դրանք գուցակցվում են միմյանց հետ:

Սկզբունքայիններ: Ունեն հարաբերական անկախություն ղեկավարությունից իրենց այլընտրանքների, շրջապատի կամ դիրքերն ամրապնդող այլ գործոնների հաշվին: Այս խումբը իրեն համեմատաբար ազատ է համարում իր որոշումները ընդունելու գործընթացում, հաճախ պատրաստ է հայտարարել իր դիրքորոշման մասին բացահայտ, չի վախենում բացասական սանկցիաներից իր դիրքորոշման կամ ղեկավարությանը բավարար աջակցություն չցուցաբերելու կամ աչքը չմտնելու համար: Մյուս կողմից այս խմբի դժվարիվողելիությունը պայմանավորված է նրանց իրազեկությամբ, կամ բազմակողմանի ինֆորմացիայով ինչը խոչընդոտում է աշխատավայրի միակողմանի ինֆորմացիայի եկրարատև ազդեցության ամբողջական արդյունքին: Ենթադրվում է, որ այս խմբին կախվածության մեջ զգելու կամ համոզելու պրակտիկան կիրառական չէ, քանի որ ռեսուրսների ոչ նպատակահարմար ծախսը մեծ է խմբի սկզբունքայնության և ինքնուրույնության հետևանքով: Նույն ջանքերով անհամեմատ ավելի մեծ արդյունքի կարելի է հասնել մյուս խմբերի հետ աշխատանքում: Սակայն այսպիսի խմբերի քանակը համարվում է չափազանց փոքր:

Ընդիմադիրներ: Ինչպես և հասարակությունում, այնպես էլ աշխատակազմերում կա մարդկանց խումբ, որոնք արմատական են տրամադրված իրենց իսկ ղեկավարության նկատմամբ: Այսպիսի խմբերը հիմնականում առկա են մեծ կոլեկտիվներում: Այս խմբերի դիրքորոշումը դեպի ադմինիստրացիան բնորոշվում է ընդեմ ղեկավարությանը-ընդեմ անարդարություններին համարժեքությամբ: Հետազոտության տվյալները այս խմբերի ավելի խորը ուսումնասիրման հնարավորություն չեն ընձեռել: Սակայն պարզ է, որ մի կողմից դրանք փոքր քանակ են կազմում, մյուս կողմից աստիճանաբար նվազում են: Սա մասամբ պայմանավորված է ղեկավարության վարած քաղաքականության հետ, որ հակված է ամեն գնով դժվարեցնել նրանց գործունեությունը և հնարավորինս շուտ ազատել համապատասխան աշխատատեղը ավելի ցանկալի թեկնածուների համար:

1.2 Ընտրողների «յուրայնացումը» բարեգործության շահադիտական իմիտացիայով

Սոցիալական ծանր վիճակում գտնվող բնակիչները հաճախ չունեն հնարավորություն ժամանակին վճարելու տարբեր կոմունալ կամ այլ տիպի ծախսեր: Կուտակված պարտքերը լավ միջոց են ընտրությունների ժամանակ շահարկվելու համար: Թեկնածուները կամ քաղաքական ուժերը, ունենալով աջակցություն այս կամ այն հիմնարկի ղեկավարության կողմից, իշխանության գիտությամբ կազմակերպում է պարտքերի մարման ակցիա հաճախ պետքությունի հաշվին: Հրապարակայնորեն հայտարարում են, որ այս կամ այն ոլորտի բոլոր տիպի պարտքերը մարված են իրենց կողմից և դրանով մեծ երախտիք առաջացնում մինչ այդ համապատասխան կառույցների կողմից բազմիցս իրենց պարտքերի համար հոգեբանորեն ճնշված բնակիչների մոտ: Պարտքերի մարում տեղի է ունենում նաև անհատական եղանակով՝ հրապարակավ այս կամ այն սոցիալական խմբի պատկանող որևէ ընտանիքի պարտքը մարելով, որը դրական

տպավորություն է առաջացնում նաև բնակչության մյուս մասի՝ հատկապես նույն սոցիալական խմբի ներկայացուցիչների մոտ: Նման պարտքերի մարումը հաճախ տեղի է ունենում ոչ թե քաղաքական ուժի կամ թեկնածուի հաշվին, այլ պետբյուջեի, որը հետագայում լցվում է նույնպես բնակչության հաշվին⁷: Ընտրողների մոտ առաջնային տեղ չի զբաղեցնում կամ ընդհանրապես բացակայում է այն մտայնությունը, թե որտեղից են մարվում այդ պարտքերը և ինչ է դա նշանակում, որքանով են այդ պարտքերի մարումը ընդհանուր առմամբ դրական կամ բացասական:

Վերոնշյալ տեխնոլոգիայի առավել շահավետ տարբերակը ի պաշտոնն ունեցած պարտականությունների կատարումը, որպես բարի կամքի և բարեգործության դրսևորում ներկայացնելն է թեկնածուի, քաղաքական կուսակցության կամ դրանց աջակցող պաշտոնյայի կողմից: Պետբյուջեով և տարբեր վարչական միավորումների և գերատեսչությունների ծրագրերում նախատեսված զարգացման միջոցառումները հաճախ մեր հանրապետությունում կատարվում են ուշացումով և ոչ լիարժեք: Հասարակությունը ժամանակի ընթացքում ընտելանում է դրան և ընդունում երևույթը որպես նորմ: Այդ պատճառով ժամանակին կատարված լիարժեք միջոցառումները ընտրողների մոտ բացառիկ տպավորություն են առաջացնում՝ թողնելով մեծահոգության և բարի կամքի դրսևորման տպավորություն: Այդ գործողությունները հաճախ երկար ժամանակ չկատարելով դեկավարությունը հասնում է այն բանին, որ ընտրություններից առաջ կուտակված բոլոր միջոցառումները՝ «խնայված» կամ ավելի ընդհանրապես մեկնաբանմամբ «թալանված» միջոցների ընդամենը մի մասի միջոցով միանգամից են կատարվում և ապահովում են ամբողջական էֆեկտ:

Կատարված «բարեփոխումները» ընտրողներից շատերը ընկալում են որպես նոր աշխատատեղ, գալիք կառավարման տարիների էական փոփոխություններով բարգավաճ ժամանակաշրջան, իսկ երբեմն ոչ թե պաշտոնյայի պարտականություն, որը դեռ վաղուց պետք է կատարվեր, այլ նրա կողմից կատարված մեծահոգության և բարի կամքի ակցիա, որը երբեմն ընդունվում է, որպես նրա սեփական միջոցների հաշվին կատարված⁸: Նման «ներդրումը» կաշառում է ընտրողին և դրդում նրան հանուն իր շահի կատարել համապատասխան ընտրություն:

Վերոնշյալ երկու տեխնոլոգիան էլ հիմնականում վերագրվում են իշխանություններին, սակայն ակնհայտ է, որ ցանկացած ուժ, որ տիրապետում է ռեսուրսների կարող է դա իրականացնել, եթե ինչ որ եղանակով ստանում է համապատասխան հովանավորչություն՝ հատկապես իրավապահ մարմիններին կողմից:

1.3 Հովանավորչության իրականացում

Հակադեմոկրատական տեխնոլոգիաների մեծ մասի իրականացումը, որոնք մենք դեռ կքննարկենք մանրամասնորեն, հնարավոր չէ առանց իշխանությունների թողտվության: Գրեթե բոլորը կարող են կանխվել կամ խթանվել իշխանությունների կողմից: Դեռ ավելին, գրեթե բոլորը իրականացվում են օրինախախտումների միջոցով և ամբողջական չեն առանց օրինախախտումներ պահանջող քայլերի, որոնց համար, համաձայն օրենքի, խիստ պատիժներ կարող են կիրառվել պետական կառույցների կողմից: Ծատ տեխնոլոգիաներ հնարավոր չեն ոչ միայն առանց իշխանությունների թողտվության, այլև՝ նրանց մասնակցության: Սակայն իշխանությունները և նրանց կամքով նաև պետական մարմինները ընտրովի ձևով աջակցում են որոշ քաղաքական ուժերի այդ տեխնոլոգիաների կատարման մեջ տարբեր ձևերով մեթոդներով և չափերով: Կան տեխնոլոգիաներ, որոնք հնարավոր չեն առանց այլ ռեսուրսների տիրապետող սուբյեկտների:

⁷ **Հարցվող*** Սկզբում շուրջ կաշառքը բաժանում են, հետո մեկ էլ տեսար հացի գինն են թանկացնում, որ պետբյուջեից թալանված գումարը վերականգնեն:

⁸ **Հարցվող*** Օրինակ գյուղապետի ընտրության ժամանակ մենք նորից կզանաք ու իրեն կընտրենք, որովհետև ասֆալտը տեսել ենք, էլ շատ մեծ ուրախություն ա էս 16 տարվա մեջ: Համեմատելով, որ նրանից առաջ ոչ մի բան չի արվել, տեսել ենք որ նրանից առաջ ոչ մեկ ոչ մի բան չի արել, հիմա էլ գործերը տեսել ենք, իրան էլ կընտրենք

Ռեսուրսի տիրապետող սուբյեկտի կողմից իր տիրապետած ռեսուրսների ընձեռած իրավասության սահմաններում որևէ ուժի տրված գործողությունների հնարավորությունը, որոնց հետևանքների համար նա պատրաստ է այդ ուժին զերծ պահել բացասական սանկցիավորումից այսուհետ կանվանենք հովանավորչություն: Հովանավորչություն կարող է տալ երկրի բարձրագույն իշխանությունը՝ նախագահը, այլ բարձրաստիճան պաշտոնյա՝ օրինակ մարզպետը, մեծ ֆինանսական ռեսուրսների տիրապետող և որոշակի սոցիալական խմբերի մոտ հեղինակություն վայելող գործարարը, արտասահմանյան որևէ քաղաքական ուժ, պետություն կամ գործիչ, այսպես կոչված «թաղային հեղինակությունը» և այլն⁹:

Նրանցից յուրաքանչյուրի հովանավորչությունը տալիս է որոշակի բնույթով և ծավալներով սահմանափակված և պատասխանատվությունից որոշակի ձևով և որոշակի սահմաններում ազատող գործունեության հնարավորություն: **Արտասահմանյան հովանավորչության** հետ փորձագետների մոտ ասոցիացվում է ֆինանսական ապահովման և միջազգային ճնշումների հետ, որոնք արվում են կատարվող գործունեության դեմ իշխանությունների կողմից սանկցիաների կիրառմանը խոչընդոտելու համար:

Թաղային հեղինակության «դաբրոն» ենթադրում է մասամբ կիրմինալ կողերսի, մասամբ իրավապահ մարմիններում և իշխանություններում առկա կապերի շահարկմամբ ֆինանսական և այլ ռեսուրսներ տիրապետող մարդկանց կողմից ճնշումները և նրանց աջակցությունը որոշակի գործողությունների¹⁰: **Դատական մարմինների խոչոր պաշտոնյայի հովանավորչությունը** նշանակում է դատական գործընթացներում կողմնապահության պատրաստակամություն և միջոցների կիրառում նպատակադր դատաքննության և դատավճռի կայացման համար: **Իրավապահ մարմինների խոչոր պաշտոնյայի հովանավորչությունը** ենթադրում է իրավապահ մարմինների աչքափակությունը որոշակի երևույթների վրա, կարգուկանոնի պահպանման քողի ներքո թեկնածուին նպաստավոր գործողությունների ծավալում և կողմնապահություն կարգի խախտումների կանխման ժամանակ:

Հայաստանում ընտրությունների ժամանակ ամենաուժեղ հովանավորչությունը 2005-ին համարվում է **ՀՀ նախագահի և պաշտպանության նախարարի հովանավորչությունը**: Այն կարող է ներառել ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը և տրամադրումը, ճնշումները, ընտրակաշառքը և հանձնաժողովների կառավարումը: Փաստորեն այն բոլոր տեխնոլոգիաները, որոնք կիրառվում են հանրապետությունում ընտրությունների ժամանակ: Դժվար չէ նկատել, որ այս հովանավորչությունը ներառում է բոլոր մյուսները, բացի այսպես կոչված միջազգայինից: Կա կարծիք, որ իշխանությունները կապի մեջ են գրեթե բոլոր ուժերի հետ՝ տիրապետելով ներքին ուժերի մեծ մասին և համագործակցելով մյուս մասի հետ, որին չեն տիրապետում՝ հիմնականում արտաքին ուժեր:

Այսպես, միանգամայն բնական կլիներ, եթե իրավապահ մարմինները ձերբակալեին և քրեական պատասխանատվության ենթարկեին կաշառատուներին, քանի որ այդպիսի հնարավորություն մեր օրենսդրությունը ընձեռում է, իսկ երևույթի դրսևորումը ինչպես ընտրողների այնպես էլ հանձնաժողովների մակարդակում հեշտությամբ բացահայտելի և շատ դեպքերում բաց և ակնհայտ է: Բացահայտելի և պատժելի են նաև մյուս ընտրախախտումները: Սակայն կա նման դեպքերի լայն տարածում գտած մի կատեգորիա, որի նկատմամբ այդ չի կատարվում: Դեռ ավելին, բացահայտված դեպքերին անհրաժեշտ ընթացք չի հաղորդվում, ինչը հիմք է տալիս որոշ փորձագետների այն

⁹ Հովանավորչությունը հաճախ արտահայտվում է ռուսերեն «դոբրո» բառով, որը ունի կրմինալ ենթամշակույթի ծագում: Հայերենում այս հասկացության մեջ կա ընդհանրություն օրինանք հասկացության հետ, որը տրվում է նախքան որևէ գործունեություն ծավալելը և նշանակում բարեմատիանք, ցանկություն, որ նախաձեռնությունը հաջողությամբ իրականացվի:

¹⁰ Այս մարդկանց հաճախ անվանում են կիսահանցագործ, քանի որ նրանք սովորաբար հավատարիմ չեն կիրմինալ կողերսին ամբողջությամբ, այլ իրենք իսկ հաճախ խախտում են այն, երբ անհրաժեշտ է՝ չբացառելով իրավապահ մարմինների, այլ ուժային կառույցների և իշխանության մարմինների միջոցով չլուծվող հարցերի լուծումը:

համոզմունքին, որ առկա է հովանավորչություն կատարողների հանդեպ, ընդ որում այնպիսի հովանավորչություն, որը ներառում է ինչպես իրավապահների և դատական մարմինների հետ «հարցերի լուծումը», այնպես էլ նպաստում է ադմինիստրատիվ ռեսուրսի և ճնշումների կիրառմանը: Հովանավորչության առկայությունը ազատ է արձակում կաշառատուների ձեռքերը, որոնք անխոչընդոտ ծավալում են ապօրինի գործունեություն:

Տեխնոլոգիայի առկայությանը նպաստող գործոններ

1. Տարբեր սուբյեկտների միջև տարատեսակ կլիենտելական կապերի դրսևորումներ: Օրինակ՝ ադմինիստրատիվ ռեսուրսներ տիրապետողներին շահագրգռումը և քաղաքական փոխապայմանավորվածությունը: Օրինակ՝ Իշխանությունների քաղաքական կամքի բացակայությունը պայքարելու երևույթի դեմ, որը մասամբ կապվում է դրանց կոռուպացիայի հետ: Օրինակ՝ Անկախ ՁԼՄ-ների սակավությունը և ցածր ազդեցիկությունը
2. Պաշտոնյաների գործնելիության ցածր հասարակական վերահսկելիություն
3. Ադմինիստրացիայի վրա ճնշելու օրենսդրորեն և մենթալիտետի առումով բարենպաստ պայմանները
4. Տեղեկատվական թափանցիկության բացակայությունը ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման ոլորտում:

2 Ճնշումները ընտրաինստիտուտի սուբյեկտների վրա

Ընտրական ինստիտուտի սուբյեկտի վրա այլ սուբյեկտների կողմից վարքի թելադրանքը, որ արվում է այդ մասնակցի կողմից թելադրվող վարքից հրաժարման դեպքում բացասական սանկցիաների կիրառման վտանգի ներքո, իրենից ներկայացնում է ճնշում: Ճնշումներ կարող են գործադրվել ազգականների, մերձավորների, աշխատակիցների, ղեկավարության, պետական և ոչ պետական հիմնարկների և այլոց կողմից: Ճնշումները ընտրաինստիտուտի սուբյեկտի վրա կարելի է դասակարգել՝ անհատական և ինստիտուցիոնալ, ֆորմալ և ոչ ֆորմալ, բնակավայրային և աշխատանքային և այլն: Այստեղ կրճատվենք Հայաստանյան ընտրություններում կիրառվող ճնշման եղանակները, որոնք կարող են լինել նաև վերոնշյալ տեսակների ենթատեսակներ:

Հանձնաժողովի անդամները, դիտորդները, վստահված անձինք, ընտրողները և ընտրաինստիտուտի մյուս սուբյեկտները ունեն մշտական աշխատավայր, գործունեության կամ կենցաղի բերումով առնչվում են տարբեր կազմակերպությունների և անձանց հետ և ունեն որոշակի հարաբերություններ դրանց հետ, որոնք նրանց համար ցանկալի չէ խզել, կամ փոփոխման ենթարկել: Այդ փոփոխությունները անցանկալի են, քանի որ կարող են բացասաբար ազդել նրանց բարիդրացիական հարաբերությունների վրա բնակավայրում, ազգականների և մերձավորների, ղեկավարության և մյուս մարդկանց հետ, ինչպես նաև խոչընդոտել աշխատանքային առաջընթացին և գործունեությանը: Ճնշումները հիմնականում հենվում են այդ փոփոխությունների և խոչընդոտների անցանկալիության վրա:

2.1 Ադմինիստրատիվ ճնշումը ընտրագործընթացում

Պետական հիմնարկի ղեկավարի կողմից այդ հիմնարկի աշխատողի վրա ճնշումը այսուհետ կդիտարկենք, որպես **ադմինիստրատիվ ճնշում**: Ադմինիստրատիվ ճնշումը ճնշման առավել տարածված ձևն է Հայաստանում: Դրա առկայությունը պայմանավորված է ղեկավարության հետ հարաբերություններում ընտրաինստիտուտի սուբյեկտի համար կարևոր որոշումների կայացման ժամանակ ղեկավարության կողմից սուբյեկտի վերաբերմունք դրսևորելու լայն հնարավորություններով, որ ընձեռում են մեր սոցիո-մշակութային պայմանները¹¹: Ադմինիստրատիվ ճնշումները դրսևորվում են ընտրողի աշխատանքային ղեկավարի, հարկային մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, կրթական հաստատության ազդեցիկ ստատուսի անձնավորության՝ դասախոս, ուսուցիչ, տնօրեն և այլն:

Այս եղանակով «յուրայնացման» են ենթարկվում նաև հանձնաժողովի անդամները, ղեկավարը և մյուս սուբյեկտները: Հանձնաժողովի վրա ճնշման լծակները նվազեցնելու նպատակով առաջարկվում է այն ձևավորել հնարավորինս չեզոք մարդկանցից, որոնք որպես հիմնական աշխատավայր ունենան ընտրաինստիտուտը, որպեսզի այլ աշխատավայրից ադմինիստրատիվ ճնշումները նվազագույնի հասցվեն:

Ընտրաձայների գնումը ընտրողներից ադմինիստրատիվ ճնշմամբ: Ընտրակաշառքը երբեմն տարածվում է նաև աշխատավայրում կամ որոշակի ադմինիստրատիվ

¹¹ **Հարցվող*** Եթե ես ոչ մի տեղ չեմ աշխատում, կախված չեմ որևէ մեկից, ոնց եք ինձ ճնշելու: Դե ոնց է, զանգում են ԲՈՒՀ-ի կամ դպրոցի տնօրենին ու ասում ժողովրդին հավաքեք բերեք: Նրանք էլ մտածում են, եթե մարդ չապահովեն, կարող են պրոբլեմներ ունենալ: Հիմա, եթե հանձնաժողովի անդամը մարզպետարանի աշխատող է, մարզպետը եթե ասի՝ գնա էս թվերը հակառակ հերթականությամբ գրի բեր, նա կգնա կբերի: Կամ դիմում գրի դուրս գա: Բչերը կդիմադրեն: Մանավանդ մի քիչ լուրջ պաշտոնները կոալիցիոն սկզբունքով է, հետևաբար՝ խնդիր չկա: Ասենք մարզպետը եթե Օրինաց-ից է, կասի գնացեք ՕԵԿ-ի օտոզին աշխատեք: Դրա համար պիտի լինի մի անկախ ուժ:

կառույցների կողմից, որոնք պարտադրում են ընտրողների այն մասին, որոնք դժվարանում են կաշառվել, վերցնելու գումարը: Գումարը վերցնելու հարցը երբեմն դրվում է խիստ և աշխատանքից ազատման սանկցիայի պայմաններում: Մեծամասամբ մարդկանց հակվածությունը ադմինիստրացիայի ճնշմամբ վերցնել կաշառքը պայմանավորված է նրանց առաջընթաց ունենալու կամ որոշակի հարցերի լուծման ակնկալիքներով, որոնք ոչ միշտ են արդարացվում:

Ադմինիստրացիան իր հերթին ենթակա է ճնշման ավելի բարձր իշխանություններից, ինչով էլ պայմանավորված է այն փաստը, որ այս լծակը հիմնականում կիրառվում է իշխանությունների կամ նրանց հարող ուժերի կողմից: Գումարը տալուց հետո դարձյալ կաշառատուն ձեռնամուխ է լինում **վերահսկման տեխնոլոգիաներին**: Սակայն ընդհանրության ուժերին հարող մասնավոր բիզնես ունեցող հիմնարկների ղեկավարները, երբեմն նաև պետական հիմնարկներում պաշտոններ զբաղեցնողները նույնպես ունեն ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման հնարավորություն, ինչը սակայն անհամեմատ ավելի քիչ արդյունավետ է համարվում:

2.2 Ընշումը մասնագիտական գործառույթների շահարկմամբ:

Հանրապետությունում գործող ենթակառույցների անկատարությունը հնարավորություն է տալիս տարբեր համակարգերի աշխատողների ունենալ որոշակի սուբյեկտիվ վերաբերմունք բնակչության հետ աշխատանքներում՝ մասնավորապես էլեկտրոններիցիայի, բուժապասարկման, կրթության և այլ ոլորտներում: Էլեկտրոնացի աշխատողը կարող է անբարեհաճ վերաբերմունք ցույց տալ, լրացուցիչ գումարներ զանձել՝ հաշվիչների հետ մեքենայություններ կատարել հանրապետության շատ բնակավայրերում: Այս վերաբերմունքը ընտրությունների ժամանակ ընտրողի կողմից դժվար բողոքարկելի է, եթե այդ համակարգը համագործակցում է որևէ թեկնածուի հետ:

Արդյունքում այս կամ այն թեկնածուին ընտրելու քարոզչություն տանող էլեկտրիկը կարող է ճնշել ընտրողի վրա: Վերջինս խուսափելու համար հետագա գլխացավանքից կապված էլեկտրիկի սուբյեկտիվ վերաբերմունքի հետ՝ հակված է որոշ դեպքերում ընդունել նրա կողմից առաջարկված գումարը՝ իմանալով, որ «**մենակ իրենով բան չի փոխվի**»: Նմանատիպ լծակներ ունեն բուժապասարկման ոլորտի աշխատողները, որոնք նույնպես կարող են ազդել ընտրողի և նրա հարազատների վրա և առաջարկել գումարներ: Նման ինքնուրույն նախաձեռնությամբ կարող են նաև քարոզչական ազդեցություն ունենալ ուսուցիչը և սուբյեկտիվ որոշումներ կայացնելու հնարավորություն ունեցող այլ աշխատողներ¹²:

2.3 Կրիսինայի կիրառումը «համոզելու» համար

Հովանավորչությունը կաշառատունների նկատմամբ ստեղծում է հնարավորություն մյուս անօրինական միջոցների թվում կիրառել նաև հանցագործ տարրերի, որոնք պատրաստ են առավելագույն ոտնձգությունների ընտրողի իրավունքների վրա: Սա ավելի է մեծացնում ընտրողների մոտ անպաշտպանության զգացումը, որը դառնում է նրկկողմանի՝ մի կողմից իրավապահ մարմինների գործնկության քողի տակ արվող ակցիաներ, որոնք ուղղված են «կարգուկանոն հաստատելուն», սակայն ունեն այլ իրական նպատակներ: Մյուս կողմից հանցագործ տարրերի գործունեությունը, որոնց հանդեպ հովանավորչությունը թույլ չի տալիս ընտրողին հուսալ որևէ իրավապահ աջակցություն: «Հանցագործ տարրերի» գործունեությունը այս համատեքստում կենտրոնացվում է ընտրատուբյեկտին «համոզելու» գործընթացի վրա, որ դրսևորվում է ինչպես ընտրողներին «համոզելու», այնպես էլ ընտրագործընթացի վրա այլ ձևով ազդեցություն ունենալու

¹² **Հարցվող*** Լավ է, որ մասնավորեցրել են էլեկտրացանցը, բայց էլի ընտրություններին ազդում է: Էլեկտրիկը հայաստանում ընտրություն կազմակերպողն է. հոսանքի, հացի... պարտք փակելը:

հնարավորություն ունեցող սուբյեկտներին «համոզելու» եղանակով: Փորձագետների կարծիքով «կրիմինալը» հմուտ է իր գործունեությունում, ավելի շատ կիրառվում է գյուղական վայրերում կամ մարզերում և հաճախ խաղաղ գործունեությունը վերածում է ծեծկրտուքի: Այն թեկնածուի համար ունի նաև «պատժիչ ջոկատի» ֆունկցիա, իսկ ընտրողների համար «գլխացավանք» կամ վախ է առաջացնում, որից նրանք խուսափում են:

2.4 Հոգեբանական ճնշումը ընտրատեղամասում

Ընտրական հանձնաժողովները իրենց ուրույն դերն ունեն նաև ընտրությունների գաղտնիության չապահովման գործում: Մասնավորապես, եթե հանձնաժողովը կազմված է «յուրայիններից», կարողանում են տարբեր եղանակներով իմանալ ընտրողի ընտրության մասին: Այդ եղանակները ներառում են ընտրողից այդ միասին հարցնելը, որին ընտրողը հայկական մենթալիտետից ելնելով «չի վախենում» բացահայտ ասել: Ծատ դեպքերում այդ բացահայտ խոստովանությունը բերում է այն բանին, որ ընտրողը նշում է այլ թեկնածուի անուն և այդպես էլ ընտրում: Մյուս եղանակով ընտրողին նախապես ասում են, որ նրա քվեարկությունը նայելու են և նախքան տուփը զգնելը, քվեաթերթը ցույց տա: Գյուղական վայրերի, իր իրավունքներից անտեղյակ և հոգեպես ընկճված ընտրողներից շատերը տրվում են այս պրոփոկացիային և իրոք կատարում համապատասխան ընտրություն, առանց դիմադրելու: Պատահում է, որ ընտրողը իրոք ցույց է տալիս իր ընտրությունը: Համեմատաբար ավելի իրազեկ ընտրողներին նմանատիպ առաջարկություն արվում է «կիսակատակ» տարբերակով, որին նրանցից ինչ-որ մասը կարող են տրվել: Գաղտնիության վերաբերյալ թերահավատություն է առաջացվում նաև շինծու խոսակցություններով հանձնաժողովի անդամների կամ վստահված անձանց միջև, որոնք ընտրողների միջոցով ակամայից շշուկների տեսքով տարածվում են բնակչության շրջանում:

Ընտրությունների գաղտնիության չապահովման կամ դրա ապահովման մասին թերահավատության պայմաններում ընտրողները փոխում են իրենց ընտրական դիրքորոշումը այն պատճառով, որ հանձնաժողովի անդամները հիմնականում այնպիսի մարդիկ են, կամ ներկայացնում են այնպիսի մարդկանց, որոնք կարող են ի պաշտոնն էական ազդեցություն ունենալ ընտրողի հետագա հարցերի վրա տարբեր ոլորտներում: Ընտրողը չի կամենում ունենալ պրոբլեմներ, ոչ իրավապահների, ոչ պետական կառույցների և ծառայությունների հետ, ոչ էլ որոշակի մարդկանց խմբերում շատ թե քիչ հեղինակություն վայելող մարդկանց կամ իր այս կամ այն ազգականի կամ մերձավորի հետ, որոնք պաշտպանում են այլ թեկնածուի: Այդ պատճառով գաղտնիության պակասի պայմաններում հակված է ընտրել տվյալ ժամանակահատվածում առավել ուժեղներին՝ չտուժելու համար նրանցից հետագայում:

Առավել քննադատելի ճնշում է ընտրատեղամասում ընտրողի «խոցելի կողմերի» մասին խոսակցությունները: Մասնավորապես զինծառայողի ծնողների մոտ նրանց որդիների վիճակի, մերձավորների աշխատանքային, ուսումնական, անձնական և այլ գործունեությունների վրա այս կամ այն թեկնածուի ունեցած հնարավորության մասին ակնարկները:

Երբեմն առկա է բացարձակ անտեղյակություն ընտրությունների մեխանիզմի մասին, չկա հստակ պատկերացում ընտրության ժամանակ իրենց անելիքի մասին: Մարդիկ իրադրային գործոնների են ենթարկվում, նրանցից պահանջվում է ներկայացնել քվեաթերթը կամ ցույց տալ նախապես կամ այլ ապօրինություններ, որոնց ընտրողները անտեղյակության պատճառով ենթարկվում են: Անտեղյակությունը դրսևորվում է նաև նրանում, որ ընտրողը չգիտի որտեղ ստորագրել, որտեղից քվեաթերթ վերցնել, որտեղ քվեարկել և այդ ընթացքում, երբ նա մի քանի տարին մեկ անգամ մտնում է ընտրատեղամաս և փորձում տեղում կողմնորոշվել, նրա հանդեպ կիրառվում է հոգեբանական ճնշում: Նրան կարող են շտապեցնել, դժգոհել նրա արագությունից կամ

չիմացությունից և այլն: Հետազոտության ընթացքում ինչպես փորձագետների, այնպես էլ ֆոկլոր խմբի մասնակիցների կողմից նշվել են նաև այլ տեխնոլոգիաներ, որոնք սակայն չունեն նույնքան տարածում, որքան ճնշման վերոնշյալ տեխնոլոգիաները:

1. Անմիջական շփումներ, դիրքորոշումների և մոտիվների ստեղծման աշխատանքներ ընտրողների, հանձնաժողովի անդամների և թեկնածուների կամ նրանց ներկայացուցիչների հետ և թաղային հեղինակությունների «անհերքելի ճշտի» շահարկում
2. Ծանոթ թաղային հեղինակությունների, կրիմինալ հեղինակությունների և կրիմինալ կոդեքսի օգտագործմամբ

2.5 Կոմպրոմատային տեխնոլոգիաները

Կոմպրոմատները պայմանականորեն կարելի է դասակարգել երեք տիպի՝ իրավական հետևանքների, հասարակական կարծիքի և հարաբերությունների վրա հնարավոր ազդեցության կոմպրոմատներ: **Իրավական հետևանքների կոմպրոմատները** ընտրահինաստիտուտի այն սուբյեկտի մասին ինֆորմացիան է, որի միջոցով կարելի է հասնել այդ սուբյեկտի **իրավական սանկցիավորմանը**: Նման կոմպրոմատների օրինակ են նախկինում կատարված տարբեր մակարդակի օրինախախտումները: Իրավական կոմպրոմատը կարող է ունենալ կրկնակի կամ եռակի ազդեցություն, այն առումով, որ դա կարող է խաղալ նաև հասարակական կարծիքի և հարաբերությունների կոմպրոմատի դեր: Այս տիպի կոմպրոմատը, սակայն հիմնականում ունի իր առաջնային իմաստով կիրառությունը, ինչը մասամբ պայմանավորված է այն փաստով, որ հասարակությունում իրավախախտ վարքը բոլորովին էլ միշտ չէ, որ ունի վարկազրկող դեր: Դեռ ավելին, կա իրավախախտումների տեսակներ, որոնք հասարակության որոշ խմբերի մոտ կարող են հեղինակություն բերել:

Հասարակական կարծիքի կոմպրոմատը այն ինֆորմացիան է, որով կարելի է ընտրահինաստիտուտի սուբյեկտի նկատմամ առաջացնել **հասարակական բացասական սանկցիավորում**՝ հասարակական կարծիքի, վերաբերմունքի և վարկի փոփոխման միջոցով: Հասարակական կարծիքի կոմպրոմատը ենթադրում է հասարակությունում ընդունված նորմաարժեքային համակարգից շեղվող վարքի մասին ինֆորմացիա: Հասարակական կարծիքի կոմպրոմատների մի մեծ խումբ չեն կարող իրենց ֆունկցիան կատարել, քանի որ մակրոմակարդակում շեղվող դեկլարացված վարքի մոդելները հասարակության շատ խմբերի մոտ ընդունվում են որպես նորմ: Հասարակական կարծիքի կոմպրոմատի մյուս խոչընդոտը **«ոչ ոք մաքուր չէ»** սինդրոմի առկայությունն է հասարակությունում: Միևնույն ժամանակ արդեն նորմավորված շեղվող վարքի մասին ինֆորմացիան այնքան բացահայտ, մանրամասնորեն և արագ է տարածվում հասարակությունում, որ առաջացնում է **շեղվող վարքի թափանցիկության** երևույթ: Կա կարծիք, որ այս սինդրոմի խորացումը ծրագրվում և իրականացվում է պետական ուղղակի կամ անուղղակի քարոզչության միջոցով:

Արդյունքում, փորձագետի խոսքերով. **«Բոլորը բոլորի մասին ամեն ինչ գիտեն»** իրավիճակում դժվար է ընտրահինաստիտուտի որևէ սուբյեկտի վախեցնել հասարակական կարծիքով այն վարքի մասին, որը շատերը գիտեն, շատերը իրենք են էդպես վարվում: Եվ վերջապես հասարակական կարծիքի կոմպրոմատի ազդեցության թուլացնող գործոններից է նաև հասարակական կարծիքի և հենց իր, հասարակության թուլությունը: Ընտրահինաստիտուտի շատ սուբյեկտներ թքած ունեն հասարակական կարծիքի վրա, քանի որ գործունեության առաջընթացի գրավականներում շատ քիչ տեղ են տալիս դրան և գիտեն այս հասարակությունում անհամեմատ էֆեկտիվորեն գործող գրավականներ, քան հասարակական կարծիքն է: Չնայած այս ամենին, այնուամենայնիվ հասարակական կարծիքի կոմպրոմատը ունի **չափազանց արդյունավետ** կիրառման դեպքեր, ոլորտներ և եղանակներ: Այս տիպի կոմպրոմատի բովանդակությունից կախված՝ այն կարելի է ուղղել տարբեր ենթամշակութային խմբերի: Մի տիպի վարքը, որ նորմալ է մի ենթամշակույթում,

կարող է շատ բացասական արձագանք ունենա այլ ենթամշակութային խմբերում: Հասարակական կարծիքի կոմպրոմատի ենթամշակութային ուղղորդման օրինակ է **կրիմինալ կոդեքսով կոմպրոմատը**, որը ներառում է այնպիսի ինֆորմացիա, որը խիստ սանկցիավորումներ ունի կիրմինալ կոդեքսով: Հետևաբար, եթե սուբյեկտի համար նշանակալի են կրիմինալ աշխարհի հետ հարաբերությունները և հասարակությունում վերջինս իրավապահ կառույցների թուլացման կամ այլ պատճառներով ակտիվ է, նա ստիպված է հաշվի նստել այսպիսի կոմպրոմատի հետ:

Հարաբերությունների վրա ազդեցության կոմպրոմատի միջոցով հնարավոր է փչացնել, խզել, սրել ընտրախնստիտուտի սուբյեկտի և այն մարդկանց հարաբերությունները, որոնց հետ հարաբերությունների նման փոփոխությունները այդ սուբյեկտի համար **բավական արժեքավոր են պահանջվող փոխզիջումներին գնալու համար**: Այսպիսի կոմպրոմատներ իրականացվում են հենվելով հարազատ կամ նշանակալի մարդկանց հետ հարաբերությունները չխզելու մարդկանց հակվածությունը հաշվի առնելով: Պարզ օրինակ՝ ինչպես ասվեց փորձագետներից մեկի կողմից՝ մեր հասարակությունում քիչ տղամարդիկ կան, որ չունեն սիրուհի կամ գոնե մեկ երկու անգամ «լեվի չեն գնացել»: Կամ՝ քիչ մարդիկ կան, որ երբևէ իրենց ղեկավարից չեն դժգոհել:

Կոմպրոմատը կիրառվում է ոչ միայն շանտաժի նպատակով, այլև դրա **բացման** հետևանքով սպասվելիք արդյունքի համար: Կոմպրոմատի բացումը դրա ինֆորմացիայի հաղորդումն է համապատասխան ուղղությամբ: Այն դեպքերում, երբ կոմպրոմատի միջոցով սուբյեկտի սպասվելիք վարքը պակաս օգտակար է, քան կոմպրոմատի բացումը, տեխնոլոգիայի իրականացնողները հակված են գնալ դրան: Իսկ երբեմն կատարվում է կրկնակի կիրառում, այն է՝ **սկզբում շանտաժ, ապա բացում**:

Ոչ բոլոր կոմպրոմատներն են հաջողությամբ **իրացվում** մինչև վերջ և փոխադարձ: Այն դեպքում, երբ կոմպրոմատի պայմանը երկուստեք իրականացվում է, կարելի է համարել, որ նախաձեռնող կամ շանտաժող կողմին հաջողվեց կոմպրոմատը **փոխադարձ իրացնել**: Սակայն, միշտ չէ, որ կոմպրոմատի միջոցով կապված պայմանով ենթադրվող պարտավորությունները երկու կողմն էլ լիարժեք իրականացնում են: Եթե կոմպրոմատի ենթարկված կողմը լիարժեք չի իրականացնում իր պարտավորությունը, ապա կոմպրոմատի իրացումը ձախողվում է: Այս դեպքում հավանական է, որ կոմպրոմատը **բացվի**: Կոմպրոմատի բացումը, հատկապես այն դեպքերում երբ այն արդեն փոխադարձ իրացվել է, կարող է առաջացնել դրան ենթարկված ընտրախնստիտուտի սուբյեկտի խորը թշնամանք, վրեժխնդրություն և վտանգավոր է այդ քային գնացողի համար: Այդ պատճառով այն կարող է իրականացվել այլ սուբյեկտների միջոցով կամ անանուն, ինչը հնարավորություն կտա խուսափելու վրեժխնդրությունից, լարվածությունից և այլ բացասական հետևանքներից: Ենթադրվում է, որ կոմպրոմատները կարող են նաև վաճառվել այլ սուբյեկտների և լավ քիզնես հանդիսանալ նրանց համար, ովքեր տիպապետում են սպեցիֆիկ ինֆորմացիայի ձեռքբերման հնարավորությամբ մարդկանց կամ հաստատությունների համար:

Իրավական կոմպրոմատների գործառնությանը նպաստում է մաքուր մնալու խոչընդոտները գործունեության ամենատարբեր ոլորտներում: Հասարակության համակարգային թերությունների պայմաններում դժվար է առաջընթաց ունենալ և մրցակցության դիմանալ առանց կաշառքի ինստիտուտից օգտվելու, առանց հարկային չարաշահումների և այլ իրավախախտումների: Հասարակական կարծիքի կոմպրոմատների և հարաբերությունների կոմպրոմատների գործառնությանն է նպաստում ազատական մտածողության պակասը հանրապետությունում, զրպարտությունից անպաշտպանությունը և ինֆորմացիոն միջոցների պատասխանատվության պակասը և պրակտիկան:

Կոմպրոմատային տեխնոլոգիաներից շատերը իրականացվում են ուժային կառույցների միջոցով: Վերջիններս սակայն, կոմպրոմատների միջոցով հարցերի չլուծման դեպքում, կիրառում են նաև իրական պատժամիջոցներ: Մասնավորապես նշվում է ոչ յուրային ընտրասուբյեկտների նկատմամբ **«սարքովի» գործերը**: Ենթադրվում է, որ

ուժային կառույցները, իրավապահները և հատուկ ծառայությունները ունեն հնարավորություն շինծու մեղադրանքներ առաջադրել և սանկցիավորում իրականացնել:

1. Ճնշումը գինձառայողների և նրանց ազգականների վրա
2. Ազդեցիկ ազգականների կողմից հոգեբանական և ֆինանսական ճնշումներ
3. Ճնշումներ, երբ պետական կամ ազգային հարցերի լուծումը բացառիկ ձևով կապվում է միայն այս կամ այն թեկնածուի հետ՝ «նրան դեմ՝ ազգին դեմ» մոդելով. տարատեսակներ և անալոզներ
4. «Կերուխուսի գործոնը» հանձնաժողովներում
5. Ընտրողներին որոշակի աջակցությամբ կամ «լավությամբ» հոգեբանական պարտավորեցման գործոնը
6. Նամերկրացու գործոնի շահարկումը
7. Ընտրությունների կանխորոշվածության տպավորության ստեղծումը

2.6 Ճնշումների օգտագործմանը նպաստող գործոնները

Ճնշումների անմիջական խթանողը մեր հասարակությունում **մենթալիտետն**։ Սակայն վերջինս իր հիմքում ունի ավելի խորը երևույթներ, որոնք ձևավորում են այդ մենթալիտետը։ Նման խորքային երևույթներից է հասարակական **ստատուսի նվաճման «հայկական» եղանակը կամ ընտրությունն ըստ լոյալության**, որոնք աշխատողին դարձնում են **կախված և խոցելի**։ Իսկ վերջիններիս միջոցով ճնշման էֆեկտիվ պայմաններ են հանդիսանում իրավական և մյուս համակարգերի անկատարությունը։ Մասնավորապես աշխատանքային առաջընթացի համար սուբյեկտիվ գործոնների մեծ դերը և հասարակության կողմից այդ գործոններից օգտվելու հակվածությունը առաջացնում է մի վիճակ, երբ աշխատողները հայտնվում են որոշակի ստատուսի վրա ինչ-որ մեկի օգնությամբ կամ հայեցողությամբ։ Վերջիններս խոցելի են դարձնում նրանց և հնարավորություն տալիս վերադասին անհրաժեշտության դեպքում ազատել կամ այլ բացասական սանկցիաներ կիրառել՝ ունենալով դրանց համար օբյեկտիվ հիմնավորումներ։

Ընտրահամակարգի սուբյեկտը իր հերթին ունի **պարտքի կամ վախի զգացում** վերադասի հանդեպ, որոնք էլ դրդում են նրան լինել լոյալ, գաղտնապահ և պրոբլեմների լուծումը «մենք մերոնցով» տարբերակով տեսնող։ Խախտումների դեպքում նրանք հակված չեն հայտնել համապատասխան վայրեր հետևյալ պատճառներով։ Առաջին՝ քանի որ հասարակությունում կա անհարգալից վերաբերմունք նման վարքի նկատմամբ։ Վերջինս իր հերթին պայմանավորված է նման վարք ցուցաբերողին **«ուրացողի»** հետ ասոցիացնելու ստերեոտիպը, որը ուղեկցվում է պիտակավորմամբ։ Մյուս կողմից բացասական վերաբերմունքը պայմանավորված է նաև **«ոչ որ մաքուր չէ, հետևաբար ոչ որի մեղադրել պետք չէ»** մոդելի մտածելակերպով։ Երկրորդ՝ հասարակությունում գիտակցվում է **ձախողման պրակտիկան**, որ հայտնելու դեպքում հաջողված ավարտի նախադեպերը քիչ են, որը խոստումնալից չի դարձնում նման վարքը։

Մենթալիտետի խնդիրը, որ ամանցված է հասարակությունում **ստատուսի նվաճման խնդրից** և **«ոչ որ մաքուր չէ»** սինդրոմից, դարձնում է մեր հասարակության մարդուն խոցելի և ազդեցությունների ենթակա։ Մասնավորապես այս սկզբունքի վրա է հենվում **կոմպրոմատների արշավի** տեխնոլոգիան։

Ստացվում է, որ ընտրողի, հանձնաժողովի և ընտրահամակարգի այլ սուբյեկտների վարքի շատ տարրեր, որ նպաստում են հակադեմոկրատական տեխնոլոգիաներին, անմիջականորեն պայմանավորված լինելով նրանց մենթալիտետով և հիմքում ունենալով և միջնորդավորված եղանակով պայմանավորված լինելով ավելի խորքային երևույթներով, դժվար է փոփոխության ենթարկել։ Դրա համար պրոբլեմի արմատական լուծումը պահանջում է մենթալիտետի փոփոխություն, իսկ վերջինիս համար շատ այլ խորքային պրոբլեմների լուծում, ինչպիսին է, օրինակ, հասարակական ստատուսի նվաճման

ընդունելի եղանակների տարածումը պրակտիկայում: Սրանք սերունդների խնդիր են և ենթադրում են երկարատև համակարգային փոփոխություններ: Այս պրոբլեմները կարճաժամկետ հեռանկարում երբեմն համարվում են անլուծելի, քանի որ կապված են նաև Հայաստանի աշխարհագրական դիրքի, քաղաքակրթական և մշակութային մուտագվածության հետ:

Ուրախալի է, որ ֆիզիկական ճնշումները տարածված չեն համարվում և գալիք ընտրությունների ժամանակ ակնկալվում է համամասնական թեկնածուների ավելի բյուրեղացած վիճակ: Նման պատկերի մեկնաբանման համար չափազանց էական է ինկատի ունենալ այն կարծիքը, որ ֆիզիկական ճնշումների վտանգը այնքան իրական է, որ տեղի են տալիս սպառնալիքին՝ չսպասելով դրանց իրականացմանը: Քրեական տարրերի, ուժային կառույցների և մեծամասնականի թեկնածուների կողմից ճնշումները համամասնականի վրա համարվում է, որ պիտի փոքր լինի: Չնայած դրան, նման ճնշումներ նույնպես գործում են¹³:

Տեխնոլոգիայի առկայությանը նպաստող այլ գործոններ

1. Մարդկանց համակերպվելու հակվածությունը
2. Իրավապահ մարմինների աչքափակությունը այդ երևույթների վրա
3. Հովանավորչությունը
4. Մենթալիտետը

2.7 Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման և ադմինիստրատիվ ճնշումների դեմ պայքարի որոշ առանձնահատկություններ

Կիրառողները հոժարակամ հրաժարվում են այս մեթոդից: Ինչպես և շատ ուրիշ տեխնոլոգիաներ, այս տեխնոլոգիան նույնպես հնարավոր է դադարեցնել քաղաքական կամք դրսևորելու դեպքում: Բնականաբար, ինչպես ցանկացած իշխանություն, ՀՀ իշխանությունները, նույնպես հոժար կամքով իրենց վերարտադրության այս հեշտ եղանակը հակված չեն փոխարինելու ավելի բարդ եղանակներով: Չնայած այս տրամաբանությանը՝ համաձայն ստացված ինֆորմացիայի, ադմինիստրատիվ ռեսուրսի օգտագործումը հիմնականում իրականացվում է ոչ սուր դրսևորումներով և պաշտոնյաները և աշխատողները իրենք են իրենց վերադասին ընդառաջում նման հարցերում: Դեռ ավելին, ուղղակի ֆիզիկական ճնշումները համարվում են բավականաչափ նվազ հանրապետությունում: Ենթադրվում է միայն իրավիճակային ճնշումների և ոչ թե համատարած երևույթի առկայության մասին: Խոսվում է նաև իշխանությունների կողմից բարի կամքի դրսևորմամբ արված հրահանգների շատացման մասին՝ այս կամ այն ընտրությունների ժամանակ չկիրառել ճնշումներ կամ այլ տիպի խախտումներ: Կարելի է եզրակացնել, որ այնուամենայնիվ հնարավորության դեպքում, իշխանությունները նույնպես ձգտում են քիչ խախտումների գնալ կամ բացառել կոպիտ խախտումները:

Փոփոխություններ օրենքում: Համաձայն նոր ընտրական օրենսգրքի՝ արգելված է քարոզչությունը պետական մարմիններում և դրանց աշխատակիցների կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս: Սակայն չի արգելված մասնավոր կազմակերպությունների կողմից իրենց աշխատակազմի քարոզչությունը: Մինչդեռ վերջինս ցանկալի չէ, քանի որ այս տիպի քարոզչությունը մեծամասամբ թողնում է ադմինիստրատիվ ճնշման էֆեկտ: Անհրաժեշտ է արգելել բոլոր տիպի քարոզչությունները, որոնք կարող են թողնել ճնշման էֆեկտ:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման և ադմինիստրատիվ ճնշման դեմ պայքարի խոչընդոտները: Պետք է նշել, որ ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման

¹³ Տես այլ ճնշումներ

վերահսկողությունը կամ դրա դեմ հասարակական պայքարը առանձնակի արդյունավետություն չի խոստանում, ինչը պայմանավորված է արմատավորված մտածելակերպի տարրերով և ղեկավարության ունեցած ճնշման լծակներով: Առաջին դեպքում խանգարում է մարդկանց պարտավորվածության զգացումը ղեկավարությանը, իսկ երկրորդ դեպքում մարդկանց վախը ղեկավարության կողմից հնարավոր սանկցիանաներից: Այլ կերպ ասած աշխատողների շարքերում առկա է **«ազատ մարդու» դեֆիցիտ:**

Հասկանալու համար այդ խոչընդոտները՝ կարևոր է հաշվի առնել, որ ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հիմնարկների աշխատողները մեծ դժվարությամբ են ձեռք բերել իրենց աշխատանքը, ինչի համար հիմնականում խորապես երախտապարտ են իրենց ղեկավարությանը: Մյուս կողմից նրանց առաջխաղացումը մեծապես պայմանավորված է ղեկավարության կամքից և ենթակա է սուբյեկտիվ վերաբերմունքի: Ինչպես աշխատանքի ձեռքբերումը այնպես էլ առաջխաղացումը պայմանավորելով ղեկավարության կամքից և չգիտակցելով իրենց իրական արժանիքները, որոնք հաճախ չկան, իրենց աշխատատեղի ձեռքբերման գործում, աշխատողները պատրաստ են իրենց երախտագիտությունը արտահայտել ընտրական գործընթացում ամեն տեսակ աջակցությամբ և ամենատարբեր օրինախախտումների նկատմամբ համակերպվողությամբ: Արդյունքում ադմինիստրացիայի աշխատակիցներն իրենք են նախաձեռնում ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառմանը նպաստող ակցիաներ և աշխատում որևէ ձևով օգտակար լինել ղեկավարությանը կամ գոնե այդպիսին երևալ: Իսկ այն մարդիկ, որոնք չունեն պարտավորվածության զգացում ղեկավարության նկատմամբ հիմնականում ունեն բացասական սանկցիաներից վախ:

Իրավիճակի շտկումը նախ և առաջ պահանջում է աշխատանքային ստատուսի ձեռքբերման մեխանիզմների վերափոխում: Այսինքն աշխատանքի պետք է ընդունվեն իրոք օբյեկտիվորեն պահանջարկ վայելող և արժանի մարդիկ, որոնք իրենց աշխատանքի ընդունման համար պարտական կլինեն ոչ թե ղեկավարությանը՝ այլ իրենց արժանիքներին: Հակառակ դեպքում դժվար է մարդկանց համոզել, որ իրենք պարտական չեն իրենց ղեկավարությանը արտաաշխատանքային հարցերում և կարող են օրինակ խոստանալ և չանել, կամ լինել պասիվ: Մարդկանց այն խումբը, որ իրոք օբյեկտիվ են համարում իրենց աշխատանքային գործունեության առաջընթացը և կախման մեջ չեն ղեկավարությունից՝ «ազատ մարդիկ», կարող են լինել պասիվ կամ նույնիսկ հակադրվել: Սակայն վերջինս հնարավոր է միայն, եթե նրանք չեն վախենում աշխատանքի վայրում պրոբլեմներ ունենալուց: «Ազատ մարդիկ» ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հիմնարկների վերին օղակներում քիչ տոկոս են կազմում: Ադմինիստրատիվ տեխնոլոգիաների դեմ պայքարը ենթադրում է նաև մյուս տեխնոլոգիաների համար արվող միջոցառումներ՝ քարոզչական, ուսուցողական, քաղաքական գործունեություն:

3 Ընտրաձայների գնում ընտրողներից

Հայաստանում օգտագործվող տեխնոլոգիաներից ամենատարածվածն ու ակնհայտն է համարվում ընտրաձայների գնումը ընտրողներին կաշառելով: Այս տեխնոլոգիան ոչ միայն հակադեմոկրատական է, այլև օրենքի խախտում է ենթադրում: Սույն հետազոտությունում ընտրակաշառք է համարվում ընտրողներին անհատապես և նյութապես շահագրգռումը որոշակի ձևով ընտրություն կատարելու:

Համաձայն Օրենսգրքի 7-րդ հոդվածի՝ նախընտրական քարոզչության ժամանակ թեկնածուներին, կուսակցություններին արգելվում է անձամբ կամ որևէ այլ եղանակով քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ, խոստանալ դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել, խոստանալ ծառայություններ: Այս հոդվածի խախտումների կանխումը և պատժումը պրակտիկապես իրագործելի է, եթե իրավապահ մարմինները նորմալ գործառնություն իրականացնեն:

Ընտրողների կաշառումը իրականացնելու համար անհրաժեշտ է ունենալ հովանավորություն այն սուբյեկտների կողմից, որոնք կարող էին կանխել և պատժամիջոցներ կիրառել օրենքի խախտման համար: Փորձագետները ընտրակաշառքի երևույթը նկարագրելիս որպես դրան օրինաչափորեն զուգակցվող երևույթ շեշտում են ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը: Դրանով պարզ դարձնելով, որ դա ավելի հեշտությամբ կարող է ռեալիզացնել միայն իշխանության ներկայացուցիչը կամ այնտեղ ներկայացուցիչ ունեցողը, որը կերաշխավորի անպատժելիությունը: Ընտրակաշառք բաժանողը պետք է հստակ երաշխիքներ ունենա, որ իրավապահ մարմինների կողմից իր գործողությունները չեն հետապնդվի: Այսինքն փորձագետի բառերով «գործում է կազմակերպված համակարգ»: Ստացվում է, որ իշխանությունները հակված են կիրառել ադմինիստրատիվ ռեսուրս, և եթե դա ամբողջովին չի ապահովում ընտրության ցանկալի ելք, գործածվում է ընտրակաշառքի ինստիտուտը և դրա նկատմամբ անտարբերություն են դրսևորում իրավապահ մարմինները: Սա համարվում է կազմակերպված համակարգ:

Ընտրակաշառքի բաշխման կենտրոնը հիմնականում ձևավորվում է իշխող կուսակցություններից որևէ մեկի թեկնածուի նախընտրական շտաբում: Նույնիսկ պատասխանատուներ են լինում, որոնք կազմում են ընտրողների ցուցակներ: Այդպիսի ցուցակներ 2003թ-ի երկու ընտրությունների ժամանակ էլ ընդդիմությունը ներկայացրեց, որոնք, համաձայն փորձագետի, հայտնվեցին իրենց մոտ տարբեր ճանապարհներով: Կազմում են ցուցակներ կաշառքի չափն են ֆիքսում, վերցնողը ստորագրում է և այլն: Նման ցուցակներ գործում են նաև այն ժամանակ, երբ ոչ միայն գումար են տալիս, այլև սննդամթերք կամ այլ կաշառք: Այս ամենը կատարվում է շտաբների միջոցով, որին մասնակցում են որևէ ընտրատարածքում գտնվող համայնքներ, այդ գործընթացի տարբեր տրամաչափի չիմովնիկներ հիմնականում՝ ստորին օղակներից:

Ընտրակաշառքի բաժանման ռազմավարությունը և տեսակը որոշվում է ըստ տվյալ տեղամասի և բնակչության առանձնահատկությունների: Բնակչության մասին մանրամասն ինֆորմացիայի են տիրապետում թաղային որոշակի գործունեությամբ զբաղված մանր չիմովնիկները կամ բնակչության մեջ մեծ սոցիալական կապերի տիրապետող մարդիկ, որոնք էլ մասնակցում են այդ ռազմավարության ընտրությանը և իրականացմանը:¹⁴

¹⁴ **Տարգվող*** Շտաբների միջոցով են անում որին, մասնակցում են որևէ ընտրատարածքում գտնվող համայնքներ, այդ գործընթացի տարբեր տրամաչափի չիմովնիկներ, հիմնականում՝ ստորին օղակներից: Սկզբում ներգրավում են իրենց պոտենցիալ ընտրողին, նրանց շահագրգռում և հիմնականում աշխատում են հասարակության այն խավերի վրա, որոնք տակավին կողմնորոշված չեն: Այսինքն իրենց ընտրաքաղաքի ժամանակ արդեն տվյալ համայնքի հասարակական տրամադրություններին մոտավորապես ծանոթ են և ամեն համայնքում ըստ տրամադրությունների ընտրում են աշխատանքի մի ձև, միասնական ձև չի կարող լինել: Մի որևէ գյուղում ընտրակաշառքը փողի միջոցով այդքան էֆեկտիվ չի կարող լինել, ինչքան մի պարկ ալյուրի միջոցով: Եթե ոչ՝ մեծ համայնքներում սովորաբար ֆինանսի ձևով են դա անում:

ՀՀ բոլոր ընտրական օրենսգրքերով արգելված է ընտրակաշառքը, որը սակայն հայաստանյան ընտրությունների պրակտիկայում ունի լայն տարածում և հարուստ է իր տարատեսակներով: Այս տեխնոլոգիայի տարբեր տարատեսակների առկայությունը պայմանավորված է այն բանով, որ դրանցից յուրաքանչյուրը ունի կիրառման տարբեր արդյունավետություն, տարբեր հետևանքներ, պահանջում է տարբեր բնույթի և չափերի ռեսուրսներ և կարող է իրականացնել միմյանցից նրբորեն տարբերվող ֆունկցիաներ՝ որոնք արտացոլվում են այդ տեխնոլոգիաների առավելություններում և թերություններում: Ընտրողներից ընտրաձայների գնման տեխնոլոգիայի տարատեսակները կարելի է տեսնել դրա ներքոչարադրյալ դրսևորումներում:

3.1 Ընտրողների կաշառումը փողով

Այս տեխնոլոգիան օրենքի խախտում է իրենից ներկայացնում: Տեխնոլոգիայի արդյունավետությունը գնահատվում է 60-70 տոկոս: Այսինքն գումար ստացած մարդկանց այդքան տոկոսը ընտրում են կաշառող կողմին¹⁵: Ընտրակաշառքի ոչ հարյուր տոկոսանոց արդյունավետությունը պայմանավորված է այն բանով, որ կաշառքը տալուց հետո անհրաժեշտ է վերահսկել ընտրողի իրական վարքը և համապատասխանեցնել այն նրա տված խոստմանը: Սակայն, չնայած այդ վերահսկողությունը բավական մշակված եղանակներ ունի, սակայն ամբողջական չէ¹⁶: Գումարը բաժանվում է տարբեր մեխանիզմներով: Այդ մեխանիզմներից են նախորոք կաշառումը, տնտեսուն այցելությունները, կաշառումը տեղում և այլն:

Այն կիրառվում է գրեթե բոլոր մեծամասնական թեկնածուների կողմից և առավել ուժգին ինտենսիվություն է ստանում, երբ մրցակիցները նույնպես բաժանում են ընտրակաշառք: Ի տարբերություն այլ տիպի կաշառքների, փողով կաշառքը կաշառվողների կողմից ավելի է գնահատվում, քանի որ հանդիսանում է կարիքները հոգալու ավելի արդյունավետ եղանակ: Կաշառվողի համար ընտրակաշառքը փողով լինելով համոզիչ և պարտավորեցնող, այնուամենայնիվ պահանջում է հովանավորչություն: Այն հանդիսանալով օրենքի խախտում հիմք է հանդիսանում քրեական պատասխանատվության ենթարկել բաժանողներին և կազմակերպողներին: Այդ պատճառով, տեխնոլոգիան իրականացնելու համար անհրաժեշտ է, որ իրավապահ մարմինները աչք փակեն այդ երևույթի վրա: Այդ պատճառով, ոչ բոլոր կաշառողները կարող են դրանով զբաղվել: Համաձայն փորձագետների, այս տեխնոլոգիան կիրառում են հիմնականում իշխանությունների ներկայացուցիչները, իշխանական կուսակցություններին աջակցող մեծամասնականի պատգամավորները, որոնք ունեն հովանավորչություն իշխանությունների և մասնավորապես իրավապահ կառույցների կողմից¹⁷:

3.2 Ընտրողների կաշառումը նախօրոք

Ընտրողների կաշառումը նախօրոք, դեռևս ընտրություններից շատ առաջ ունի հետևյալ առավելությունները կաշառատուի համար: Այն ապահովում է ավելի մեծ վստահություն, որ ընտրողները մինչև կաշառման գործընթացը մրցակիցներից կաշառք վերցրած չեն լինի,

¹⁵ **Հարցվող*** Բնակչության մեծ մասը՝ որպես ազնիվ մարդիկ, կաշառքն ընդունում և ընտրում են կաշառատուին: Կան նաև մարդիկ, որոնք, ունենալով գումարի կարիք, ընդունում են կաշառքը, բայց ընտրում են իրենց նախընտրած թեկնածուին: Նման դեպքեր հանդիպում են բավականին հաճախ, սակայն չեն կազմում որակյալ մեծամասնություն:

¹⁶ Տես ընտրության վերահսկման եղանակները:

¹⁷ **Հարցվող*** Չնայած փողով ձայների գնումը օրենքով արգելվում է, սակայն դա էլ է կատարվում ապաքաղաքական տարրերի կողմից, դաբրո ստացած մարդկանց կողմից: Ես չեմ կարծում, որ որևէ ընդիմադիր գործիչ, թեկուզ մեծամասնական, պիտի փող բաժանի կամ գնի:

ինչը որոշակիորեն ապահովագրում է թեկնածուին ընտրողների կողմից կաշառքը վերցնելու **անակնկալ հրաժարումից**: Քանի որ ընտրակաշառքի երևույթը դարձել է սովորական ՀՀ ընտրությունների ժամանակ, թեկնածուները նախապես գիտեն որ այս տեխնոլոգիան կիրառելու են մյուս հակառակորդները, ինչի համար հակված են նրանցից վաղ սկսել գործընթացը, ինչը թույլ կտա աշխատել դեռևս **դիրքորոշումներ չունեցող ավելի մեծ զանգվածի** վրա:

Հաջորդ առավելությունը պայմանավորված է այն բանով, որ ընտրակաշառքը իրականացվում է հովանավորչության և այլ գործոնների առկայության պայմաններում, որոնք ինտենսիվ մրցակցության պայմաններում ենթակա են փոփոխությունների, ինչը բերում է ընտրական արշավի արտաքին պայմանների փոփոխականություն: Այդ փոփոխականությունը ստիպում է թեկնածուներին ընտրակաշառքը բաժանելու հնարավորությունը օր առաջ օգտագործել՝ զերծ մնալու համար **հանկարծակի արտաքին փոփոխություններից**, որոնք կարող են վերացնել նրանց այդ հնարավորությունը:

Հաջորդ առավելությունը այն է, որ նախընտրական շտաբը ընտրակաշառք վերցնողներից նախապես հնարավորություն է ստանում ձևավորել մի «յուրային» զանգված, որի հետ պարբերական աշխատանքները ավելի մեծ վստահություն են առաջացնում, որ կաշառվածները կկատարեն իրենց ընտրությունը թեկնածուի օգտին: Մյուս կողմից «յուրայինների» այդ բանակը ինքն է վերածվում ընտրակաշառքի և քարոզչության տարածման ցանցի, որը թեկնածուի քարոզչական աշխատանքներին մեծ նպաստ կարող է ունենալ: Որպես կանոն կաշառված ընտրողները կամա թե ակամա ստիպված են դրական խոսել թեկնածուի օգտին և որքան երկար ժամանակ ունեն նրանք այդ դիրքորոշումը, այնքան մեծ է **քարոզչական դրական ֆոնը** թեկնածուի համար:

Ընտրակաշառքի երևույթի գտնվելը դիտորդների և միջազգային հանրության ուշադրության ներքո թեկնածուներից պահանջում է զգուշավորություն: Դիտորդներին հայտնի ընտրակաշառքի բաժանման ժամանակահատվածը ենթարկվում է մոնիտորինգի, որը հեշտությամբ կարող է բացահայտել ընտրակաշառքի տրման դեպքերը: Այդ պատճառով որոշ դեպքերում ընտրակաշառքը տրվում է շատ ավելի վաղ, որպեսզի դիտորդների կողմից նկատելի չլինի այդ երևույթը:

Միևնույն ժամանակ նախորոք կաշառումը ունի նաև թերություններ թեկնածուի համար: Այն անհրաժեշտություն է առաջացնում պարբերաբար կապ պահպանել և թարմացնել պայմանավորվածությունը, համոզվել կաշառվածի հավատարմության մեջ: Մրցակից թեկնածուները և այլ ուժեր կարող են քարոզչություն ծավալել տվյալ թեկնածուի դեմ, այնպես, որ կաշառվածները կորցնեն պարտքի զգացումը կաշառատուի նկատմամբ: Այդ պատճառով կաշառատուն ստիպված է լինում ի պատասխան քարոզչական աշխատանքներ կատարել:

Մյուս կողմից, նախորոք իմանալով հակառակորդի կաշառքի չափը՝ թեկնածուն ավելի մեծ գումարներ առաջարկելով, փորձում է փոխել կաշառվածի դիրքորոշումը կամ դեռևս չկաշառվածների մոտ առաջացնել ավելի մեծ գումարներ վաստակելու հույս, որի համար վերջիններս սպասում են մինչև հակառակորդ թեկնածուները սկսեն իրենց ընտրակաշառքի բաժանումը՝ ենթադրելով և հավատալով, որ այդ գումարը ավելի մեծ է լինելու: Ետ պահելու համար ընտրողներին ընտրակաշառքի վերցնելուց՝ հակառակորդները շշուկներ են տարածում իրենց կողմից բաժանվելիք ավելի մեծ գումարների մասին:

3.3 Ընտրողների կաշառումը տեղում

Ընտրողներից ոչ բոլորն են հասցնում գումար վերցնել ընթացքում: Սա պայմանավորված է սպասվելիք ավելի մեծ գումարների հույսով առաջարկվող գումարներից հրաժարվելուն, տեխնիկական պատճառներով, բնակավայրում չգտնվելու կամ այլ պատճառով դեռևս գումար չվերցրած մարդկանց: Կա նաև մարդկանց խումբ, որոնք այդ երևույթին ընդիմանում են ընթացքում, սակայն վերջում տեսնելով, որ բոլորը վերցրել են, մտադրվում են վերցնել: Մյուս կողմից թեկնածուները ոչ բոլորին են հասցնում կաշառելու այցելություններ կատարել, ինչի համար նրանք երբեմն կաշառումներ

կատարում են վերջին օրերին կամ ընտրությունների օրը ընտրատեղամասի մոտակայքից: Տեղում ընտրակաշառքը ուղղորդված է նաև այն ընտրողներին, ովքեր չեն կողմնորոշվել, թե ում պետք է ընտրեն, ովքեր չեն մտադրված ընտրության գնալ և նույնիսկ նրանց, ովքեր արդեն վերցրել են որոշակի գումար, սակայն չունեն ամուր մտադրություն ընտրելու նախորդ կաշառատուին:

«Տեղում կաշառումն» իրականացվում է ընտրատեղամասերի մուտքերի մոտ, որպես կանոն թանկարժեք մեքենաների կամ կառավարական մեքենաների բեռնախցիկներից ընտրատեղամասերի մոտ անցուդարձ անողների կաշառմամբ: Վերջինիս էությունը կայանում է նրանում, որ հավաքվում են անձնագրերը՝ վճարելով քվեի «արժեքի» մի մասը, իսկ մյուս մասը տրվում է ընտրությունից հետո, կամ ամբողջական գումարի վճարումը, հավաստիացումը, որ իրենց ընտրությունը **վերահսկվում է** և շահտաժը:

Տեղում կաշառելու առավելությունը կաշառատուի համար կայանում է նրանում, որ ապահովում է դիրքորոշման թարմությունը և կաշառվածը մտորելու ժամանակ չի ունենում ինչպես առաջարկը ընդունելու կամ չընդունելու հարցում, այնպես էլ գումարը վերցնելուց հետո ընտրել-չընտրելու հարցում: Արդյունքում, գործընթացը ուղեկցվելով նաև հոգևբանական ճնշումներով, ապահովում է ընտրաձայնի մեծ երաշխավորվածություն: Այս եղանակով միևնույն ժամանակ հնարավորություն են ստանում կաշառողները առաջարկելու ընտրապայքարի արդյունքում ձևավորված ընտրակաշառքի այն մեծությունը, որը մրցունակ կլինի և որից ընտրողը չի հրաժարվի:

Սակայն այս տեխնոլոգիան իրականացվելով ընտրության օրը երաշխավորված չէ անակնկալ ձախողումներից՝ կապված արտաքին փոփոխությունների կամ հակառակորդ թեկնածուի կողմից ձեռք առնված հակառակ միջոցների հետ: Նման միջոցներ կարող են հանդիսանալ ապատեղեկատվությունը, որ այս կամ այն կետում բաժանվող գումարը վերցնողները ընտրություններից հետո ձեռքակալվելու են, դրանք գումարը բաժանում են փորձանական նպատակներով մարդկանց ազնվությունը ստուգելու համար և այլն:

3.4 Ընտրողների այլընտրանքային կաշառման մեթոդները

Գյուղական բնակավայրերում տարածված է ընտրողների կաշառումը ապրանքներով, որոնք հատկապես քաղաքներից հեռու գյուղերում մեծ արժեք են ստանում գյուղացու հոգևբանության մեջ: Որպես նման ընտրակաշառք բաժանվում են այլուրը, բանջարեղենը և մրգերը, որոնք այդ գյուղերում չեն աճում այլ ներկրվում են և այլ տիպի ապրանքներ, որոնք թեկնածուն ինչ-որ եղանակով մատչելի գներով նախապես ձեռք է բերում: Դրանով կաշառքի արժեքը՝ համեմատած դրա թողած էֆեկտի հետ, էժան է ստացվում բաժանողի համար: Գյուղացու ցածր պահանջկոտությունը, որոշ դեպքերում իրենց իրավունքների մասին նվազ պատկերացումները և ցածր ինքնագնահատականը թույլ է տալիս թեկնածուներին առանց փողի «յուլա գնալ»:

Դեֆիցիտ հանդիսացող ապրանքը, որը գյուղացին մեծ դժվարությամբ պետք է ներկրի դրսից ավելի մեծ արժեք է գյուղացու համար, քան փողը: Մասնավորապես մեկ պարկ այլուրով որոշ գյուղերի բնակիչների մոտ ավելի մեծ արդյունքի կարելի է հասնել, քան համարժեք փողով:

Հանրապետության շատ բնակավայրեր ունեն համընդհանուր պրոբլեմներ ճանապարհաշինության, բուժապասարկման, ջրագծերի և այլ հարցերում: Նման պրոբլեմներ, որոնք հանդիսանում են տվյալ համայնքի պրոբլեմների առաջնային ցուցակում, ընտրողներին հետաքրքրում են ավելի, քան այլ տիպի ծրագրեր, որոնք կարող են ներկայացնել թեկնածուները կամ քաղաքական ուժերը: Վերջիններս իրենց հերթին իմանալով առավել առաջնային պրոբլեմների մասին՝ ընտրությունների նախօրեին կատարում են բարեգործական ակցիաներ, որոնք հրապարակայնորեն հրամցվում են ընտրողներին, որպես նախընտրական գովազդ:

Հասարակությունում առկա է տրամադրվածություն, որ ավելի լավ է մեկ կոնկրետ գործ կարևոր խնդրի շուրջ, քան բազմաթիվ խոստումներ և վերացական ծրագրեր: Միևնույն ժամանակ կատարված բարեգործությունը ակնհայտ է տվյալ համայնքի բնակչության

համար և շոշափելի, ինչը նրանց շահագրգռում է տալու իրենց ձայնը համապատասխան թեկնածուին:

3.5 Ընտրողների ցուցակների կազմումը, գումարի չափը

Ընտրակաշառքը ենթադրում է նախնական ցուցակների կազմում, այն մարդկանց, որոնց պետք է գումար բաժանվի: Ցուցակները կազմվում են թաղապետարաններից կամ այլ մարմիններից նախապես հայթհայթված ցուցակների հիման վրա՝ ադմինիստրատիվ ռեսուրսի տիրապետման դեպքում և թաղի բնակիչների գիտակների միջոցով՝ այդ ռեսուրսներին չտիրապետելու դեպքում: Առկա ցուցակներից վերախմբավորվում և առանձնացվում են ընտրողները ըստ նրանց դիրքորոշումների և մշակվում համապատասխան քայլեր՝ յուրաքանչյուր խմբին կաշառելու տեխնոլոգիայի առումով:

Եթե գումարները բաժանվելու են բոլորին, նախապես աշխատանքները սկսվում են այն խմբերի հետ, որոնք առավել կողմնակից են թեկնածուին, որպեսզի ապահովվի նախ յուրայինների անդավաճանությունը: Եթե գումարը բավական չէ բոլորին բաշխելու համար, կամ ինչ-որ պատճառով չի բաշխվելու, այն ընտրողները, որոնք ամուր դիրքորոշում ունեն ընտրելու թեկնածուին, գումար չեն ստանում: Մյուս խումբը չկողմնորոշվածների խումբն է, որոնց հետ նախապես տարված քարոզչական աշխատանքներից հետո, կամ դրանց զուգահեռ, եթե այդ աշխատանքները նրաշխիք չեն տալիս ընտրվելու, կատարվում է ընտրակաշառքի բաժանում: Եվ վերջապես նրբորդ խումբը այն մարդիկ են, որոնք ունեն հակառակ դիրքորոշում, որոնց կաշառումը սովորաբար կատարվում է ավենավերջում և համեմատաբար ավելի մեծ գումարներով:

Ընտրակաշառքի ցուցակներում նշվում են անունները, վերցված գումարի չափը, պարտավորվածության բնույթը, անձնագրի տվյալները և այլ նշումներ: Պարտավորվածության բնույթը կարող է լինել միանշանակ ընտրելը, բացի իր ընտրությունից նաև ընտանիքի այլ անդամների և հարազատների ընտրության նրաշխիքը, բացի թեկնածուից նաև համապատասխան կուսակցության ընտրությունը կամ հակառակը:

Ընտրացուցակները կազմող մարդիկ ընտրությունների ժամանակ հասցրել են մասնագիտանալ և դառնալ հասարակությունում որոշակի խումբ, որի մեծությունը գնահատվում է տասնյակ հազարներ¹⁸: Այս խմբի մարդիկ նախ գումարը բաժանում են իրենց յուրայինների, ազգականների և բարեկամների մեջ և ստանում նրանց նրաշխիքները: Գումարի չափը սովորաբար կախված է հակառակորդների հնարավորություններից և նրանց վերջնական նպատակից, որին ուզում են հասնել գումարի բաշխմամբ: Վերջինս պայմանավորված է նրանց կողմից կիրառվող այլ ռեսուրսներով: Որքան ավելի ուրբանացված և կենտրոնական տարածքում է բնակչությունը, այնքան ավելի մեծ են ընտրակաշառքի չափերը: Այն պայմանավորված է նաև բնակչության սոցիալական վիճակից, որից կախված բնակչության **կաշառելիության շեմը**¹⁹ փոխվում է: Նախորդ ընտրություններում այն գնահատվել է մեծամասամբ 5000 դրամ:

¹⁸ **Հարցվող*** Տեխնոլոգիայի իրականացման միջոց է որոշակի մարդկանց «օգտագործումը», որոնք էլ զբաղվում են գումար տրամադրելով համապատասխան քանակության քվեներ հավաքելով: Բերոնշյալ մարդիկ ձայն են հավաքում իրենց շրջապատից, հարազատներից, բարեկամներից: Հայաստանում կա մի 15000 մարդ, որ ընտրություններ մասնագետ են, վարորդ ունեն, որ ստացել է իր հարյուր հազար դրամը, մարդը երեք հազարով բնակչին տանում է քվեարկության:

¹⁹ **Հարցվող*** Եթե աղբատ գյուղ է ընտրարշավը ավելի էժան է նստում, եթե համայնքը հարուստ է ընտրակաշառքի շեմը ավելի բարձր է լինում: Խորհրդարանական վերջին ընտրությունների ժամանակ, դատելով լրատվական միջոցների ինֆորմացիայից, ընտրակաշառքը եղել է 3-5 հազար դրամ:

4 Չուգակցված տեխնոլոգիաներ²⁰

4.1 Կլիենտելական կապերը մեծամասնական և համամասնական թեկնածուների միջև

Ընտրակաշառքի հիմնական կիրառողները և այս տեխնոլոգիայի առաջամարտիկները համարվում են մեծամասնականի թեկնածուները: Այս փաստը պայմանավորված է այն բանով, որ մեծամասնականում առաջադրվող պատգամավորների հիմնական մասը ունի լուրջ ֆինանսական հնարավորություններ, որոնց մասին հաճախ նշում են որպես «օլիգարխներ»: Օլիգարխները տիրապետելով մեծ գումարների հակված են կատարել տնտեսական հաշվարկ, որի համաձայն մեկ ընտրատարածքում, որ նախկին ընտրությունների ժամանակ ներառել է 40 հազար ընտրող, յուրաքանչյուր ընտրողի տալով մի քանի հազար դրամ, կկարողանան գրեթե երաշխավորված հաղթանակ ունենալ: Ընտրողներին բաշխված գումարի չափը գնահատվում է 60-70 հազար դրամ՝ նշելով նաև, որ շատ ընտրատարածքների առանձնահատկություններով և թեկնածուի հնարավորություններով պայմանավորված այդ արժեքը կարող է փոխվել:

Մյուս կողմից, ինչպես արդեն նշվել է, ընտրաձայների գնումը կամ կաշառումը ենթադրում է հովանավորչություն իշխանությունների կողմից: Այդ պատճառով, մեծամասնականի թեկնածու օլիգարխները փոխշահավետ պայմանավորվածության մեջ են մտնում հիմնականում իշխանության հետ՝ որոշ դեպքերում տալով նրանց որոշակի գումար հովանավորչության համար, պարտավորվելով կաշառման ժամանակ ապահովել նաև իշխող որևէ կուսակցության ձայները ընտրողից նաև դա պահանջելով, որպես կաշառման գործարքի մաս, և ընդհանրապես աջակցել հովանավորչություն ապահովող կողմին այլ հարցերում:

Արդյունքում, իշխող կուսակցությունները յուրաքանչյուր ընտրատարածքում աջակցում են մեծամասնական թեկնածուի, որը իր ընտրաձայների գնման հետ միասին նաև աշխատում է կուսակցության համար ձայներ հավաքելու ուղղությամբ: Համագործակցությունը ստացվում է շահավետ և համապատասխան գումարի ծախսը արդյունավետ և արդարացված՝ ինչը խթանում է ընտրաձայների գնման տեխնոլոգիայի ինտենսիվացմանը²¹:

Ընտրակաշառքի կիրառումը նվազեցնելու համար փորձագետները նպատակահարմար են գտնում ընտրատարածքների մեծացումը և մեծամասնական պատգամավորների դերի փոքրացումը համամասնականի արդյունքների և ընդհանրապես ընտրությունների գործընթացի վրա: Այս առումով հարաբերականորեն ավելի հաջող են համարում ընտրական օրենսգրքի փոփոխությունները, որտեղ մեծամասնական ընտրատարածքները նվազեցվել են, որի արդյունքում մեծացել են դրանցում ներառված ընտրողների թվաքանակը՝ դառնալով 40 հազարից 56 հազար:

Որոշ փորձագետների պնդմամբ, սա կբերի նրան, որ նախ և առաջ ոչ բոլոր փողատները կարողանան համապատասխան գումար բաժանել: Մյուս կողմից, որոշ հաշվարկներով, անհրաժեշտ գումարի մեծացումը, կապված ընտրողների քանակի մեծացման հետ, շատ թեկնածուների խորհելու տեղիք կտա, թե որքանով է դա իրենց ձեռնադր: Եվ վերջապես ընտրատարածքի մեծացումը բերում է միևնույն տարածքում դրվող թեկնածուությունների ավելի մեծ քանակի և համապատասխանաբար ավելի մեծ

²⁰ Չուգակցված տեխնոլոգիաները այնպիսի տեխնոլոգիաներ են, որոնք չեն տեղավորվում դասակարգված տեխնոլոգիաների տեսակներից լոկ մեկի մեջ, այլ ենթադրում են տարբեր տեխնոլոգիաների տարրեր:

²¹ **Հարցվող*** Փողի գործոնը հնարավոր է ավելի քաջանել, չեմ ասում իսպառ վերացնել, եթե մեծամասնական թեկնածուները ընտրություններին դեր չունենան:

մրցակցության: Արդյունքում էլ ավելի է թանկացնում կաշառման արժեքը²²: Ենթադրվում է, որ նման գումարներ ծախսելու նպատակահարմարություն կտեսնեն յուրաքանչյուր մարզից մեկ հոգի:

Օրենքի նման փոփոխությունները դիտելով առաջադիմական, վերջնական լուծում չի համարվում, և կա մեծամասնականի վերացման հավակնության միտում, որը ըստ այդ հավակնորդների ընդհանրապես կնվազեցնի օլիգարխների դերը քաղաքականության մեջ, ինչը գնահատվում է, որպես շատ չարիքների վերջ: Այս կապակցությամբ նույնպես շեշտվում է ապաքաղաքական տարրերի՝ քաղաքականությունից դուրս մղման անհրաժեշտությունը:

Մյուս կողմից, կարծիք կա, որ ապաքաղաքական տարրերը մտահոգված են ընտրատարածքների մեծացմամբ և հնարավոր է քայլեր ձեռնարկեն օրենքի կրկին փոփոխման ուղղությամբ: Ընդ որում, պարզ է դառնում, որ օրենքը այս պարագայում բավական անձնավորված է և մեծամասնականի տեղերի քանակը մեծապես որոշվում է՝ ելնելով այն բանից, թե քանի հոգի են այդ օլիգարխները: Միևնույն ժամանակ, պարզ է դառնում նաև, որ պայքարը գնում է օլիգարխների միջև ամենատարբեր մակարդակներով և ոճով, թե ով պետք է ներառվի նախատեսված մեծամասնականի տեղերում: Նաև կանչակերպ է համարվում, որ ընտրատարածքների սահմանները համաձայնեցվում են «դաբրո» ունեցող մեծամասնականի թեկնածուների կամ ներկա պատգամավորների հետ, յուրաքանչյուր փոփոխման դեպքում: Դիտարկելով օրենքի այս մասի փոփոխումների պատմությունը նախկինում՝ փորձագետների կարծիքից կարելի է ենթադրել, որ կրկին փոփոխումը այնքան էլ անսպասելի չի լինի մեր հասարակության պարագայում, որը կարող է լինել ապաքաղաքական տարրերի փոխապայմանավորվածության չհաջողման դեպքում²³:

4.2 Էլեկտորատի սոցիալական վիճակի չարաշահումը

Ընտրողների մի մեծ քանակի սոցիալական վիճակը հասարակությունում գտնվում է բավարար ցածր մակարդակի վրա, որպեսզի նրանք տրված ընտրակաշառքը համարեն «ահագին գումար»: Մի կողմից նրանց համար այդ գումարի մեծությունը, իսկ մյուս կողմից կաշառատուի համար այդ գումարի մատչելիությունը խոսում է այն մասին, որ հասարակությունը գտնվում է տնտեսական հարթության վրա ծայրահեղ բևեռացված վիճակում: Այս վիճակի դրսևորումն է այն փաստը, որ թեկնածուները իվիճակի են հազարավոր ընտրողների բաժանել այնքան գումար, որ վերջիններիս համար էական լինի իրենց ընտրությունը կատարելու ժամանակ՝ կողմնորոշվել կաշառքից ելնելով: Ստացվում է մի իրավիճակ, երբ ընտրողը հանուն 5000 հազար դրամի պատրաստ է իր ձայնը տալ և կառավարվել ամբողջ ընտրաշրջան մարդկանց կողմից, որոնք կարող են նույնիսկ բարյացկամ վերաբերմունք չունենալ այդ ընտրողների հանդեպ:

Ընտրողների այս հատվածի ընտրության մոտիվները գնահատելով՝ փորձագետները նրանց մտածելակերպը բխեցնում են նրանց սոցիալական վիճակից և տեսնում այդ վիճակի ստեղծման գործում որոշակի միտումնավորություն իշխանությունների կողմից: Այսինքն, ընտրողները միտումնավոր պահվում են այնպիսի սոցիալական վիճակում, որ

²² **Նաբցվող*** Այս ընտրությունները ավելի առաջադիմական կլինեն, որովհետև արդեն պակաս թվով թեկնածուներ կգնան մեծամասնականով և այնպես չի լինի, որ մի հատ Զանաբեում 5000-ով 60-70 հազար ծախսեն ու համարեն ընտրությունները ավարտված: Պետք է ծախսեն 150000: Ավելի դժվար կլինի էդքան գումար դնելու խնդիրը: Ընտրատարածքների մեծացումը կբերի շատ փող ծախսելու անհրաժեշտություն, որը ձեռնտու չի լինի: Մի ընտրողը 5000 դրամով, պետք է 10000 ձայն, այսինքն մոտ 100000 դոլար: 30000 ընտրողի դեպքում պետք կլինի 200000 հազար:

²³ **Նաբցվող*** Չի բացառվում, որ օրենքը նորից փոխվի, նոր իշխանություն գա, իշխանափոխություն լինի, կամ ինչ որ պատճառով ձեռնառն չլինի, փոխեն: Նեոտ 70 տոկոս համամասնականը վատ թիվ չի և օլիգարխները մտահոգված են, քանի որ տեղերն ավելի քիչ է, քան էդ մարդիկ են: Նորից առնվազն պիտի գնա: 2003-ից երկու տարի առաջ 90-41 էր հարաբերակցությունը, հետո նորից փոխեցին օրենքը:

ստիպված լինեն չհրաժարվել գումար վերցնելուց: Դեռ ավելին, ընտրությունների մոտ ընկած ժամանակաշրջանում գումարի կարիքը մարդկանց մոտ տարբեր եղանակներով կարող է սրվել:

Կարելի է ենթադրել, որ ամեն գնով ընտրվել ցանկացող թեկնածուների համար ձեռնառու է սոցիալական նման բևեռացումը և «5000 դրամանոց» սոցիալական լայն շերտի առկայությունը հանրապետությունում: Եվ որքան մեծ լինի այդ շերտը, այնքան ավելի քիչ անելիք կլինի անելու, բացի գումարը բաժանելուց: Եվ որքան չքավոր լինի այդ շերտը, այնքան ավելի հեշտությամբ կկաշառվի և շնորհակալ կլինի կաշառատուից նրա կատարած «ազգանվեր գործի համար»:

Պատահական չէ, որ համեմատաբար բարեկեցիկ բնակավայրերում, մասնավորապես մեծ քաղաքներում ընտրակաշառքի գումարը ավելի մեծ է և ընտրողները ավելի դժվարությամբ են վաճառում իրենց ձայնը²⁴: Նշվում է, որ ընտրակաշառքի ավելի մեծ և արդյունավետ կիրառելիություն ապահովելու համար հակում կա մեծացնելու դրա չափերը²⁵: Գնահատելով այդ հակվածությունը՝ կարելի է ենթադրել, որ կաշառքի չափերի մեծացման գումարները վերջին հաշվով պետք է վճարվի նույնպես ընտրողների գրպանից:

Հետևություն այն է, որ աղքատությունը մի կողմից և բևեռացվածությունը մյուս կողմից լուրջ խոչընդոտ են անկաշառ ընտրությունների համար և դրանց վերացումը կարևորագույն խնդիր է մեր հասարակության համար նաև դեմոկրատական ընտրությունների կայացման նկատառումով: Սակայն իրատեսականության համար, պետք է նշել, որ այս պրոբլեմը պահանջում է երկարատև լուծում, որը կազդի ընտրությունների ընդհանուր ֆոնի վրա, սակայն կարող է տևել մի քանի ընտրություն:

Գալիք ընտրություններում կարելի է կանխատեսել, որ ավելի մեծ գումարներ կբաժանվեն, որպես կաշառք, ինչը պայմանավորված է հասարակության սոցիալական վիճակի համեմատական բարելավմամբ մի կողմից և կաշառման երևույթի հանդեպ բացասական վերաբերմունքի մեծացմամբ մյուս կողմից: Վերջինս կբերի նրան, որ ընտրողները համեմատաբար դժվարությամբ կհամաձայնվեն վերցնել կաշառք, գումարը նրանց համար ավելի փոքր կլօվա, ինչը կբարձրացնի կաշառքի գինը:

4.3 Ընտրությունների ապաքաղաքականացումը

Հասարակությունում առկա է թերահավատություն քաղաքական գործիչների և քաղաքական գործունեության նկատմամբ: Նախկինում տեղի ունեցած ընտրությունների ընթացքում տրված բազմաթիվ խոստումները, քաղաքական ծրագրերը և գաղափարախոսական գործունեությունը հասարակության գիտակցության մեջ մնացել են պրակտիկայում չիրագործված: Քաղաքական գործունեության հեղինակագրկումը պայմանավորված է քաղաքական գործիչների հրապարակային քննադատություններով ընտրարշավների ժամանակ, ապաքաղաքական տարրերի հեղինակության գերիշխմամբ հասարակության որոշ խմբերի մոտ և հասարակության լայն շերտերի համար

²⁴ **Հարցվող*** Երկրորդ. այստեղ կա աղքատության դեմ պայքարի խնդիր, այսինքն ինչքան բարեկեցիկ լինեն քաղաքացիները, այնքան այդ երևույթները չեն աշխատի: Որովհետև բարեկեցիկ քաղաքացուն շատ դժվար է գնելը: Կենտրոն համայնքում ընտրակաշառքը ավելի քիչ է, քան որևէ մարզի որևէ գյուղում: Դրա համար ընդդիմության մեծամասնականով 3 հոգի են ընտրվել՝ 2-ը Երևան քաղաքից. խոսքս Սմբատ Այվազյանի և Մանուկ գասպարյանի մասին է, մեկը ընտրվել է Վանաձորից՝ Վիկտոր Դալլաբյանի մասին է: Այսինքն քաղաքային բնակչություն ունեցող ընտրատարածքներից են ընտրվել ընդդիմության թեկնածուները, որովհետև քաղաքում մի շարք գործոններ կան, որոնք փոքր դաշտ են ստեղծում ընտրակաշառքի համար, քան գյուղերում, որտեղ 1 պարկ այլուր որոշիչ դեր է խաղում:

²⁵ **Հարցվող*** Հիմնական դրդապատճառն է իր ձայնը իր ուզած գնով վաճառելը: Բվեն դառնում է վաճառք: Մտադրություն կա այդ կաշառքների չափը հասցնել այնքան, որ մարդկանց դժվար լինի հրաժարվել: Խոսքը գնում է մոտ 50.000 դրամ գումարի մասին:

բազմակողմանի փոխադարձ քննադատությունների մեջ կողմնորոշվելու անկարողությանը:

Լրատվամիջոցների անպատժելիության պատճառով նրանց կողմից տարածվող ամենատարբեր ապատեղեկատվությունները հասարակությանը հաղորդում են քաղաքական գործիչների գործունեությունը չափազանց սրացված քննադատող և շատ դեպքերում պատվագրկող նյութեր, որոնց համար պատասխանատվություն չեն կրում և որոնք սովորական են դարձել հանրության համար: Նույնիսկ քաղաքական գործիչների համար դրանք դարձել են սովորական և նրանք շատ հաճախ չեն արձագանքում դրանց՝ համարելով դրանք «նորմալ բամբասանքներ»: Արդյունքում, քաղաքական գործիչների կողմից իրենց գործունեության հեղինակությանը չհետևելու սովորությունը և ապատեղեկատվության պատժմանը հետամուտ չլինելը նույնպես նպաստում է թերահավատությանը քաղաքական գործունեության նկատմամբ²⁶:

Եվ վերջապես քաղաքական ծրագրերի տրվող երկրորդայնությունը ինչպես թեկնածուների և կուսակցությունների կողմից, այնպես էլ ընտրողների կողմից, դրսևորվում է նրանում, որ ընտրողները ավելի շատ կողմնորոշվում են անձերով և այլ գործոններով, քան գործիչների կամ կուսակցությունների ծրագրերով, գաղափարախոսությամբ կամ իրական գործունեությամբ: Արդյունքում ընտրության հիմնական մտիվը այդ ինստիտուտի իրական ֆունկցիան՝ ձևավորել ներկայացուցչական իշխանություն ըստ գաղափարախոսությունների և շահերի ներկայացնողների տեղափոխում է այլ ֆունկցիայի՝ բավարարել կենսական պահանջունքներ, ապահովել գոյատևման և շրջապատում անվտանգության ֆունկցիա: Այս մասին է վկայում այն, որ ընտրողը չտեսնելով ընտրությունների իրական նպատակները և չհասկանալով դրանց իմաստը կամ համարելով այդ նպատակների համար իր ընտրաձայնը անօգուտ, կողմնորոշվում է ըստ տրված գումարի կամ այլ խրախուսանքի:

Ընտրողը ավելի շուտ տեսնում է իր կենցաղում և շրջապատում առկա պրոբլեմները, որոնք իրեն օրհասական են թվում և շուտափույթ լուծման կարիք ունեն: Մինչդեռ քաղաքական գործիչների գործունեության և քարոզչության մեջ մեծ տեղ են զբաղեցնում գաղափարախոսությունը, բարդ ծրագրերը, որոնք անհասկանալի են ընտրողի համար: Ընտրողին ավելի հետաքրքրում է կոնկրետ հարցերի կոնկրետ լուծումները, որոնց շուրջ ավելի լավ են աշխատում ապաքաղաքական տարրերը, ընտրակաշառք տվողները: Վերջիններս էլ հենց վաստակում են արդարացված կամ չարդարացված հեղինակություն հասարակությունում: Արդյունքում ընտրողը նախընտրում է ապաքաղաքական թեկնածուի գումարը, ոչ թե կարևոր հիմնախնդիրների շուրջ առաջադրվող քաղաքական գործիչի ծրագրերը կամ գաղափարները²⁷:

Հասարակության հետ աշխատանքների բազմաթիվ փորձերը, որոնք վերջնարդյունքում վերջնական հաղթանակ չեն ունեցել, հիասթափություն են առաջացրել նաև քաղաքական գործիչների մոտ: Հասարակության մենթալիտետի պրոբլեմը, որը կարևոր խոչընդոտ է նորմալ ընտրություններ իրականացնելու և հակադեմոկրատական տեխնոլոգիաներին չտրվելու, ստիպում է քաղաքական գործիչներին մտածել, որ հասարակությունը արժանի է իր իշխանությանը: Երբ ընտրողը գերադասում է վաճառվելը, գումարը, կիսահանցագործ տարրերին և ուտող խմողի կերպարը քաղաքական գործունեություն ծավալող թեկնածուից, հասարակության հիմնախնդիրների շուրջ լուրջ աշխատանքների ծրագրից և գաղափարախոսությունից, նրան քաղաքական ուժերը համարում են արժանի իրենց վիճակին:

²⁶ Արժանապատվության ոտնահարման և զրպարտության դեմ դատական կարգով բողոքարկելը անարդյունավետ է դատական համակարգի կողմնակալ վերաբերմունքի և կոռուպացվածության պատճառով:

²⁷ **Հարցվող*** Ներկայացված քաղաքական պրոբլեմը իրեն վերացական է թվում, 5000 դրամը շատ կոնկրետ բան: Այսինքն քաղաքական պրոբլեմ ներկայացնողները պետք է մտածեն ավելի մատչելի, հասարակության հետ կոնտակտի և ավելի իրատեսական խստումների մասին, որոնք այնքան մեծ արժեք ունենան, որ այսօրվա 3-5 հազար դրամ կաշառքը նվաստացուցիչ լինի վերցնողի համար:

Հասարակությունում այսպիսի շերտի առկայությունը համարվում է հասարակության զարգացմանը, դեմոկրատական արժեքների կայացմանը լուրջ խոչընդոտ, ազգի հիվանդություն և ցավալի իրավիճակ: Դեմոկրատական ընտրությունների կայացման ճանապարհին անհրաժեշտ է ձեռքագատվել հասարակությունում նման խմբի ազդեցություն ունենալուց և հնարավորության դեպքում ընդհանրապես նման խմբի առկայությունից: Նման շերտի առկայությունը ողջ հասարակությունում առկա մենթալիտետի պրոբլեմի առավել վառ դրսևորումը և կողմն է, որի շուրջ կարիք կա լուրջ աշխատել: Ինչը սակայն քաղաքական որոշ գործիչների մոտ ավելի շատ հիասթափություն և նման շերտի արժեքներով առաջնորդվող հասարակությանը առկա վիճակում թողնելու միջոցով պատժելու ցանկություն է առաջացնում, քան նրանց հետ տարվելիք աշխատանքների ինտենսիվացման միտում:

Այս պրոբլեմի լուծման համար պահանջվում է քաղաքական գործունեության և գործիչների հեղինակության բարձրացման ուղղությամբ տարվելիք աշխատանքներ, նրանց կողմից մշակված ծրագրերի ավելի մասշտիվ ներկայացում և իրական, հասարակության աչքին տեսանելի և նրա համար նշանակալի գործունեության շնչատադրում:

4.4 «Կարուսել»

Թեև աղքատ ընտրության՝ դա կլինի ընտրակաշառքով ընտրողների վերահսկում, ադմինիստրատիվ լծակներով ճնշված ընտրողի վերահսկում , թե այլ եղանակով, հիմնական վերահսկման և լավագույն իրականացման եղանակը համարվում է «կարուսելի» մեթոդը: Այս մեթոդի համաձայն նախապես որևէ եղանակով ստացվում է մեկ ավելորդ քվեաթերթիկ: Այդ քվեաթերթիկը դուրս է հանվում ընտրատեղամասից որևէ ընտրողի կողմից, որը չի գցում քվեաթերթիկը այլ դնելով գրպանը հանում է դուրս: Կամ նման քվեաթերթիկ ստացվում է այլ ճանապարհով՝ տպարանից, կենտրոնական ընտրական հանձնաժողովից և այլն: Քվեաթերթիկը դրսում լրացվում է թեկնածուին ձեռնադրու տարբերակով և տրվում է կաշառված կամ այլ եղանակով համապատասխան ընտրություն կատարելու պատրաստակամ դարձած ընտրողին: Ընտրողը պարտավորվում է այդ քվեաթերթիկը գցել արկղ և իր հետ դուրս բերել իր համար հատկացված մաքուր քվեաթերթիկը: Արդյունքը գոհացուցիչ է, քանի որ պարբերաբար նման ընտրությունների միջոցով ապահովվում է անուն առ անուն բոլոր կաշառվածների ընտրության վերահսկումը: Նրանք այլևս հնարավորություն չունեն ներսում կատարելու այլ ընտրություն, քան խոստացել են: Չեն կարող մի քանի տեղից գումար վերցնել և ընտրել մեկին:

Տեխնոլոգիայի դեմ խոչընդոտող հազվադեպ պատահող ընտրողների կողմից ընդհանրապես քվեաթերթիկը չգցելն է, որը որոշ դեպքերում նույնպես բացառվում է, քանի որ դուրս գալուց հետո նրբեմն կարող են ստուգել հագուստի մեջ այդ քվեաթերթիկի առկայությունը: Մյուս եղանակը քվեաթերթիկի անվավեր դարձնելն է չնախատեսված նշումներ կատարելով դրա վրա: Նույնիսկ այդ դեպքում էլ տեխնոլոգիան ձեռնադրու է, քանի որ ընտրողը կամ ընտրում է ցանկալի ձևով կամ ընդհանրապես չի ընտրում: «Կարուսելը» իրականացվում է ընտրատեղամասերի մոտ կանգնած մարդկանց միջոցով, որոնք համաձայն իրենց ցուցակների ընտրատեղմաս են թողնում նախապես վերոնշյալ ձևով հրահանգավորված ընտրողներին և նշումներ կատարում իրենց ցուցակում:

5 Էլեկտրատի վարքի կարգավորման տեխնոլոգիաների հետ գույացվող կոգնիտիվ տեխնոլոգիաներ

5.1 Ընտրությունների կանխորոշվածության և իրենց ձայնի աննշանության համոզմունքի առաջացումը ընտրողի մոտ

Կաշառքի բաժանման, ճնշումների և ադմինիստրատիվ ռեսուրսի միջոցով ընտրական դիրքորոշման ձևավորման ժամանակաշրջանում, հատկապես այն ժամանակ, երբ հեշտությանը կաշառվողների կամ համոզվողների առաջին խումբը վերջանում է և անհրաժեշտ է լինում մնացյալ մասին համոզել, որ վերցնեն կաշառքը, շուկաների միջոցով տարածվում է որոշակի դիրքորոշում: Այդ դիրքորոշման անընդհատ կրկնությունը մարդկանց շրջապատում, տարբեր հարաբերություններում նրա մոտ ձևավորում են համոզմունք, որ ընտրությունները կանխորոշված են և իր ընտրությունը որևէ նշանակություն չունի:

Կանխորոշվածության հիվանդագին մտածելակերպը հասարակությունում պայմանավորված է իշխանություններում առկա հեղինակավոր ուժերի մասին հաճախ ուճացված, գերբնականացված և խարիզմատիկ պատկերացումներով մի կողմից: Մյուս կողմից՝ իրականությունում այդ հեղինակությունների սանձարձակ, անպատժելի և հասարակության սոցիալ-տնտեսական վիճակի հետ անհամատեղելի ապրելակերպով: Վերջիններիս մարդիկ այս կամ այն կերպ ակնատես են առօրյայում, գիտեն իրենց իսկ սեփական փորձից կամ տեղեկանում են շուկաներից, որոնք հասարակությունում զգալի ինֆորմացիոն նշանակություն են ստացել այդ ոլորտների մասին տեղեկացնելու առումով:

Այս լոգունգին գույացվում են ուրիշները, որ «ում էլ ընտրեք, միևնույնն է ոչինչ չի փոխվելու: Եթե դուք չհամաձայնվեք, ձեր ձայնը միևնույնն է հանձնաժողովում կկեղծեն, նրանց կտան փողը կամ նրանք կլինեն թեկնածուի յուրային մարդիկ: Միևնույնն է, վերջում նկարելու են: Ով էլ լինի առաջինը պիտի իր գրպանի մասին մտածի: Մյուս թեկնածուները չունեն հովանավորչություն և ինչքան էլ ընտրեք, նրան միևնույնն է չեն թողնելու, որ անցնի: Մյուս թեկնածուն վերջում վաճառելու է իր ձայները: Նա պայմանավորվածության մեջ է իշխանությունների կամ այլ թեկնածուների հետ» և այլն: Ցավոք այս շուկաների տարածմանը ոչ հեռատեսորեն նպաստում են նաև տեխնոլոգիաները չկիրառող ուժերը և հասարակությանն ինքը՝ դրանով իսկ ընտրողին ստիպելով գիտակցել իր ընտրաձայնի աննշանությունը և ընտրությունների կանխորոշվածությունը:

Հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ պայքարի կարևոր խոչընդոտ է պեսիմիստական տրամադրվածությունը, բարեփոխումների նկատմամբ և ընդհանրապես, ոչ միայն ընտրողների մոտ, ինչի մասին արդեն խոսվեց, այլև, որ ավելի վտանգավոր է, քաղաքական գործիչների մոտ: Այդ է վկայում որոշ փորձագետների կարծիքը, որ ցանկացած բարեփոխում կբերի մի նոր վիճակ, որի համար կգտնվեն անօրինականությունների իրականացման նոր տարբերակներ: Նման տրամադրվածությունը դրդում է մտածելու, որ որոշ փորձագետներ ելք չեն տեսնում նման վիճակից և անխուսափելի են համարում դեմոկրատական մեխանիզմի ձայնորոշումը²⁸:

Այն տեսակետը, որ «ես ուզում եմ իմ խղճի համաձայն քվեարկել» երբեմն ենթարկվում է ծաղրանքի և լավագույն դեպքում որակավորվում միաստություն: Նման լոգունգների առաջացրած հոգեբանական ճնշման, իշխանությունների, ընդհանրության, նույնիսկ սեփական թեկնածուի և ընդհանրապես ընտրությունների հանդեպ անվստահությունը և կասկածանքը ամենաուժեղ և սկզբունքային մարդկանց անգամ ստիպում են «մողա» դարձած վարքաձևին հետևել: Արդյունքում ընտրողի միակ «օգուտը» մնում է վերցնել գումարը և կատարել պահանջները:

²⁸ Հարցվող* Ինչ քայլ էլ մտածես հակաքայլը կմտածեն: Ինչ կողպեք էլ դնես բացելու ձևը կգտնեն:

5.2 Կաշառման էության խնդրաթուրումը

Տրվելով վերոնշյալ կարծիքներին և կաշառվելով՝ ընտրողների մեծ մասը չի պատկերացնում իր կատարած քայլի նշանակությունը խորությամբ և հակված է այդ քայլին «թեթև նայել»։ Նախ բացակայում է գիտակցումը, որ իրենք դրանով ծախվել են և դա բարոյական նվաստացում չի համարվում։ Սրան է նպաստում այն փաստը, որ հասարակության մեծամասնությունը կաշառվում են և մյուսների համար սովորական է դա դառնում։ Հետևելով մյուսների օրինակին կաշառվողները համեմատում են իրենց տարբեր մարդկանց հետ և իրենց համարժեք ստատուսով մարդկանց առկայությունը կաշառվողների մեջ նրանց հանգստացնում է և թույլ տալիս խղճի խայթ չզգալ, լինել անհոգ իրենց պատվի կամ հեղինակության համար։

Մինչդեռ ըստ էության, նրանք տալիս են իրենց անունից խոսելու և գործելու իրավունք այլ մարդկանց ընդամենը մի քանի հազար դրամով։ Մուր քննադատողները այս փաստը համեմատում են մարմնավաճառության հետ՝ էական տարբերություն չտեսնելով դրանց միջև։ Հասարակության համար սովորական նորմ է դառնում «վաճառվելը»։ Այս երևույթն իր հերթին՝ ապահովելով մեծամասնության մասնակցությունը ընտրակաշառքին, գրկում է նրանց հետագայում բողոքելու կամ դժգոհելու բարոյական իրավունքից։ Այստեղ ամրագրվում է այն արդարացումը իշխանությունը հետագայում շահագործողների համար, որ եթե ժողովուրդը ինքն է կաշառվում, ապա ինչու չպիտի մենք կաշառվենք մեր գործունեության ժամանակ։ Արդյունքում իշխանությունների հետագա գործունեության բոլոր անբարոյականությունները ժողովրդի աչքին արդարացվում են և գրկում վերջինիս քննադատելու բարոյական իրավունքից, քանի որ ինքն էլ իր տեղում է սխալ վարվել իսկզբանե։

Հասարակությունը պետք է գիտակցի, որ վաճառելով իր ձայնը, նա վաճառում է ինքն իրեն, հնարավորություն է տալիս կաշառատուին անել ամեն ինչ իր անունից՝ այդպիսով կորցնելով նրա վերահսկելու իրավունքը, գրկում է կաշառման և անագնիվ գործունեությունը քննադատելու իր իրավունքից և դառնում իր ընտրության գերին²⁹։ Պետք է ակնհայտ դարձվի, որ տալով ընտրողին որոշակի գումար՝ կաշառատուն այդ գումարի բազմապատիկն է աշխատելու ընտրողի բարեկեցության հաշվին՝ երկիրը պահելով պրոբլեմներով լեցուն և լճացած վիճակում։

Սակայն երևույթի նման բացասական մեկնաբանման և դրանով կաշառվողներին խարանձան ու քննադատման գործընթացը ունի լուրջ խոչընդոտներ։ Դրանցից առաջինը կայանում է նրանում, որ հասարակության այն մասը, որը ներառվել է կաշառքներում, թույլ չի տա այդ քայլը որակել այդ աստիճան բացասական և խարանել։ Հասարակության այս մասը ինքը ախտահարված է և կաշառքը բաժանողներից սկսած լուրջ դիմադրության կարժանացնի նման որակումը անհատական ազիտացիայի մակարդակով։ Սա կաշառողների և նրանց մերձավորների կողմից կորակվի իր հերթին, որպես ինքնախարանում³⁰։

Մյուս կողմից, այն մարդկանց, ովքեր հրաժարվում են այդ քայլից, որակելով դա շատ բացասական, բերվում է հակափաստարկ, որ «եթե դա շատ վատ, նվաստացուցիչ քայլ է, ինչու եք թույլ տվել ձեր ազգականներին կամ մերձավորներին այդ քայլին գնալ և նվաստանալ։ Եթե դա նվաստացուցիչ չէ, ինչու եք հրաժարվում»։ Արդյունքում, ընտրողը չցանկանալով իրեն կամ իր մերձավորներին խարանել, հակված է չորակել կաշառքը վերցնելը նվաստացուցիչ և ակամայից ստեղծում այս երևույթի նկատմամբ հանդուրժողական վերաբերմունք՝ հող նախապատրաստելով նոր դրսևորումների համար։ Վերջինս ենթադրում է, որ որևէ ընտրողի կաշառման առաջարկով մոտենալը չի դիտվի նվաստացնելու փորձ և համապատասխան ռեակցիա նրանից չի ակնկալվի, որը թույլ կտա

²⁹ **Հարցվող*** Փաստորեն կարող է մի քանի հազարով իր համար 4 տարվա պատգամավոր ընտրի։

³⁰ **Հարցվող*** Եթե դա այդաստիճան նվաստացուցիչ է, ապա ինքներդ եք էդպես վարվել նախորդ ընտրությունների ժամանակ, ուրեմն դուք նվաստացել եք։ Եթե դա նշանակում է վաճառվել, ապա դուք վաճառվել եք։

կաշառողներին հանգիստ կատարել այդ առաջարկությունները նույնիսկ այն ընտրողների շրջանում, ովքեր գիտակցում են դրա էությունը, զգում են նվաստացած, սակայն չեն կարող բարձրաձայնել և համապատասխան ռեակցիա տալ՝ ինքնախարանում կամ իրենց մերձավորների խարանում չանելու համար:

Երկրորդ բացասական հետևանքը այն է, որ մեկ անգամ կաշառվելով ընտրողը ստեղծում է իր համար կաշառման նախադեպ: Նենվելով վերջինիս վրա՝ կաշառվելու հրաժարման դեպքում հիշեցվում է, որ նախորդ ընտրություններին ընտրողը վերցրել է կաշառքը, հետևաբար նա կաշառելի է: Արդյունքում ընտրողի հիմնավորումը, որ ինքը դա նվաստացուցիչ է համարում, այլևս շատ դեպքերում չի գործում: Ընտրողը ստիպված է իր հրաժարվելը հիմնավորել այլ փաստարկներով, որը մեր հասկարակության սոցիալալոգիային իրականությունում ոչ միշտ է հնարավոր:

Անհրաժեշտ է մտածել լուրջ քայլեր որոնք կկարողանան ընտրակաշառք վերցնելը և բաժանելը խարանել և պախարակել, ընտրողների մոտ ձևավորել դրա բոլոր բացասական հետևանքների մասին գիտակցումը և նախապատրաստել ընտրողներին դիմակայելու կաշառատուների փաստարկներին:

5.3 Համոզվածի պարտավորեցում

Էլեկտորատի համոզման տեխնոլոգիաները՝ կաշառումը, ճնշումը և ադմինիստրատիվ քարոզչությունը, պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլի՝ առաջինը այն գործընթացն է որի արդյունքում համոզվում է, որպեսզի տա իր համաձայնությունը, երկրորդը այն ժամանակաշրջանը, երբ ընտրողը դեռևս կարող է դիրքորոշում փոխել վերցված գումարի դիմաց, կամ խոստման դիմաց ընտրի, թե ոչ և ընտրել համապատասխան ձևով: Երբ վերոնշյալ հնարների արդյունքում ընտրողը վերցնում է գումարը կամ խոստանում ընտրել, կարելի է ասել, որ աշխատանքի մեծ մասը արված է, սակայն՝ ոչ ամբողջ աշխատանքը: Բանը նրանում է, որ գումարը տալուց հետո, որոշակի աշխատանքներ են կատարվում, որպեսզի ընտրողը ընտրի կաշառող թեկնածուին կամ կատարի իր խոստումը: Այս աշխատանքները ներառում են հետևյալ տարրերը. պարտավորվածության զգացման առաջացումը և պահպանումը ընտրողի մոտ կաշառատուի նկատմամբ, ընտրության վերահսկելիության՝ ոչ գաղտնիության, համոզմունքի առաջացումը նրա մոտ և ընտրության իրական վերահսկման մեխանիզմների առաջադրումը և դրանցում ընտրողի մասնակցության ապահովում:

Համոզողները որպես կանոն համոզման գործընթացում ընտրողի մոտ ձևավորում են պարտքի զգացում: Որոշակի տեխնոլոգիայի միջոցով ընտրողին զգում են «ազնիվ, չուրացող մարդու» դերի մեջ, որը անկասկած կկատարի իր «պարտքը»՝ խոստումը, որ տվել է, ասենք, գումարը վերցնելու ժամանակ, այն է, ընտրել համապատասխան թեկնածուին: Այս դերը ընտրողին տրվում է փորձառու և հմուտ համոզողի կողմից նախապես տարված աշխատանքների շնորհիվ, որոնցում բազմիցս ամենամաստացուցիչ արտահայտություններն են ասվում այն մարդկանց մասին, որոնք խոստանալով, չեն կատարում իրենց «պարտքը», «ուրանում են»: Հասունացվում է այն պահը, երբ կաշառվողը ինքն էլ է բացասաբար արտահայտվում նման վարքի նկատմամբ և որքան սուր նա արտահայտվի, այնքան երաշխիքները, որ նա կկատարի պարտավորվածությունը: Շեշտվում է նաև, որ ընտրողին իրենք ճանաչում են, որպես պարկեշտ մարդու, որը երբևէ չի «ուրացել» իր խոստումները, բարոյական է և այլն, և կասկած անգամ չկա, որ նա երբևէ չի վարվի այնպես, ինչպես վարվում են այն ընտրողները, որոնց մասին այդքան վատ խոսքեր են ասվել նախորդը:

Պարտավորվածության առաջացման ցայտուն օրինակ է մեքենայով ընտրատեղամաս բերելը: Ընտրողը իրեն շոյված է զգում: Երբեմն թանկարժեք մեքենաները, որոնցով այդ ամենը կատարվում է ընտրողի համար մեծ նշանակություն են ստանում և ընտրողը անակրճակալի է գալիս և դառնում ավելի հեշտ կաշառելի և հեշտությամբ է վերցնում գումարը: Պարտավորվածության զգացումը ավելանում է նաև այն պարագայով, որ մեքենայով բերում են այնպիսի ընտրողների, որոնք ընտրատեղամաս գալու մտադրություն

չունեն և չէին գա, եթե մեքենան չգար: Ստացվում է, որ ընտրելու մտադրություն չունեցող ընտրողները դրանով ակամափց ընտրում են որևէ թեկնածուի: Մեքենայով ընտրատեղամաս տանել առաջարկելը համարվում է դժվար վերահսկելի և պատժովի որպես ընտրակաշառք, քանի որ կարող են բերվել բազմաթիվ հիմնավորումներ, որոնց համար ընտրողին բերել են ընտրատեղամաս և ոչ ոք չի կարող արգելել վարորդներին այլ մարդկանց բերել ընտրատեղամաս:

Այսպիսով ընտրողի մոտ ձևավորվում է դիրքորոշում, որտեղ պարտավորություն է համարվում խոստումը կատարելը և անկախ ամեն ինչից համապատասխան թեկնածուին ընտրելը, ինչը որակվում է, որպես ազնվության և տղամարդկության ցուցանիշ: Ընտրողը իրեն զգում է հզոր ինչ որ ուժի մի մասը՝ ունենալով այդքան պարտավորվածություն իր ուսերին՝ մեծ հավանականությամբ կատարում է խոստացված իր ընտրությունը:

5.4 Ընտրության գաղտնիության վերաբերյալ թերահավատությունը և գաղտնիության իրական խախտումները

Պարտավորվածության զգացման առաջացումը և պահպանումը ընտրողի մոտ թեկնածուի նկատմամբ կարևոր քայլ է համոզված ընտրողի համապատասխան ձևով ընտրության ապահովման համար, սակայն դրա արդյունավետությունը միանշանակ չէ, ինչի համար կիրառվում է նաև, **ընտրության վերահսկելիության համոզմունքի առաջացումը** նրա մոտ և **ընտրության իրական վերահսկման մեխանիզմների առաջադրումը** և **դրանցում ընտրողի մասնակցության** ապահովումը: Սա նշանակում է ընտրությունների գաղտնիության մասին թերահավատության սաստկացում և իրականում գաղտնիության սկզբունքի սիստեմատիկ և նպատակաուղղված խախտում:

Մինչև ընտրական օրենսգրքի 2005-ի փոփոխությունները ընտրության գաղտնիության խախտումը, կամ ավելի ստույգ կաշառվածների քվեարկությունների ստուգումը իրականացվում էր պայմանական նշանների օգտագործմամբ ընտրաթերթիկում: Սրա էությունը կայանում է այն բանում, որ կաշառատուն վերահսկում է, թե իր կաշառք բաժանողներից յուրաքանչյուրը քանի ձայն ապահովեց և որքանով է դա համապատասխանում նրանց այդ նպատակով հատկացված գումարի չափին: Յուրաքանչյուր կաշառք բաժանող պայմանավորվում է իր կողմից կաշառվածների հետ, որպեսզի վերջինս իր ընտրությունը քվեաթերթիկի մեջ կատարի իր նշումը այնպիսի պայմանական նշան դնելով վանդակում, որ պատահական ընտրողը քիչ հավանականությամբ կդնեն: Դրանք են որոշակի կառուցվածքով աստղանիշեր, կետեր, զծեր և այլ նշաններ: Այսպիսով կաշառատու թեկնածուն ստանում էր երաշխիք, որ իր համար աշխատող կաշառատուններից յուրաքանչյուրը որոշակի քանակի ձայներ կբերի, որոնք կզրահանգվեն ձայների հաշվման ժամանակ նրա ներկայացուցչի կամ հանձնաժողովի համապատասխան անդամի կողմից: Սակայն այս եղանակով դեռևս միանշանակորեն չէր վերահսկվում բուն ընտրողի ընտրությունը:

Ընտրողը տեղեկացվում էր, որ տվյալ նշանով ընտրությունը թույլ է տալու վերահսկել իր ընտրությունը, որին գործընթացի նրբություններից անտեղյակ ընտրողները միամտորեն հավատում են: Մյուս կողմից կաշառատուն իր մերձավորներին, որոնց գումար էր բաժանել, տեղեկացնում է, որ եթե իր նշանները քիչ լինեն, իր գործունեությունը կձախտովի՝ հետևաբար խնդրում է ուշադիր լինել և ընտրության ժամանակ ճիշտ նշանը օգտագործել: Որոշ տեղամասերում ընտրատուփը տեղադրված է այնպես, որ քվեաթերթը զգելիս թափանցում է և դրված նշանը երևում է, որը թույլ է տալիս գրանցել, թե ով որտեղ է նշան դրել և ում ընտրել: Այլ դեպքերում պայմանավորություն է լինում թվաթերթիկը ծալել որոշակի ձևով, որը կլինի որոշակի ընտրության սիմվոլ:

Ընտրական օրենսգրքի նախավերջին փոփոխությունների արդյունքում պայմանական նշանների կիրառումը վերացվեցին այն կետի շնորհիվ, որ ընտրությունը կատարվելու է միայն մեկ նշանի միջոցով, ինչը, չնայած վերացնելով մի թերությունը, նոր

մեքենայությունների ճանապարհ բացելը³¹: Փորձագետների կարծիքով եղել են նաև ընտրատեղամասեր, որտեղ խախտելով բոլոր կանոնները հանձնաժողովի անդամները կամ վստահված անձինք պահանջել են տեսնել, թե ում է ընտրում ընտրողը:

Այնուամենայնիվ ընտրողների քվեարկության հիմնական վերահսկողությունը մնում էր հոգեբանական ճնշումը և համոզվածությունը, որ նրանց ընտրությունը վերահսկվում է և ոչ թե իրականում վերահսկումը: Այս առումով մեծ դեր է խաղում բազմապիսի ապատեղեկատվությունը, ինչպիսին է քվեախցու տեսախցիկի առկայությունը կամ հատուկ տեխնիկայի կիրառումը, որը թույլ է տալիս գրանցել յուրաքանչյուրի ընտրությունը: Հանձնաժողովի անդամների և ընտրատեղամասի այլ ներկաների թերգործառնությունը իր հերթին է մեծացնում թերահավատությունը, որ սոված ձայնը իրոք «տեղ կհասնի» կամ, որ ընտրությունը գաղտնի է:

Այս թերահավատությունը առավել մեծանում է, որ համապատասխան մարդիկ, որոնք պետք է, որ ապահովեն այդ գաղտնիությունը, թերահավատությամբ են խոսում գաղտնիության կամ ընտրությունների օբյեկտիվ հաշվարկի մասին ընդհանրապես: Նման օրինակ է ասենք ընդհանրության վստահված անձի հուսահատվածությունը կամ կաշառվածությունը, կամ հանձնաժողովի անդամի հայտարարությունը, որ ամեն ինչ նախապես որոշված է: Տարածվում է նաև անվստահություն հանձնաժողովների գործունեության հանդեպ: Կարծիքը, որ հանձնաժողովները կաշառված են կամ կողմնապահ, գալիս է դրանցում ներառված մարդկանց զբաղեցրած պաշտոններից և նրանց՝ բոլորին հայտնի դիրքորոշումներից և հարաբերություններից այս կամ այն թեկնածուի կամ քաղաքական ուժի հետ: Արդյունքում ընտրողը անտեղյակ և անպաշտպանության զգացումով, ստիպված է գոնե գլխացավանքից հեռու մնալու նկատառումով կատարել կաշառքի դիմաց պարտավորվածությունը³²:

Սակայն վերջին տեղական մարմինների ընտրության ժամանակ արդեն սկսվեց նկարահանման տեխնիկայի կիրառումը: Բջջային հեռախոսները տրվում են ընտրողին, որոնք տեսագրում կամ լուսանկարահանում են իրենց ընտրությունը ընտրախցիկում: Այդպիսով միանշանակորեն ապահովելով ընտրության գաղտնիության խախտումը և կաշառվածի ընտրության ստուգումը և վերահսկումը: 2005-ին ընտրախցիկների փոխարինումը կիսափակ անհատական ընտրասեղաններով նվազեցնում է այս տեխնոլոգիայի կիրառման տարածվածությունը, քանի որ տեսանելի է, որ կատարվում է նկարահանում: Սակայն մյուս կողմից հարց է առաջանում, թե արդյոք ընտրողը չունի իրավունք իր ընտրության պահը նկարահանելու և որքանով է իրավունքի տեսակետից ընդունելի, որ նրանց դա արգելվի:

5.5 Անպաշտպանության զգացման շահարկում

Ինչպես ընտրակաշառքի վերցնելը, այնպես էլ համապատասխան ընտրության կատարելը իրականացվում է ընտրողի մոտ անպաշտպանության զգացումը շահարկելով: Ընտրողը չի տեսնում որևէ տեղ, որտեղ կարող է բողոքարկել ինչպես ընտրակաշառքը վերցնել համոզելու գործընթացում իր իրավունքների վրա ոտնձգությունների և ճնշումների դեպքում, այնպես էլ իր ընտրական վարքի վերահսկման ուղղությամբ արված

³¹ Տես հանձնաժողովների շահադիտական կառավարումը:

³² **Տարցվող*** Նախորդ ընտրությունների ժամանակ կիրառվել են այլ մեխանիզմներ, որոնք արտահայտվում էին անձնագրեր վերցնելով կամ քվեաթերթիկն այլ կերպ ծալելով: Այս մեքենայությունների հեղինակները հանձնաժողովներում ունենում էին մարդիկ, որոնք էլ իրականացնում էին վերահսկողություն: Վերոնշյալ տեխնոլոգիայի վերահսկման մեխանիզմ է համարվում նաև մարդկանց գիտելիքների պակասն օգտագործելը, օրինակ, համոզելով, «որ մենք գիտենք, թե դու ում ես ընտրելու»: Սա իրականացվել է հատկապես նախագահական ընտրությունների ժամանակ երբ շահարկվել է հիմնականում ոչ թե գումարը, այլ աղմուկի ստրատեգիա ճնշումը: Այնուամենայնիվ, փող բաժանողը հիմնականում հասնում է իր նպատակին:

ապօրինությունների դեպքում: Հակառակորդ թեկնածուները սովորաբար չեն տիրապետում համապատասխան ռեսուրսների՝ գործնականում պաշտպանելու ընտրողին:

Գրանցված խախտումները և արձանագրությունների հանձնումը տարբեր ինստանցիաներ, չեն լուծում կոնկրետ ընտրողին սպառնացող վտանգները և համարժեք սանկցիավորում չեն ներկայացնում իրենցից, որոնց համար ընտրողները հակված կլինեն բողոքել կամ ընդվզել: Հանձնաժողովները հիմնականում ունեն նախնական դիրքորոշում, թե ում պետք է աջակցեն: Իրավապահները կատարում են իրենց վերադասի հրամանը, որոշակի կողմնապահություն կամ անտարբերություն դրսևորելու առումով: Արդյունքում բողոքարկում ընտրողի համար դառնում է ոչ ձեռնառու ոչ միայն այն առումով, որ հարցի լուծումը քիչ ակնկալելի է, այլև այն բանի համար, որ բողոքարկումը թանկ է նստում անձնապես իր՝ ընտրողի վրա:

Համաձայն փորձագետների, գործում է ամբողջական համակարգ ի օգուտ իշխանամետ ուժերի, որն էլ իրականացնելով հովանավորչությունը՝ առաջացնում է մի կողմից անպատժելիության, մյուս կողմից անպաշտպանության մթնոլորտ:

5.6 Ընտրակաշառման նորմավորումը

Ընտրակաշառքի նկատմամբ լոյալ վերաբերմունքը և ստացված գումարների նկատմամբ հետաքրքրությունը ընտրողների մոտ սովորություն է առաջացրել ամեն ընտրությունների ժամանակ սպասել, թե նրբ պետք է բաժանվեն գումարները: Այս ակնկալիքով նրանք դրդում են կաշառք բաժանողներին իրենց հերթին հետաքրքրվել հնարավոր կաշառքներով և ձգտել ավելի լավ «բիզնես» գտնել, որպես կաշառք բաժանող: Ընտրողի նման աղճատված հոգեբանությունը ստիպում է թեկնածուներին նույնպես մտածել, հաղթանակի ամենալավ գրավականը դարձյալ ընտրակաշառքն է: Այլ կերպ ասած, ընտրողի առաջին պրոբլեմը փողն է, ով այս պրոբլեմը ավելի լավ լուծի, նրան էլ կընտրի այս տիպի ընտրողը³³: Ստացվում է, որ ձևավորվել են դերային սպասելիքներ ընտրողի և թեկնածուի միջև, որոնց խախտումը պահանջում է լուրջ փոփոխություններ ինչպես ընտրողի հոգեբանությունում, այնպես էլ ընտրական համակարգի այլ սուբյեկտների մոտ: Այն ընտրվողները, որոնք գիտակցում են ընտրակաշառման տեխնոլոգիայի նպաստավորությունը իրենց ընտրվելու համար՝ խթանում են ընտրակաշառքի նորմավորման գործընթացին: Վերջինիս ժամանակ էլ նկատրատի համար սկզբից ընդունելի, հետագայում նորմալ և վերջնաարդյունքում սպասելի և ցանկալի է դարձվում ընտրակաշառքի բաժանումը:

Ընտրակաշառման նորմավորմանը նախնականում նպաստում է լոյալ վերաբերմունքը այդ երևույթի նկատմամբ, որը խթանվում է կաշառատուների կողմից: Գործընթացի բացահայտությունը, պատիժների բացակայությունը, որը պայմանավորված է կաշառատուների հովանավորչությամբ առաջացնում է բնակչության համակերպվող վերաբերմունքը կաշառման երևույթի նկատմամբ: Երևույթը ընդունվում է սովորական, որպես նորմ և ակնկալիք: Այս պարագայում կաշառատուն, կաշառք վերցնողը և գործընթացի այլ մասնակիցները չեն քննադատվում և չեն հեղինակագրվում հասարակությունում: Արդյունքում չի գործում լծակ, որով կարելի էր նրանց ետ պահել այդ գործունեությունից: Գործընթացի բացահայտությունը շատ ընտրողների մոտ տպավորություն է ստեղծում, որ այն օրենքով արգելված չէ, մյուսների մոտ՝ համոզմունք, որ իրավապահ մարմինները կամ տեղյակ են, կամ էլ նրանց տեղյակությունը կաշառատուի համար պրոբլեմ չէ, քանի որ նա առանց վախենալու է ծավալում նման գործունեություն: Նշված փաստերի վերլուծությունը նույնիսկ սովորական ընտրողի մոտ հուշում է այն մասին, որ թեկնածուն իրոք «դաբրո»՝ հովանավորչություն ունի: Արդյունքում ընտրողը գիտակցում է թերության համակարգայնությունը և ձեռնպահ մնում քայլեր ձեռնարկել:

³³ **Հարցվող*** Նախորդ ընտրությունների ժամանակ մի թեկնածու փող էր բաժանել 3000, մյուսը 5000, գյուղացիները 3000-ը հավաքել ետ էին տվել, այսինքն չունեին նաև այն համարձակությունը, որ փողը վերցնի, քայց ում ուզի նրան քվեարկի:

Նորմավորման եղանակներից է ընտրակաշառքի, որպես բիզնեսի ընկալման տարածումը ինչպես կաշառվողների, այնպես էլ գումարը բաժանողների շրջանում: Կաշառատու թեկնածուները իրենց կաշառքը բաժանում են, ինչպես արդեն ասվել է, հասարակությունում առանձին շերտ հանդիսացող մարդկանց խմբի միջոցով: Այս մարդկանց խմբի համար ընտրակաշառքի բաժանումը դարձել է բիզնես, որով նրանք մեծ գումարներ են վաստակում իրենց բարեկամների, մերձավորների և ուղղակի այլ ընտրողների ընտրածայների վաճառքի հաշվին: Բիզնեսի էությունը կայանում է նրանում, որ վերցնելով բավական մեծ գումարներ թեկնածուներից, ընտրակաշառքի բաշխողները այդ գումարի օգտագործմամբ խոստանում և ապահովում են համապատասխան քանակի ձայներ: Այդ ձայների մի մասը նրանք կարող են ապահովել նախապես պայմանավորված ընտրակաշառքի չափով գումարի բաշխմամբ: Սակայն շատ դեպքերում նրանք ստացված գումարից բաշխում են այլ չափի գումարներ՝ տարբերությունը պահելով իրենց, իսկ որոշ դեպքերում էլ ընդհանրապես գումար չտալով: Վերջին երկու դեպքերում ընտրածայները ապահովում են իրենց ունեցած անձնական հեղինակության կամ ազգակցական կապի շահարկման միջոցով:

Շատ դեպքերում այս կաշառատուները թաղային հեղինակություններ են, որոնք կարողանում են հնարավորին չափ քիչ գումարով ապահովել որոշակի քանակի ընտրածայներ: Մյուս դեպքերում ադմինիստրատիվ կամ այլ տիպի լծակների տիրապետող մարդիկ են, մանր չինովնիկներ, գյուղերում մեծ ազգություններով մարդիկ³⁴ և այլն: Այս մարդկանց ներառումը ունի երկու նպատակ. հնարավորին չափ քիչ գումարով շատ ձայներ ստանալ և ապահովել ձայների վերահսկումը:

Վերոնշյալ մարդիկ պետք է ունենան նաև որոշակի կարողություններով և համոզելու ընդունակությամբ համագործակցողներ՝ աշխատակազմ, որոնք կապահովեն աշխատանքների արդյունավետությունը: Այդ մարդկանց հատկանիշները ներառում են նաև ֆիզիկական լավ տվյալներ, որոնք կարող են երբեմն տպավորություն թողնելու համար, իսկ երբեմն էլ իրականում կիրառվել: Կաշառատուները նախորդ ընտրությունների ընթացքում մասնագիտացել և հմտացել են այս գործում և կատարում են այն բարձր արտօնստիանով:

Կաշառողների այս շերտը կարևոր խթան է հանդիսանում թեկնածուների համար զբաղվելու ընտրակաշառքի բաշխմամբ: Նրանք մի կողմից ստեղծում են արհեստական տպավորություն թեկնածուի մոտ, որ ամենալավ և վստահելի եղանակը դա է՝ դրանով իսկ խթանելով իրենց գործունեության նկատմամբ «պահանջարկը», մյուս կողմից դրդում են ընտրողներին իրենց ընտրությունը կատարել ընտրակաշառքի հիման վրա՝ հեշտացնելով և արդյունավետ դարձնելով իրենց գործունեությունը: Այս բիզնեսի շահութաբերության մասին է խոսում այն փաստը, որ ընտրությունների մոտ ընկած ժամանակաշրջաններում շատ մարդիկ թողնում են իրենց հիմնական գործունեությունը, որոշ դեպքերում դադարում է արտագնա աշխատանքը:

Ընտրակաշառքի իրականացմանը և արդյունավետությանը նպաստում են ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառմամբ առկա հետևյալ գործոնները՝

1. Ընտրողների կաշառումը տարբեր հիմնարկներին պարտքերի մարման եղանակով
2. Էլեկտրիկի, բուժքրոջ, ուսուցչի և այլ գործոնները
3. Ընտրողների կաշառումը ադմինիստրատիվ պարտականությունը բարեգործություն կամ «լավություն» ներկայացնելով
4. Ադմինիստրատիվ ճնշումը, որ փող վերցնեն և ընտրեն
5. Հովանավորչության իրականացումը

³⁴ **Հարցվող*** Գյուղերում նաև ազգակցական պահ կա, այսինքն մեծ ազգի հեղինակության հետ պայմանավորվում են, որը 100% -ով փոքր ազգի քվեարկության հարցը կանխորոշում է:

6 Ընտրական հանձնաժողովների շահադիտական կառավարումը

Հանձնաժողովների կողմից իրականացվող տեխնոլոգիաները ենթադրում են որոշ պայմանների կամ գործոնների առկայություն, որոնք նպաստում են նրանց կողմից այդ տեխնոլոգիաների իրականացմանը: Այդ գործոններից հիմնականները դրսևորվում են «հանձնաժողովների յուրայնացման» տեխնոլոգիաներում, որոնք հնարավոր են դարձնում մյուս տեխնոլոգիաների իրականացումը: Մյուս տեխնոլոգիաները կապված են դրանց դեմ պայքարի եղանակներում առկա դժվարությունների և սոցիալական փաստերի հետ:

Հանձնաժողովները և վստահված անձինք յուրայնացվում են երեք ճանապարհով: Առաջինը օրենսդրությամբ սահմանված կարգով նախատեսված մեծամասնության ապահովմամբ և հետագայում դրանց միջոցով օտարների հեռացմամբ, ինչի մասին կլիստսի հաջորդ կետում: Սակայն այս եղանակով ոչ միշտ է հնարավոր ապահովել հանձնաժողովի և մյուս ներկաների այնպիսի կազմ, որ թույլ տա մաքսիմալ ձայներ ստանալ: «Յուրայնացման» երկրորդ եղանակը հանձնաժողովի անդամի կամ վստահված անձի կաշառումն է: Եվ երրորդ եղանակը տարատեսակ ճնշումները նրանց վրա՝ համապատասխան վարքի դրդելու նպատակով: Յուրայնացնելով հանձնաժողովը, ընտրատեխնոլոգիայի սուբյեկտը հնարավորություն է ստանում մյուս տեխնոլոգիաներով կառավարել հանձնաժողովի աշխատանքները որոշակի շահերի տեսանկյունից:

6.1 «Հանձնաժողովի յուրայնացում». հանձնաժողովի ձևավորման կարգի շահարկմամբ

«Հանձնաժողովի յուրայնացման» առաջին եղանակը ապահովվում է հանձնաժողովի կազմման եղանակի վրա հենվելով, որը սահմանվում է ՀՀ ընտրական օրենսգրքով և հենվում է օրենսգրքի թույլ կողմերի չարաշահման վրա: Հանձնաժողովի կողմից կատարվող թերգործառնության հնարավորությունը նախ և առաջ պայմանավորված է դրա ձևավորման կարգով և ընտրատեղմատում գտնվողների իրավունքների և պարտականությունների բաշխմամբ: Համաձայն օրենսգրքի այն տարբերակի, որի հիման վրա անցկացվել են 2003-ի խորհրդարանական և նախագահական ընտրությունները՝ հանձնաժողովը ձևավորելու ժամանակ իշխանությունները լուրջ առավելություններ են ստանում ընդիմության նկատմամբ ունենալու իրենց շահերը ներկայացնող, կողմնակալ հանձնաժողով: Ընդ որում դա արտացոլվում է ինչպես կենտրոնական այնպես էլ ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորման գործընթացում:

Այսպես, կենտրոնական ընտրական հանձնաժողովը ձևավորվում է խորհրդարանում խմբակցություն ունեցող կուսակցության մեկական ներկայացուցչից, հանրապետության նախագահի նշանակած երեք թեկնածուից³⁵: Ի՞նչ է սա նշանակում: ՀՀ Ազգային Ժողովում գոյություն ունեն վեց խմբակցություն, որոնցից երեքը իշխանական կոալիցիայի կուսակցություններն են ներկայացնում, երկուսը ընդիմությունը և մեկը փորձագետների կողմից դարձյալ միանշանակ իշխանամետ կուսակցություն համարվող կուսակցություն:

³⁵ Համաձայն ՀՀ ընտրական օրենսգրքում կատարված վերջին փոփոխությունների, նախագահի կողմից առաջադրվող անդամների քանակը դարձել է մեկը: Սակայն փորձագետները հայտնում են թերահավատություն, որ օրենսգրքը էական փոփոխություններ ունի և լուծում է առկա պրոբլեմները՝ համարելով վերջին փոփոխությունները կոսմետիկ: Նախկինում՝ 95-ին, համաձայն փորձագետների, ՀՀ-ի կողմից խթանվել է կուսակցությունների շատացումը, որովհետև դա նպաստում էր հանձնաժողովի կազմում իշխանությունների ներկայացուցչների մեծամասնության ապահովմանը: Մասնակից կուսակցություններից ձևավորվում էին հանձնաժողովները, իսկ մասնակիցները շատ են նախքան ստորագրահավաքը: Ստորագրահավաքից հետո իշխանությունների կողմից միտումնավոր մտցված որոշ կուսակցություններ դուրս են մնում ցուցակից՝ ստորագրությունները չէր հավաքվում կամ այլ պատճառով: Մինչդեռ իշխանությունները, ի դեմս դուրս մնացած կուսակցությունների ներկայացուցչների, արդեն հանձնաժողովներում ունեն իրենց մարդիկ՝ հետևաբար մեծամասնություն, հետևաբար՝ ամբողջական հանձնաժողովներ: Իսկ մնացած ամեն ինչ կարելի է կատարել հանձնաժողովներում:

Ստացվում է, որ իշխանությունները ԿԸՏ-ի կազմավորման ժամանակ ունենում են բացարձակ մեծամասնություն՝ երեք նախագահի ներկայացուցիչ, երեք կոալիցիայի, մեկ լրացուցիչ իշխանամետ և միայն երկու ընդդիմության ներկայացուցիչ: Արդյունքում հանձնաժողովում ընդունվելիք բոլոր որոշումները կարող են անցկացնել իրենց շահերի համապատասխան:

Մասնավորապես հանձնաժողովի նախագահի ընտրությունը համաձայն օրենսգրքի կատարվում է մեկ թեկնածուի դեպքում՝ ձայների պարզ մեծամասնությամբ, ավելի թեկնածուների դեպքում ավելի ձայներ հավաքած թեկնածուի օգտին: Մասնատիպ սկզբունքով ձևավորվում են նաև ընտրատարածքայի և տեղամասային ընտրական հանձնաժողովները, այնպես, որ դրանց նախագահությունը և անդամների մեծամասնությունը ստացվում են որպես կանոն իշխանամետ: Արդյունքում իշխանամետ հանձնաժողովները ընդունում են բոլոր որոշումները, որոնք համարվում են ընդունված կեսից ավելի ձայներով:

Իշխանությունների ձգտումը հնարավորին չափ շատ տեղեր ունենալ հանձնաժողովներում փորձագետների կողմից դիտվում է սկսած 90-ականներից, երբ օրենսդրական բարեփոխումներ էին նախատեսվում: Ներկայումս առկա է նույն հակվածությունը՝ տարբեր հիմնավորումներով ապահովել իշխանությունների շատ ներկայացվածությունը հանձնաժողովներում: Սա կհամարվեր անվտանգ, եթե հանձնաժողովի անդամները գործին ոչ թե իրենց քաղաքական հայացքների համաձայն, այլ առաջին հերթին օրենքի համաձայն, ինչը քիչ հնարավոր է: Հետևաբար հանձնաժողովների կազմման նման կարգը բացասական հետևանքներ է ունենում:

Օրենսդրության մեջ առկա են միտումնավոր բացթողումներ հանձնաժողովի գործունեության վերաբերյալ, որոնք մեքենայություններ կատարելու լայն հնարավորություններ են ընձեռում հանձնաժողովին: Մասնավորապես քվեարկության հնարավորությունը օգտագործվում է հոգուտ կամ ի վնաս ինչ որ թեկնածուի: Հաճախ քվեարկության են դրվում այնպիսի հարցեր, որոնք արդեն օերնքով կամ ենթաօրենսդրական ակտերով սահմանված են:

Այդպիսի օրինակ է բերվում քվեարկության միջոցով քվեների հաշվման ժամանակ վստահված անձի հեռացումը տեղամասից, որը մի կողմից օրենքով թույլատրելի չէ, սակայն մյուս կողմից քողարկվում է հանձնաժողովի քվեարկելու իրավունքի ներքո: Այս խախտումը հանդիպում է շատ հաճախ և համարվում է հանձնաժողովին տրված կոլեկտիվ որոշում կայացնելու իրավունքի դրսևորում: Ենթադրվում է, որ դատարանում քվեարկողներին պատասխանատվության չեն ներկայացնի, քանի որ նրանք ունեցել են քվեարկելու իրավունք, որի համաձայն էլ քվեարկել են:

Հանձնաժողովի կազմման եղանակով է պայմանավորվում նաև պատասխանատվության վերացականությունը հանձնաժողովի գործունեության համար: Հանձնաժողովի անդամները լիարժեք պատասխանատվություն չեն կրում հետևելու օրենքի տառին: Հակառակը տեղի են ունենում բազմաթիվ չարաշահումներ, որոնց պատասխանատվությունը դժվար է գցել իշխանությունների վրա, քանի որ հանձնաժողովը կազմված է բոլոր քաղաքական ուժերից: Այլ հարց է, որ այդ քաղաքական ուժերի ներկայացուցչական հանձնաժողովում միանշանակորեն որոշումները ընդունվում են մեծամասնություն կազմող իշխանամետ ներկայացուցիչների կողմից կամ հանձնաժողովում գերիշխող դեր զբաղեցնող նախագահի կողմից³⁶: Իսկ մյուս ներկայացուցիչները չեն կարողանում դիմակայել ապօրինություններին: Արդյունքում սատացվում է, որ պատասխանատվությունը կիսում են բոլորը, բայց օրենքով ամրագրված և պրակտիկայում ազդեցություն տվող իրավունքները կրում են միայն իշխանությունները, որոնք էլ իրենց մեղքը տարածելով նաև բոլոր քաղաքական ուժերի վրա, ազատվում են պատասխանատվությունից:

³⁶ **Հարցվող*** Այստեղ նկատվում է մի այսպիսի երևույթ. կարծես, թե հանձնաժողովի միակ խնդիրը նախագահի ընտրությունն է: Նախագահը, որպես կանոն իշխանական թևի ներկայացուցիչ է և առավել սերտ կապեր ունի «կեղծիքների շտաբի» հետ:

Այս առումով առաջարկվում է ոչ թե իսկգբանն օրենքում ենթադրել, որ նախագահը և տեղակալը պիտի լինեն ազնիվ մարդիկ, այլ պետք է գործի դրվեն փոխադարձ վերահսկողության և հակակշռի մեխանիզմները: Նվազագույն փոփոխություն այս առումով համարվում է, այն, որ նախագահի տեղակալը և քարտուղարը լինեն նախագահին հակակշիռ ուժեր: Օրինակ, եթե հանձնաժողովի նախագահը մի ճամբարից է, ապա տեղակալը և քարտուղարը լինեն այլ ճամբարներից:

Որպես ավելի հիմնովի լուծում է առաջադրվում ընդհանրապես հանձնաժողովի նախագահի, տեղակալի և քարտուղարի ընդդիմության ներկայացուցիչ լինելը: Նշված առաջարկության քննադատությունը պնդում է, որ ընդդիմադիր ուժերը նույնպես կարող են խախտումներ անել: Սակայն առաջարկի հեղինակը պնդում է, որ իշխանությունը ունի լիարժեք հնարավորություն վերահսկելու ընդդիմությունից բաղկացած հանձնաժողովների գործունեությունը և քրեական պատասխանատվության ենթարկել նրանց: Այսինքն, համարվում է, որ իշխանությունն ունի լծակներ և ցանկություն ընդդիմության կեղծիքները պատժելու և վերահսկելու, իսկ ընդդիմությունը նման լծակներ չունի:

Առաջարի էությունը ստացվում է հետևյալը, որ ընտրակեղծիքներ անելու հնարավորությունը տալ մի կողմին, իսկ ընտրակեղծիքների վերահսկողության հնարավորությունը մյուս կողմին, որը իրականում տիրապետում է լծակների դրանց վերահսկման համար: Մինչդեռ, եթե ընտրակեղծիքներ անելու հնարավորություն ունեն իշխանությունները, որոնք նաև պետք է վերահսկեն ընտրությունների օրինականությունը, նրանք հակված չեն վերահսկել իրենց իսկ արած կեղծիքները: Այսինքն, եթե կեղծիքը կատարում է իշխանական մարմինը, այն քողարկվում է: Մինչդեռ հակառակ դեպքում ընտրակեղծիքը չի քողարկվի, քանի որ պետական մարմինները շահագրգռված կլինեն դրանք պատժել³⁷:

6.2 «Հանձնաժողովի յուրայնացում». հանձնաժողովների և վստահված անձանց կաշառումամբ

Հանձնաժողովների և վստահված անձանց կաշառման եղանակը յուրայնացման տարածված եղանակ է և ունի իր տարատեսակները: Դրանցից առաջինը ուղղակի կաշառումն է ընտրություններից առաջ, երբ դրված նպատակներին հասնելու տեսանկյունից որոշակի հաշվարկների համաձայն կաշառումը ապահովում է սպասվելիք վերջնարդյունքի համապատասխան մասը: Նախապես կաշառումը իրականացվում է, եթե անակնկալ փոփոխություններ չեն սպասվում հանձնաժողովի կազմում, որ կվերացնեն կաշառման իմաստը, կամ արտաքին փոփոխություններ, որոնք հնարավորություն կստեղծեն ավելի արդյունավետ միջոցներ կիրառել:

Կաշառողը կարող է դա անել ինչպես ողջ հանձնաժողովի հետ, այնպես էլ նրա մեծամասնության և ազդեցիկ մասի, որը կխոստանա շոշափելի արդյունք՝ փողի վերադարձման երաշխիքով: Միևնույն ժամանակ կաշառման ենթակա են նաև վստահված անձինք և դիտորդները, որոնք աչք կփակեն կատարվածի նկատմամբ: Ոնդ որում վստահված անձանց կաշառում համարվում է շահութաբեր բիզնես ինչպես նրանց համար, այնպես էլ նրանց ներկայացնող քաղաքական կազմակերպությունների և թեկնածուների համար:

Բանը նրանում է, որ քաղաքական ուժերը կամ թեկնածուները շատ ընտրատեղամասերում, իրենց ընտրողների պակասի, այնտեղ գործունեության աննպատակահարմարության կամ այլ պատճառներով շահեր չեն հետապնդում այդ ընտրատարածքներում: Մինչդեռ նրանք ունեն վստահված անձ ունենալու իրավունք, ինչից նրանք օգտվում են նրկու ձևով: Իրենց վստահված անձից պահանջում են հետևել

³⁷ **Տարցվող*** Պիտի հանձնաժողովները ինքնուրույն լինեն, բայց նաև վերահսկելի: Պիտի բոլորս լինենք հաշվման պրոցեսում, որ վերահսկենք: Ոնցոր ես տամ ձեզ ասեմ կիսի հավասար, դուք կիսեք, բայց հետո ես ընտրեմ, թե ինձ որն եմ վերցնում: Դուք ստիպված նենց եք կիսելու, որ հավասար լինի, որ ես շատը չվերցնեմ: Ես ձեզ հաշվելուց տեսնում, դուք ինձ, մի հատ իրար ցույց տանք...:

գործընթացին որևէ հարող քաղաքական ուժի շահերի պաշտպանության նպատակով: Հետևել գործընթացին՝ որևէ քաղաքական ուժի կամ թեկնածուի օգտին՝ վերցնելով նրանց որոշակի գումար: Եվ վերջին տարբերակը, ուղղակի վաճառում է իրեն հատկացված տեղը այլ քաղաքական ուժի կամ թեկնածուի որոշակի գումարով՝ հնարավորություն տալով վերջինիս իր մարդուն ուղարկել համապատասխան ընտրատեղամաս հետևելու գործընթացին իր շահերից ելնելով: Ընդ որում ընտրատարածքում ներկայացուցչի կաշառքը իրականացվում է այն դեպքում, երբ ներկայացուցիչը բացի կաշառողի շահերը պաշտպանելուց ունի նաև այլ խնդիրներ: Այս պարագայում չի բացառվում երկակի կամ բազմակի կաշառումը, երբ ներկայացուցիչը փորձում է համատեղել մի քանի կաշառատուների շահերը: Նման կաշառման դեպքում կաշառքի մի մասը վստահված անձը պահում է իրեն, մյուս մասը փոխանցում իր թեկնածուին կամ քաղաքական ուժին:

Իսկ վստահված անձի տեղերի վաճառումը իրականացվում է անմիջականորեն թեկնածուի կամ քաղաքական ուժի կողմից, երբ նա տվյալ տեղամասում գործունեության նպատակահարմարություն չի տեսնում: Այս դեպքում կաշառող կողմը առաջինիս վստահված անձի անվան քողարկմամբ իր վստահված անձին է տեղավորում համապատասխան ընտրատեղամաս: Առաջին տարբերակից օգտվում են հիմնականում այն ուժերը, որոնք ունեն քիչ մարդկային ռեսուրսներ և նրանց համար ավելի գնահատելի է կաշառմամբ լուծել նաև կոնկրետ ներկայացուցչի հարցը: Երկրորդ տարբերակից օգտվում են այն ուժերը, որոնք ունեն շատ մարդկային ռեսուրսներ և պատրաստ են տեղամասում ներառել իրենց մարդուն, որը ավելի վստահելի է իրենց համար:

Քաղաքական ուժերը նման կաշառման՝ իրենց վստահված անձանց տեղերի վաճառքի գնում են ելնելով նաև իրենց ֆինանսական դժվարությունների հաղթահարման անհրաժեշտությունից և ոչ բոլոր դեպքերում է տեղերի վաճառքը անհրաժեշտ դիտել որպես բիզնես: Կան քաղաքական ուժեր և ավելի շատ թեկնածուներ, որոնք ունեն իրենց համար ավելի արդյունավետ ընտրատարածքներում նախընտրական շտաբի ձեռքբերման և այլ ֆինանսական պրոբլեմներ, որոնց համար երբեմն նույնիսկ փոքր գումարները կարևոր են դառնում: Այս պայմաններում նպատակահարմար է դառնում վաճառել այն տեղերը, որտեղ նրանք գործունեության մեծ արդյունք ստանալու նախադրյալներ չունեն և առավել ևս գործունեության միջոցները բավարար չեն:

Կաշառված հանձնաժողովը իրականացնում է դավադիր պայմանավորվածություն, հոգեբանական ճնշումներ, ձայների սխալ հաշվարկ և այլ տեխնոլոգիաներ³⁸: Հանձնաժողովների յուրայնացման կարևորագույն ձևերից մեկը հանձնաժողովի անդամների վրա ճնշումներն են, որոնք առաջնային տեղ են զբաղեցնում իրենց կիրառման զանգվածայնությամբ և արդյունավետությամբ: Այս մասին մենք արդեն քննարկել ենք ճնշումներ բաժնում:

6.3 Մերենայություններ հանձնաժողովի և վստահված անձանց գործելակարգի շահարկմամբ

Մինչև 2005-ի փոփոխությունները գործող ընտրական օերնագրքի համաձայն՝ հանձնաժողովները այնպիսի եղանակով են կազմավորվում, որ դրանց անդամների

³⁸ **Հարցվող*** Սա լավագույնը չի, բայց ձայն հաշվողը չպիտի շահ ունենա: Հաշվողների պետ ծառայողներից կազմված լինելը թանկ հաճույք է, բայց ժողովրդավարությունը թանկ հաճույք է: Բոլոր կեղծիքները անում են հանձնաժողովները: Մեծամասնականների ընտրությունների ժամանակ մեծահարուստները գնում են անդամներին կուսակցություններից և ասում, որ իրենք էլ նրանց համար կաշխատեն: 5000 դոլար մի հանձնաժողովի անդամը: Կուսակցություններ կան, որ սենյակի վարձի 100 դոլար չունեն. դրանք փողի կարիքից կզնան այդ քայլին: Ասենք 95-ին 75 մեծամասնական տեղ էր, ամեն հանձնաժողովին 5000 ահազին փող է: Ձայների հաշվման ժամանակ, եթե կուսակցությունից մարդ չկա, կարող է մյուսները հավաքվեն ասեն եկեք իրենց ձայներն էլ բաժանենք մեր մեջ: Եթե մարդ լինի, էն էլ կասի չէ: Դրա համար ճանապարհը դա է, որ գոնե մի անգամ մեկական մարդ լինի, որ ինչ արդյունք էլ լինի, ազնվորեն ասենք էս էր մեր կարողությունը ու մեր ազնվությունը, էսքան կարող ենք, ձևավորել ենք պետություն, դե եկեք մնացածը թողնենք էդ պետության վրա արդեն: Դրանից հետո թողնվի պետությանը, որ էլ չբողոքենք:

տեղերը և առնելն է հեշտ, և նրանց ահաբեկելը, և ամենակարևորը՝ ընտրական օրենսգրքով նրանցից ազատվելու մեխանիզմները կան (առավել ըմբոստներին ազատելը): Օրինակ՝ հանձնաժողովի նախագահը իրավունք ունի երեք նիստ անելու, և եթե անդամը անհարգելի բացակայում է, նրան կարող են հեռացնել հանձնաժողովից: Ի տարբերություն 95 թ.-ի ընտրական օրենսգրքի, 2003-ի ընտրությունների ժամանակ հնարավորություն չկար հանձնաժողովի անդամին փոխարինելու մեկ ուրիշով:

Վերադաս հանձնաժողովի նախագահը անդամին նշանակում է իր հայեցողությամբ: Նա կարող է օրվա մեջ երեք անգամ, պատշաճ ձևով, երկու ժամը մեկ արտահերթ նիստեր անց կացնել, նույնիսկ հայտարարել այդ մասին և անհարգելի բացակայողներին հեռացնել: Այսինքն, հանձնաժողովը հանդիսանում է այդ խախտումների երաշխավորողը: հանձնաժողովի նախագահը, նոր օրենքի համաձայն, ունի առեղծի լիազորություններ և կարող է, ըստ իր հայեցողության, հանձնաժողովի անդամների տեղափոխումներ անել: Նույն օրենքով վստահված անձը չի կարողանում անմիջապես ստուգումներ անել, նույնիսկ չի կարող ստուգել քաղաքացու անձնագիրը³⁹: Նրա համառության դեպքում նախագահը կարող է ձևակերպել որպես հանձնաժողովի աշխատանքի խոչընդոտում և միանգամից հեռացնել հանձնաժողովից: Փարձագետը նշում է բազմաթիվ այդպիսի օրինակների առկայության մասին, երբ անդամները այդ ձևով ուստիկանության և անվտանգության աշխատակիցների միջոցով հեռացվել են⁴⁰:

Որպես վստահված անձանց գործելակարգի շահարկմամբ իրականացվող տեխնոլոգիա կարելի է համարել նաև վստահված անձի փոխարինումը ցանկալի անձով: Այս եղանակով նախապես յուրայնացված հանձնաժողովի կողմից որպես հակառակորդի վստահված անձ է գրանցվում յուրային վստահված անձ: Իրական վստահված անձը բացահայտելով իր փոխարեն այլ մարդու առկայությունը դիմում է որոշակի քայլերի իր վստահված անձի իրավունքները վերականգնելու համար: Գործընթացը խլում է որոշակի ժամանակ, որի ընթացքում հանձնաժողովը հասցնում է իրականացնել որոշակի խախտումներ: Մինչև իրական վստահված անձը ստանձնում է իր պարտավորությունները, արդեն «ամեն ինչ» վերջացած է լինում:

6.4 Պատասխանատվության վերացականությունը

Փորձագետների պնդմամբ հանձնաժողովի շատ կեղծիքներ կարող էին նվազեցվել էականորեն, եթե լիներ պատասխանատվության կոնկրետություն: Հանձնաժողովի թերգործառնություններին մասնակցում են թե՛ իշխանությունները, թե՛ ընդհանրությունը: Ներկա են դիտորդներ և լրագրողներ: Արդյունքում բոլոր ընտրակեղծիքները ենթադրվում է, որ պետք է վերահսկվեն բոլորի կողմից: Սակայն իրականում, երբ վերահսկողությունը չի կայանում պատասխանատվություն են կրում բոլորը՝ հավաքական առումով, այսինքն ոչ ոք փաստացի:

Ընդհանրությունը մեղադրում է իշխանություններին ընտրակեղծիքները կազմակերպելու և իրականացնելու մեջ: Իշխանությունը մեղադրում է ընդհանրությանը, ամբողջ մեղքը իր վրա զգնելու մեջ՝ հայտարարելով, որ բոլորն են մասնակից: Արդյունքում չկա կոնկրետ մարդ, որը կրի իրական պատասխանատվություն⁴¹: Համաձայն փորձագետների, դեռևս չի եղել մի

³⁹ **Հարցվող*** Անհրաժեշտ եմ համարում վստահված անձանց լիազորությունների էական ընդլայնումը, այսինքն նրանք պետք է նույն իրավունքները ունենան, ինչ ընտրական հանձնաժողովի անդամները, այդ թվում նաև տեղամասում ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ բացի քվեարկելու իրավունքից: Հիմա մի հատ կարմիր գիծ են գծում և ասում, որ ձեռք տեղը կարմիր գծից այն կողմ է, ըստ էության այդ գծից այն կողմ ոչ քվեատուփերն է երևում, ոչ էլ վարագույրների հետևում կատարվածը: Երկրորդը հանձնաժողովների ձևավորման առումով. երբ որ դրանք ձևավորվում են և կուսակցություններից, և իշխանություններից-կոռուպցիայի անսահմանափակ դաշտ են ստեղծում:

⁴⁰ **Հարցվող*** Հիմա, նոր օրենսգրքում ավելի վատ մեխանիզմներ են ներդրվում: Իմ կարծիքով վստահված անձին պետք է օժտել վերահսկողի որոշակի իրավունքներով:

⁴¹ **Հարցվող*** Դե ստեղ վատը էն է, որ երբ որ կուսակցությունների վրա է եղ ամենը թողնվում, կոնկրետ պատասխանատվություն չկա, կա կոլեկտիվ պատասխանատվություն, այսինքն, եթե որևէ կուսակցության

դեպք երբ ընտրակեղծիքի համար իրական պատիժ կրի: Իրավիճակից ելքի մեկ տարբերակ մենք արդեն նշել ենք հանձնաժողովի կազմման մեխանիզմի փոփոխման ժամանակ:

Որպես խնդրի լուծման այլ տարբերակ է առաջարկվում պատասխանատվության կոնկրետացումը և խստացումը, դրա հետ մեկտեղ պատասխանատվության ենթարկման մեխանիզմների հստակեցումը: Այս տեսակետում նախ պրոբլեմների սկիզբը դիտվում է այն, որ ընտրությունների կազմակերպումը և վերահսկողությունը թողնվում է կուսակցությունների վրա: Կուսակցությունները չեն կարող դա լիարժեք կատարել նախ ռեսուրսների և ապա կենտրոնացված կորդինացվածության պակասով, ինչպես նաև անմիջական շահագրգռված կողմ լինելու պատճառով:

Վերջինս պայմանավորված է այն բանով, որ հանրապետությունում առկա են մոտ 2000 ընտրատեղամաս, որտեղ բոլոր կուսակցությունները չեն կարող ներկայացուցիչ ունենալ և հետևաբար նաև վերահսկել: Մյուս կողմից քաղաքական ուժերից շատերը անհանդուրժողականություն են դրսևորում միմյանց հետ աշխատել, ինչը կոժվարեցնի պրակտիկայում փոխհամաձայնեցված վերահսկողության իրականացումը: Եվ վերջապես կուսակցություններն ունեն անմիջական շահեր ընտրությունների արդյունքներից և այն տեղամասերում, որտեղ նրանք հնարավորություն ունենան խմբավորվել և ընտրակեղծիքներ անել, նրանք դա կանեն, եթե վերահսկողը լինեն իրենք: Մասնավորապես, եթե մի թեկնածուի կամ կուսակցության ներկայացուցիչը բացակայի տվյալ տեղամասից, մյուսները կգողանան նրա ձայները:

Այս առումով, որպես խնդրի լուծման այլ տարբերակ առաջարկվում է հարաբերականորեն չեզոք, ընտրությունների արդյունքներից ոչ անմիջական շահ ունեցող և պատասխանատվության մեխանիզմին ավելի ենթակա կողմի միջոցով իրականացնել ընտրությունների վերահսկողությունը⁴²: Կա կարծիք, որ այդպիսին կարող է լինել պետական ծառայության համակարգը, ինչը տարածայնությունների տեղիք է տալիս: Պետծառայության համակարգում կամ առանձին կառույցի ներքո ընտրական համակարգի կառուցումը որոշ առումներով նպաստում է նաև ադմինիստրատիվ ճնշումների իրականացմանը հանձնաժողովի վրա⁴³:

Այս գաղափարի իրականացման առաջին տարբերակ համարվում են ազգային վիճակագրական ծառայությունները, որոնք մասնագիտացած են այս տիպի գործունեության վրա, ունեն մասնագետներ, որոնք դասընթացներ են անցել, ունեն աշխատանքային փորձ: Մյուս եղանակը պետական ծառայության համակարգում այլ կառույցի ստեղծումն է, որը քաղաքացիական ծառայողների կամ այլ ստատուսի, սակայն մշտական աշխատողների միջոցով կիրականացնի ընտրությունների կազմակերպումն ու վերահսկողությունը:

Այս տեսակետի քննադատությունը կասկածի տակ է դնում այն ակնկալիքը, որ պետական ծառայության համակարգի աշխատողները կլինեն օբյեկտիվ: Նրանք իրոք կարող են մոտիվներ ունենալ ադմինիստրատիվ ճնշումների հետևանքով, իրենց աշխատանքը չկորցնելու ձգտումով կամ ընդհանրապես իշխանություններին ենթակա լինելու պատճառով ավելի համակարգված կեղծիքներ կատարել, որոնց չեն կարողանա վերահսկել:

ներկայացուցիչ մի բան արեց նա պատասխանատվություն չի կրում. նրան կարող են փոխել և ասեն եկավ իր սև գործը արեց ու գնաց: Օրինակ քաղ. ծառայողի դեպքում օրենքով հողված կա, որով պատժվում է, կոնկրետ պատասխանատվություն կա: Ասենք աշխատանք է կորցնում: Իսկ սկսած 95-ից Հայաստանում ինչ որ մարդկանց խավ առաջացավ, որոնք մասնագիտացել են և պատրաստ են կեղծելու: Ընդ որում նրանք պատրաստ են կեղծել օրվա իշխանության համար:

⁴² **Տարցվող*** Պետք է ընդունվի ընտրական նոր օրենսգիրք, շատ ռադիկալ օրենսգիրք: Այս առումով հետաքրքիր է Գերմանիայի փորձը: Նրանք կենտրոնական ընտրական հանձնաժողով չունեն: Երկրում կա ընդամենը մի պատասխանատու, դա կարծես ներքին գործերի նախարարի տեղակալներից մեկն է: Ունենալով համակարգչային տեխնոլոգիաներ, այդ բոլոր հաշվարկները կատարվում են կուսակցությունների կողմից, միասին ստորագրում են համաձայնագիր, որ իրար չեն խաբելու:

⁴³ Տես ադմինիստրատիվ ճնշումները հանձնաժողովների վրա:

Սակայն այս քննադատության հակափաստարկը հիմնվում է հետևյալ դրույթների վրա: Պետք է լինեն մշտական աշխատողներ, որոնք իրենց արածի համար կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով: Պատասխանատվությունը պետք է լինի պատշաճ խստության: Պատասխանատվության իրագործելիությունը ապահովվում է այն բանով, որ ամեն հաջորդ իշխանություն ենթարկում է պատասխանատվության նախորդ ընտրությունների կեղծարարներին և եթե իրոք ընտրակեղծիք է իրականացվել, իրականացնողները կարող են ենթարկվել պատասխանատվության ամեն հաջորդ իշխանության կողմից և նույնիսկ ավելի ուշ՝ ասենք 15 տարի հետո: Ենթադրվում է, որ ընտրակեղծարարները հետագայում վաղ թե ուշ պատժվելու և պատժի խստության մտավախությամբ անհամեմատ ավելի դժվարությամբ կգնան կեղծիքների:

Հանձնաժողովների կազմումը, համաձայն այս տեսակետի, պետք է լինի դատավորների նշանակման համանմանությամբ. այսինքն հանձնաժողովը պետք է աշխատանքի նշանակված լինի ավելի երկար ժամանակահատվածի համար, քան ինքը նախագահն է ընտրվում: Օրինակ՝ սահմանադրական նախագահի նման՝ հրաման տվողի ժամկետից ավելի երկար ժամանակով: Այս դեպքում հանձնաժողովը պատասխանատվություն կկրի իր արարքների համար, թեև ուզ հաջորդ իշխանությունների օրոք:

Ի հակառակ սրան, այժմ ընտրակեղծիք կատարողը ունի կուսակցական շահեր, ունի իր թիկունքին կանգնած քաղաքական ուժեր, հաճախ՝ իշխանություններից, որոնք պատրաստ են նրա պրոբլեմները լուծել: Այդ պայմաններում ընտրակեղծիք կատարողին լիարժեք ազատություն է տրվում, իսկ վերջինս կատարում է իշխանությունների պատվերը: Օրինակ է բերվում այն, որ մարզպետարանի աշխատողները, որոնք ներառվել են այս կամ այն հանձնաժողովում, կեղծիք կատարելով, գիտեն, որ իրենց հարցերը վերևում դրական կլուծեն և պրոբլեմ չեն ունենա⁴⁴:

Մյուս խնդիրը, որի լուծումը անհրաժեշտ է այս պրոբլեմի լուծման համար, աղեկվատ պատասխանատվության ենթարկելն է, այսինքն պատժի խստությունը: Ներկայումս օրենսգրքով նախատեսվում է ընտրակեղծիքների համար քրեական պատասխանատվություն, սակայն համաձայն փորձագետների պրակտիկայում գրեթե չի եղել դեպք, երբ ընտրակեղծողը ենթարկվի պատասխանատվության: Մյուս կողմից ավելի շատ կիրառում են այնպիսի չակերտավոր պատիժներ, ինչպիսիք են հանձնաժողովից հեռացնելը, նկատողություն տալը, որոնք բնականաբար պատժի, որպես վաքը կարգավորողի ֆունկցիան չեն կատարում:

Այստեղ անհրաժեշտ է հաշվի առնել այն սկզբունքը, որ պատիժը որևէ նորմի խախտման համար պիտի լինի այնքան մեծ, որ ետ պահի մարդուն նման վարք ցուցաբերելուց, այսինքն այդ վարքը ձեռնադրի չլինի նրան: Մինչդեռ ընտրակեղծիք կատարողը իր վերադասից, հրահանգ տվողից, կաշառատից կամ կուսակցությունից ստանում է այնքան փոխհատուցում պաշտոնի բարձրացման, հեռանկարի ապահովման, փողի և այլ տեսքերով, որ նրա համար գործող պատիժը դառնում է նման վարքից ետ չպահող: Օրինակ՝ հանձնաժողովի անդամը ստանալով 5000 դոլար և վերադասի հովանավորչությունը, որ քրեական պատասխանատվության չի ենթարկվի, նա պատրաստ է ուրախությամբ կատարել կեղծիքները: Նրան ամենաշատը կարող են հեռացնել հանձնաժողովից կամ տուգանել: Ենթադրվում է, որ շատ դեպքերում հովանավորչությունը ապահովում է նաև տուգանումների մարումը:

Պատշաճ պատժի գաղափարը կայանում է այն բանում, որ պատժի խստությունը բացառի ընտրակեղծիքի ձեռնադրի լինելը ինչպես կեղծողի համար, այնպես էլ նրան հովանավորողի համար: Օրինակ՝ եթե հանձնաժողովի նախագահը իրականում ենթարկվի օրենսդրությամբ սահմանված պատժին՝ 2-5 տարի ազատազրկում⁴⁵, սա կնշանակի մի քանի դրական երևույթ: Առաջինը՝ հանձնաժողովի նախագահը ավելի զգուշությամբ

⁴⁴ **Հարցվող*** Եթե ես մարզպետարանի աշխատող եմ ու խախտում եմ արել, ինձ շատ-շատ ասեն լավ չես աշխատել ու հանեն հանձնաժողովից: Բայց եթե դա իմ աշխատանքը լինի, ինձ վարչական տուժի կենթարկեն, փողը ետ կպահեն և այլն, ոնց որ սովորական աշխատողինն է:

⁴⁵ Տես ՀՀ քրեական օրենսգրքի, հոդվածներ 149-154:

կհամաձայնվի մասնակցել և կունենա լուրջ մտավայրություն: Երկրորդ՝ նրա մտավայրությունը կբերի նրան, որ նա անհամեմատ ավելի մեծ կաշառքի դեպքում միայն կցանկանա մասնակցել և ավելի մեծ գումար կպահանջի: Երրորդ կաշառատուի համար ավելի թանկ կարծենա նրան կաշառելը և շատ դեպքերում նա իվիճակի չի լինի, կամ ձեռնառու չի լինի նրա համար այդ գործարքը: Այսպիսով օրենսդրությամբ լուծված է այս խնդիրը, սակայն չկա քաղաքական կամք աշխատեցնելու այն:

Այս ամենը կլուծեն ևս մեկ պրոբլեմ, այն է պատասխանատվության ենթարկման նախադեպերի առկայությունը և հրապարակայնությունը: Պատասխանատվության ենթարկման նախադեպերի պակասը հասարակությունում վերացնում է մտավայրությունը պատժի կրման համար: Դրանով միևնույն ժամանակ չի լրացնում իրազեկության պակասը, որ նման վարքի համար նախատեսվում է քերական պատասխանատվություն: Շատ դեպքերում իրազեկության պակասը էական դեր է խաղում ընտրակեղծիքների իրականացնողների մասնակցության որոշում կայացնելու մեջ: Մինչդեռ հրապարակային, լրատվամիջոցներով լուսաբանվող պատասխանատվության ենթարկման նախադեպերը ընտրակեղծիքներ կատարողներին մտորելու տեղիք կտան և նու կպահեն նման վարքից⁴⁶:

Արդյունքում կնվազեն ընտրակեղծիքները, կաշառումները, կավելանան պատասխանատվության ենթարկվածները և կաշառողները հակված կլինեն իրենց ռեսուրսները ծախսել ավելի օրինական ճանապարհներով:

Այստեղ կարևոր է նշել, որ պարտված ընդհանրության թեկնածուի, իր ձայների աննշանությունը գիտակցող և հիասթափված ընտրողի և արդյունքում իշխանություններից դժգոհ մարդկանց համար ընտրակեղծիքներ կատարողը շատ ավելի մեծ հանցագործ է, քան ասենք, հավ գողացողը⁴⁷: Սա նշանակում է, որ նման խստության սանկցիավորման արդարացվածությունը առկա է ինչպես սանկցիայի կարգավորիչ պոտենցիալի առումով, այնպես էլ բարոյական ադեկվատության առումով:

Եվ վերջին խնդիրը պատասխանատվության ենթարկման մեխանիզմն է, որին խոչընդոտում են հովանավորչության առկայությունը և հանձնաժողովի անդամների և վստահված անձանց հանցակից դարձնելը, որ իրականացվում է «յուրայնացմամբ», ինչպես նաև նրանց և ընտրողների գիտելիքների պակասը:

Բացի վերոնշյալ խնդիրներից, գոյություն ունի նաև դրանց վրա մասամբ հենվող և արտաքին պայմանների ընձեռած հնարավորությունների օգտագործման շնորհիվ կիրառով մի երևույթ, որի նպատակն է չկոնկրետացված պատասխանատվությունը ավելի անորոշ և անիրագործելի դարձնել պրակտիկայում: Այս մեթոդով հանձնաժողովի կեղծիքներին հնարավորին չափ շատ մարդիկ են մասնակից դարձվում, այնպես որ նրանցից յուրաքանչյուրը ստանա իր մեղքի բաժինը: Արդյունքում նույնիսկ հակառակ կամ չեզոք թևերի ներկայացուցիչները փաստացիորեն հայտնվում են կեղծարարների, օգնողների կամ պասիվ չմիջամտողների դերում, որի համար նրանց վրա նույնպես պատասխանատվություն է ընկնում:

Ընթացքում կամ վերջում մասնակիցների մոտ շեշտվում է նրանց մասնակից լինելու և պատասխանատվության կիսելու փաստը նաև իրականությունում: Եթե նույնիսկ այդ փաստը իրականում չկա, շեշտադրվում է այն պահը, որ հանձնաժողովի թերգործառնությունն նաև իրենց թերգործառնությունն է և առաջարկվում ձեռնպահ մնա իրենց գործունեությունը հետագայում քննադատել կամ բողոքարկել: Այս ամենը դրսևորվում է օրինակ հետևյալ արտահայտություններում. «Խուք էնտեղ էիք, ինչու չկանխեցիք: Իսկ դուք ինչով էիք զբաղված: Դա նաև ձեր աշխատանքի վատ արդյունքն է: Մենք էլ ձեր հանդեպ կարող ենք նման մեղադրանքներ ներկայացնել»: Վերջինիս

⁴⁶ **Տարգվող*** Այսինքն սանկցիաները խիստ չեն, և կամքը չկա, եթե մեկի պոչը բռնեն, էդ կտանի վերին օղակներ: Եթե դատական գործընթաց գնար, ինքը սկսելու էր անուններ տալ՝ ով ասեց, ինչի ասեց: Կամ էլ բոլորի կեղծիքները հիմքն ընդունելով կոմպրոմիսի գան, մեկն էլ մարդ չունենա ու էդ կոմպրոմիսը իր հաշվին լինի:

⁴⁷ **Տարգվող*** Սա պիտի լինի վճարվող գործ, որի համար պիտի պատասխան տաս, ասենք կեղծելու համար խիստ դատվես: Օրինակ մի բուլետեն գցելու համար մարդուն պիտի գոնե 1 տարի տան: Ասենք եթե մեկը բուլետեն է գցում թեկուզ մի հատ պիտի մինիմում մի տարի դատվի: Դա ավելի մեծ հանցանք է, քան ասենք, հավ գողանալը:

հնարավորությունը առաջանում է այն պատճառով, որ ինչպես իրական մեղավորի այնպես էլ գրաբարտությանը մեղադրվողի նկատմամբ կոնկրետ փաստեր չկան: Արդյունքում մեղավորը և ոչ մեղավորը հայտնվում են միևնույն հարթության վրա՝ երկուսն էլ կրելով չապացուցված մեղադրանքներ:

Եվ վերջապես որոշակի խմբերի մենթալիտետի բացասական հետևանքը, որ ընտրակեղծիքների մասին փաստերի հայտնումը համապատասխան մարմիններին, վկա լինելը և նմանատիպ այլ վարքի մոդելներ համարվում է բացասական, դավաճանական և այլն: Տրվելով այս արժեքներին, հոգեբանորեն թույլ, ոչ իրազեկ և վճռականության պակասով վստահված անձինք, հանձնաժողովի անդամները և այլոք, համակերպվում են խաղի կանոնների հետ, որոնք անբարենպաստ են իրենց կամ իրենցով ներկայացված ուժերի համար:

6.5 Հանձնաժողովի արտֆնսիանալ թերորակություն

Հանձնաժողովների թերգործառնությանը նպաստող կարևոր գործոններից է վստահված անձանց, հանձնաժողովի անդամների և դիտորդների անկարողությունը օրենքի շրջանակներում վերահսկել այդ գործունեությունը, որը պայմանավորված է երկու գործոնով՝ նրանց իրազեկության պակասը և նրանց հոգեբանական պատրաստվածությունը: Առաջինը վերաբերվում է նրանց ունեցած ոչ լիարժեք գիտելիքներին ընտրությունների, ընտրական օրենսգրքի, իրենց, ընտրողների և այլոց իրավունքների և պարտականությունների մասին:

Այս մարդիկ ընտրվում են քաղաքական հայացքների, կուսակցական պատկանելության, բնակության վայրի, վերահսկելիության և այլ պայմանականությունների հիման վրա, մարդկային ռեսուրսների պակասի պայմաններում: Այս պայմաններում ընտրության չափանիշներում ետին պլան է մղվում իրազեկությունը, իսկ ընտրության չափանիշները այս առումով առանձնապես մեծ չեն: Արդյունքում տարբեր մասնագիտություններով ուսուցիչները, պետական ծառայողները և այլ աշխատողներ, առանձնապես իրազեկ չեն իրենց և այլոց իրավունքներից և պարտականություններից: Մյուս կողմից չկա առանձնահատուկ լայնածավալ միջոցառումներ նրանց համապատասխան գիտելիքներ տալու համար:

Արդյունքում նրանք չեն կարողանում լիարժեք տարբերակել իրավունքների խախտումները, վիճելի հարցերում լինում են անվստահ և խախտումների հանդեպ ոչ զգայուն՝ այն է, նրանց աչքից հաճախ են վրիպում անթույլատրելի արարքները: Սա նպաստում է այն բանին, որ նրանք հայտնվում են պասիվ դերում, թույլ տալով խմբում ոչ ֆորմալ լիդերների առաջանալը և քիչ ազդեցություն ունենալով վերահսկման գործընթացի վրա՝ թերանում են իրենց ֆունկցիաներում:

Մյուս կողմից նրանց պասիվությանն է նպաստում հոգեբանական պատրաստվածությունը: Նրանք պատրաստ չեն անակնկալներին, չգիտեն ինչպես վարվել որոշակի իրավիճակներում, անվստահ են իրենց ուժերի վրա, շատ դեպքերում ընկճված են, ունեն անպաշտպանության զգացում, որին նպաստում է այն փաստը, որ նրանք չգիտեն, թե ինչպես և ով պետք է հարկ եղած դեպքում իրենց պաշտպանի և արդյոք անհաջողությունը կանխորոշված չէ:

Իրազեկության և հոգեբանական պատրաստվածության խնդրի լուծումը պահանջում է հատուկ միջոցառումներ, նախապատրաստական դասընթացներ, որտեղ կներառվեն իրավական գիտելիքներ, գիտելիքներ հիմնականում տարածված ընտրախախտումների մասին, որպեսզի նրանք պատրաստ լինեն անակնկալների, ինչպես նաև տրենինգներ, որոնցով նրանց մոտ համապատասխան ինքնավստահություն և տրամադրվածություն կառաջանա: Այսպիսի դասընթացների անցկացման հիմնական խոչընդոտը մինչև հիմա համարվել է ֆինանսական միջոցների պակասը: Նախկինում այնպիսի ծավալով նման աշխատանքներ չեն կատարվել, ինչպիսին ենթադրվում է այստեղ: Այդ մարդիկ կազմում են բավական մեծ թիվ և նրանց հետ դասընթացները կպահանջեն մեծ գումարներ, ժամանակ և այլ միջոցներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2005-ից անցկացնում է զուտ իրավական իրազեկության դասընթացներ, որոնց նպատակն է ծանոթացնել օրենքին: Արդյունքում նախատեսվում է հաջողությամբ անցած մարդկանց տրամադրել վկայականներ: Ենթադրվում է, որ հետագայում առանց այդ վկայականների իրավունք չեն ունենա մասնակցել հանձնաժողովների աշխատանքներին, լինել դիտորդ կամ վստահված անձ: Այդ դասընթացները անցկացվում է կառավարման Ակադեմիայի միջոցով, որը հանդիսանում է հանրապետությունում միակ կրթական հաստատությունը, որ կարող է տրամադրել այդ վկայականները: Առաջարկություն կա անցկացնել այլընտրանքային դասընթացներ, այլ հաստատության կողմից, ինչը թույլ կտա ապահովել մրցակցության վրա հենվող բրաձր որակ, նոր մտնեցումներ և կկանխի մոնոպոլիստական չարաշահումների հնարավորությունները:

Մասնավորապես միակենտրոն դասընթացների այս փորձը փորձագետների կողմից որակվում է յուրայնացման նոր փորձ, նոր մեթոդ: Մտավայխությունն այն է, որ նման ձևով կողմնապահորեն դաշտից դուրս կհանվեն ընդիմության կողմնակից առավել կարող ուժերը՝ ընդիմությանը թողնելով համեմատաբար թույլ ուժեր: Մյուս կողմից ենթադրվում է, որ կմնան այն ուժերը, որոնց վերահսկելը, կամ որոնց վրա լծակներ կիրառելը կլինի ավելի հեշտ: Երևույթը համեմատվում է ուսուցիչների օպտիմիզացիայի գործընթացի հետ, երբ աշխատանքից ազատվեցին առավել ընդիմական կեցվածքով ուսուցիչները, որոնցից շատերը լինելով ընտրական գործընթացի ակտիվ մասնակից, ներառված լինելով նաև հանձնաժողովի աշխատանքներին բավական ազդեցություն ունեին ընտրական գործընթացի վրա և խոչընդոտ էին ներկայացնում ընտրությունների կեղծման ճանապարհին:

6.6 Դիտորդական խմբերի լոյալացում

Որոշ փորձագետներ կասկածի տակ են դնում նաև դիտորդական խմբերի պարկեշտ աշխատանքը: Մասնավորապես նշվում է, որ նրանք անհրաժեշտ շեշտադրումներ չեն կատարում գրանցված ընտրակեղծիքների մասին խիստ հայտարարություններ կատարելու, դրանց ուղղությամբ լուրջ աշխատանքներ ծավալելու և կատարողներին պատասխանատվության ենթարկելու համար: Նշվում է, որ նրանց գործունեությունը հաճախ սահմանափակվում է հատկացված գումարների շրջանակներում ձևական այցելությունների և ոչինչ պրակտիկայում չտվող մոնիտորինգի սահմաններով: Ավելի խիստ զնահատականներում նրանք համարվում են գումարներ լվացողներ, որոնց հետաքրքրում է հերթական գրանտի գումարը շահավետ ձևով ծախսելը, որպեսզի հաջորդ գումարը ստանան, որը ենթադրում է ցուցադրական պատահներ, բուկլետներ: Նշվում է, որ դրանցով այդ կազմակերպությունները ավելի շատ խնդիր են լուծում ցույց տալու, հանրության համար ճանաչելի դառնալու, որ իրենք գործունեություն են ծավալում, քան իրականում առկա պրոբլեմներն են լուծում: Արդյունքում, այս տեսակետի համաձայն, մնալու են տեղական դիտորդներ, որոնք էլ կկաշառվեն թեկնածուներին և դիտորդական առաքելությունը կհամարվի իրականացված, բայց իրականում ձախողված: Համարվում է, որ չկա այնպիսի դիտորդական խումբ, որի իրական նպատակը լինի երկրում նորմալ ընտրությունների անցկացումը: Դիտորդական գործունեությունը նույնպես համարելով կողմնապահ՝ բնութագրվում է որպես աչք փակելու և ընտրովի մտնեցումների գործունեություն, երբ կա որոշում, թե ում ընտրաթեթիկը պետք է կեղծելուց բռնել, ումը ոչ: Դիտորդների նման դերը բացատրվում է նաև քաղաքական շահերով և լծակների սահմանափակությամբ⁴⁸:

⁴⁸ **Հարցվող*** ՀՀ իշխանությունները թեև ցին դիտորդական այդ բոլոր դիտորդությունների վրա, դրանք ոչ մի անդրադարձ չունեցան: Միջազգային դիտորդները պարզապես ֆիքսեցին արտաքինից երևացող բոլոր կեղծիքներն ու խախտումները, բայց ոչ մի պատիժ կամ պատասխանատվության ենթարկում չիրականացվեց: Նրանք ճնշման ոչ մի լծակ չունեն, պարզապես գրանցելով խախտումները, կարող են կարծիք կազմել Հայաստանի մասին, և նույնիսկ կարող են աչք փակել՝ ելնելով քաղաքական շահերից:

Չնայած դրան, նշվում է նաև, որ շատ դիտորդական խմբերի այցելությունները կանգնեցնում են ընտրատեղամասի տարբեր տեխնոլոգիաներ գոնե նրանց այցելության պահին: Մասնավերապես նշվում է լցոնումների, քաղաքացիների և ընտրատեղամասի մյուս աշխատողների վրա ճնշումների տեղում քարոզչության և այլ մեթոդների գոնե այցելության ժամանակ ժամանակավոր դադարեցման մասին: Որպես դիտորդական առաքելության և միջազգային ճնշման դրական արդյունք է համարվում, որ 2003-ին, «թեկուզ ձևական» երկրորդ փուլ նշանակվեց:

Սակայն կարևոր է համարվում ներքին հասարակական դաշտից դիտորդների առկայությունը: Այս ոլորտի թերությունն է համարվում նարքին ռեսուրսների պակասը, որ թույլ չի տալիս այդ նախաձեռնություններին լիարժեք գործել, որի դրսևորումներից է, որ դրանք չեն կարողանում շատ տեղեր վերահսկել: Համարվում է, որ արդյունքների էական տարբերություններ կան այն տեղերում, որտեղ նման առաքելություններ եղել են:

6.7 Ընտրաձայների սխալ հաշվարկ

Ունենալով յուրայնացված և նպաստավոր հատկանիշներով հանձնաժողով, ընտրատեխնոլոգիայի սուբյեկտները հնարավորություն են ստանում իրականացնել բուն ընտրաձայներ ապահովող տեխնոլոգիաները: Չնայած ընտրակաշառքը համարվում է ամենատարածված տեխնոլոգիան, սակայն շատ փորձագետներ, խոսելով հակադեմոկրատական տեխնոլոգիաներից, որ կիրառվում էն Հայաստանում, նշում են, որ ամեն ինչ սկսվում է հանձնաժողովներից: Այս արտահայտության տակ պետք է հասկանալ, որ առաջին և ամենահեշտ քայլը, որ կարող է բերել որևէ թեկնածուի հաղթանակի՝ ընտրաձայների սխալ հաշվարկն է՝ «նկարումը» հանձնաժողովի կողմից: Դրան առաջին հերթին ձգտում են շատ թեկնածուներ, քանի որ ավելի վստահելի, հեշտ և կարճ ճանապարհ է ընտրությունները կեղծելու:

Առաջին եղանակը, որով իրականացվում է ձայների կեղծումը հետևյալն է: Ձայների հաշվարկը իրականացնելու ժամանակ բարձրաձայն արտասանվում և ցուցադրվում է քվեաթերթը՝ նշելով, թե ում է քվեարկված: Փորձագետների պնդմամբ շատ դեպքերում դա կատարվում է շատ արագ և տեսանելի չի լինում, թե իրականում ում է քվեարկված: Հանձնաժողովի մյուս անդամները կամ վստահաված անձինք երբեմն պահանջելով տեսնել քվեաթերթիկը՝ ստանում են բացասական պատասխան, իսկ պնդելու դեպքում հեռացվում են հանձնաժողովից, որպես հանձնաժողովի աշխատանքներին խանգարող՝ քվեարկության միջոցով, ձայների պարզ մեծամասնությամբ: Կատարելով ձայների սխալ հաշվարկ՝ հանձնաժողովը ստանում է բոլորովին այլ պատկեր: Նման տեխնոլոգիան գործում է հատկապես այն ընտրատարածքներում, որտեղ կա ընդհանուր ներկայացուցիչների պակաս, նրանց գիտելիքների և համարձակության պակաս պաշտպանելու համար իրենց շահերը տեղում, որի համար սակայն օրենքը քիչ հնարավորություն է ընձեռում:

6.8 Մեքենայություններ ընտրացուցակի և ընտրողների հետ

Ընտրությունների ելքը մեծապես պայմանավորված է այն փաստով, թե ընտրողների ինչպիսի դիրքորոշումներով խմբերն են ավելի շատ մասնակցում ընտրություններին: Յուրաքանչյուր ընտրական հանձնաժողով՝ ի դեմս նախագահի ձգտում է ապահովել իր թեկնածուի համար ննարավորինս չափ շատ ձայն: Այդ նպատակով հանձնաժողովի կողմից փորձ է արվում ընտրացուցակները կազմել այնպես, որ հնարավորին չափ շատ մեքենայություններ հնարավոր լինի անել դրանց հետ:

Ընտրացուցակների հետ արվող առաջին մեքենայությունը դրանց կազմման կանոնների խախտումն է: Ընտրացուցակները համաձայն օրենսգրքի պետք է թարմացվեն տարեկան երկու անգամ: Թարմացման նպատակն է ընտրացուցակներից հանել այն

ընտրողներին, որոնք կորցնում են ընտրության իրավունքը տվյալ տեղամասում և ավելացնել այն ընտրողներին, որոնք ստանում են այդ տեղամասում ընտրելու իրավունք: Ընտրացուցակներում փոփոխությունների աղբյուրներն են զինկոմիսարիատները, որտեղից գալիս է ինֆորմացիա այն ընտրողների մասին, որոնք պետք է այսուհետ ընտրեն ոչ թե բնակավայրում այլ գորամասում: Հաջորդը՝ մահացության մասին տվյալներն են, որոնց հիման վրա ցուցակներից հանվում են այն ընտրողները, որոնք մահացել են: Մյուսը՝ անձնագրային սեղաններից, ոստիկանությունից կամ այլ հիմնարկներից ստացված ինֆորմացիան է, որոնց համաձայն որոշվում է ընտրողների բնակության վայրի փոփոխման կամ ընտրելու իրավունքը ստանալու կամ կորցնելու մասին տվյալներ:

Ընտրացուցակների հետ մեքենայությունների իմաստն է՝ ընտրացուցակներում փոփոխությունները կատարել այնպես, որ հնարավորին չափ շատ ընտրող, որոնք ցանկալի ընտրություն պետք է կատարեն, մնան այդ ցուցակում և հնարավորին չափ ընտրող հանվեն ցուցակից, որոնք պետք է կատարեն ոչ ցանկալի ընտրություն: Այս նպատակով ընտրացուցակներում են թողնվում մարդիկ, որոնք մահացած են, կորցրել են ընտրելու իրավունքը՝ զորակոչվելու, բնակության վայրի փոփոխման, բացակայության կամ այլ պատճառներով: Ստացվում է, որ ընտրացուցակների հետ մեքենայությունների հեղինակները ամբողջությամբ կենտրոնանում են մի նպատակի՝ անձնագրային համարներ և անուններ հայթհայթելու վրա: Արդյունքում, ունենալով այդ մարդկանց անձնագրային տվյալները՝ դրանց փոխարեն, այլ անձանց միջոցով կատարվում է ընտրություն ի օգուտ ցանկալի թեկնածուի: Լավագույն դեպքում, եթե այդ անձինք «յուրային են» նրանց հրավիրվում է կրկնակի ընտրություն կատարել նաև այդ տեղամասում:

Այս տեխնոլոգիային կարող էր խոչընդոտել օրենքի պահանջի համաձայն ընտրացուցակների նախապես հրապարակումը՝ փակցնելը, որևէ տեսանելի տեղում, որտեղից ընտրողները կարող էին հայտնաբերել ընտրելու իրավունք չունեցող մարդկանց անունները կամ իրավունք ունեցողների անունների առկայությունը: Սակայն այս խոչընդոտը շրջանցվում է երկակի ցուցակների վարման տեխնոլոգիաներով, որի համաձայն փակցված ցուցակը կասկածների տեղիք չի տալիս, մինչդեռ իրական ցուցակները պարունակում են արդեն նշված նպատակային առանձնահատկությունները:

Նման եղանակով ընտրողների քանակի ավելացման մասին են վկայում մարդահամարի համաձայն Հայաստանում առկա ընտրելու իրավունքով ընտրողների և պաշտոնական տվյալներով իրականում ընտրություններին մասնակցածների թվի անհամապատասխանությունը: Մասնավորապես տվյալներից երևում է, որ հայաստանում առկա են 18 տարին լրացած ընտրելու իրավունք ունեցող այնքան մարդ, որոնց թիվը 150 հազարով պակաս է այն թվից, որ հայտարարվել է, որպես ընտրություններին մասնակցած մարդկանց թիվ: Ստացվում է, որ ընտրություններին 150 հազարով ավելի մարդ են մասնակցել, քան իրականում կան Հայաստանում և իրավունք ունեն մասնակցելու⁴⁹:

Հաջորդ եղանակը, որով օգտագործվում են ընտրացուցակների հետ մեքենայությունները ոչ ցանկալի թեկնածուների տվյալների թարմացման ժամանակին չկատարումն է: Այսինքն, եթե մեկը մեծ հավանականությամբ, համաձայն որոշակի ինֆորմացիայի, պետք է քվեարկի ոչ ցանկալի թեկնածուի համար, նրա անունը բաց է թողնվում ցուցակից: Մասնավորապես զինձառայությունից վերադարձած, բնակության վայրը փոխած կամ այլ պատճառով տվյալ տեղամասում նոր ընտրության իրավունք ստացած ընտրողի անունը կարող է բաց թողնվել ցուցակից:

Բացի վերոնշյալ եղանակներից կիրառվում է նաև անորոշ վիճակներում կողմնորոշվելու տեխնոլոգիաներ: Այսինքն, եթե ընտրողի ընտրության ներկայանալը հայտնի չէ, կամ կասկածի տակ է, բացակայության կամ այլ պատճառով, նրա անձնագրային տվյալների դիմաց ստորագրում է ընտրում է այլ անձնավորություն՝ հիմնականում հանձնաժողովի անդամ, ընտրությունների ավարտին մոտ ընկած ժամանակահատվածում, երբ քիչ է այդ ընտրողի ներկայանալու հավանականությունը:

⁴⁹ Տես մարդահամարի տվյալները և ընտրությունների մասնակիցների տվյալները:

Հանկարծակի ներկայանալու դեպքում կարող է հայտարարվել անվան բացթողման մասին, որի շտկումը այդ ժամին այլևս հնարավոր չլինի:

Նշվում են նաև արտասահմանյան ընտրատեղամասերի հետ կապված պրոբլեմները: Մասնավորապես, մեկ մարդու անունը կարող է լինել ինչպես արտասահմանում, իր գտնվելու վայրում, այնպես էլ իր մշտական բնակության վայրը: Շնչովում է կրկնվող անունների բացառման անհաժեշտությունը, որը կարող է իրականացվել ԿԸՀ-ի մակարդակով: Նմանատիպ մեքենայություններ տարածված են համարվում նաև զինծառայողների ընտրացուցակներում:

6.9 «Դավադիր պայմանավորվածություն». ձայների բաժանումը հանձնաժողովի անդամների միջև կամ ցանկալի թվի նկարումը վերջում

Երկրորդ եղանակը, որով իրականացվում է ձայների սխալ հաշվարկը, դա հանձնաժողովի մի քանի անդամի դավադիր պայմանավորվածությունն է ընդդեմ այլ թեկնածուների: Այս պայմանավորվածության էություն կայանում է նրանում, որ հանձնաժողովի որոշ անդամներ նախապես պայմանավորվում են, որ այն թեկնածուի ձայները, որը չունի ազդեցիկ ներկայացուցիչ ընտրատարածում, կամ ընդհանրապես չունի ներկայացուցիչ, որոշակի համամասնությամբ գրանցվեն այն թեկնածուների օգտին, որոնց իրենք են նարկայացնում:

Տեխնոլոգիայի առաջին քայլն է՝ գտնել տուժող թեկնածուին, այսինքն որոշել այն թեկնածուին, որի ձայները պետք է «զոհանան»: Տուժող թեկնածուն լինում է այն թեկնածուն, որը չունի համապատասխան քանակի մարդիկ, վստահված անձ նշանակելու համար բոլոր տեղամասերում, չունի հանձնաժողովում իրեն պաշտպանող անդամ կամ նրա ներկայացուցիչը չունի բավարար ազդեցություն ազդելու համար հանձնաժողովի որոշման վրա: Տուժող թեկնածու սովորաբար լինում է բոլոր տեղամասերում երեք հիմնական պատճառներով: Առաջին, ոչ բոլոր թեկնածուներն ունեն հնարավորություն հանրապետության մոտ երկու հազար ընտրատեղամասում ունենալ ներկայացուցիչ: Երկրորդ, սովորաբար հանձնաժողովը կարողանում է տեղամասից դուրս հանել «ոչ յուրային մարդկանց», օրենքով սահմանված որևէ կետի խախտման պատրվակով, քվեարկության միջոցով: Եվ երրորդ, յուրայինների ապահովման մյուս եղանակը, հակառակորդի ներկայացուցչի կաշառումը, իսկ որոշ դեպքերում նաև ճնշումը կամ շանտաժն է:

Ապահովելով ձայների հաշվման գործընթացի վրա ազդեցություն ունեցողների՝ յուրայիններից կամ շահագրգռված մարդկանցից բաղկացած լինելը՝ հանձնաժողովը կարող է վարվել երկու կերպ: Որոշակի պայմանավորվածության համաձայն գրանցել քվեարկության մտացածին արդյունքներ: Կամ լավագույն դեպքում, միմյանց միջև բաժանել տուժող թեկնածուի ձայները՝ այնպիսի համամասնությամբ, ինչպիսին թույլ է տալիս յուրաքանչյուր թեկնածուի ներկայացուցչի ազդեցությունը հանձնաժողովում: Մասնավորապես, որպես տիպական, նշվում են այն դեպքերը, երբ ձայների հաշվման ժամանակ մնում են միայն կոալիցիայի ներկայացուցիչները⁵⁰, որոնք գողանում են ընդլիմության ձայները: Սակայն չեն բացառվում նաև դավադիր պայմանավորվածության այլ համակցություններ:

6.10 Նպատակաուղղված թերացումներ ընտրությունների նախապատրաստական շրջանում

⁵⁰ Խոսքը գնում է 2003-ին ձևավորված ԱԺ երեք իշխանական կուսակցությունների՝ «Հանրապետական», «ՅԵԴ» և «Օրինաց երկիր» կուսակցությունների կազմած կոալիցիայի մասին:

Ընտրությունների արդյունքների վրա կարևոր նշանակություն ունի նաև նախապատրաստական աշխատանքների ուղղվածությունը, որը կարող է նպատակաուղղված աշխատեցնել որևէ կողմի օգտին: Այդ նախապատրաստական աշխատանքները ներառում են նաև ընտրացուցակների կազմումը և թարմացումը, որի մասին ասվեց, ինչպես նաև ընտրարշավի համար նախատեսված թույլատրելի մեթոդների կիրառման վերահսկողությունը, ժամկետների վերահսկողությունը և համապատասխան պայմանների ապահովումը:

Համաձայն փորձագետների ընտրատեղամասերը միտումնավոր ձևով կարող են խախտել այդ չափանիշները՝ ույլատրելով այնպիսի ազիտացիա, ինչպիսին է ազիտացիան ընտրատեղամասում, ազիտացիան ընտրությունների օրը կամ չթույլատրված այլ ժամանակաշրջանում, պատահների պատռում կամ փակնելը չթույլատրված վայերերում և այլն: Նմանատիպ խախտումների վերահսկողությունը չի կատարվում պատշաճ մակարդակով այն դեպքերում, երբ դրանք արվում են հովանավորչության պայմաններում: Արդյունքում դրանց միակ վերահսկող ընտրությունների ժամանակաշրջանում մնում են միայն ընտրողները, այն էլ այնքան ժամանակ, քանի դեռ նրանց կարծիքը կարևոր է իշխանությունների կամ ավելի ստույգ թեկնածուների կամ քաղաքական կուսակցությունների համար:

6.11 Քվեների հաշվման գործընթացի շահադիտական հայեցողական լուսաբանում

Համաձայն ընտրական օրենսգրքի, քվեների հաշվարկը և ընտրությունների գործընթացն ընդհանրապես ենթակա է պարբերական լուսաբանման սահմանված կարգով և ժամանակահատվածում: Քվեների հաշվման գործընթացի լուսաբանումը ապահովում է ընտրությունների թափանցիկություն և նվազեցնում է վերջում որոշակի թիվ նկարելու հնարավորությունները: Այսինքն դավադիր պայմանավորվածության և տարբեր ընտրատեղամասերից ստացված արդյունքների համաձայնեցումը միմյանց և վերջնաարդյունքում ակնկալվող թվի հետ ստանում է էական դժվարություններ, եթե ընթացքում հասարակությունը տեղեկանում է իրենց ընտրատեղամասի քվեարկության արդյունքների մասին:

Այս երևույթը իրականացվում է նաև նպատակային կաշառքի կիրառմամբ, որի նպատակն է հանձնաժողովի բոլոր անդամներին և մյուս ներկաներին ետ պահել իրենց ունեցած տվյալների հրապարակումից կամ տրամադրումից: Կուսակցությունների թույլությունը բերում է այն բանին, որ վստահված անձանց արձանագրությունները նույնիսկ չեն հրապարակվել ի տարբերություն դրանից առաջ եղած ընտրությունների, երբ դրանց կամ փակցվում կամ էլ տրվում էին լրատվամիջոցներին կամ այլ շահագրգիռ կողմերի: Մասնավորապես եղել են կուսակցություններ որ, համաձայն փորձագետի, խոստովանել են, որ իրենց առաջին փուլի ընտրակեղծիքների մասին բավարար տվյալներ չեն ունեցել դրանց՝ իրենց վստահված անձանց և այդ նյութերին տիրապետող այլ մարդկանց կողմից վաճառված լինելու պատճառով: Այս վարկածում նշված քաղաքական ուժի՝ երկրորդ փուլ անցնելու որոշումը պայմանավորում են հենց այդ փաստով⁵¹:

Առաջարկվում է ներմուծել քվեների հաշվարկման ավտոմատ համակարգ, որպեսզի քվեարկության արդյունքները ընթացքում հասարակությունը պարբերաբար շատ օպերատիվ տեղեկանա քվեների հաշվման գործընթացի մասին: Մյուս առաջարկությունը պահանջում է շատ խիստ սահմանել ժամկետի մասին օրենք, ըստ որի ԿԸՀ նախագահը պարտավոր է նախնական հաշվետվություն տա ընտրությունների արդյունքների մասին: Ներկայումս այդ մասին առկա դրույթները համարվում են ոչ այնքան հստակ

⁵¹ **Հարցվող*** ...Որովհետև տեղերում մի մասը ծախվել էր: Ու երկրորդ փուլի սահմանադրական դատարանի որոշումը պատահական չէր: Ինքը ասում էր, որ վատ է եղել, բայց թվերով ու փաստերով չեն կարող ասել, որովհետև չկար էդքան արձանագրություն: Նրանք էլ ինքնուրույն չեն կարող ինչ-որ հարց քննարկել՝ օրենքը թույլ չի տալիս:

ձևակերպված, ինչը մեքենայությունների մեծ հնարավորություններ է տալիս և հաճախ որևէ տեղամասի ընտրությունների արդյունքները տեղ է հասնում երեք օր հետո: Իսկ երեք օրվա ընթացքում հնարավոր է ծավալուն աշխատանքներ կատարվել քվեաթերթիկների և արձանագրությունների նպատակահարմար փոփոխումների ուղղությամբ: Ինֆորմացիայի բացությանը կնպաստի նաև վստահված անձանց իրավունքների շատացման միջոցով նրանց ընտրությունների մասին ինֆորմացիայի ավելի հասանելիության ապահովումն է, ինչը թույլ կտա նրանցից ստացված ինֆորմացիայի հիման վրա կրկնաազդարկ կատարել և համեմատել պաշտոնական և յուրաքանչյուր թեկնածուի կողմից կատարված հաշվարկների համապատասխանությունը: Արդյունքում կարելի է կանխել կԸՀ-ի մանիպուլյացիաները:

Համաձայն փորձագետների նկատելի է որոշակի առաջընթաց ընտրատեղամասերից ինֆորմացիայի ստացման առումով: Մասնավորապես, եթե 1998-ին ընդհանուրորդ տարբեր տեղերից ստացել է արձանագրությունների մոտ 20 տոկոսը, ապա 2003-ի ընտրություններին 50-60 տոկոսը: Իհարկե սա բավարար թիվ չի համարվում սակայն խոսում է այն մասին, որ կուսակցությունները անցած 5-6 տարիներին այնուամենայնիվ առաջընթաց են ապահովել: Նման տեղեկները հուսադրող է հաջորդ ընտրություններին սպասվելիք տեղեկատվության ավելի մեծ որակի ապահովման առումով:

6.12 Տեղամասային ընտրությունների անվավերացման ակցիաներ

Եթե որևէ ընտրատեղամասում բոլոր ընտրակեղծիքներով հանդերձ թեկնածուն չի կարողանում հավաքել համապատասխան քանակի ձայներ, անհրաժեշտություն է առաջանում ժամանակ շահել որոշակի քայլեր ձեռնարկելու համար, որոնք հնարավոր չէ կատարել ընտրությունների օրվա ընթացքում: Այս դեպքում այն ուժերը, որոնք ունեն հովանավորչություն և ռեսուրսներ կազմակերպում են այնպիսի ակցիաներ, որոնք կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների չեղյալ հայտարարման համար: Այսպիսի ակցիա է համարվում քվեատուփի գողանալը կամ այնտեղ մեծ քանակի քվեաթերթերի լցումով կատարելը ի տես բոլորի և կազմակերպել այդ խախտման գրանցումը և կատարողի պատասխանատվության չեղարկելը միևնույն ժամանակ: Արդյունքում ընտրատեղամասում ընտրությունները համարվում են անվավեր, թեկուզ հենց կազմակերպչի դիմումի համաձայն և նշանակվում նոր արտահերթ ընտրություններ, նախքան որի սկսվելը թեկնածուն միջոցներ կարող է ձեռք առնել մեծ արդյունք ապահովելու համար:

7 Հասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաներ

7.1 Տեխնոլոգիաների էությունը

Հասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիայի առավել պարզ տարբերակը նպատակային ապատեղեկատվությունն է ի նպաստ որոշակի ընտրվողի: Տեղեկատվությունը հաղորդվում է իրականության մասնակի կամ լրիվ աղավաղումներով, կեղծ կամ ձևափոխված հղումներով, իրադարձության էությունից հեռացող մեկնաբանություններով, ենթատեքստի շահարկմամբ և ավանդական «սև քարոզչության» այլ եղանակներով:

Առավել կատարելագործված, բարդ և արդյունավետ տեխնոլոգիա է հասարակական կարծիքի թելադրման տեխնոլոգիան: Ընտրողի կարծիքի ձևավորմանն ուղղված տեղեկատվությունը նրա համար այլակարծիք տեղեկատվության սահմանափակմամբ կամ բացառմամբ՝ հանդիսանում է **կարծիքի թելադրում**: Այս տեխնոլոգիան ըստ էության **նպատակային տեղեկատվության հաղորդումն է տեղեկատվական շրջափակման պայմաններում**: Տեխնոլոգիայի իրականացումը բերում է նրան, որ հաղորդվող ինֆորմացիան, իսկ ավելի ամբողջական կիրառման դեպքում, քարոզարությունը ընդունվի որակապես ավելի մեծ արդյունավետությամբ: Տեխնոլոգիան միտված է հնարավորինս նվազեցնելու ոչ ցանկալի դիրքորոշման ձևավորման հնարավորությունը՝ դրան պոտենցիալ նպաստող տեղեկատվության սահմանափակման միջոցով: Երբ այս տեխնոլոգիան իրականացվում է զանգվածային լրատվամիջոցների մակարդակով, ստացվում է **հասարակական կարծիքի զանգվածային թելադրում**:

Այն ժամանակ երբ կարծիքի թելադրման տեխնոլոգիան չի աշխատում կամ քիչ արդյունավետ է, կիրառվում են **տեղեկատվական քառսի** կամ **տեղեկատվության արժեզրկման տեխնոլոգիաները**: Ընտրողի կարծիքի ձևավորմանն ուղղված տեղեկատվությունը երբեմն կարող է ունենալ արդյունավետ վնասակարություն այս կամ այն ընտրվողի համար՝ հատկապես, երբ հաղորդվում է զանգվածային լրատվամիջոցներով: Օրինակ, երբ հաղորդվում է իրականությանը համապատասխանող, հիմնավորված, խիստ բացասական տեղեկատվություն թեկնածուի մասին: Պայքարելու համար այդպիսի տեղեկատվության դեմ կիրառվում է **տրամագծորեն հակառակ տեղեկատվություններով բազմակողմանի հարձակումը**: Անկախ այն բանից, թե որ տեղեկատվությունն է իրականում ճշմարիտ՝ ՁԼՄ-ների գործառնության առկա անպատասխանատվության պայմաններում ցանկացած տեղեկատվություն կարող է ստանալ պսևդոհիմնավորում և ընտրողի համար դառնա նույնքան համոզիչ, որքան իրական հիմնավորմամբ տեղեկատվությունն է: Անկախաբար ձևով տարածելով իրական տեղեկատվությանը տրամագծորեն հակառակ տեղեկատվություն (մեկ կամ բազմաթիվ այլ վարկածներ և մեկնաբանություններ)՝ ստեղծվում է **քառս հասարակական կարծիքում**: Ընտրողը խճճվում է իրարամերժ և բազմաբնույթ տեղեկությունների և փաստարկների մեջ: Արդյունքում իրականությանը համապատասխանող տեղեկատվությունը հասարակական գիտակցությունում իր հավաստիության աստիճանով հավասարվելով կեղծհիմնավորմամբ տեղեկատվությանը՝ որակապես կորցնում է իր նախնական **ուժը և արժեքը**: Հարձակումը իրականացվում է ինչպես փաստերի մասին հակառակ տեղեկատվության ապահովման այնպես էլ դրանց մեկնաբանման մակարդակներով:

Տեխնոլոգիաները դրսևորվում են նախընտրական արշավի նպատակաուղղված միակողմանի մեկնաբանություններով և տեղեկատվությամբ, որը պարունակում է ապատեղեկատվություն և անպատժելի պոպուլիզմ, ընտրությունների անցկացման ընթացքի նպատակային լուսաբանմամբ և հետընտրական քարոզչությամբ՝ հասարակության կողմից հնարավոր ըմբոստացումները և այլ տիպի ճնշումները կանխելու նպատակով: Տեխնոլոգիաները և դրանց դրսևորումները հնարավոր են դառնում հետևյալ

գործոնների առկայության ներքո՝ լրատվամիջոցների անհավասար մատչելիություն բոլոր քաղաքական ուժերի համար, լրատվամիջոցների կողմնապահություն և անպատժելիություն:

7.2 *Կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաների դրսևորումը նախընտրական քարոզչության ժամանակ*

Նախընտրական քարոզչության շրջանում տեխնոլոգիաների կիրառման արդյունքում տարբեր ընտրվողներ տարբեր չափով են ներկայացվում հասարակությանը: Ընտրողները լիարժեք ինֆորմացիա չեն ստանում նրանց գործունեության, գաղափարների և ծրագրերի, նրանց ուղղված քննադատության պատասխանների կամ նրանց կողմից արվող քննադատության մասին: Արդյունքում արհեստականորեն խախտվում է հասարակական կարծիքի վրա լրատվամիջոցներով թեկնածուների ունեցած ազդեցության հավասարակշռությունը:

Հասարակության այն մասը, որը իր ընտրական դիրքորոշումը ձևավորելիս նշանակություն է տալիս նաև լրատվամիջոցներից ստացված ինֆորմացիային և վերջինս օգտագործում իր կարծիքի ձևավորման մեջ հայտնվում է ոչ համարժեք ինֆորմացվածության պայմաններում: Նման վիճակում նա կամ իր ընտրությունը կատարում է թերինֆարմացիայի հիման վրա, կամ լինելով ավելի նրբանկատ, գիտակցում է ինֆորմացիայի միակողմանիությունը կամ հակասականությունը, հիասթափվում և կորցնում է վստահությունը լրատվամիջոցների նկատմամբ և ընտրադիրքորոշումը ձևավորելիս, որպես ինֆորմացիայի աղբյուր ընտրում է այլ եղանակներ: Ավելի վատ դեպքերում ընտրողը ընդհանրապես դադարում է իր ընտրությունը կատարել համաձայն իր կարծիքի կամ պատկերացումների՝ ընկնելով կաշառքի և ճնշումների հորձանուտ:

Հասարակության մյուս մասը չգիտակցելով լրատվամիջոցների միակողմանիությունը ընտրում է՝ համաձայն միակողմանի ինֆորմացիայի՝ արդյունքում ստանալով այնպիսի իշխանություն, որից հետագայում սկսում է դժգոհել: Այս պայմաններում իշխանամետ լրատվամիջոցները լայն հնարավորություններ են ստանում զբաղվելու ապատեղեկատվությամբ՝ կիրառելով տարբեր հնարներ, որոնց հակակշռող լրատվամիջոցները քիչ են և նվազ ազդեցիկ՝ կոմպենսացնելու համար ապատեղեկատվությունը: Այսպիսի միակողմանիության օրինակներ են միևնույն միջոցառումների իրարից տրամադորեն տարբերվող մեկնաբանությունները և քննադատությունները՝ մեղմ տարբերակում և արմատական ապատեղեկատվությունը ավելի վատ տարբերակներում:

Պոպուլիզմը: Ինֆորմացիոն դաշտի նման վիճակը լայն հնարավորություններ է ստեղծում տոտալ, իրականությունից կտրված պոպուլիզմի համար, որը իջնում է մինչև բացարձակ ստալտության, ուտոպիաների նկարագրության և «թատրոնի» մակարդակի: Կլասիկ ընտրարշավների հայեցակարգով շարժվող քաղաքական ուժերը, որոնք առանց այդ էլ քիչ են, հայտնվում են անհեթեթ իրավիճակներում, երբ ծախսելով հատկացված իրենց ողջ գումարը իրենց գործունեության իրական մեկնաբանության, իրատեսական ծրագրերի նկարագրության և ինֆորմատիվ բացատրական աշխատանքների վրա՝ չեն դիմակայում մրցակիցների պոպուլիզմին⁵²: Արդյունքում լրատվամիջոցներն էլ իրենց հերթին աշխատում են ոչ թե իրական վերլուծություններով, այլ առավել տպավորիչ և

⁵² **Հարցվող*** Մենք քարոզարշավը վարել ենք՝ օգտվելով ռուսական մասնագիտական գրականությունից: Նետո տեսնում եմ, որ էլ տրամաբանական բյուջեն, որ դու ունես երեք անգամ պակաս է օրենքից խոտո կուսակցությունների բյուջեից: Մեր քարոզարշավից դասական քարոզարշավ չի եղել, ամբողջը կոնցենացիա էր, սկսած պլակատից՝ կարգախոսից: Բայց դեմդ տոտալ պոպուլիզմ է: Իրենք էլ պոպուլիզմի վրա աշխատեցին: Բայց մի հատ մեջտեղեր չորրորդ իշխանություն..... մի անգամ դներ քննարկեր, որ օրինակ Դաշնակցությունն ասում է սա, Օրինացը՝ սա, Հանրապետականը՝ սա: Ինքը մեջտեղն էր, որ համեմատություն աներ:

սենսացիոն լրատվության սկզբունքներով: Ընդ որում իրականության հետ հաղորդած լրատվության համապատասխանության քիչ կարևորություն ազատում է լրատվամիջոցներին իրականությամբ սահմանափակված շրջանակներում տեղեկատվությունն ապահովելու պարտականությունից: Միջակայքը, որով կարող է լրատվամիջոցը մեկնաբանմամբ երանգավորել ինֆորմացիան լիովին վերանում և հեռանում է իրականությունից:

7.3 Կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաների դրսևորումները ընտրությունների ընթացքի լուսաբանման և հետընտրական քարոզչության ժամանակ

Համաձայն փորձագետների՝ ընտրությունների ընթացքի միակողմանի լուսաբանումը էական հնարավորություններ է ստեղծում ընտրակեղծիքների իրականացման ավելի ազատ և հեշտ իրականաճալի մեխանիզմների գործարկման համար, նվազեցնում ձայնողումների հավանականությունը և մեծացնում ցանկալի պատկերի ստացման ճշգրտությունը: Այս ընթացքում էական դեր է խաղում ընտրովի լուսաբանումները որոշակի տեղամասերից, որոնց տվյալները ինչ-որ նկատառումներով համահունչ են ընտրությունների ցանկալի արդյունքների հետ: Սովորաբար այդ ընտրատեղամասերը նախորոք հստակեցվում են՝ հաշվի առնելով դրանց ընտրողների նախնական դիրքորոշումները և դրանց գործառնության վերահսկելիության աստիճանը: Մյուս եղանակը ընտրության արդյունքների ուղղակի խեղաթյուրված լուսաբանումն է:

Օբյեկտիվ լրատվամիջոցների պարբերական մոնիտորինգը ընտրատեղամասերում ընտրությունների ընթացքի մասին դժվարեցնում է որոշ տեխնոլոգիաների բացահայտ կիրառումը, տեսանլի դարձնում դրանք հանրությանը, հնարավորություն ընձեռում տուժող կողմին փաստեր հավաքագրել: Հանձնաժողովների դժգոհ անդամները և այլ ներկայացուցիչներ հնարավորություն են ստանում իրենց բողոքի խոսքը հայտնել, դրանով լծակ հանդիսանալով կեղծիքների դեմ և ընտրագործընթացի մասին տպավորություն առաջացնել հասակարության մոտ նախքան ընտրությունների ավարտը՝ պատրաստելով նրանց հնարավոր ակցիաների: Այդպիսով սահմանափակվում է ընտրակեղծիքների իրականացման ծավալները և էֆեկտիվությունը:

Մյուս կողմից լրատվամիջոցներից գաղտնի որոշ տեխնոլոգիաների կազմակերպումը ընտրողների որոշ մասի մոտ հույս է առաջացնում արդար ընտրությունների, նրանց անիրագնել մասի մոտ կոտրվում է այն ստերեոտիպը, որ այդ տեխնոլոգիաները օրինական են և նորմալ: Դրանով նվազում է նաև ընտրողների մոտ եղած այն պատկերացումը, որ ընտրությունների կազմակերպիչները ամենակարող են և նրանց հակակշիռ չկա: Լրատվամիջոցներից ընտրական գործընթացի մասնակիցների «ձգվածությունը» հնարավորություն է տալիս որոշակի կուլտուրա ձևավորել ընտրողի հետ հանձնաժողովի անդամների, վստահաված անձանց կամ ազիտատորների հարաբերություններում՝ մեծացնելով ընտրողի նկատմամբ հարգանքը: Մյուս կողմից պարբերական լուսաբանումները նեղացնում են մեծ կեղծիքներ ենթադրող թվերի հայտարարման հնարավորությունները, ինչպես ընտրատարածքային, այնպես էլ հանրապետական մակարդակով: Ընտրություններից հետո միակողմանի լրատվամիջոցների ամբողջ պոտենցիալը ուղղվում է նախապես հայտարարված տվյալների հավաստիացմանը, հասարակության մոտ շշուկների կամ այլ աղբյուրների միջոցով առաջացող դժգոհությունների մարմանը: Հետընտրական քարոզչությունը մասնավորապես օգտագործվում է բողոքի ակցիաների որոշակիորեն լուսաբանմանը և ընտրությունների լեգիտիմացման նպատակով:

7.4 Պսևդոսոցիոլոգիական հարցումների զանգվածային հրապարակում

Սոցիոլոգիական հարցումների հիմնական ֆունկցիաները ընտրահամակարգի նորմալ գործառնության ժամանակ պետք է լինեն ընտրարշավային ռազմավարությունների մշակման համար անհրաժեշտ տվյալների և վերլուծությունների ապահովումը, քարոզչության արդյունքների կամ էլեկտորատի դիրքորոշումների փոփոխման մոնիտորինգը, ինչպես նաև իրական պատկերի լուսաբանումը: Առաջին հայացքից թվում է, որ սոցիոլոգիական հետազոտությունների առաջին ֆունկցիաները անհամեմատ ավելի կարևոր և օգտակար պիտի լինեն ընտրարշավների ժամանակ, քան վերջինը՝ լուսաբանումը: Սակայն հայաստանյան իրականությունում գործող հակադեմոկրատական տեխնոլոգիաների պայմաններում սոցիոլոգիական հարցումների դերը ընտրարշավային ծրագրերի մշակման ժամանակ համեմատաբար նվազեցված է: Վերտինս պայմանավորված է ընտրությունների արդյունքների վրա հասարակական կարծիքի դերը շրջանցող տեխնոլոգիաների առկայությամբ:

Փոխարենը որակապես այլ նշանակություն է ստացել վերջին ֆունկցիան՝ հասարակական կարծիքի լուսաբանումը: Այս տեխնոլոգիան հենվում է այն սոցիալ-հոգեբանական փաստի վրա, որ սոցիոլոգիական արդյունքների զանգվածային հրապարակումները սովորաբար ունենում են լուրջ քարոզչական կամ դիրքորոշումների ձևավորման, ինչպես նաև ընտրությունների անսպասելի արդյունքների լեգիտիմացման էֆեկտ: Այս փաստը պայմանավորված է իմիտացիայի, ռացիոնալ դիրքորոշման և աստիճանական համակերպման գործոններով, որոնք ունեն ընտրասուբյեկտների խթանման կամ արգելակման կողմնակի էֆեկտներ: Առաջին դեպքում ընտրողները իրենց դիրքորոշումները, զգացմունքները և վարքը նմանակում են մեծամասնության նույն կոմպոնենտներին համապատասխան կամ դրանց ազդեցության տակ: Երկրորդ դեպքում տեղի է ունենում ռասիոնալ հաշվարկ, որի արդյունքում սոցիոլոգիական տվյալների համաձայն ընտրողի գիտակցությունում համոզմունք կամ կարծիք է առաջանում առավել շատ ձայներ հավաքելու շանսեր ունեցող ուժերի մասին: Ընտրողը և առավել ևս թեկնածու ուժերին աջակցող ուժերը հակված են համախմբվելու ավելի շուտ ուժեղ և հաղթելու ավելի մեծ շանսեր ունեցող ուժերի շուրջ, քան թույլ ուժերի: Առաջանում են նոր կոալիցիաներ և նոր համալրումներ: Նրանց համախմբումը ավելի է ուժեղացնում ընտրողների շրջանում յուրայինների դիրքորոշումների ամրապնդման ալիքը: Հաղթանակի նկատմամբ հավատը ավելի մեծ ներդրումների է դրդում աջակից ուժերին, մեծացնում ընտրարշավում աշխատողների ջանքը և եռանդը:

Կարևոր է նշել, որ սոցիոլոգիական հարցումների արդյունքներում ցանկալի տվյալների զանգվածային հրապարակումները ունեն նաև ընտրությունների արդյունքների լեգիտիմացման ֆունկցիա: Հաճախ այդ հրապարակումների հիմնական նպատակն է հասարակությանը աստիճանաբար ընտելացնել սպասվելիք արդյունքներին, փոքրացնելու ֆրոստրացիոն ալիքը այլ ակնկալիքներ ունեցող կամ այլ քվտային համամասնությունների համոզմունք ունեցող ընտրողների շրջանում: Այս եղանակով աստիճանաբար թերահավատություն է առաջացվում ընտրողների սպասելիքների նկատմամբ և համապատասխան ուժերի ստանալիք քվեների նկատմամբ, ինչը նվազեցնում է այդ ուժերի կողմնակիցների էնտուզիազմը և միևնույն ժամանակ սպասելի դարձնում իրենց նախընտրած ուժերի ձախողումը: Արդյունքում թուլացվում է հնարավոր բողոքի ակցիաների ուժգնությունը:

7.5 Լրատվամիջոցների անհավասար մատչելիություն բոլոր քաղաքական ուժերի համար

Հասարակական կարծիքի զանգվածային կարգավորման վերոնշյալ տեխնոլոգիաները և դրանց դրսևորումները նախ և առաջ պայմանավորված են քաղաքական տարբեր ուժերի և տարբեր թեկնածուների ունեցած տարբեր հնարավորություններով իրենց քարոզչությունը և

տեղեկատվությունը հաղորդելու հասարակությանը: Այս երևույթը մենք անվանում ենք լրատվամիջոցներին անհավասար մատչելիության գործոն: Անհավասար մատչելիության առաջնային պատճառներից է այն փաստը, որ հանրապետությունում առավել մեծ լսարաններով հեռուստաընկերությունները իշխանամետ են կամ պետական: Այս իրականությունը պայմանավորված է նախ և առաջ հեռուստաընկերություններին համապատասխան հաճախականության ալիքների տրամադրման կարգով: Մյուս կողմից, հարաբերականորեն ընդդիմադիր հեռուստաընկերությունները չունեն ոչ ընդդիմադիրների հետ համեմատելի լսարաններ և հեղինակություն, ինչը պայմանավորված մասամբ նրանց ունեցած տեխնիկական և ֆինանսական հնարավորություններով:

Լրատվամիջոցների անհասանելիությունը բոլոր քաղաքական ուժերին պայմանավորված է նաև այն բանով, որ գոյություն ունեցող շատ լրատվամիջոցներ չունեն բավարար ֆինանսական և տեխնիկական միջոցներ ընտրությունների ժամանակ ծավալվող բոլոր իրադարձությունները լուսաբանելու, իշխանամետ ալիքների կողմից կատարված լուսաբանումներին պատասխանելու կամ ստուգելու համար: Դրանք հասցնում են հիմնական իրադարձությունների լուսաբանում կատարել՝ դաշտի մյուս և հիմնական մասը թողնելով իշխանական հեռուստաալիքների համար մրցակցությունից դուրս: Իրադարձությունների լուսաբանմանը, որոնք մայրաքաղաքից հեռու են կամ շատ միջոցներ են պահանջում գնում են հիմնականում այն հեռուստաալիքները, որոնք ունեն համապատասխան միջոցներ: Արդյունքում լուսաբանումը լինում է միակողմանի: Մյուս կողմից այս հեռուստաընկերությունների մասնակցությունը շատ իրադարձությունների պայմանավորված է այս կամ այն քաղաքական ուժի հրավերով և ֆինանսավորմամբ: Հզոր քաղաքական ուժերը կարողանում են իրենց միջոցառումներին հրավիրել շատ և ազդեցիկ հեռուստաալիքներ, մինչդեռ թույլ ուժերի կողմից կազմակերպված միջոցառումները կամ լուսաբանվում են իրենց ոչ ձեռնտու ձևով կամ փոքրաթիվ լսարաններով հեռուստաընկերություններով կամ ընդհանրապես անցնում են աննկատ:

Եվ վերջապես հասարակությանն ինֆորմացիա հաղորդելու միջոցները սահմանափակվում են այն պարզ տնտեսական պատճառով, որ ընտրությունների նախաշեմին կտրուկ աճում է գովազդի կամ լրատվության արժեքը: Վերջինս խիստ անմրցունակ վիճակում է թողնում ֆինանսապես թույլ քաղաքական ուժերին: Մյուս կողմից իրենց ունեցած ֆինանսական առավելությունից օգտվելու հնարավորություն է ընձեռում ընտրարշավի ժամանակ ծախսվող միջոցների վերահսկման չիրականացումը: Համաձայն փորձագետների շատ քաղաքական ուժեր անհամեմատ ավելի մեծ գումարներ են ծախսում լրատվամիջոցների վրա, քան նախատեսված է օրենքով: Այս երևույթն իր հերթին բարձրացնում է լրատվամիջոցների գինը և քաղաքական պայքարը տեղափոխելով ֆինանսական պայքարի՝ անշահավետ վիճակում թողնում քաղաքական այն ուժերին, որոնք չունեն ապաքաղաքական կամ տնտեսական հովանավորչություն:

7.6 Լրատվամիջոցների շահադիտական կողմնորոշումը

Ի տարբերություն լրատվամիջոցների մատչելիության գործոնի, լրատվամիջոցների շահադիտական կողմնորոշվածությունը պայմանավորված է, ոչ թե լրատվամիջոցների կամ թեկնածուների հնարավորություններով այլ լրատվամիջոցների դիրքորոշումներով: Պահպանելով գործունեության ընթացքում իրենց առաջընթացի ապահովման շահը, լրատվամիջոցները հակված են համագործակցելու այն ուժերի հետ, որոնց հետ շահավետ է: Համագործակցության նման հարաբերություններ ավելի շատ շահավետ են իշխանամետ կառույցների հետ: Այս փաստը պայմանավորված է մի կողմից վարչական կախվածությամբ, մյուս կողմից ֆինանսական շահավետությամբ:

Հեռուստաընկերությունների նման իշխանամետությունը հիմնավորվում է իշխանությունների կողմից հնարավոր ճնշումներով այդ հեռուստաընկերությունների վրա: Վերջիններս զերծ մնալու համար հարկային և այլ մարմինների կողմից առաջացվող հնարավոր գլխացավանքներից, իսկ որոշ դեպքերում նաև ճակատագրական հարվածներից, իրենց գործունեությունը ծավալում են որոշակի գծված շրջանակների

ներքո: Ինչպես ցանկացած բիզնեսի, այնպես էլ հեռուստաընկերության համար բոլորովին ցանկալի և հեռանկարային չէ ընդդիմադիր կենցվածքը: Մինչդեռ իշխանությունների հետ համագործակցությունը ավելի հեշտ և պրոբլեմներից զուրկ գործունեության հնարավորություն է ընձեռում:

Լրատվամիջոցների կողմնապահության մյուս գործոնը ֆինանսավորումն է: Ֆինանսավորումը ազդում է նրկու եղանակով՝ մշտական ֆինանսավորման աղբյուրի կողմից թելադրանք և սիտուատիվ ֆինանսավորման պատճառով առաջացող միակողմանիություն: Հեռուստաընկերությունների մեծ մասը հնարավորություն չունեն ինքնաֆինանսավորման եղանակով մրցունակ լինել: Այս պատճառով ունեն մշտական արտաքին ֆինանսավորում: Արտաքին ֆինանսավորման աղբյուրներն էլ շատ դեպքերում թելադրում են հեռուստաընկերության կողմնորոշումը: Արդյունքում հեռուստաընկերությունը շահագրգռված չէ օբյեկտիվ և որակյալ ինֆորմացիա տրամադրել, քանի որ օբյեկտիվությունը չէ, որ ապահովում է նրա ֆինանսավորումը: Մինչդեռ եթե հեռուստաընկերությունները կողմնորոշված լինեին դեպի հասարակության զնահատականը, նրան հակված կլինեին որակյալ և օբյեկտիվ ինֆորմացիա տրամադրել՝ բավարարելու համար հասարակության պահանջները:

Կա կարծիք, որ Ա1+ հեռուստաընկերության փակումից հետո չի մնացել այնպիսի հեռուստաընկերություն, որը օբյեկտիվորեն լուսաբանի տեղի ունեցող իրադարձությունները: Գոյություն ունեցող հարաբերականորեն ընդդիմադիր հեռուստաընկերությունները լիարժեք չեն կատարում այդ ֆունկցիան:

7.7 Անպատասխանատվությունը

Բոլոր դեպքերում ապատեղեկատվությունը և հասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաները հնարավորինս կկանխվեն, եթե հեռուստաընկերությունները պատասխանատվություն կրեին իրենց հաղորդած ինֆորմացիայի համար: Լրատվամիջոցների հաղորդած ինֆորմացիան երբեմն այնքան իրարամերժ և հակասական է, որ ընտրողը դժվարանում է հավատալ որևէ աղբյուրի: Արդյունքում ընկնում է վստահությունը բոլոր հեռուստաալիքների նկատմամբ: Քանի որ նմանատիպ ինֆորմացիա հաղորդվում է բոլոր հեռուստաալիքների կողմից, կարելի է ասել, որ ապատեղեկատվությունը նորմ է Հայաստանյան լրատվամիջոցների պրակտիկայում: Անհրաժեշտ է նկատել, որ հաճախ ինֆորմացիայից տուժող կողմը չի բոլորում իր մասին սխալ տեղեկատվության համար, իսկ բողոքելու ժամանակ էլ հետամուտ չի լինում, կամ արդյունքը հասարակության համար անհայտ է մնում: Ընտրողին մնում է մտածել, որ ինֆորմացիան ճիշտ էր, քանի որ հաղորդողը պատիժ չկրեց և մյուս կողմից անհասկանալի է դառնում մյուս աղբյուրների հաղորդած ինֆորմացիան: Ընդհանրացնելով, պետք է ասել, որ չի ձևավորված լրատվամիջոցներով հաղորդված ինֆորմացիայի համար պատասխանատվության ենթարկման մեխանիզմներ կամ հասարակությունում չկա այդ մեխանիզմները գործադրելու կուլտուրա:

8 Ընտրության արդյունքների իրացում

Արդյունքների իրացումը ենթադրում է երեք տիպի գործունեություն: Առաջինը մասամբ կապված է այնպիսի նախադրյալների ապահովման հետ, որոնք մյուս տեխնոլոգիաների ձևափոխման կամ քիչ արդյունավետության դեպքում նվազեցնում են վերջնարդյունքի տապալման հավանականությունը, հնարավորություն տալիս այլ եղանակներով վերահսկողության տակ պահել ընտրությունների ընթացքը կամ նույնիսկ երաշխավորում «հաղթանակ ցանկացած դեպքում»: Այս տեխնոլոգիաները մենք կքննարկենք «մակրոտեխնոլոգիաներ» բաժնում: Երկրորդը հասարակական կարծիքի ինտենսիվ վերամշակումն է համաձայն տվյալ քաղաքական ուժի շահերի, որոնց իրականացման մեխանիզմները մասամբ նկարագրված են կարծիքի թելադրման, մասամբ կոգնիտիվ տեխնոլոգիաներում: Երկրորդը բանակցություններ և պայմանավորվածություններ գործընթացի վրա ազդելու հնարավորություն ունեցող ներքին և արտաքին ուժերի հետ: Ինչպես հետընտրական քարոզչությունը այնպես էլ պայմանավորվածությունները նպատակ ունեն կանխել հնարավոր ուժային միջամտությունը ընտրությունների արդյունքների ընդունման կամ չընդունման, ինչպես նաև իշխանության բռնի նվաճման համար: Յուրաքանչյուր քաղաքական ուժ փորձում է ընտրագանգվածին համոզել իրեն ձեռնառու պատկերացում ընտրությունների իրական և շինծու պատկերների, լեգիտիմության և պայքարի հետագա եղանակների մասին: Պաշտոնապես հաղթող հայտարարված կամ հայտարարվելիք կողմը սովորաբար համոզում է, որ ամեն ինչ նորմալ է, ընտրությունները կայացել են և դրանցում հաղթել են իրենք: Իսկ պարտվող կողմը՝ հակառակը, որ ընտրությունները չեն կայացել և հայտարարվող տվյալները իրական չեն: Այս քարոզչության նպատակն է մի դեպքում ապահովել հասարակության լոյալությունը, մյուս կողմից՝ մեծացնելով չհամաձայնվողների բանակը, հիմք նախապատրաստել զանգվածային ըմբոստության համար: Վերջինս իրականացվում է միտինգային տեխնոլոգիաների միջոցով:

8.1 Նախամիտինգային տեխնոլոգիաներ

Գրեթե բոլոր ընտրություններից հետո հասարակությունում առաջանում է դժգոհություն և անհամաձայնություն ընտրությունների արդյունքների հետ: Այդ դժգոհության օբյեկտիվ պատճառ է հանդիսանում ընտրությունների խախտումները, որոնք որքան էլ քողարկվեն կամ նորմալ ընդունվեն համակերպվող հանրության կողմից՝ այնուամենայնիվ բացասական են գնահատվում շատերի կողմից: Սուբյեկտիվ պատճառը ընդհանուր առմամբ ակտիվությունն է, որի միջոցով այդ խախտումները դարձվում են ավելի տեսանելի, մեծացվում դրանց լուսաբանումը՝ երբեմն չափազանցված կամ հուզականացված ներկայացվելով հասարակությանը: Սակայն հետընտրական միտինգները, որոնք ավելի շատ խթանվում են պարտված կողմի միջոցով ունեն իրենց ֆունկցիաները ոչ միայն ընդհանուր, այլև իշխանության համար:

Ընդհանուր առմամբ այդ միտինգները այնուամենայնիվ ծառայելով են քաղաքական հենքի ամրապնդման, համախմբման նոր մարդկանցով համալրման համար: Նեղ առումով դրանք իշխանությունների վրա ճնշման միջոց են կանխելու իշխանության ընտրախախտումները կամ նվազեցնելու դրանց ծավալները՝ ստանալու քաղաքական փոխզիջումներ, անհատական փոխհատուցում և վերջապես նվաճելու իշխանությունը: Որպես հենքի համալրման միջոց միտինգները ընդհանուր առմամբ էֆեկտիվ չեն, քանզի ունեն ֆրոստրացիոն արդյունք: Դա պայմանավորված է այն բանով, որ միտինգների արդյունքում ավելի շատ բացասական, քան դրական իմիջ է ստանում ընդհանուր առմամբ, ինչը հակամիտինգային տեխնոլոգիաների արդյունք է: **Մասնավորապես դրան նպաստում են ինստրումենտալությունը, ակնկալվող վերջնարդյունքի և իրական արդյունքի անհամապատասխանությունը, հակահարված քարոզչությունը և կանխարգելիչ գործունեությունը:**

Միտինգները էֆեկտիվ չեն նաև ընտրակեղծիքների նվազեցման կամ կանխման համար, ինչը պայմանավորված դրանց լուսաբանման բազմակողմանիության բացակայությամբ, դրանց՝ որպես իշխանության վրա ճնշման լծակի թուլության, ընդհանրության պակասակազմիչների: Արդյունքում միտինգները հիմնականում կենտրոնանում են անհատական, իսկ լավագույն դեպքում քաղաքական փոխզիջումների վրա: Բացառություն են կազմում երբեմն կատարվող իշխանության ուժային նվաճման փորձերը կամ դրանց իմիտացիաները:

Իշխանությունների համար միտինգները ունեն սոցիալական լարվածության նվազեցման ֆունկցիա: Իշխանությունների և առկա իրավիճակի վերաբերյալ իրենց պալսարակող, անհարգալից վերաբերմունքի արտահայտելով հասարակությունում փոքրանում է թշնամանքը, լարվածությունը և անհանդուրժողական վերաբերմունքը իշխանությունների նկատմամբ: Այս նկատառումով էլ միտինգային հրապարակներում թույլատրված է զարմանալիորեն սուր քննադատության հնարավորությունը:

Այն դեպքերում, երբ ֆրոստրացիոն վերջնարդյունքները, ինստրումենտալիզմը, հակաքարոզչությունը, էլեկտորատի պառակտումը, սցենարները և այլ տեխնոլոգիաներ չեն բերում ռադիկալ ընտրագանգվածի խաղաղման՝ իշխանությունները բնականաբար հակված են պաշտպանել կարգը ուժային կառույցների միջոցով: Այդպիսի ուժային միջամտությունները հիմնականում ուղղված են ամբոխի վարքի կառավարման, վտանգ ներկայացնող միտինգների կանխման և ամբոխի ձևավորմանը խոչընդոտելու համար: Ընդհանրության կողմից իշխանությունների ուժային միջամտությունները հակված է որակել անօրինական: Մինչդեռ իշխանությունները այդ քայլերը համարում են սահմանադրական կարգը պահպանելու օրինական ակցիաներ: Իշխանության քայլերը հիմնավորող փորձագետները ժխտում են հատուկ ծառայությունների կողմից միտինգի կազմակերպիչների և մասնակիցների վրա ճնշումները միտինգներից առաջ, դրանց ընթացքում և դրանցից հետո:

8.2 Կեղծում ենք մենք մեզ. հետընտրական բողոքի ակցիաների կանխում՝ կեղծիքներին հնարավորին չափ շատ մարդ ներառելով

Չնայած ընտրակեղծիքները և վատ տեխնոլոգիաները տալիս են իրենց արդյունքը, սակայն դրանցից օգտվող քաղաքական ուժերը կարիք ունեն նաև մշակել մեխանիզմներ, որոնցով կարող են կանխել ընտրությունների արդյունքների դեմ բողոքները: Այդ խնդիրը լուծելով քաղաքական ուժերը առաջնորդվում են ամեն ժողովուրդ արժանի է իր իշխանություններին սկզբունքով: Իմաստը կայանում է նրանում, որ հնարավորին չափ շատ մարդիկ են ներառվում ընտրական հակադեմոկրատական տեխնոլոգիաների իրականացման գործընթացին: Այդ մարդկանց պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ կեղծիքներ իրականացնողներ և այդ կեղծիքների մասնակիցներ: Իրականացնողները հանձնախոհրդվների աշխատողները, փող բաժանողներ, ազիտատորներ և այլն, այդ կեղծիքների ավելի մեղսավոր մասն են: Դրանց քանակը գնահատվում է 30-40 հազար մարդ: Պակաս մեղսավոր մասը իրենց ձայները տարբեր պատճառներով վաճառող ընտրողներն են, որոնց քանակը անհամեմատ մեծ է⁵³:

Նետագայում այն մարդիկ, որոնք թեկուզ ինչ որ ձևով աջակցել են այդ տեխնոլոգիային ենթակա են ճնշումների: Ընդ որում, որքան մեծ է նրանց մեղսավորության աստիճանը, այնքան ավելի են ենթակա ճնշումների: Նրանք մի կողմից բարոյապես այլևս իվիճակի չեն բողոքելու այն բանի դեմ, ինչին, կամ նմանատիպ խախտմանը եղել են մասնակից: Մյուս կողմից նրանց մասնակցությունը բողոքի գործողություններին կանխվում է՝ նրանց հիշեցնելով, որ իրենք անմասն չեն, նախապես համաձայնվել են և այլևս իրավունք չունեն

⁵³ Կաշառման գործընթացում դատապարտելի է համարվում կաշառքը վերցնողի, քան տվողի վարքը: Սակայն մեղսավորության աստիճանը այստեղ գնահատված է, ելնելով այն բանից, թե ընտրակաշառքի իրականացման աշխատանքների որքան մասն են նրանք վերցնում իրենց վրա՝ նախաձեռնությունը, կազմակերպումը, համոզումը, ճնշումը և այլն:

զնայ այդ քայլին⁵⁴: Նման եղանակով կարելի է կանխել շատերի մասնակցությունը միտինգներին, ստորագրահավաքներին և առավել ևս ավելի նեղ հավաքներին, հայտարարություններին և ելույթներին:

Մարդկանց ներառվածությունը և «մեղակցությունը» գրկում է նրանց նաև հնարավորությունից կարծիք հայտարարելու կամ փոխանցելու ընտրակեղծիքների և դրանց մեջ ներառվածների մասին: Այսպիսով թուլացվում է նաև հասարակական կարծիքի ճնշող ալիքը: Վատ գնահատականները, հայտարարությունները, սանկցիաներ կիրառելու մտադրությունները կեղծիքների մասնակիցների հանդեպ հակահարված են ստանում դրանց մասնակիցների կողմից, որոնց մեծաքանակությունը մեծացնում է տեխնոլոգիաների կազմակերպիչների անխոցելիությունը: Մյուս կողմից մեղակցությունը զգացումը ընտրողների մոտ սովորական է դարձնում ընդհանրապես բոլոր տիպի խախտումներ կատարողների կամ թերի աշխատողների գործունեությունը և ձևավորում նրանց հանդեպ լոյալ վերաբերմունք⁵⁵:

Համաձայն փորձագետների թեկնածուները ծախսելով վիթխարի գումարներ և հսկայական աշխատանք տանելով ընտրվելու համար, նախորդ ընտրությունների ժամանակ ունեցել են ստացված արդյունքը պահելու և բողոքարկումների դեմն առնելու մտահոգություն: Մտահոգությունը պայմանավորված է եղել ընդհանրության գործունեությամբ, որի արդյունքը անկանխատեսելի է եղել, մյուս կողմից միջազգային կառույցների՝ հանրապետության ղեկավարության վրա ունեցած ճնշումների արդյունքի անկանխատեսելիությամբ, որոնց հետ կարող էր գուցակցվել նաև ընտրողների բողոքները: Նվազեցնելու համար ռիսկը թեկնածուները ձգտում են հնարավորին չափ շատ մարդկանց դարձնել իրենց հանցակից՝ կաշառման գործընթացի մասնակից դարձնելով: Դրանով՝ համաձայն փորձագետների, նրանք «կեղտոտում» էին ընտրողների ձեռքերը և գրկում նրանց բողոքարկելու հնարավորությունից: Այս ընտրողներին բողոքարկումից և զանգվածային ակցիաներից ետ պետք է պահի գիտակցումը, որ իրենք էլ են հանցակից և բարոյապես պարտավորվածությունը, ինչպես նաև հարկ եղած դեպքում թեկնածուների կողմից ներարկված վախը, որ բողոքարկելու դեպքում իրենք նույնպես կպատժվեն՝ համաձայն օրենքի: Արդյունքում կանխվում է ինչպես անհատական բողոքարկումը այնպես էլ զանգվածային ակցիաների ինտենսիվությունը:

⁵⁴ **Հարցվող*** Ինքն ինչի է հասարակությանը մասնակից դարձնում սև տեխնոլոգիային: Որպեսզի կանխի նաև հետ ընտրական հնարավոր բողոքները: Նա լուծում է նաև այդ խնդիրը: Այսինքն եթե ես Բ թեկնածուին եմ ընտրել, իսկ Ա-ն հանձնաժողովին կաշառել է, ապա Բ-ն մեծ շանս է ունենում սև տեխնոլոգիայի չինտեգրված հասարակությանը ըմբոստության և քաղաքական անհնազանդության կոչով դիմելու, որը կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենա: Դրա համար իրենք աշխատում են հասարակության հնարավորին շատ խնքերի սև տեխնոլոգիայի մեջ ներառելով, փորձում են նրանց «փչացնել», որ նրանք հետ ընտրական գործողություն ծավալելու մոտիվ այլևս չունենան:

⁵⁵ **Հարցվող*** Հայաստանում ինչ-որ պաշտոնյա միլիոնատեր է, ունի անհավատալի հարստություն, բոլորը հասկանում են՝ այդ անօրինական է ստեղծվել, բայց ցավոք սրտի ամոթ բան չի: Ամոթ բաներ Հայաստանում չկա, դրա համար էլ կոմպրոմատների սիստեմը գործող չէ:

9 Մակրոտնխնուողիաներ

9.1 Սցենարներ

Ընտրական սցենարը ընտրախնաստիտուտի սուբյեկտների նախապես մշակված ընտրական գործողությունների և ընտրությունների արդյունքները որոշող հիմնական իրադարձությունների հաջորդականությունն է: Սցենարները ունեն մի քանի նպատակներ՝

1. Վերահսկել ընտրությունների ընթացքը:
2. Սցենարով նախատեսված ընտրությունների արդյունքներից շեղման ռիսկը հասցնել նվազագույնի:
3. Կանխատեսելի դարձնել ընտրախնաստիտուտի սուբյեկտների գործողությունների հետևանքները մյուսների գործողությունների և ընդհանրապես ընտրական գործընթացի վրա:
4. Ապահովել ռեսուրսների նվազագույն ծախսի միջոցով առավելագույն արդյունքի ստացում ինչպես ընտրություններ հիմնական արդյունքների, այնպես էլ կողմնակի էֆեկտների և հեռանկարում հնարավոր պրոբլեմների լուծմանը նպաստավոր հիմքի նախապատրաստման համար:

Սցենարները կարող են նպատակադրվել ինչպես ընտրությունների վերջնարդյունքի ստացման, այնպես էլ ընտրությունների որոշակի հատվածի որոշակի արդյունքի ստացմանը: Սցենարի հիմնական հատկանիշն այն է, որ նախատեսված են հնարավոր անակնկալ գործողությունները, որ կարող են ընտրախնաստիտուտի կոլեկտիվ կամ անհատ սուբյեկտների կողմից կատարվել և նախատեսված են այնպիսի միջոցառումներ, որոնցով անկախ քվեարկության արդյունքներից՝ կարող է կանխորոշվել ընտրությունների ելքը: Կախված ներառված կոնկրետ սուբյեկտներից՝ սցենարի կոնկրետ նպատակներից, դրանք լինում են տարբեր տեսակներ՝ իրական սցենարներ և իմիտացիոն սցենարներ: Իրական սցենարները այն սցենարներն են, որոնք որոշում են ընտրախնաստիտուտի սուբյեկտների իրական փոխհարաբերությունները և ուժային բաշխումները: Իմիտացիոն են այն սցենարները, որոնց նպատակն է հասարակական կարծիքի մանիպուլյացիաները:

Որպես տիպիկ սցենարներ կարելի է նշել թեկնածուի կամ այլ ընտրասուբյեկտի մանիպուլյացիան, էլեկտորատի պառակտում, էլեկտորատի հիապթափեցումը, լատենտ նպատակներով դաշինքները, նպատակային թեկնածուները, ինչպես նաև մինչև վերջ պայքարի, թվացյալ հաղթանակի և այլ իմիտացիաներ:

Ընտրասուբյեկտի մանիպուլյացիայի օրինակ են փոխզիջումների ստացումը, որոշակի տարածքներում կամ որոշակի քարոզչանդանակների կիրառմանը խոչընդոտումը, դրդումը դաշինքների և ԶԼՄ-ներով հայտարարությունների կամ այլ տիպի ակցիաների:

Սցենարի իրականացման մոդելները: Ընտրական սցենարների իրականացման համար անհրաժեշտ է որոշակի վերահսկողություն ունենալ ընտրախնաստիտուտի սուբյեկտների վարքի վրա: Այդ վերահսկողությունը իրականացվում է տարբեր եղանակներով, որոնք էական առանձնահատկություններ են հաղորդում սցենարների վրա և կարող են կոչվել մոդելներ: Ընտրախնաստիտուտի սուբյեկտի վարքը կարող է վերահսկվել և թելադրվել ճնշման, կաշառման, նախնական պայմանավորվածության կամ նպատակային թեկնածուի եղանակներով, որոնք հատուկ են այս կամ այն մոդելին: Հայաստանի համար մենք կարողացանք կառուցել երկու մոդելի վարկած:

Առաջին մոդել: Ճնշման կամ կաշառքի միջոցով թեկնածուները կամ ընտրասցենարի մյուս մասնակիցները կարող են ցուցաբերել սցենարի համապատասխան վարք կամ այլ կերպ ասած կատարել իր դերը սցենարում: Դրանք կարող են կիրառվել ինչպես ընտրասուբյեկտին առանձին գործողությունների դրդելու, այնպես էլ ամբողջ սցենարում ադեկվատ դերակատարում ապահովելու նպատակով: Ընտրությունների ընթացքում կախված առաջացող խնդրի առանձնահատկություններից, երբեմն ամենաէֆեկտիվ եղանակը սցենարի իրականացումն է այս կամ այն թեկնածուին որևէ քայլի դրդելու

եղանակով: Համաձայն այս մոդելի սցենարները ընտրություններում ունեն սիտուատիվ բնույթ, լուծում են կոնկրետ խնդիրներ:

Այս մոդելի օրինակ է մրցակից թեկնածուի հանդեպ կոմպրոմատի, կաշառքի, շանտաժի կամ այլ եղանակի կիրառմամբ նրանից ցանկալի հայտարարությունների, դաշինքների կամ այլ վարքի ստացումը: Կաշառքի միջոց կարող են հանդիսանալ ինչպես փողը և նյութական այլ միջոցներ, այնպես էլ քաղաքական փոխզիջումները, իրավական արտոնությունները, ադմինիստրատիվ ռեսուրսի հնարավորության սահմաններում խրախուսումը, անհատապես շահագրգռումը և այլն: Այս եղանակով հնարավոր է ընդհուպ մինչև սուբյեկտի ողջ ընտրարշավի վերահսկումը ի նպաստ սցենարի հեղինակ ուժերի, ինչի արդյունքում այդ ընտրարշավը կարող է վերածվել այլ ընտրարշավի համար շահարկվող և օգտագործվող միջոցի: Առանձին ակցիաների դրդելու նպատակով ավելի շատ կիրառելի են սիտուատիվ ճնշումները և կաշառքները: Իսկ ամբողջական սցենարի իրականացման համար նպատակահարմար են ավելի շատ նախնական պայմանավորվածության և նպատակային թեկնածուի մեթոդը:

Այս մոդելը անկատար է այնքանով, որ ռիսկային է իրականացնողի համար, քանի որ չկա լիարժեք վստահություն, որ այս կամ այն թեկնածուին կարելի է ստիպել ներառվել սցենարում, իսկ երբեմն ժամանակը չի ներում համապատասխան միջոցներ կիրառելու համար: Հնարավոր են նաև այլ ազդեցիկ ուժերի մրցակցությունը միևնույն սուբյեկտին այլ սցենարում ներառելու համար, ինչը իր հերթին կարող է դժվարեցնել առաջինի խնդիրը: Վճռորոշ պահերին տարբեր քաղաքական ուժերի համաձայնությունից կամ անհամաձայնությունից կախվածությունը այս մոդելով սցենարները դարձնում են քիչ վստահելի և անակնկալ պրոբլեմներից զերծ լինելու ձգտումը առաջացնում է երկրորդ մոդելի անհրաժեշտությունը:

Երկրորդ մոդել: Այս մոդելի համաձայն քաղաքական հզոր ուժերը դաշտում ստեղծում են այլ ուժեր, որոնք լատենտ ձևով կառավարվում են իրենց կողմից և ի սկզբանե ունեն մայր ուժի գործունեությանը նպաստելու նպատակ: Համաձայն այս վարկածի՝ հանրապետությունում գործող բոլոր հիմնական քաղաքական ուժերը վերահսկվում են իշխանության կողմից: Դրանք իսկզբանե կամ ստեղծված են իշխանությունների կողմից, կամ գտնվում են նրա լիարժեք վերահսկողության ներքո: Դրանք իշխանությունների համար կատարում են մի քանի կարևոր ֆունկցիա: Դրանց միջոցով իշխանությունները կարողանում են կառավարել ընտրագանգվածի տարբեր՝ ոչ յուրային, սեզամենտները, ճնշել այլ ուժերի, որոնք կարող են հավակնել չյուրայնացված սեզամենտների յուրայնացմանը, ապահովել «հաղթանակ ցանկացած ելքի դեպքում» լոգունգին համապատասխան էֆեկտիվություն:

Մասնավորապես ընդհանրությունը կեղծընդհանրություն է, քանի որ **ծառայում** է իշխանություններին և նպատակ ունի մասնատել իրական ընդհանրության ընտրագանգվածը, թուլացնել այն, տանել ցանկալի ուղղությամբ, որպեսզի իշխանություններին վտանգ չսպառնա՝ դրանով հանգեցնելով իր գործունեության իրական նպատակը իշխանությունների պահպանմանը: Մասն ձևով, բոլոր քաղաքական ուժերը իրենց ետևից տանում են ընտրագանգվածի ինչ որ մաս, որպեսզի դրանք հանկարծ չընկնեն անվերահսկելի ուժերի ազդեցության ներքո: Իրական ուժերը ենթարկվում են ամենատարբեր ճնշումների և չեն կարողանում մրցակցել իշխանությունների կողմից ստեղծված պսևոուժերի հետ: Այս մոդելի հիմնական սկզբունքն այն է, որ եթե քաղաքական դաշտում կա որոշակի քաղաքական ուժի պահանջարկ, անհրաժեշտ է ստեղծել այդ ուժը և չթողնել, որ այն ինքնուրույն և անկախ ձևով առաջանա և գործի: Այս պայմաններում ընտրահինստիտուտի սուբյեկտների գործունեությունը ամբողջությամբ նմանվում է թատրոնի, որտեղ բոլոր քաղաքական ուժերը ունեն իրենց դերակատարումը, իսկ ընտրությունների արդյունքները նախորոք որոշված է⁵⁶: Այս պարագայում սցենարը հիմնականում իմիտացիոն է, երբ իրադարձությունները ոչ թե իրական պատճառ են հանդիսանում ընտրությունների արդյունքների, այլ ներկայացվում են, որպեսզի դրանցով

⁵⁶ Իրավիճակը արտացոլվում է մարդկանց հետևյալ մտածելակերպում. «Ինչ ընտրություն, ինչ բան. վերևից ոնց որոշեն, էնպես էլ կլինի, ընտրությունները ձևական բան են, դրանց հավատալ պետք չի»:

բացատրվեն իրական արդյունքները: Այլ կերպ ասած, ունեն հասարակական կարծիքի ձևավորման ֆունկցիա:

Այս մոդելի դրսևորումները ընտրատեխնոլոգիաներում հանդիսանում են ընտրակաշառքի և այլ ռեսուրսների ապահովումը վերևից ներքև բոլոր ծառայող ուժերի համար: Բոլոր ուժերը ստանալով վերևից իրենց գործունեության մասին հրահանգներ, ստանում են նաև դրա համար անհրաժեշտ ռեսուրսներ, այդ թվում ընտրակաշառքի գումարներ, ադմինիստրատիվ ռեսուրսներին հասանելիություն և հովանավորչություն: Սա նշանակում է, որ շատ կուսակցությունների ֆինանսավորումը նույնպես ստացվում է իշխանություններից՝ որպես «վճար իրենց ծառայության համար»: Այս կուսակցություններն իրենց հերթին, եթե շատ պարզեցնենք մոդելի էությունը, ստացված ռեսուրսների մի մասը ծախսում են նախատեսված նպատակով, մյուս մասն էլ պահում իրենց որպես «շահույթ»: Ի տարբերություն նախորդ մոդելի, որտեղ ֆինանսավորվում կամ ստիպվում էր կոնկրետ ակցիան, այն էլ սիտուատիվ անհրաժեշտության դեպքում, այստեղ իսկզբանե ֆինանսավորվել կամ յուրայնացվել է քաղաքական ուժը, որն իր ամբողջ ռազմավարությունը նպատակաուղղում է իշխանությունների կամ «մայր ուժի» շահերին: Նա ենթարկվում է նաև ցուցումների և վերջում՝ կախված արդյունքներից, ստանում համապատասխան պարգևատրություն:

9.2 Դեմոկրատականություն չապահովող ընտրական ինստիտուտի հայեցակարգ

Մի պահ ենթադրենք, որ մինչև հիմա նկարագրված բոլոր հակադեմոկրատական տեխնոլոգիաները հաղթահարված են և ընտրությունները անցնում են կատարյալ, օրենքին համապատասխան: Արդյոք այս դեպքում մեր ընտրաինստիտուտը կապահովեր դեմոկրատականություն: Դեմոկրատական ընտրաինստիտուտի կայացման համար կարևոր են հետևյալ հարցերը՝

1. Ընտրողների քանի տոկոսի ներկայացուցիչներն են իշխանություններում
2. Նրանցից քանի տոկոսի կարծիքով են կայացվում որոշումները
3. Որքանով է ընտրաինստիտուտը նպաստում, որ որոշումները կայացնողները առաջնորդվեն իրենց ընտրողների շահով

Պատասխանելով այս հարցերին կստանանք, թե ընտրողների որքան մասի շահերի հիման վրա են կայացվում և իրականացվում որոշումները⁵⁷: Արդյունքները ցույց են տալիս, որ որոշումներն ընդունվում են ընտրողների շատ քիչ մասի ներկայացուցիչների կողմից: Սա պայմանավորված է ընտրություններում անցողիկության շեմի, քվորումի և որոշումների ընդունման շեմի շահարկումներով: Առաջինը արտացոլվում է այն սկզբունքում, որ համապատասխան ձայների քանակ չստացած թեկնածուները կամ քաղաքական ուժերը չեն ընտրվում, իսկ նրանց հավաքած ձայների քանակին համապատասխանող պաշտոնների տեղերը բաշխվում են հաղթած քաղաքական ուժերին: Ստացվում է, որ վերջիններս ստանում են իրավունք որոշումներ կայացնելու այն խմբերի անունից, որոնք իրենց չեն ընտրել: Քվորումի նախապայմանը շահարկվում է այն առումով, որ կոլեգիալ մարմիններում որոշումների ընդունման համար անհրաժեշտ մարդկանց քանակի ապահովման դեպքում միայն ներկաների քվեարկությունը բավարար է որոշում կայացնելու համար: Ստացվում է, որ եթե քվորումով նախատեսվում է որոշումների մեծ մասը օրինական համարել միայն պատգամավորների կեսի քվեարկության պայմաններում, ապա որոշումը կայացվում է միայն նրանց կեսի կարծիքով: Եվ վերջապես նման երևույթ է առաջանում նաև որոշման ընդունման համար անհրաժեշտ ձայների քանակի հետ կապված, երբ տվյալ տիպի որոշումը կարող է օրինական համարվել,

⁵⁷ Առաջին երկու հարցերի որոշ ասպեկտների մասին կարելի է գտնել սույն հետազոտության փորձագետ Արամ Հարությունյանի հարցազրույցի տրանսկրիպտում: Այդ հարցերի որոշ տեսանկյուններ բավական մատչելի ձևով շարադրված են նաև Պ. Հայրիկյանի «Դեմոկրատիա խոսքով և գործով» մեմոարդյունում:

օրինակ, միայն ձայների պարզ մեծամասնությամբ: Ստացվում է, որ իրականացվում է **մեծագույն փորձամասնության իշխանությունը**:

Մյուս կողմից, վերջին հարցի պատասխանը ցույց է տալիս, որ ընտրված իշխանությունները գործում են ոչ իրենց ընտրողների շահին համապատասխան: Որպես չափանիշ կարող են ծառայել ոչ միայն փորձագետների և ընտրողների կարծիքը, այլև նրանց հետընտրական հանդիպումները ընտրողների հետ, նախընտրական խոստումների կատարումը, վերաբերմունքը ընտրողներին, պարտավորվածության զգացման պակասը ընտրողների հանդեպ, պատգամավորության սուբյեկտիվ իմաստը նրանց համար, ովքեր դարձել են պատգամավոր և այլն:

9.3 Վերալետական կառույցների իշխանության դեմոկրատականության հիմնահարցը ՀՀ-ում

Միջազգային կազմակերպությունների և վերալետական կառույցների գործունեության գնահատականը ՀՀ ընտրություններին նրանց մասնակցության առումով միանշանակ դրական չէ: Կա համաձայնություն այն կարծիքի հետ, որ դրանք առաջնորդվելով իրենց շահերով հաճախ իրենք են խախտում այն սկզբունքները, ինչի համար աջակցում են առանձին պետությունների՝ դրանց ժողովրդավարացման գործընթացում⁵⁸: Մասնավորապես դժգոհություն կա դիտորդների աշխատանքից, որոնք ոչ միշտ են գրանցում խախտումները և խախտումների դեպքում էլ, ոչ միշտ է նրանց արձատանքը լինում ադեկվատ այդ խախտումներին, ոչ միայն տեղեկատվության առումով, այլև կիրառվող իրական քայլերի առումով: Ուշագրավ է, որ նման երևույթը չեն ժխտում նաև իշխանության ներկայացուցիչ փորձագետները:

Կարելի է ենթադրել, որ իշխանությունները կարողանում են շատ բարձր մակարդակով կանխել ինչպես դիտորդների հայտարարությունները, այնպես էլ նրանց մայր կազմակերպությունների հնարավոր գործողությունները: Ենթադրվում է, որ ՀՀ իշխանությունները այդպիսի լուծումների արդյունքում գնում են փոխզիջումների տարբեր կառույցների շահերը հանրապետությունում ապահովելու գնով: Մասնավորապես ՌԴ-ի համար նշվում է տնտեսական փոխզիջումները, իսկ արևմուտքի համար տարբեր ծրագրերում ներառված լինելը, օրնադրական փոփոխությունները և ինֆրակառույցների ռեֆորմները նրանց կողմից նախատեսված եղանակներով: Այսպիսով իրավունք ունի գոյություն ունենալ նախապես արտաքին ազդեցիկ ուժերի հետ փոխհամաձայնությունները, որոնք մակրոմակարդակում կանխորոշում են ընտրությունների ընթացքը:

Չի բացառվում նաև կոնկրետ դիտորդական խմբերի կաշառումը: Այս կապակցությամբ մտավախություն է առաջանում երկրի կարևորագույն ռեսուրսների օտարման համար: Նման կարծիքի առկայությունը թույլ է տալիս մտածել, որ հասարակությունը կարող է հիասթափվել նաև մինչև հիմա ՀՀ-ում իրենց տարածած ընդունելի, դեմոկրատական և մարդասիրական գաղափարների և իրական ծրագրերի շնորհիվ հեղինակություն վայելող կազմակերպություններից, իսկ հետագայում նաև դրանց կողմից ներկայացվող պետություններից:

⁵⁸ **Հարցվող*** Փորձը ցույց է տալիս, որ դիտորդական խմբերը ընտրական գործընթացին ներգրավվում են սպոնտան եղանակով, արդեն իսկ հրահանգավորված, կամ էլ որևէ միջազգային կազմակերպության «շահերը» ներկայացնելով: Կարծում են, որ դիտորդի ինստիտուտի պրոֆեսիոնալ ձևավորումը էական ազդեցություն պետք է ունենա ընտրական գործընթացի թափանցիկության ապահովման գործում:

10 Ընդհանուր գործոններ

10.1 Իշխանության երեք թևերի փոխադարձ վերահսկողության և անկախության պրոբլեմը

Իշխանության գործունեության կամայականությունները հնարավոր են դառնում, երբ բարձրագույն իշխանությունը ունի դատական և մյուս իշխանություններին իր կամքը թելադրելու հնարավորություն: Մասնավորապես հանրապետության նախագահը իշխանության թևերին իր կամքը թելադրելու հնարավորություններ ստանում է այն բոլոր մարմինների վրա, որոնց նշանակումը կամ աշխատանքից ազատումը պայմանավորված է իրենով: Իշխանության երեք թևերի փոխադարձ կախվածությունը նախ և առաջ պայմանավորված է ՀՀ սահմանադրությամբ: Լավ սահմանադրության դեպքում իշխանության մի թևի գործունեության օրինականությունը վերահսկելի է մյուսների կողմից, բայց իշխանության մի թևը չի կարող թելադրել մյուսին իր՝ շատ դեպքերում ապօրինի կամքը:

ՀՀ առաջին սահմանադրությամբ հանրապետության նախագահը ունի հնարավորություն թելադրելու իր կամքը դատական մարմիններին: Հենց այս հնարավորությունն է, որի օգտագործումը թույլ է տալիս գործող իշխանությանը դաբրոտալ այն բոլոր գործունեություններին, որոնք ուղղված են իր վերընտրմանը: Այս հնարավորությամբ է գործող իշխանությունը կարողանում ապահովել ապօրինությունների անպատժելիությունը, իր և իր համար աշխատող ուժերի գործունեության անվերահսկելիությունը:

Այս հնարավորությունը սահմանադրությամբ նախ և առաջ ամրագրված է արդարադատության խորհրդի նշանակման կարգով: Դատական մարմինների անկախության երաշխիքները սահմանված են ոչ թե օրենքով այլ ՀՀ նախագահը հանդիսանում է դատական մարմինների անկախության երաշխավորը: Միևնույն ժամանակ նույն նախագահը նշանակում է արդարադատության խորհրդի 14 անդամներին՝ 11-ին դատարանների առաջարկությամբ և երեքին գլխավոր դատախազի առաջարկությամբ: Նկատենք, որ այդ սկզբունքով կազմված արդարադատության խորհուրդը ներկայացնում է դատավորների առաջխաղացման ցուցակները նախագահին, որը հաստատում է դրանք: Այսպիսով ամբողջ արդարադատության աշխատակազմը միջնորդավորված ձևով ձևավորում է նախագահը՝ ունենալով հնարավորություն թելադրել նրանց գործունեությունը⁵⁹:

Ընտրությունների արդյունքների վիճարկման հիմնական դատարանը Սահմանադրական դատարանն է: Սահմանադրական դատարանի ինն անդամներից չորսին նշանակում է ՀՀ նախագահը, իսկ հինգ անդամին և դատարանի նախագահին Ազգային ժողովը՝ ԱԺ նախագահի առաջարկությամբ: Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման դեպքում կարող են ետ կանչել իրենց նշանակված անդամին: Գործող իշխանությունը այստեղ ևս ունի դատարանի որոշումների վրա ճնշելու հնարավորություն իր վերարտադրությունը իշխանություններում ապահովելու համար⁶⁰:

ՀՀ երկրորդ սահմանադրության նախագծում որոշակի քայլեր են արված իշխանության թևերի փոխադարձ վերահսկում և անկախություն ապահովելու ուղղությամբ: Մասնավորապես դատական իշխանությունների անկախության երաշխավորը ոչ թե նախագահն է, այլ այդ անկախության երաշխիքները սահմանվում են օրենքներով և սահմանադրությամբ: Էական առաջընթաց է այն, որ արդարադատության խորհուրդը կազմված է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված ինը դատավորից, ՀՀ նախագահի և ԱԺ-ի կողմից նշանակված երկուական անդամից: Սակայն դատավորների ծառայողական առաջխաղացման ցուցակները դարձյալ հաստատում է նախագահը: ՀՀ գլխավոր դատախազը, որը ղեկավարում է անկախ մարմին հանդիսացող

⁵⁹ ՀՀ առաջին Սահմանադրություն, հոդվածներ 94, 95:

⁶⁰ ՀՀ առաջին Սահմանադրություն, հոդվածներ 83-2, 83-3, 99, 100:

դատախազությունը, առաջարկվում է նախագահի կողմից և նշանակվում խորհրդարանի կողմից: Տեսականորեն դատախազի գործունեությունը, որը կոչված է վերահսկելու դատական մարմինների գործունեության օրինականությունը, նույնպես ենթակա է իշխանությունների կողմից ճնշումների: Կա կարծիք, որ չնայած առաջընթացին, այնուամենայնիվ նախագահի թելադրելու հնարավորությունը մեղմացած տարբերակով պահպանվում է⁶¹: Մյուս դրույթները, որոնց մասին խոսել ենք առաջաին սահմանադրության քննարկման ժամանակ, այս սահմանադրությունում ևս ըստ էության պահպանվում են⁶²:

10.2 Քաղաքական դաշտի չկայացվածությունը և քաղաքական ուժերի հակվածությունները

Հայաստանում քաղաքական դաշտը լիովին կայացած չէ: Մասնավորապես կա թերահավատություն և ցածր գնահատական քաղաքական գործունեության հանդեպ: Հասարակությունում չկա հստակ պատկերացում, թե ինչն է քաղաքական գործունեության նպատակը, ովքեր պետք է զբաղվեն դրանով, ինչ հատկանիշներ պիտի ունենան և ինչով պետք է զբաղվեն: Պատկերացումների բացակայությունը առկա է ոչ միայն հասարակության լայն շերտերի, այլև քաղաքական գործունեությամբ զբաղվելու հակվածությամ, պաշտոններ զբաղեցնող մարդկանց մոտ: Մասնավորապես պատգամավորի գործունեությունը շատերը փորձում են ծառայեցնել այնպիսի նպատակների, ինչպիսին է վարկի բարձրացումը, անձեռնմխելիության ստացումը և քիզննաի հովանավորչության իրականացումը: Արդյունքում ԱԺ-ում աշխատում են շատ պատգամավորներ, որոնք իրենք իսկ լավ չեն պատկերացնում իրենց գործունեության իրական կոչումը և անելիքը: Ծառերը չունեն համապատասխան կրթություն, ունակություններ: Առկա են հանցագործ ենթամշակույթով ապրող մարդիկ: Ծառերի գործունեությունը բոլորովին չի համապատասխանում պատգամավորի կոչմանը⁶³:

Իշխանությունների և քաղաքական դաշտի այս խմբին ընդունված է անվանել ապաքաղաքական տարրեր: Ապաքաղաքական տարրերի ազդեցությունը ինչպես ԱԺ գործունեության, այնպես էլ ընտրությունների անցկացման վրա ընդհանրապես, հնարավորություն է տալիս նրանց ձևավորել ընտրական ինստիտուտը իրենց պահանջմունքներին համապատասխան: Այս սոցիալական խումբը ազդում է մինչ այժմ շարադրված շատ տեխնոկրինների իրականացման վրա, հասարակության մենթալիտետի վրա և հանդիսանում է լուրջ խոչընդոտ դեմոկրատական ընտրությունների անցկացման համար:

Ապաքաղաքականացվածությունը հասարակությունում և նույնիսկ իշխանություններում որոշակի բնույթի հարգանք է վայելում: Արդյունքում շատ քաղաքական գործիչներ հակված են տարբեր խմբերի մոտ ներկայանալ որպես ապաքաղաքական: Դա դրսևորվում է ապրելակերպով, հագուկապով, խոսելատճով և այն նորմաարժեքային համակարգով, որով առաջնորդվում է: Մասնավորապես ընդունելի չի համարվում ճնշումների կամ այլ տիպի իրավախախտումների դեպքում հայտնել այդ մասին: Արդյունքում ապաքաղաքականության ձգտող գործիչը կամ անձը խոցելի է դառնում ապաքաղաքական տարրերի կողմից հենց ապաքաղաքական մեթոդներով: Դրանց հատուկ է համապատասխան ենթամշակույթի շանտաժը: Փորձագետը վստահեցնում է, որ

⁶¹ ՀՀ երկրորդ Սահմանադրություն, հոդվածներ 94, 94.1, 95, 55-9:

⁶² ՀՀ երկրորդ Սահմանադրություն, հոդվածներ 55-10, 83:

⁶³ **Հարցվող*** Պառլամենտի կազմը խայտառակություն է, որովհետև շատ պատգամավորներ ապաքաղաքականացված են: Նրանք նույնիսկ հպարտանում են, որ իրենք որևէ կուսակցություն չեն ներկայացնում: Մինչդեռ պառլամենտը քաղաքական ներկայացուցչական մարմինն է, և էստեղ պետք է քաղաքական ուժերը ներկայացված լինեն /Հավանաբար, ուզում է ասել, որ այդ ներկայացուցիչների միավորումների ներկայացուցիչները հանձնաժողովներում սխալ է, քանի որ սխալ օրենքներ են ընդունում/:

ապաքաղաքականության հավակնող քաղաքական գործիչը դառնում է թույլ և խոցելի, քանի որ ավելի շատ ճնշման եղանակներ են կիրառվել նրա նկատմամբ⁶⁴:

Ապաքաղաքականության նման հնարավորություններին նպաստում է մեծամասնական ընտրատարածքներով շատ անհատ պատգամավորների ընտրվելու հնարավորությունը: Այստեղ որպես ապաքաղաքականացման դեմ պայքարի միջոց է նշվում մեծամասնական պատգամավորական տեղերի իսպառ վերացումը, կամ էական փոքրացումը: Սակայն ի հակակշիռ այս լուծմանը կարելի է բերել այն փաստարկը, որ համամասնական ցուցակները նույնպես հազնցած են ապաքաղաքական տարրերով: Ցուցակները փաստորեն կազմվում են ոչ թե քաղաքական նկատառումներով, թեկնածուների կարողությունները հաշվի առնելով, այլ տնտեսական կամ այլ շահով: Երևույթը ունի լայն տարածում և հիմնավորվում է մի քանի ձևով: Առաջին՝ կուսակցությունները կամենալով ուժեղացնել իրենց թիվերը ներառում են ապաքաղաքական տարրեր, որոնք տիրապետում են ֆինանսական ռեսուրսների: Այսպիսով այդ կուսակցությունները պատրաստ են ներառել նրանց, ով շատ գումար կտա այդ տեղի համար: Երկրորդ՝ կուսակցությունները ներառում են այնպիսի թեկնածուների, որոնք ունեն թաղային ազդեցություն և կարող են ձայներ ավելացնել: Երրորդ՝ շատ կուսակցություններ ստեղծվել և գործառնում են գործարարների ֆինանսական աջակցությամբ, որոնք ֆինանսական լծակներ ունենալով կուսակցության վրա, իրենց համար անցողիկ տեղեր են ապահովում ցուցակներում:

Ցուցակների կազմման գործընթացում ընդհանրական ցուցակներում նույնպես առաջնային տեղում հասարակական կարծիքը չէ: Շատ թեկնածուների փոխդասավորությունը ցուցակում չի արտացոլում հասարակական կարծիքը: Ընդհանուր առմամբ ցուցակները համեմատաբար քիչ կոռուպցիոն է համարվում⁶⁵:

Քաղաքական դաշտի կայացման գործընթացում տեսանելի է ապաքաղաքական և քաղաքական ուժերի հակադրությունը: Քաղաքական դաշտի կայացումը պահանջում է քաղաքական ուժերի կողմից ապաքաղաքական ուժերի նկատմամբ հաղթանակ: Այս պայքարը ենթադրում է քաղաքական ուժերի ինստիտուցիանալ, այսինքն կազմակերպչական կառույցներով ներկայություն հանրապետության տարածքում: Համաձայն փորձագետների այդ փորձը իրականացվում է: Այս ճանապարհին խոչընդոտող համարվում է քաղաքական ծրագրերի անորոշությունը և փոփոխականությունը, ֆինանսների բացակայությունը, իշխանության խոչընդոտող քաղաքականությունը և ի վերջո ընտրությունների ինստիտուտի բացակայությունը: Քաղաքական և հասարակական սպեկտրի կողմից պայքարի ինստիտուցիոնալ մակարդակ տեղափոխումը, որ դրսևորվում է համահանրապետական լուրջ քաղաքական ծրագրերով, նպատակային և զանգվածային միջոցառումներով, համարվում է լուրջ քայլ կրիսիսալի՝ ընտրությունների ելքի վրա ունեցած վճռորոշ դերի վերացման համար⁶⁶:

Այստեղ դերակատարում կա ինչպես իշխանությունների, այնպես էլ կուսակցությունների համար: Որպես առաջնային քայլ կարելի է դիտարկել մեծամասնական տեղերի նվազեցումը, ինչը լիարժեք չի կատարվում և լիարժեքության

⁶⁴ **Հարցվող*** Քաղաքական գործչի, ոչ ապաքաղաքական գործչի վրա ճնշում գործելը դժվար է նրա հատնության պատճառով: Ճնշումները արվում են ապաքաղաքականացված տարրերի կողմից...

⁶⁵ **Հարցվող*** Վերցնենք իշխանական 3 կուսակցության համամասնական ցուցակները: Ես չեմ ասում որ ընդհանրական համամասնական ցուցակները անթերի են: Այստեղ էլ կան բացասական երևույթներ, բայց դրանք կոռուպցիոն դրսևորումների հետևանք չեն: Իսկ իշխանամետ 3 ցուցակներ վերցնենք առաջին 20 տեղերում, այսինքն անցողիկ տեղերում կհանդիպեք բազմաթիվ օլիգարխների անունների, այսինքն գործարանների, որոնք քաղաքական տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում այդ դուցակներում չափի լինեն նրանց անունները:

⁶⁶ **Հարցվող*** Ես կոնկրետ ընտրատարածք կարող եմ ասել, որտեղ ընդհանուր կոնսոլիդացված ճիշտ աշխատեց և հաջողության հասավ: Թիվ 11 ընտրատարածքը, որտեղ առաջադրված էր Սմբատ Այվազյանը: Բոլոր տեղերում ինքը ուներ պատրաստված վստահաված անձիք, գործող շտաբներ, կար հստակ վերահսկողության մեխանիզմ և իմ ասած պարամետրերը, նաև կոմունիկացիոն հարմարություններ, այսինքն, մեքենաներ, բջջայիններ և այլն, որոնք շատ անհրաժեշտ են: Արագ արձագանքման խմբեր ունեք, որոնք ահագանգի դեպքում կոնկրետ տեղամասեր էին գնում և այդ բոլոր միջոցներով կարողացավ դրական արդյունք ապահովել: Այսինքն կանխվեցին սև տելեմոլոգիաները և արտացոլվեց հասարակական կամքը:

դեպքում նույնիսկ ամբողջական լուծում չի ապահովում: Մինևույն ժամանակ քաղաքական դաշտի կայացումը ենթադրում է ծավալվող պայքարի քաղաքական եղանակների հաղթանակ այլ տիպի պայքարի եղանակների նկատմամբ: Սա նշանակում է քարոզչության և դասական ընտրաբաշխվող պետ է ավելի մեծ արդյունք տա, քան օրինակ ընտրակաշառքը: Ինչը ենթադրում է, որ պետք է աշխատել հնարավորին չափ այդ եղանակներով աշխատել: Սակայն այդ շարժման առաջնեկները և ակտիվիստները իրենք են ենթակա պարտության, քանի որ առայժմ ապաքաղաքական եղանակները ավելի լավ են աշխատում քան քաղաքականները:

Քաղաքական դաշտի կայացման խոչընդոտ է նաև համերկրացու գործոնը: Շատ վայրերում՝ հատկապես մարզերում, քարոզչության ժամանակ կիրառվում է համերկրացիների միջոցով ձայների հավաքում, որը ունի որոշակի արդյունավետություն, որ ձեռնառու է դարձնում նման քարոզչությունը: Այս գործոնը որոշ տեղեր հիվանդագին դրսևորումներ է ստանում և ընտրողների մոտ պատվի հարց է դառնում համերկրացիներին աջակցելը: Այս կամ այն բնակավայրում շատ դժվար է ժամանակին այլ բնակավայրից տեղափոխված թեկնածուի անցնելը: Նույնիսկ թեկնածուի ժամանակավոր բացակայությունը գյուղից կամ բնակավայրից լուրջ շահարկումների առարկա է դարձնում և արդյունք է ունենում:

Քաղաքական դաշտի կայացումը կապված է նաև դրա անկախությունից իշխող վարչախմբի նկատմամբ: Ինչպես կրիմինալը, այնպես էլ կառավարության մեջ ներառված պաշտոնյաները ունեն լծակներ ազդելու քաղաքական ուժերի վրա և դրդելու ոչ քաղաքական մոտիվներով որոշումներ ընդունել: Կա կարծիք, որ կուսակցությունների ակտիվությունը, դերի մեծությունը ընտրությունների գործընթացում և ընդհանրապես հզորացումը ավելի կնվազեցնի ապաքաղաքական տարրերի մասնակցությունը և կնպաստի քաղաքական դաշտի կայացմանը⁶⁷:

Քաղաքական դաշտի մեկ այլ թերություն է դաշինքների ձևավորման հիմքերը: Դրանք ձևավորվում են ոչ թե գաղափարական հենքի, այլ կոնկրետ նպատակի շուրջ, որը կարող է կարճատև լինել: Այդ խնդիրը մեկ տարվա ընթացքում լուծվելու կամ չլուծվելու դեպքում այդ դաշինքը կարող է վերանայ: Որպես օրինակ է բերվում 1999թ-ին Իրավունք և միաբանություն խմբակցությունը՝ Ազգային միաբանություն և Սահմանադրական Իրավունք միության մասնակցությամբ: Մեկ տարի հետո ՍԻՄ-ը և Ազգային Միաբանությունը տրամագծորեն հակառակ քաղաքական դիրքորոշում ունեին, բայց ֆորմալ առումով խորհրդարանում գործում էին նույն ֆրակցիայի անվան տակ: Այսինքն, ստացվեց, որ հասարակության տրված քվեները փոշիացվեցին մեկ տարվա ընթացքում: Մեկ այլ օրինակ է Արդարություն դաշինքը, որի ինը կուսակցությունները կարող են տարբեր հարցերի շուրջ տարբեր դիրքորոշումներ ունենալ: Նույնպես նրանց դաշինքը նախքան ընտրությունները հիմնավորվում է միացյալ ուժերով ԱԺ մտնելու նպատակահարմարությամբ, սակայն որպես քաղաքական ուժ շատ հարցերում այն միացյալ չէ:

10.3 Քաղաքական կամքի բացակայություն՝ վերացնելու հակադեմոկրատական տեխնոլոգիաների կիրառումը

2005-ի ընտրական օրենսգրքի փոփոխություններից հետո այն կարելի է համարել լավ օրենսգրքի այն առումով, որ դրա կիրառման դեպքում հակադեմոկրատական տեխնոլոգիաների մի վիթխարի ծավալ կնվազի: Սա պայմանավորված է այն բանով, որ այդ տեխնոլոգիաների բավական մասը իրականացվում է օրենքի խախտման պայմաններում: Փորձագիտական կարծիքից պարզ է դառնում, որ օրենքը չի կիրառվում լիարժեքորեն իշխանության չկամության պատճառով: Սա նշանակում է, որ

⁶⁷ **Տարգվող*** Մեր երկրում, ցավոք սրտի, իրականացվում է կուսակցությունների քայքայում, ջարդման, վարկաբեկման գործընթաց (մամուլով, հեռուստատեսությամբ՝ իշխանական կամ ընդդիմադիր): Քաղաքացիները, հիասթափվելով կուսակցություններից, ընկնում են առանձին մի քանի փողատերերի ձեռքը և դառնում խաղալիք:

իշխանությունները շահագրգռված չեն այդ տելխնոլոգիաների վերացման մեջ: Տելխնոլոգիաների իրագործման մեջ մեծ դեր զբաղեցնող հովանավորչությունը շատ դեպքերում հնարավոր է դառնում օրենքի խտրական կիրառման միջոցով:

Այն տելխնոլոգիաները , որոնք օրենքի շրջանակներում են իրականացվում, նույնպես կարելի է շատ արդյունավետ վերացվել իշխանությունների կողմից: Մասնավորապես օրենքի թերությունները և դրանց հետևանքով առաջացող չարաշահումները հանձնաժողովների կազմման, դրանց գործառնության, լրատվամիջոցների, կարծիքի ձևավորման ինստիտուտի, ճնշումների, ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման պատճառով հիմնականում իշխանությունների վերահսկողության տակ կարող են լինել:

Այսպիսով առաջանում է համոզմունք, որ չկա իշխանությունների քաղաքական կամք՝ պայքարելու հակադեմոկրատական տելխնոլոգիաների դեմ: Ենթադրելի է, որ այդ տելխնոլոգիաները մեծապես ծառայում են իշխանությունների ամրապնդմանը: Եվ հասկանալի է այն կարծիքը, որ իշխանությունները, եթե ուզենան կարող են արմատապես վերացնել հակադեմոկրատական տելխնոլոգիաների պրակտիկական հարցում: Մասնավորապես մեծ դեր կարելի է տալ իշխանություններին սույն աշխատանքում շարադրվող լուծումները կյանքի կոչելու գործում: Սակայն խնդիրը համապատասխան ուղղվածության քաղական կամքի առաջացումն է:

11 Հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ պայքարի հնարավոր եղանակները ՀՀ-ում

Ընտրական ինստիտուտի դեմոկրատականությունը ենթադրում է հետևյալ տարրերը՝

1. Ընտրողն իր ընտրությունը կատարում է ելնելով իր համոզմունքներից այն բանի մասին, թե՞ ընտրվողը որքանով լավ կկատարի համապատասխան պաշտոնի ֆունկցիաները:
2. Հանձնաժողովները ճշգրիտ գրանցում են իրական տվյալները:
3. Իրական տվյալների համաձայն ընտրված ընտրվողը փաստացիորեն լեգիտիմ է ընտրվելուց մինչև իր գործունեության ավարտը:
4. Կան աշխատող մեխանիզմներ իրական տվյալներով չընտրված ընտրվողին իշխանության չթողնելու համար:
5. Կան աշխատող մեխանիզմներ լեգիտիմությունը կորցրած պաշտոնյային իշխանագրկելու համար:
6. Կան աշխատող մեխանիզմներ բացառելու այլընտրանքային երեսփոխանությունը:

Հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ պայքարի նպատակն է ապահովել դեմոկրատական ընտրական ինստիտուտի գործառնությունը: Այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է վերացնել կամ էականորեն քչացնել հակադեմոկրատական տեխնոլոգիաների կիրառումը: Այս նպատակի հիմնական ստրատեգիան է՝ տեխնոլոգիաներ կիրառողների համար դեմոկրատական տեխնոլոգիաները գերադասելի դարձնել հակադեմոկրատական տեխնոլոգիաներից: Այսինքն՝ լավագույն ելքի դեպքում ընտրվողի համար դեմոկրատական եղանակներով ընտրվելը և գործունեություն ծավալելը պիտի լինի ավելի արդյունավետ, քան հակադեմոկրատական եղանակներով: Իսկ պայքարի միջանկյալ արդյունավետության դեպքում՝ հակադեմոկրատական տեխնոլոգիաների կիրառումը դարձնել հնարավորին չափ պակաս ձեռնտու ընտրվողի համար: Այսինքն հակադեմոկրատական տեխնոլոգիաների միջոցով արդյունքի հասնելը պիտի դառնա այնքան խոչընդոտներով լեցուն և դժվար իրագործելի, որ ընտրվողները չդիմեն այս մեթոդներին, փոխարենը առաջնորդվեն դեմոկրատական տեխնոլոգիաներով: Ըստ այդմ, պայքարել հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ, նշանակում է առաջացնել հնարավորին չափ շատ խոչընդոտներ դրանց իրագործման համար, որոնք կբացառեն դրանց իրագործումը կամ կբարձրացնեն դրանց **իրագործման գինը**:

Որպեսզի այդ տեխնոլոգիաների իրագործումը բացառվի կամ դրանց գինը բարձր լինի և իրագործողների համար ոչ ձեռնտու, անհրաժեշտ է, որ ընտրական ինստիտուտի մասնակիցներից յուրաքանչյուրը ցուցաբերի դրանց իրագործումը դժվարեցնող կամ բացառող վարք: Այդ մասնակիցներն են ընտրող, ընտրվող, կուսակցություն, կաշառք բաժանող, ազիտատոր, իշխանություն, ադմինիստրատիվ լծակ տիրապետող, ադմինիստրացիայի աշխատող, իրավապահ, հանձնաժողովի անդամ, վստահված անձ, դիտորդ, լրատվամիջոց և այլն:

Տեխնոլոգիաների դեմ պայքարը կարելի է տանել տարբեր ռազմավարություններով, որոնք հետևյալներն են՝

1. Օրենսդրական փոփոխություններ
2. Օրենքով սահմանված խախտումների սանկցիավորման իրականացումը իրավապահ մարմինների կողմից: Այս գործընթացը ենթադրում է՝
 - 2.1 Իրավապահ մարմինների արդյունավետ գործառնություն:
 - 2.2 Հասարակական ակտիվություն իրավապահ մարմինների հետ համագործակցության ուղղությամբ:

- 3 Հասարակական բոլորող տեխնոլոգիաներին, որը ենթադրում է՝
 - 3.1 Տեխնոլոգիայի յուրաքանչյուր մասնակցի այնպիսի վարք, որը առնվազն չի նպաստում տեխնոլոգիայի իրականացմանը:
 - 3.2 Հասարակական մասնակցություն տեխնոլոգիաների դեմ ուղղված ճնշման, սանկցիավորման և այլ տիպի ակցիաների:
- 4 Իշխանությունների քաղաքական կամքը, որը կարող է ներառել՝
 - 4.1 Վերոնշյալ ռազմավարությունների իրականացում կամ աջակցություն դրանց իրականացմանը իշխանությունների կողմից:
 - 4.2 Տեխնոլոգիաների չկիրառում իշխանությունների կողմից:
 - 4.3 Ընտրությունների անցկացման նոր ռազմավարության իրականացում:
 - 4.4 Ծահագրգռված քաղաքական այլաձևի ձևավորում իշխանության ներսում:
5. Համակարգային լուծումներ
 - 5.1 Ընտրական ինստիտուտի բարեփոխումներ
 - 5.2 Ընտրությունների անցկացման մեխանիզմների բարեփոխումներ

Վերոնշյալ ռազմավարությունների իրականացումը ենթադրում է միջոցառումներ, որոնք ունեն ընդհանուր ազդեցություն բոլոր տեխնոլոգիաների վրա և միջոցառումներ, որոնք ունեն միայն այս կամ այն տեխնոլոգիայի վրա ազդեցություն: Առաջադրելով տեխնոլոգիաների դեմ պայքարի ուղիներ կշարադրենք ինչպես **տեխնոլոգիաների դեմ պայքարի ընդհանուր միջոցները, այլնպես էլ առանձին տեխնոլոգիայի կամ դրան նպաստող գործոնի դեմ պայքարի համար անհրաժեշտ հատուկ միջոցները՝** ներկայացնելով դրանց իրականացման միջոցը, ազդեցության մեխանիզմը և սպասվելիք արդյունքը: Սակայն նրկու դեպքում էլ այդ միջոցները, այսինքն տեխնոլոգիաների դեմ պայքարը ենթադրում է հետևյալ ընդհանուր միջոցառումները՝

1. Հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ պայքարի միջազգային և տեղական փորձի ուսումնասիրություն:
2. Փոփոխություններ օրենքում:
3. Տեղեկատվական/խորհրդատվական աշխատանքներ:
4. Քարոզչություն բնակչության հետ մեթալիտետային խնդիրների լուծման համար:
5. Ֆունկցիոնալ կառույցների ստեղծում, ինստիտուցիոնալ աջակցություն:
6. Քաղաքական ուժերի կազմակերպում:

11.1 Օրենսդրական փոփոխություններ

11.1.1 Դատական իշխանությունների կողմից իշխանության մյուս թևերի գործունեության վերահսկողությունը

ՀՀ իշխանությունների երեք թևերի վերահսկողությունը ապահովելու համար նախ անհրաժեշտ է ապահովել այդ իշխանությունների հարաբերական անկախությունը միմյանցից: Այս խնդրի լուծման ձևերից մեկն այն է, որ դատական մարմինների նշանակումը և աշխատանքից ազատումը իրականացվի ինքնուրույն եղանակով և ոչ նախազահական հրամանով:

Այս սկզբունքի համաձայն՝ արդարադատության խորհրդի մեծամասնությունը պետք է ընտրվի ինքնուրույն եղանակով դատավորների միության կողմից, իսկ նախազահը պետք է հաստատի այն: Սակայն նախազահի հաստատելու հիմքերի օբյեկտիվությունը պետք է երաշխավորված լինի օրենքով, որը կբացառի կամ կնվազեցնի նախազահի սուբյեկտիվ վերաբերմունքը: Այսինքն պետք է օրենքով սահմանված լինեն հստակ կետեր, որոնց դեպքում նա կարող է չհաստատել ընտրվածների ցուցակը: Նման հստակությունը անհրաժեշտ է նաև դատավորների առաջխաղացման հաստատման հիմքերի օրենքով սահմանման ժամանակ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է պահպանել նախազահի և ԱԺ-ի որոշակի վերահսկողությունը արդարադատության խորհրդի վրա, վերջինիս

գործունեության օրինականության հսկման և կամայականությունների բացառման նպատակով: Այս նպատակով արդարացված է նախագահի և ԱԺ-ի կողմից երկու անդամների նշանակումը:

Այսպիսով, եթե դատավորները անկախ են իշխանություններից, ապա իշխանությունները շահագրգռված են նրանց գործունեության վերահսկմամբ: Դատախազությունը, որը կարող է որոշակիորեն վերահսկել դատական համակարգի գործունեությունը՝ ձևավորման գործընթացում կարող է որոշակի ազդեցություն կրել իշխանությունների կողմից և լինել շահագրգռված դատավորների գործունեության վերահսկման գործում: Սրանով իշխանությունները արդարադատության գործունեությունը տալիս են հարաբերականորեն անկախ կողմի, սակայն դրա գործունեության օրինականության վերահսկողությունը վերցնում իրենց ձեռքը: Արդյունքում իշխանությունները շահագրգռված կլինեն այդ գործունեության խիստ վերահսկման մեջ, իսկ դատական մարմինները՝ շահագրգռված կլինեն իրենց գործունեության ավելի կատարյալ իրականացման մեջ: Ենթադրվում է, որ եթե ընտրակեղծիքների հետ կապված հարց քննվի դատարանի կողմից, դատարանը չի ունենա անմիջական շահագրգռվածություն գործի արդարացման համար և իշխանության լծակը դատարանի վրա չի լինի այսքան անմիջական և արդյունավետ: Մյուս կողմից՝ եթե դատարանը ունենա սուբյեկտիվ շահագրգռվածության այլ աղբյուր՝ իշխանությունները կարող են կանխել ապօրինությունը:

Չնայած էական առաջընթացին, տեսականորեն այս մոդելը նույնպես ունի թերություն: Կա ենթադրություն, որ դատախազությունը՝ որպես իշխանության ազդեցությունը կրող մարմին կարող է գործարքի մեջ մտնել դատական մարմինների հետ՝ հնարավորություն ստեղծելով փոխադարձ չարաշահումների համար: Այս մտահոգության լուծումներից մեկը գլխավոր դատախազի պաշտոնի անկախացումն է: Այսինքն նա չի նշանակվում կամ հաստատվում նախագահի կամ ազգային ժողովի կողմից այլ ընտրվում է որևէ այլ եղանակով: Կամ, ինչպես և արդարադատության խորհրդի դեպքում, օրենքով սահմանվում են նախագահի կողմից դատախազի չհաստատման հստակ հիմքեր:

Սահմանադրական դատարանի անկախության և միևնույն ժամանակ վերահսկելիության խնդրի լուծման հնարավոր եղանակ է անդամների երկարաժամկետ պաշտոնավարման դրույթի պահպանմամբ՝ ետկանչման հստակ հիմքերի սահմանումը օրենքով: Ավելի խիստ տարբերակ է Սահմանադրական դատարանի՝ անկախ ընտրությամբ ձևավորումը:

Խնդրի հիմնովին լուծմանը ավելի մոտենալը ենթադրում է նաև օրենսդիր, գործադիր և նախագահ իշխանությունների փոխադարձ անկախության, բայց միևնույն ժամանակ վերահսկելիության ապահովումը:

11.1.2 Ընտրական հանձնաժողովների կազմման եղանակի փոփոխություն

Իշխանության թևերի առավել անկախության և փոխադարձ վերահսկողության համար անհրաժեշտ է պահպանել գործունեությունն իրականացնողի և դրա վերահսկումն իրականացնողի տարբեր շահերով սուբյեկտների ապահովման սկզբունքը: Այսինքն, եթե ընտրակեղծիքներ իրականացնելու հնարավորությունը տրված է մի կողմին, որի վրա ազդեցություն ունի որոշակի շահերով մեկ սուբյեկտ, ապա այդ դատավարության վերահսկման իրավունքը պիտի տրվի այնպիսի մի սուբյեկտի, որի վրա ազդեցության հնարավորություն ունեցողի շահերը չհամընկնեն առաջին սուբյեկտի շահերի հետ: Այս սկզբունքը կապահովի վերահսկման նկատմամբ վերահսկողի իրական շահագրգռվածություն, որը կբխի նրա շահերից և կտա մեծ արդյունավետություն⁶⁸:

⁶⁸ **Հարցվող*** Եթե երկու հոգի պատրաստվում են կիսել իրենց ունեցած մեկ խնձորը, ապա նրանցից յուրաքանչյուրը շահագրգռված է, որ իր մասը ավելի մեծ լինի: Յուրաքանչյուրը կիսելու ժամանակ կկիսի մեկը մեծ, մյուսը փոքր և կվերցնի մեծը իրեն, փոքրը կտա մյուսին: Սակայն, եթե կիսելու սկզբունքը լինի այնպիսին, որ նրանցից մեկին տրվի կիսելու իրավունքը, իսկ մյուսին կհսկված մասերը ընտրելու իրավունքը տեղի կունենա հետևյալը: Նա ով կիսելու իրավունք ունի, կաշխատի կիսել որքան հնարավոր է հավասար, քանի որ գիտի, որ ընտրելու ժամանակ ընտրելու իրավունք ունեցողը իրեն կվերցնի ավելի մեծ կտորը: Արդյունքում կիսողը շահագրգռված կլինի հավասար կիսելու մեջ և կգործի **Տունկցիանների կատարման և վերահսկման տարաբաժանման սկզբունքը**:

Այլ կերպ ասած՝ եթե ընտրական հանձնաժողովում մեծամասնություն են կազմում իշխանությունների ներկայացուցիչները կամ նրանց կողմից նշանակված մարդիկ, ապա ընտրակեղծիքները, ինչպես ակնհայտ դարձավ ընտրատեխնոլոգիաների նկարագրությունում, իրականացնելու հնարավորություն ստանում են հենց իշխանությունները: Մյուս կողմից նրանց է տրված նաև իրավապահ մարմինների միջոցով ընտրակեղծիքների վերահսկման և ընդհանրապես ընտրափնտիստի աշխատեցման հնարավորությունը: Ինչպես պարզ դարձավ, նրանք ստանում են նաև իրավապահ մարմինների վրա ազդելու հնարավորություն՝ քանի դեռ չկա դատական իշխանությունների անկախության ապահովման նրաշխիք: Բնական է, որ իշխանությունները հակված չեն լինի բացահայտել և սանկցիավորել իրենց իսկ կատարած ընտրակեղծիքները:

Մինչդեռ, եթե ընտրակեղծիքներ կատարելու հնարավորությունը տրվեր ընդհանրությանը, վերջինս որքան էլ կամենար ընտրակեղծիքներ կատարել, այդ ընտրակեղծիքները չէին կարողանա ստանալ այնպիսի ծավալներ, ինչպես այժմ է առկա: Դեռ ավելին, դրանք կձգտեին գրոյի այն պատճառով, որ իշխանությունները այս դեպքում արդեն խիստ շահագրգռված կլինեին թույլ չտալու որևէ ընտրակեղծիք: Ունենալով վերահսկման լծակներ՝ օրենք, իրավապահ մարմիններ, ադմինիստրատիվ ռեսուրսներ, իշխանությունը կապահովեր ընտրակեղծիքների բացահայտման և պատժման աննախադեպ էֆեկտիվություն: Դեռ ավելին, իշխանությունները իրենք շահագրգռված կլինեին կատարելագործել վերահսկման մեխանիզմները օրենքների կատարելագործման, դրանց իրականացման մեխանիզմների կատարելագործման և հասարակական գիտակցության հետ աշխատանքների միջոցով:

Ընտրակեղծիքներ կատարելու հնարավորությունը տալ ընդհանրությանը, իսկ դրանց վերահսկման հնարավորությունը թողնել այդ գործընթացում իրական շահեր ունեցող կողմի նշանակում է ապահովել հանձնաժողովի մեծամասնությունը ոչ իշխանական թևից, իսկ ընտրությունների վերահսկման մեխանիզմները խստացնել բոլոր առումներով՝ թողնելով այն պետությանը:

Մինչև 2005-ի ընտրական օրենսգրքի փոփոխությունները կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմվում էր ԱԺ-ի յուրաքանչյուր կուսակցությունից ներկայացված մեկական անդամից և ՀՀ նախագահի կողմից առաջադրվող երեք անդամներից: Եթե հաշվի առնենք, որ ԱԺ-ում իշխանությունները ունեն մեծամասնություն, այն է վեց կուսակցությունից չորսը համարվում են իշխանամետ, ապա հանձնաժողովը ստացվում է բաղկացած յոթ իշխանամետ և երկու ընդիմադիր թեկնածուից⁶⁹: Նոր ընտրական օրենսգրքի համաձայն նախագահը նշանակում է մեկ անդամին, մեկին՝ ԱԺ-առաջին նստաշրջանի ժամանակ գոյություն ունեցող մեկ պատգամավորական խումբ, մյուսին՝ վճռաբեկ դատարանը, իսկ մյուսներին ԱԺ կուսակցությունները: Արդյունքում դարձյալ իշխանությունը ստանում է մեծամասնություն հանձնաժողովում և հետևաբար ընտրակեղծիքներ իրականացնելու հնարավորություն⁷⁰: Ընտրատարածքային և տեղամասային հանձնաժողովները ըստ էության նույնպես կազմվում են նմանատիպ սկզբունքով:

Ֆունկցիաների կատարման և վերահսկման տարաբաժանման սկզբունքն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ ընդհանրությունը ունենա մեծամասնություն հանձնաժողովում: Սակայն պրակտիկայում այս պայմանի իրականացումը ունի լուրջ դժվարություններ կապված այն բանի հետ, թե ում է պետք համարել ընդհանրություն և կոնկրետ ինչպես ապահովել դրա մեծամասնությունը հանձնաժողովում: Լուծման մի վարկածը արտախորհրդարանական ուժերին ընդհանրության դերի հանձնումն է և համապատասխանաբար հանձնաժողովում դրանց մեծամասնության և իշխող դերի ապահովումը: Սակայն մի կողմից հայտնի չեն, թե ինչ սկզբունքով և հատկապես որ ուժերին է պետք ընդգրկել, արդյոք դրանք կլինեն իրոք ընդհանրություն և չեզոք և արդյոք

⁶⁹ 1999-ի փետրվարի 5-ին ընտրված ընտրական օրենսգրք , Հոդված 35.1

⁷⁰ Առ 01.10.2005թ. բոլոր լրացումներով և փոփոխություններով ընտրական օրենսգրք , Հոդված 35.1

դրանք կունենան բավարար ռեսուրսներ հանձնաժողովներում ներկայանալու համար: Խնդիրը ամեն դեպքում ունի ենթադրվող լուծումներ, որոնք սակայն պահանջում են լրացուցիչ աշխատանքներ:

Սակայն որպես վերոնշյալ մոտեցման այլընտրանք, որը ավելի իրագործելի և տեսանելի է, հանձնաժողովի նախագահական տեղերի բաշխումն է ըստ ներկայացված ուժերի համամասնությունների: 2005-ի դրությամբ չկար ընտրատարածքային հանձնաժողով, որի նախագահը լիներ ընդհիմադիր: Երևույթը բացատրվում է ընտրման կարգով. ԿԸՀ-ն քվեարկությամբ որոշում է բոլոր հանձնաժողովների անդամների և նախագահների նշանակման կարգը: Իսկ քանի որ ԿԸՀ-ում մեծամասնությունը իշխանամետ են, նրանք միանշանակորեն քվեարկում են իշխանության առաջադրած կարգի օգտին, որը 2005-ի փոփոխություններից հետո հետևյալն է, որ յուրաքանչյուր ստորադաս հանձնաժողովի անդամ նշանակվում է վերադաս հանձնաժողովի կողմից՝ վերջինիս մեկ անդամի դիմաց, ստորադասի մեկ անդամ սկզբունքով: Այսպիսով ապահովվում է ԿԸՀ-ում մեծամասնություն ունեցող կողմի ներկայացրած թեկնածուների միանշանակ հաղթանակ բոլոր հանձնաժողովների նախագահության պաշտոններում՝ այդ թվում և տեղամասային⁷¹:

Կարևոր է գիտակցել, որ եթե չի ապահովվում **Ֆունկցիաների կատարման և վերահսկման տարաբաժանման սկզբունքը** անհրաժեշտ է անպայման ապահովել գոնե **խորհրդարանական ուժերի ներկայացուցչականության սկզբունքը** խորհրդարանական քաղաքական ուժերից: Իսկ ավելի լավ լուծման դեպքում ոչ միայն խորհրդարանական, այլև անցողիկության շեմին մոտ տոկոսով քվե ստացած քաղաքական ուժերի ներկայացուցչականությունը պետք է ապահովվի հանձնաժողովներում՝ **ընդհանուր ներկայացուցչականության սկզբունքը**: Սա նշանակում է, որ ստորադաս հանձնաժողովներում պետք է ոչ միայն անդամները համամասնորեն ներկայացված լինեն այլև նախագահները:

11.1.3 Մեծամասնական տեղերի նվազեցմամբ ապաքաղաքականների թվի նվազեցում

Նին ընտրական օրենսգրքի համաձայն մեկ մեծամասնական ընտրատարածքի ընտրողների թիվը 40 էր: Նոր օրենսգրքով այդ տեղերը նվազեցվել են և ընտրողների քանակը շատացել է մինչև 56 հազար: Մեծամասնականի տեղերի քչացումը ենթադրաբար կբերի կաշառքով ընտրարշավ վարող թեկնածուների ընտրվելու ավելի մեծ ծախսեր, ավելի մեծ մրցակցության հետևանքով ծախսերի ավելի մեծացում, ապաքաղաքական թեկնածուների անցնելու ավելի քիչ հնարավորություն և թեկնածուների՝ կաշառքով անցնելու ավելի քիչ հակվածություն:

Այս քայլը կնպաստի պրոֆեսիոնալ ԱԺ ստեղծելու գործընթացին: Ներկայիս ԱԺ-ն համարվում է ոչ արդյունավետ նրանում ներառված մարդկանց մասնագիտական կարողությունների, քաղաքական գիտելիքների, գործունեության մոտիվացիայի և կոմպետենտության առումով: Միևնույն ժամանակ մեծամասնական տեղերի առկայությունը ՀՀ ԱԺ-ում ընդհանրապես քիչ հիմնավորված է: Վերջինիս պատճառներից մեկը ընտրված պատգամավորների ներակայացուցչականության անհամաչափությունն է: Մյուս պատճառը տարբեր սկզբունքներով ընտրված պատգամավորների՝ մեկ պալատում աշխատելու անտրամաբանականությունն է:

Խնդրի լուծման մի տարբերակ է մեծամասնական տեղերի ընդհանրապես վերացումը: Հասարակությունում հեղինակություն չվայելող գործարարները այս դեպքում եթե փորձեն առաջադրվել կուսակցական ցուցակներով չեն ունենա առանձնակի հաջողություններ: Սա պայմանավորված է նրանով, որ կուսակցությունները չեն ցանկանա իրենց ցուցակում ունենալ մարդիկ, որոնք իրենց ընդհանում մասայականության վրա բացասական

⁷¹ Տես ԿԸՀ որոշումներ 2005, Տեղամասային և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կանոնակարգեր, էջ 106 և էջ 113:

ազդեցություն կունենան և քչերին կհաջողվի վճարել այնքան գումար կամ այլ եղանակով փոխհատուցել կուսակցություններին, որպեսզի վերջիններիս ձեռնառու լինի նրանց իրենց ցուցակներում ընդգրկելը: Արդյունքում նրանք կհակվեն ոչ թե անձամբ ընտրվել պատգամավոր, այլ կունենան իրենց շահերը ներկայացնող պատգամավորներ, որոնք կունենան քաղաքական կոմպետենտություն նաև այլ հարցերի շուրջ:

11.1.4 Ընտրական հանձնաժողովների պրոֆեսիոնալ մասնագիտական գործունեության վրա հենվող ինստիտուտի ստեղծում

Ընտրական հանձնաժողովների անդամների գործունեությունը պահանջում է մասնագիտական կարողություններ, պրոֆեսիոնալիզմ, քաղաքական չեզոքություն գործունեության ընթացքում, հնարավորինս անխոցելիություն ճշումների առումով և գործունեության համար պատասխանատվության բարձր զգացում: Համաձայն հետազոտության ինֆորմացիայի՝ ընտրական հանձնաժողովների կազմավորումը քաղաքական ուժերի ներկայացուցիչների միջոցով չի ապահովում վերոնշյալ էական հատկանիշները: Այդ հանձնաժողովների նշանակովի, ընտրովի և պրոֆեսիոնալիզմի չափանիշի անտեսման մոտեցումները հանգեցնում են վերոնշյալ որակների կորստի:

Շտկելու համար հանձնաժողովների կարգավորման և գործունեության առկա սկզբունքներով պայմանավորված թերությունները՝ նպատակահարմար ենք գտնում պրոֆեսիոնալ գործունեության վրա հենվող ինստիտուտի ստեղծումը ՀՀ-ում: Այս ինստիտուտը ունի կազմակերպման, ձևավորման, գործառնության, կառուցվածքի նոր մոտեցումներ և ապահովում է հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների դեմ պայքարի արդյունավետ էֆեկտներ: Շահագրգռված ուժերի հետ խորհրդակցություններից, կենտրոնացումից, աջակցության և միջոցների ստացումից հետո առաջարկությունը կարող է զարգացվել մինչև օրենսդրական նախաձեռնության մակարդակ և ներկայացվել ՀՀ Ազգային ժողով:

Ինստիտուտը ձևավորվում է հետևյալ սկզբունքներով՝

1. Հանձնաժողովները կամ դրանց ղեկավար մարմինները, հիմնական անդամները, «կորիզը» ձևավորվում են ոչ թե նշանակմամբ, քաղաքական ուժերի առաջարկությամբ, ընտրությամբ այլ պրոֆեսիոնալ համապատասխանությամբ սկզբունքով:
2. Անցկացվում են հատուկ դասընթացներ, որոնցում դասավանդվում են հանձնաժողովի գործունեության համար անհրաժեշտ խորը մասնագիտացված գիտելիքներ, որոնք ներառում են ընտրական համակարգերի, իրավունքի, սոցիոլոգիայի, հանրային կառավարման անհրաժեշտ գիտելիքներ:
3. Մրցույթը կազմակերպվում և քննությունն իրականացվում է ակադեմիական հանձնաժողովի միջոցով:
4. Բացառվում է քաղաքական պատկանելությունը և օբյեկտիվ աշխատանքային գործունեությանը խոչընդոտող այլ գործոններ:
5. Ընտրության նախնական մոտավոր չափանիշներն են՝
 - 5.1 Գիտելիքների տեստավորման արդյունքները:
 - 5.2 Կրթության բազան, համապատասխանությունը և որակը:
 - 5.3 Աշխատանքային փորձի գնահատականը ընտրական համակարգում ըստ ֆունկցիաների, տարիների և արդյունքների:

Ինստիտուտի ընձեռած հիմնական առավելությունները հետևյալն են՝

1. Պրոֆեսիոնալիզմի սկզբունքներով ընտրությունը էականորեն մեծացնում է ընտրության օբյեկտիվությունը:
2. Հանձնաժողովի գործունեությունը դառնում է մասնագիտական գործունեություն:

3. Ազատում է հանձնաժողովին «կուսակցական պարտքի» կատարման պարտականությունից:
4. Մեծացնում է պատասխանատվության զգացումը տեղափոխելով այն պաշտոնական դիրքի չարաշահման և մասնագիտական թերացման ոլորտ և ստեղծում պարտավորվածություն և շահագրգռվածություն մասնագիտական պարտականությունների լավ կատարման համար: Մասնավորապես դրան է նպաստում հիմնական աշխատանքը հետագայում չկորցնելու մտավայրությունը:
5. Հանձնաժողովը հենվում է հասարակությունում ընդունելություն գտած «կատարում է իր մասնագիտական պարտականությունը» արդարացման վրա, որով խոսափում է հասարակական կամ ռեֆերենտ խմբերի սպասելիքներով կողմնորոշվելուց և փորձում լինել անաչառ:
6. Մեծացնում է պորֆեսիոնալիզմը, աշխատանքի որակը և ծավալման ուղղությունները և նվազեցնում պորֆեսիոնալիզմի և գիտելիքի պակասի պատճառով արվող թերացումները:
7. Տալիս է ընտրական հանձնաժողովին այլ ֆունկցիաներ՝ ավելի ամբողջական դարձնելով դրա գործունեությունը:
8. Ապահովում է ընտրությունները ՏԻՄ-ից, նվազեցնում դրանց կողմնակի ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա՝ դարձնում դրանք ավելի դեմոկրատական:

Ընտրական հանձնաժողովների պորֆեսիոնալ ինստիտուտն իրականացնում է հետևյալ ֆունկցիաները՝

1. Բոլոր ներկայիս իրականացվող ֆունկցիաները, որոնք դեռևս տեղին կլինեն, կամ կավելանան նոր համակարգի գործառնության համար:
2. Հետևում, հսկում և գրանցում է ընտրությունների և ընտրասուբյեկտների գործունեության օրինականությունը:
3. Վարում է ընտրողների ցուցակները:
4. Կատարում է ընտրովի իշխանությունների և ընտրողների փոխհարաբերությունների և գործունեության մոնիտորինգ:
5. Կազմակերպում և աջակցում է ընտրողներին իշխանությունների հետ հանդիպումների, նրանց գործունեության մասին տեղեկատվության և նրանց գործունեության վերահսկման համար:
6. Ընթացք է տալիս ետկանչի մեխանիզմի աշխատեցման կամ պայմանագրային ընտրության դրույթների իրականացմանն ուղղված գործընթացներին:

11.1.5 Պայքարը այլընտրանքային երեսփոխանության դեմ

Դեմոկրատականության կարևորագույն խոչընդոտներից է այլընտրանքային երեսփոխանությունը: Այլընտրանքային երեսփոխանության խնդիրը հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների շարքում քննարկելի է ոչ միայն այն պատճառով, որ խոչընդոտում է դեմոկրատիային, այլև այն պատճառով, որ հնարավոր է դառնում հենց ընտրական ինստիտուտի թերության կամ տվյալ հասարակության սոցիոմշակութային փաստերի հետ անհամապատասխանության հետևանքով: Այլընտրանքային երեսփոխանությունը հնարավոր է դառնում ընտրողների կողմից ընտրվածների գործունեության լիարժեք վերահսկողության բացակայության պատճառով: Այս երևույթը կարելի է բացատրել այն դեպքում, եթե առկա է ընտրվածների գործունեության վերահսկողություն: Այդ վերահսկողությունը ենթադրում է հետևյալ պայմանները՝

1. Ընտրողները ստանում են իրական ինֆորմացիա ընտրվածների գործունեության մասին և դրանով ձևավորում իրենց դիրքորոշումը նրանց գործունեությունը գնահատելիս:

2. Ընտրվածների համար ընտրողների կողմից իրենց գործունեության գնահատականը ունի մշտական և էական այնպիսի կարևորություն և նշանակություն, որ նրանք իրենց գործունեությամբ շահագրգռված են նախ և առաջ գոհացնել ընտրողներին:

Ներկայիս ընտրական համակարգում այդ վերահսկողության առաջին բաղադրիչը ենթադրվում է իրականացնել հասարակական կարծիքի ձևավորման ինստիտուտի շնորհիվ: Սակայն ինչպես արդեն քննարկվել է այդ ինստիտուտը ունի լուրջ թերգործառնություն և չի ապահովում իրականությանը ընդունելի չափով համապատասխանող կարծիք և համապատասխան հիմք չի հանդիսանում դիրքորոշումների և գնահատականների ձևավորման համար:

Երկրորդ բաղադրիչը օրենքով նախատեսվում է իրականացնել ընտրությունից ընտրություն պատգամավորին վերընտրելու կամ չընտրելու միջոցով: Սակայն այս մեխանիզմը նույնպես չի գործում ինչը պայմանավորված է հետևյալ գործոններով՝

1. Ընտրվածների գործունեության ուղղվածությունը, որակը և ընտրողների շահերին համապատասխանությունը ունեն փուլային տատանումների բնույթ: Դրանք դառնում են ավելի ընդունելի և դրական ընտրությունների մոտ ժամանակահատվածում: Իսկ հասարակության հիշողությունը կարճ է: Այն ընտրվածների վերջին ժամանակների համեմատաբար դրական գործունեության ազդեցության տակ հեշտությամբ է համոզվում կրկին վերընտրելու պատգամավորին:
2. Ընտրողների մոտ ընտրվածների մասին առաջացող տպավորությունները զգալի օբյեկտիվություն և նրանց վրա իրական ազդեցության գործոն կարող են դառնալ ընտրվածների գործունեության ընթացքի բացասական դրսևորումների ժամանակ: Նրանց բացասական գործունեությունը կարող կանխվել ընտրողների՝ ցանկացած ժամանակ ընտրվողի վրա ազդելու հնարավորության առկայության դեպքում, ինչը ընտրողը չունի, այլ ստանում է միայն ընտրությունից ընտրություն:

Ընտրողների ունեցած վերահսկողության պակասը ներկայիս ընտանիստիտուտի պայմաններում՝ առավել արդիական է դարձնում ընտրվածների անընդհատ վերահսկողության մեխանիզմների ստեղծման նախաձեռնությունը դեմոկրատական ընտրահինստիտուտի կայացման առումով: Այս նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է լուծել կարծիքի ձևավորման ինստիտուտի թերգործառնության խնդիրը և դրա հետ զուգահեռ աշխատեցնել ընտրվածների գործունեության վերահսկողության մեխանիզմներ: Վերջինս հնարավոր է իրականացնել երեք հիմնական եղանակներով առանձին առանձին կամ միաժամանակ: Դրանք են՝

1. Ետկանչի քվեարկության մեխանիզմը:
2. Պայմանագրային ընտրակարգը:
3. Ավտոմատ ետկանչի մեխանիզմը:

Առաջինի էություն կայանում է հետևյալում: Ընտրողները ընտրվածների գործունեության, դրա՝ նրանց տված խստումներին, նախընտրական ծրագրերին, ընտրողների պատկերացումներին համապատասխանության մասին կարծիք են ձևավորում արդյունավետ կարծիքի ձևավորման ինստիտուտի միջոցով: Այդ կարծիքը հիմք է հանդիսանում նրանց դիրքորոշումների ձևավորման համար դեպի ընտրվածը: Դժգոհության դեպքում ընտրողները ունեն ետկանչի օպերատիվ քվեարկություն կամ ստորագրահավաք և նոր պաշտոնյայի ընտրություն կազմակերպելու իրավունք: Այստեղ **մեծագույն փոքրամասնության իշխանության էֆեկտը** կարող է գործել հակառակ ուղղությամբ: Այսինքն ընտրողների ոչ մեծ քանակը կարող է ետ կանչել պաշտոնյային, ինչը կնպաստի ընտրվածի զգոն և պարտաճանաչ աշխատանքին:

Պայմանագրային ընտրակարգի ժամանակ ընտրվողը իր քվեաթերթիկով իրավաբանական ուժ ունեցող պայմանագիր է կնքում ընտրողի հետ: Համաձայն դրա նա պարտավորվում է որոշակի ծրագիր իրականացնել ընտրվելուց հետո և որոշակի կոնկրետ պատասխանատվություն կրել ծրագրի այս կամ այն մասի չկատարման համար:

Պատասխանատվությունը կարող է լինել որոշակի փոխհատուցման, պաշտոնանկման կամ այլ սանկցիայի եղանակով:

Ինչպես կարելի է նկատել այս եղանակները ենթադրում են ետկանչի քվեարկության կազմակերպում, որը չնայած հատուկ միջոցառումների, այլնուամենայնիվ հոգեբանական և մի շարք այլ խոչընդոտներ կարող է առաջացնել ետկանչը կազմակերպողների և քվեարկողների մոտ: Այդ խոչընդոտները արգելակելով ավելի քիչ արդյունավետ կարող են դարձնել ետկանչի մեխանիզմը՝ հատկապես եթե սովյալ ընտրվածը ունի նման խոչընդոտներ ստեղծելու նախադրյալներ՝ ազդեցություն, հեղինակություն, տեղամասի առանձնահատկությունները և սոցիոմշակութային առանձնահատկությունները շահարկելու հնարավորություն: Այդ պատճառով ավելորդ չէ նաև երրորդ տարբերակի քննարկումը: Այս տարբերակը ենթադրում է օրենքի ուժ ունեցող ավտոմատ ետկանչ գործունեության համապատասխան թերությունների հիմքով: Սա նշանակում է, որ ընտրվածը մեխանիկորեն գրկվում է պաշտոնից առանց քվեարկության, եթե չի բավարարում ընտրահինաստիտուտի կողմից վերագրված պահանջները իր գործունեությունում:

11.2 Ինստիտուցիոնալ վերակառուցման միկրոսոցիոլոգիական մոտեցում

Ինչպես ցույց է տալիս հետազոտության արդյունքների վերլուծությունը, իրավական նորմերը ոչ միշտ են ապահովում ընտրասուբյեկտների նորմալ վարք: Վերջինս հաճախ որպես ավելի ազդեցիկ կարգավորման եղանակներ ունի սոցիալական նորմերը: Դեռ ավելին, իրավական նորմերի գործառնությունը, որպես վարքի կարգավորիչ, հաճախ արգելակվում է սոցիալական նորմերով, իսկ երբեմն նույնիսկ դրանց գործառնության ուղղությունը, աստիճանը և ինտենսիվությունը կարգավորվում է սոցիալական նորմերի ազդեցության տակ: Արդյունքում սոցիալական նորմերի ազդեցությունը իրավականի վրա հատորդում է դրանց վարքի կարգավորման բոլորովին այլ նպատակ և իմաստ:

Ավելի ճշգրիտ և պրակտիկայում կիրառելի մեխանիզմների ապահովման համար անհրաժեշտ է կիրառել միկրոսոցիոլոգիական, դերաստատուսային մոտեցում: Սոցիալական ինստիտուտը ենթադրում է դերերի ամբողջություն, որոնց իրականացումը ապահովում է որոշակի պահանջմունքների բավարարում: Սոցիալական ինստիտուտը պետք է ունենա որոշակի մեխանիզմներ, որոնց միջոցով ապահովվում է դերերի հստակ իրականացումը: Ընտրահինաստիտուտը նույնպես ենթադրում է ստատուսներ և դերեր: Վերջիններիս իրականացման թերություններն էլ հենց առաջացնում են ընտրահինաստիտուտի թերգործառնությունը ընդհանրապես և հակադեմոկրատական գործընթացներ, մասնավորապես: Նորմալ գործառնության համար անհրաժեշտ է, որ դեմոկրատական ընտրահինաստիտուտի համար պարտադիր դերերը իրականացվեն պատշաճորեն: Ինչի համար անհրաժեշտ են որոշակի մեխանիզմներ, որոնք կապահովեն ընտրահինաստիտուտի դերերի իրականացումը: Վերացնելու համար ընտրահինաստիտուտի թերությունները և կանխելու հակադեմոկրատական գործընթացների, մասնավորապես տեխնոլոգիաների կիրառումը անհրաժեշտ է՝

1. Սահմանել այն դերերի և ստատուսների հիերարխիան և դրանց հատուկ վարքը յուրաքանչյուր դերի համար մանրամասնորեն:
2. Սահմանել այն մեխանիզմները, որոնք ապահովում են այդ դերերի անշեղ իրականացումը:
3. Նկարագրել, թե իրականում ինչպիսին են այդ դերերը դրսևորվում հայաստանյան պրակտիկայում:
4. Բացահայտել, թե ինչու նշված մեխանիզմները չեն ապահովում նորմալ կատարում և ինչն է տարբեր գործող և ենթադրվող մեխանիզմներում, որոնք չեն կարողանում ապահովել դերերին նորմալ իրականացում:
5. Ծոկել դերերի իրականացումն ապահովող մեխանիզմները՝ սանկցիաների, նորմերի և արժեքների ներմուծման միջոցով:

Վերոնշյալի իրականացման ամբողջական էֆեկտի համար անհրաժեշտ է կատարել ծավալուն աշխատանք ընտրահինստիտուտի ղերերի կատարումն ապահովող մեխանիզմների՝ սանկցիաների, նորմերի և արժեքների ներմուծման ուղղությամբ: Այդ աշխատանքները պահանջում են նախնական փորձարկում ղերերի կատարումը խոչընդոտող որևէ նեղ ասպեկտի շտկման ուղղությամբ: Որպես այդպիսին սույն աշխատանքում վերցված է մենթալիտետի անցանկալի տարրերը:

Արժեքները, նորմերը և դրանցում ենթադրվող դիրքորոշումները ՀՀ իրականությունում մասամբ ամրապնդված են ընտրասուբյեկտի մենթալիտետում, որոնցում առկա են այնպիսի տարրեր որոնք խթանում են հակադեմոկրատական տեխնոլոգիաների արդյունավետությունը: Ընտրասուբյեկտների ղերերի նորմալ կատարմանը խոչընդոտող մենթալիտետային տարրերի վերացմանն ուղղված համակարգված քարոզչության նյութերի մշակման փոքր փորձ է արված այս աշխատանքում:

Այդ նպատակով վերլուծության տեսուից առանձնացնել կամ ենթատեսուից վերհանվել և ձևակերպվել են մենթալիտետի, մտածելակերպի, ստերեոտիպերի, դիրքորոշումների և հակվածությունների այն տարրերը, որոնք թույլ են տալիս հակադեմոկրատական տեխնոլոգիաների կիրառումը կամ նպաստում, ծառայում են դրանց արդյունավետությանը և տարածմանը: Այնուհետև, հենվելով առանձնացված մտածելակերպի միավորների վրա, մշակել յուրաքանչյուր միավորի փոփոխման համար նախատեսված նյութեր, խորհրդատվական կամ տեղեկատվական ինֆորմացիա, որը պիտի հրապարակվի բոլորի տեսքով: Բոլորի նյութը պետք է հենվի հետևյալ նախնական դիրքորոշիչների վրա:

1. Փող վերցնելու իմաստի և վտանգավորության ներկայացում
2. Կաշառվելու դեմ բացասական, անհարգալից վերաբերմունքի ձևավորումը հասարակությունում
3. Մարդկանց մոտ կաշառող թեկնածուների հանդեպ պարտավորվածության զգացման վերացում
4. Ձայնը վաճառելը նշանակում է ապագայի վաճառք չնչին գումարներով
5. Երբեք ուշ չէ ետ կանգնել մեղսակցությունից
6. Երևույթների գնահատականն ըստ բարոյական արժեքների
7. Մի բարեգործությունը չի արդարացնում նախկին բազմաթիվ և մեծածավալ չարագործությունները
8. Պատասխանատվությունը նոր սերունդների առաջ՝ առարկայացված կոնկրետ օրինակով
9. Արժեքների հակակշռում
10. Ոգեշնչում
11. Համերկրացիության վերաարժնություն
12. Ելանքի և ապագայի պայմանավորվածությունը ազատ ընտրությամբ
13. Պահանջների կատարումը ավելի հաճախ առաջացնում է նոր պահանջներ
14. Ընտրակեղծիքին մասնակցությունը դժգոհելու իրավունքի կորուստ է
15. Պարտականության և բարեգործության տարբերակում
16. Խոստումը կաշառատուին հակակշիռ է խոստմանը ավելի կարևոր հարազատների
17. Պարտավորեցման դրսևորումների ստերեոտիպերից ձերբազատում
18. Անտարբերության նշանակությունը ապագայի և կարևորի համար
19. Սվելի լավ է բոլորին դեմ, քան անտարբեր
20. Կեղծիքների հավասարեցումը ավելի մեծ համարվող հանցանքների հետ
21. Յուրայնացման արժեքի ցածրությունը
22. Պաշտոնյաների և լրագրողների պարտավորեցումը իրենց ունեցած դերի նկատմամբ
23. Ընտրասուբյեկտի հանցանքի մեծությունը
24. Հանցանքի հակասությունը գերարժեքներին

- 25. Անխուսափելի պատժի գիտակցումը
- 26. Համոզմունքի ձևավորում, որ յուրաքանչյուր ձայնը ազդեցիկ է և որոշիչ, թերահավատություն «դաբո»-ի նկատմամբ
- 27. Քարոզչություն ըստ ընտրասուբյեկտների՝ համապատասխան դիրքորոշումների ձևավորման և նորմալ վարքային կոմպոնենտի նախադրյալների ստեղծման համար

Հետագայում նախատեսվող կարծիքի մշակման մեթոդները կարող են լինել ԶԼՄ-ներով հաղորդվող քարոզչական ինֆորմացիա, ցանցային տեխնոլոգիաներով և ասնկոսներով տարածվող քարոզչական ինֆորմացիա, ակցիաների միջոցով տարածվող քարոզչական ինֆորմացիա և այլն: Սակայն այս փուլում շեշտադրվել է այն նյութերի պատրաստումը, որոնք զետեղվելու են բյուրոյում և հրատարակվելու մեծ քանակով: Նյութերը ներառում են փաստարկներ, խորհուրդներ, հանրամատչելի քննադատություններ, լոզունգներ, ինչպես նաև առակներ, մանրապատումներ, անեկդոտներ և այլն: Նշված ինֆորմացիոն դիրքորոշիչները ունեն նպատակային ուղղվածություն ընտրահինստիտուտի տարբեր սուբյեկտների վրա:

Դիրքորոշումների ձևավորման ամբողջական էֆեկտի և մեծ արդյունավետության ստացման համար նպատակահարմար է հետագայում դրանց հիման վրա մշակել սոցիալական տեսահոլովակներ և ցուցադրել, մշակել շշուկների տեխնոլոգիաներով դրանց տարածման ծրագրեր և իրականացնել դրանք ինչպես նաև այլ եղանակներով դրանք տարածել: Նշված միջոցառումների պատշաճ ինտենսիվությունը կապահովի նկատելի արդյունք և մեծ քայլ կլինի հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ պայքարում⁷²:

11.3 Իրազեկության և նախապատրաստական աշխատանքներ ընտրասուբյեկտների հետ

Կա փորձագիտական կարծիք, որ իրազեկման և դասընթացների անհրաժեշտությունը առանձնապես չկա, քանի որ հասարակությունը արդեն բազմիցս մասնակցել է ընտրություններին և գիտի, թե ինչպես քվեարկել⁷³: Սակայն պետք է նշել, որ ընտրողները իրենց վարքը օրինակ ընտրատեղամասում ցուցաբերել են նախկինում ունեցած պրակտիկայի համաձայն՝ այդպես էլ չհասկանալով, թե ինչն էր ճիշտ, օրինական և ինչը՝ ոչ, ինչը նրան թույլատրվեց իրավացիորեն, ինչը՝ բացառությամբ և այլն: Այլ կերպ ասած ընտրասուբյեկտի մոտ ձևավորվել են լիարժեք չհասկացված և չյուրացված, անորոշ ճշգրտությամբ ընտրական նորմերի վրա հենվող վարքի մոդելներ: Չափազանց արժեքավոր է վերջապես հասկանալ, թե ինչը ինչու է արվում: Մյուս կողմից պետք է ասել, որ իրազեկումը վերաբերվում է ոչ միայն վարքի այն մոդելներին, որոնք ընտրասուբյեկտները ցուցաբերում են, սակայն վստահ չեն, այլև այն մոդելներին, որոնք նրանք չեն ցուցաբերում, սակայն դեմոկրատականության տեսանկյունից ցանկալի էր, որ ցուցաբերեին: Միևնույն ժամանակ պետք չէ նեղացնել պրոբլեմը, քանի որ իրազեկման անհրաժեշտություն կա բոլոր ընտրասուբյեկտների համար՝ ինչը գիտակցել են նաև ԿԸՀ-ում կազմակերպվող դասընթացներ:

Իրազեկության և նախապատրաստական աշխատանքները ընտրասուբյեկտների հետ պետք է տարվեն մի քանի ուղղություններով: Նախ ընտրասուբյեկտները պետք է ունենան համապատասխան **դիրքորոշումներ** ընտրական գործընթացում իրենց մասնակցության ընդունելի ձևերի մասին, որոնք կձևավորվեն նրանց հետ տարվող քարոզչական աշխատանքների միջոցով: Ունենալով համապատասխան դիրքորոշումներ՝ նրանք պետք

⁷² Տես 12-րդ մաս:

⁷³ **Հարցվող*** Այսօր դժվար է ենթադրել, որ 14 տարվա ընտրական պրակտիկա ունեցող երկրում ընտրողների համար կան բուն ընտրություն կատարելու պրոցեսի անտեղյակություն: Հիմնական ընտրագանգվածը պարբերաբար մասնակցում է ընտրություններին և յուրաքանչյուր ընտրող արդեն իսկ գիտի ընտրատեղամասերում իր իրավունքների և պարտականությունների հաջորդականությունը: Հատկապես, որ օրենքում այդ մասով արմատական փոփոխություններ չեն եղել:

է հոգեբանորեն, տեղեկացվածության առումով և հմտությունների առումով ունակ լինեն իրենց դիրքորոշումների վարքային կոմպոնենտը դրսևորել:

Վերոնշյալը ենթադրում է ոչ միայն չմասնակցությունը հակադեմոկրատական տեխնոլոգիաների դրսևորումներին, այլև դրանց դեմ ժամանակին կիրառվող ճիշտ քայլերը և ընտրության կատարման դեմոկրատական մշակույթի յուրացումը: Մասնավորապես բոլոր ընտրասուբյեկտները պետք է իմանան առավել տարածված տեխնոլոգիաների հիմք հանդիսացող օրենքի դրույթները և դրանց խախտման դրսևորումները, որպեսզի կարողանան տարբերակել ցանկալի և ոչ ցանկալի գործընթացներին նպաստող վարքի նմուշները⁷⁴: Անհրաժեշտ է պատրաստել դասընթացներ, որոնք կտան ընտրողներին տարբեր բնագավառների գիտելիքներ և հմտություններ սույն աշխատանքում շարադրված տեխնոլոգիաների դեմ պայքարելու կամ առնվազն դրանց մասը չդառնալու համար:

Կարևոր է նաև ընտրական հանձնաժողովի անդամների իրազեկման և հմտությունների զարգացման դասընթացների կազմակերպումը, որը համաձայն 2005-ի ընտրական օրենսգրքի, որոշել է ԿԸՀ-ն⁷⁵: Համաձայն վերջինիս որոշման այդ դասընթացները թեկնածուները անցնում են պարտադիր սկզբունքով, քանի որ որակավորում չունեցող հանձնաժողովի անդամի թեկնածուները հնարավորություն չեն ունենա ներառվելու հանձնաժողովներում⁷⁶: Դասընթացները անցկացվում են մեկ ուսումնական հաստատության միջոցով, որը որոշվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան անցկացված գնման արդյունքների հիման վրա⁷⁷: Կարևոր է նշել, որ այդ հաստատության ալտերնատիվ հաստատությունների և նմանատիպ դասընթացների պակասը հիմք կարող է տալ մոնոպոլիստական և քաղաքական չարաշահումների:

1. Դասընթացին մասնակիցների յուրայնացման, երբ հաճախողների նկատմամբ կարող են քարոզչական միջոցներ կիրառվել՝ զուգակցվելով ադմինիստրատիվ, հեղեթանական ճնշումների կիրառման, որոնք ուղղված կլինեն այդ հաճախողների դիրքորոշումների փոփոխմանը:
2. Ոչ համապատասխան քանակի անդամների ներառում ընդհանրությունից, ինչը կբերի ընդհանրության լիցենզավորված անդամների պակաս և հետևաբար դրանցում ընդհանրության անբավարար ներկայացվածություն:
3. Խտրականություն ընդդիմադիր մասնակիցների նկատմամբ դասընթացի ընթացքում, ինչը կարող է բերել հոգեբանական ընկրկողական տրամադրվածություն:
4. Ենթադրվում է, որ մեկ ուսումնական հաստատության համար դժվար կլինի իրականացնել նշված գործընթացը ռեսուրսների պակասի պատճառով և հանձնաժողովները չեն ունենա բավարար անդամներ, նրանց լիցենզավորված չլինելու պատճառով: Նկատենք, որ անհրաժեշտ է ունենալ 20 000-ից ավել լիցենզավորված հանձնաժողովի անդամ: Իսկ նման ծավալի դասընթացների անցկացումը մեկ հաստատության կողմից կասկածներ է առաջացնում⁷⁸:
5. Դասընթացների անցկացման ալտերնատիվների բավակայությունը թույլ չի տալիս մրցակցության միջոցով ստեղծել մոտիվացիա ավելի որակյալ դասընթացների համար:

⁷⁴ Այս նպատակով պատրաստված իրազեկման նյութերը շարադրված են 13-րդ մասում:

⁷⁵ Տես ՀՀ ԿԸՀ որոշումներ, 2005, ՀՀ ԿԸՀ-ի որոշումը ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար մասնագիտական դասընթացներ կազմակերպելու և որակավորումներ շնորհելու կարգը սահմանելու մասին, Էջ 99:

⁷⁶ Տես նույն աղբյուրում Ընտրատարածքային և տեղամասային ընտրական հանձնաժողովների կանոնակարգեր, Էջ 106 և էջ 113:

⁷⁷ Տես նույն աղբյուրում, դասընթացների կազմակերպման կարգը, Էջ 100:

⁷⁸ Համաձայն փորձագետի 2006-ի սկզբի տվյալներով անցկացվում է 16 ժամյա դասընթաց յուրաքանչյուր թեկնածուի համար: Որը կազմակերպվում է երկու օրում և մասնակիցը ստիպված է երկու օրում սպառել այդ 16 ժամյա գիտելիքի ընկալումը: Մասնակցում են երեք դասախոս:

6. Մասնակիցներին չունեն հնարավորություն ընտրելու իրենց նախընտրած հաստատությունը և դասընթացի ծրագիրը: Մինչդեռ այլընտրանքների առկայությունը հնարավորություն կտար մասնակցին ընտրելու այն ծրագիրը, որի գիտելիքների պակասը նա ավելի շատ զգում է, այն մասնագետներին և հաստատությունը, որոնց հետ նա ավելի արդյունավետ կաշխատեր:

Խուսափելու համար վերոնշյալ բացասական հետևանքներից անհրաժեշտ է ավտոնոմատիվ դասընթացների հնարավորություն տալ: Այդպիսի դասընթացներ կարող են կազմակերպվել ինչպես այլ պետական հաստատությունների այնպես էլ միջազգային և տեղական կազմակերպությունների կողմից համապատասխան որակավորում ապահովելու պայմանով:

Իրազեկման աշխատանքների մյուս ուղղությունը ընտրասուբյեկտների, հատկապես, վստահված անձանց հմտությունների զարգացման դասընթացներն են, որոնք թույլ կտան նրանց ավելի արդյունավետ պաշտպանել իրենց թեմկնածուների շահերը: Այս ուղղությունը ենթադրում է ինչպես իրավական, այնպես էլ հոգեբանական, կազմակերպչական, քարոզչական, քաղաքագիտական պրակտիկ գիտելիքներ, որոնք օգտակար կարող են լինել նրանց գործունեության համար: Առաջին հայացքից շոայություն թվացող նման գիտելիքները կնպաստեն ընդհանուր իրազեկության բարձրացմանը՝ հետևաբար կնվազեցնեն չիմացության պատճառով արվող չարաշահումները: Այս գործունեությունը կարող է ֆինանսավորվել ինչպես դեմոկրատական ընտրաինստիտուտների կայացման գործում շահագրգռված կազմակերպությունների կողմից, այնպես էլ պրոֆեսիոնալ շահերը պաշտպանող վստահված անձինք ունենալ ցանկացող քաղաքական ուժերը կամ թեմկնածուները: Ըստ այդմ, այսպիսի գործունեությունը ոչ միայն հասարակական այլև շահութաբեր գործունեություն կարող է լինել:

11.4 Աշխատանք քաղաքական ուժերի հետ. քաղաքական լուծումներ

Քաղաքական լուծումների էությունը հենվում է առկա քաղաքական ուժերի հարաբերակցության առանձնահատկությունների կիրառման վրա: Դրանք ենթադրում են քաղաքական ուժերի շահերի և հիմնական գործունեության ծառայեցում հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ պայքարին: Հիմնական քաղաքական լուծումներն են՝

1. Քաղաքական ուժերի պայքարը հակառակորդներին առավելություն տվող տեխնոլոգիաների դեմ:
2. Քաղաքական ուժերի՝ տեխնոլոգիաների չկիրառման մեջ շահագրգիռ մասի համախմբված պայքար՝ ներկուսակցական դեմոկրատիա և պայքար ապաքաղաքական ուժերի դեմ:
3. Տեխնոլոգիաների դեմ պայքարի ռեֆորմիստական քայլերը, որպես քաղաքական ուժի հեղինակության բարձրացման և ընտրարշավի միջոց:
4. Արտաքին ճնշում համապատասխան քաղաքական կամքի առաջացման համար, ինչը ցանկալի չի համարվում հանրապետության գլոբալ շահերի վնասման նկատառումով:

Հետազոտության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ առանց իշխանությունների աջակցության հնարավոր չէ էֆեկտիվ պայքարը: Իսկ իշխանությունները իրենց հերթին չունեն շահագրգռվածություն իրականացնելու այդ պայքարը, քանի որ տեխնոլոգիաների գործառնությունը ապահովում է իշխանությունների վերարտադրությանը: Ըստ այդմ, կարևոր խնդիր է, թե ինչպես կարելի է իշխանությունների մոտ քաղաքական կամք առաջացնել՝ միջոցներ ձեռնարկելու այս տեխնոլոգիաների դեմ: Վերոնշյալ մեթոդները հիմնականում ուղղված են համապատասխան քաղաքական կամքի առաջացմանը:

Եզրակացություններ

Ամփոփելով ՀՀ ընտրական պրակտիկայում կիրառվող բոլոր հակադեմոկրատական տեխնոլոգիաները դրանք կարելի է ներկայացնել մի քանի խմբերի տեսքով

1. Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման տեխնոլոգիաներ
2. Ճնշումների տեխնոլոգիաներ
3. Ընտրաձայների գնման տեխնոլոգիաներ
4. Զուգակցված տեխնոլոգիաները
5. Կոգնիտիվ տեխնոլոգիաներ
6. Ընտրական հանձնաժողովների շահադիտական կառավարման տեխնոլոգիաներ
7. Հասարակական կարծիքի զանգվածային կառավարման տեխնոլոգիաներ
8. Ընտրության արդյունքների իրացման տեխնոլոգիաներ
9. Մակրոտեխնոլոգիաներ

Բոլոր տիպի տեխնոլոգիաները կիրառվում են փոխադարձ զուգակցումներով և հաճախ ունեն փոխլրացնող բնույթ: Դեռ ավելին, շատ դեպքերում դրանք անհիմաստ են դառնում առանց մեկ-մեկու: Սակայն կան տեխնոլոգիաներ, որոնք աչքի են ընկնում իրար հետ զուգակցման հաճախականությամբ և դրա անհրաժեշտությամբ: Այդ պատճառով այն տեխնոլոգիաները, որոնք ավելի հաճախ ունեն փոխլրացնող նշանակություն խմբավորված են: Տեխնոլոգիաների բաղադրիչները հանդիսացող գործոնները, որոնք հաճախ իրենց հերթին տեխնոլոգիաներ են՝ նույնպես խմբավորված են այն տեխնոլոգիաների ներքո, որոնց հետ դրանք ունեն իրենց հիմնական կիրառումը: Տեխնոլոգիաների վերոնշյալ սկզբունքով խմբավորումները թույլ են տալիս առանձնացնել դրանց երկու հիմնական մեծ տիպեր և դրանցում ներառված և դրանցից դուրս գտնվող մի քանի այլ խմբեր:

Առաջին մեծ տիպի տեխնոլոգիաները ուղղված են էլեկտորատի վարքի կարգավորմանը: Էլեկտորատի վարքը կառավարվում է քվեատուփերում ձայների հնարավորինս ձեռնտու համամասնություններ ունենալու նպատակով: Այս տեխնոլոգիաները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառում, ճնշում և ընտրաձայների գնում: Այս տեխնոլոգիաների հետ հաճախ են զուգակցվում կոգնիտիվ տեխնոլոգիաները և կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաները: Երկրորդ տիպի տեխնոլոգիաները ամբողջությամբ իրականացվում են հանձնաժողովների գործունեության առանձնահատկությունները օգտագործելով և կենտրոնացված են հանձնաժողովների ֆունկցիաների շահարկմամբ ձայների հաշվարկի ցանկալի արդյունք ստանալուն: Այս տեխնոլոգիաների հետ նույնպես հաճախ զուգակցվում են կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաները:

Նշված երկու տիպի տեխնոլոգիաների մեջ չմտնող տեխնոլոգիաները կարելի է բաժանել մի քանի խմբերի, որոնք վերևում ներկայացված են: Այդպիսի խմբեր են կարծիքի զանգվածային ձևավորման նպատակ ունեցող տեխնոլոգիաները, կոգնիտիվ տեխնոլոգիաները, որոնք կիրառվում են համապատասխան տեխնոլոգիաներում ընտրատուքյեկտների ցանկալի մասնակցությունը ստանալու համար: Մյուս խումբն են կազմում մակրոտեխնոլոգիաները, որոնք ուղղված են ընտրությունների ցանկալի վերջնարդյունքի անխուսափելիության ապահովմանը՝ անկախ ընթացիկ ընտրական իրադարձություններից: Մյուսը՝ ընտրարդյունքների իրացման տեխնոլոգիաներ և վերջապես խառը տեխնոլոգիաներ, որոնք մյուս տեխնոլոգիաների զուգակցումների արդյունք են: Այժմ ամփոփենք նշված տեխնոլոգիաների խմբերից յուրաքանչյուրի, դրանց վրա ազդող գործոնների և դրանց դեմ պայքարի եղանակների վերլուծության արդյունքները:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառումը: Ադմինիստրատիվ ռեսուրսը ամենացանկալի և առաջնային տեխնոլոգիան է, որ դրան տիրապետող ուժերը հակված են կիրառել ավելի քան մյուս տեխնոլոգիաները, ինչը պայմանավորված է այս տեխնոլոգիայի էթանությամբ և

արդյունավետությամբ: Այն ավելի շատ կիրառելի է իշխանությունների կողմից և մասնավորապես ենթադրում է՝

1. Ղեկավար անձնակազմի շահագրգռվածություն ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման գործում և նրա կողմից անձնակազմի մյուս մասի կառավարում այդ նպատակով:
2. Հիմնարկների ռեսուրսների կիրառումը ընտրարշավային նպատակներով:
3. Հաստատությունների Ֆունկցիոնալ լիազորությունները և դրանց ընկալումները շահարկումը ընտրագործընթացի վրա ազդեցություն ունենալու նպատակով:
4. Ոչ պետական հաստատությունների ներառում գործընթացին պետական հաստատությունների կողմից ճնշումների միջոցով:

Աշխատակազմի հետ աշխատանքները իրականացվում են շտաբի կողմից դրանց կառուցվածքային ենթախմբերի՝ յուրայիններ, կախվածներ, համոզվողներ, սկզբունքայիններ և ընդդիմադիրներ: Յուրաքանչյուր ենթախումբ ունի իր դերը ադմինիստրատիվ ռեսուրսի շահագործման գործընթացում և կառավարվում է ուրույն մոտեցմամբ: Ադմինիստրատիվ ռեսուրսի շահարկումը ներառում է բարեկործության շահադիտական իմիտացիան, որ հաճախ կապված է պաշտոնական դիրքի չարաշահման հետ:

Ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման կարևորագույն բաղադրիչն է հովանավորչությունը, որը անկյունաքարային դեր է խաղում հակադեմոկրատական տեխնոլոգիաներից մեծամասնության կիրառման ժամանակ և հանդիսանում է անփոխարինելի նախապայման: Հովանավորչության սահմանման հստակեցումը թույլ է տալիս առանձնացնել տարբեր տիպի հովանավորչություններ, որոնք դրսևորվում են ՀՀ-ում: Դրանցից են թաղային հեղինակության, դատական պաշտոնյայի, իրավապահ մարմինների, օրենսդիր կամ գործադիր գերագույն իշխանության հովանավորչությունը, որոնք ունեն իրենց առանձնահատկությունները՝ բնույթի, կիրառվող լծակների և մասշտաբների առումով:

Ճնշումները ընտրասուբյեկտների վրա: Պահանջող ծախսերի տեսանկյունից մյուս նպատակահարմար տեխնոլոգիան ճնշումներն են, որոնց կիրառումը սակայն ունի նվազեցման միտում, ինչը մասամբ պայմանավորված է դրանց թողած բացասական ազդեցությամբ, որ ազդում է իշխանությունների լեգիտիմության վրա, խորացնում գոյություն ունեցող լարվածությունները, և այլ պրոբլեմներ ստեղծում տեխնոլոգիաներ կիրառողների համար: Սակայն ճնշումների կիրառման ընդհանրապես և դրանց կոպիտ դրսևորումների իրականացման անցանկալիությունը կիրառողների համար ավելի շատ իշխանությունների քաղաքական կամք ցուցաբերելու հետ է կապված, որը պետք է ըստ արժանվույն գնահատել:

Ճնշումները ներառում են ադմինիստրատիվ ճնշումը, մասնագիտական լիազորություններից բխող ճնշումը, հոգեբանական ճնշումը, որ ենթադրում է չիմացության շահարկում, անմիջական շփումները, կրիմինալը, կոմպրոմատները: Վերջիններս ունեն ունեն մեծ բազմազանություն՝ հասարակական կարծիքի, իրավական հետևանքների, կրիմինալ կողմերով, հարաբերությունների վրա ազդեցության կոմպրոմատներ: կոմպրոմատները ունեն նաև մի շարք կիրառման առանձնահատկություններ՝ իրացումը, բացումը և այլն: կոմպրոմատների կիրառման հետ է կապված նաև «սարքովի գործերի» մեթոդը: Ճնշումները ունեն յուրայնացման, կաշառման, համոզման նպատակ և ուղղված են տարբեր ընտրասուբյեկտների: Ճնշումների կիրառմանը, բացի այլ գործոններից նպաստում են նաև ստատուսի նվաճման «հայկական» եղանակը կամ ընտրությունն ըստ լոյալության, «ոչ ոք մաքուր չէ» կոգնիտիվ մոդելը, ինչպես նաև հասարակության մշակութային և քաղաքակրթական մուտագվածությունը:

Ինչպես ադմինիստրատիվ ռեսուրսի կիրառման այնպես էլ ճնշումների դեմ պայքարի հիմնական առանձնահատկությունը և դժվարությունը կայանում է այն բնում, որ դրա հաղթահարումը ենթադրում է հասարակության խոշոր հիմնախնդիրների լուծում, մասնավորապես «ազատ մարդու դեֆիցիտի» վերացման և համապատասխան քաղաքական կամքի դրսևորման:

Ընտրաձայների գնումը: Էլեկտրատի վարքի կառավարման առավել տարածված հակադեմոկրատական տեխնոլոգիան ՏՏ-ում ընտրաձայների գնումն է: Ինչպես նախորդ տեխնոլոգիաները, այս տեխնոլոգիան նույնպես պահանջում է հովանավորչություն և հենվում է մի հսկայական կազմակերպված համակարգի վրա, որը իր հերթին ենթադրում է ընտրակաշառքի բաշխման կենտրոն, ցուցակներ, բաշխման անձնակազմ, կաշառելիության շեմի գնահատում և բաշխման ռազմավարություն: Ընտրակաշառքի ռազմավարությունները ներառում են գումարի չափը, բաշխման հերթականությունն ըստ էլեկտրատի ենթախմբերի և ընտրակաշառման տեսակը: Ընտրակաշառքի տեսակներից են փողով և այլընտարնքային եղանակներով կաշառումը, նախօրոք և տեղում կաշառումը, որոնք ունեն իրենց կիրառման արդյունավետությունը և տարածվածությունը կախված բնակավայրից և ընտրագործընթացի առանձնահատկություններից:

Զուգակցված տեխնոլոգիաներ: Վերոնշյալ տեխնոլոգիաների դրսևորումներից կամ տեսակներից ոչ բոլորն են դրսևորվում մաքուր տեսքով: Դրանք հաճախ զուգակցվում են միմյանց հետ կամ հենվում են մեկը մյուսի տարրերի առկայության վրա: Այսպիսի տեխնոլոգիաներ են մեծամասնական և փոքրամասնական ընտրվողների կլիենտելիական հարաբերությունները ընտրաքաղաքների ժամանակ, որոնք ենթադրում են բազմապիսի հակադեմոկրատական փոխհամագործակցության եղանակներ, որոնք արդյունավետ են դառնում հատկապես ընտրատարածքների փոքրության և էլեկտրատի սոցիալական վիճակի հետևանքով: Վերջինս իջեցնում է բնակչության կաշառելիության շեմը և մյուս կողմից մեծացնում ընտրակաշառման տեխնոլոգիայի արդյունավետությունը: Վերջինիս է զուգակցվում նաև ընտրությունների ապաքաղաքականացումը, որի հետևանքով մեծանում է էլեկտրատի ոչ քաղաքական եղանակներով կառավարելիությունը և դուրս բերում դեմոկրատական ընտրությունների սոցիալական ինստիտուտի ընթացակարգից: Զուգակցված տեխնոլոգիաների «օլիմպոսն» է համարվում «կարուսել» տեխնոլոգիան, որը կուլմինացնում է վերոնշյալ գրեթե բոլոր տեխնոլոգիաները և իր պարզության շնորհիվ աննախադեպ արդյունքներ գրանցելու հնարավորություններ ընձեռում:

Կոզնիտիվ տեխնոլոգիաներ: Գրեթե բոլոր տեխնոլոգիաները ենթադրում են տարբեր ընտրասուբյեկտների էական մասնակցություն դրանցում: Այդ մասնակցությունը ցուցաբերելու համար յուրաքանչյուր մասնակից հաճախ կարիք ունի սուբյեկտիվ հիմնավորումների և համոզմունքի, որ տվյալ վարքը հնարավոր տարբերակներից լավագույնն է նրա արժեքների տեսանկյունից: Այդպիսի համոզմունք կամ սուբյեկտիվ հիմնավորում և համապատասխան դիրքորոշում ընտրասուբյեկտի մոտ առաջացվում է կոզնիտիվ տեխնոլոգիաների միջոցով, որոնք նպատակ ունեն մտային սխեմաների միջոցով հիմնավորել համապատասխան վարքի նպատակահարմարությունը: Այս տեխնոլոգիաները իրականացվում են մյուս տեխնոլոգիաների իրականացման ժամանակ ընտրասուբյեկտների հետ անմիջական շփումների ժամանակ, երբեմն դրան են նպաստում նաև կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաները:

Կոզնիտիվ տեխնոլոգիաներից են ընտրությունների կանխորոշվածության և ընտրողի ձայնի աննշանության համոզմունքի առաջացումը, և կաշառման էության խնդրաթուրումը, որ երբեմն կատարվում է հոգեբանական ճնշման և պսևդոտրամաբանական փաստարկների ուղեկցմամբ: Վերջինս ենթադրում է կաշառման նորմերի հերքում և դրա հիմքում ընկած արժեքների իմաստազրկում: Ընտրավարքի կարգավորման գերթե բոլոր տեխնոլոգիաների հետ զուգակցվում է պարտավորեցման տեխնոլոգիան, որը իրականացվում է տարաբնույթ եղանակներով: Դրան են զուգակցվում նաև ընտրությունների գաղտնիության նկատմամբ թերահավատության և ընտրության վերահսկելիության համոզմունքի առաջացումը, որը մեծացնում է պարտավորվածի վերահսկելիությունը և մեծացնում ընտրավարքի կարգավորման տեխնոլոգիաների արդյունավետությունը:

Բոլոր տեխնոլոգիաների իրականացման ժամանակ հնարավոր, իսկ հաճախ՝ անխուսափելի դժգոհության զգացման և ճնշվածության առաջացման հետևանքները կանխելու համար խթանվում է անպաշտպանության զգացումը, որը ետ է պահում ընտրասուբյեկտին որևէ տեղ դիմելուց և մատնում անօգնական հուսահատության վիճակի,

որը էականորեն մեծացնում է նրա կառավարելիությունը: Այս բոլոր տեխնոլոգիաների կիրառման ներքո հնարավոր է դառնում կիրառել ավելի ամբողջական էֆեկտ ապահովող տեխնոլոգիա՝ ընտրակաշառման նորմավորումը, երբ ընտրակաշառումը ընտրասուբյեկտների մոտ ընդունվում է որպես ոչ արտասովոր նորմ: Վերջինս դրսևորվում և խթանվում է ընտրակաշառքի, որպես բիզնեսի ընկալմամբ, ընտրակաշառման նկատմամբ ակնկալիք դարձած սովորությամբ և լոյալ վերաբերմունքով:

Ընտրական հանձնաժողովների շահադիտական կառավարումը: Ի տարբերություն ընտրողների վարքի կարգավորման տեխնոլոգիաների, ընտրական հանձնաժողովների շահադիտական կառավարումը հիմնականում իրականացվում է բաշխման ցանկալի տվյալներ գրանցելու նպատակով անկախ փաստացի ստացված ընտրաձայներից: Այս գործընթացը իրականացնելու համար տեխնոլոգիայի կիրառման սուբյեկտը նախ պետք է «յուրայնացնի» հանձնաժողովը կամ ունենա որոշակի լծակներ հանձնաժողովի վրա: Դրանք կատարվում են հանձնաժողովի ձևավորման կարգի շահարկման, հանձնաժողովի և վստահված անձանց կաշառման, հանձնաժողովի և վստահաված անձանց գործելակարգի շահարկման միջոցով: Դրանց իրականացումը ենթադրում է հանձնաժողովի պրոֆեսիոնալ թերորակության և պատասխանատվության վերացականության շահարկում, գուցե նաև դիտորդական խմբերի լոյալացում:

Վերոնշյալ տեխնոլոգիաների միջոցով ապահովելով «յուրայնացված» հանձնաժողով իրականացվում է ընտրաձայների սխալ հաշվարկ, ընտրողների և ընտրացուցակի հետ մեքենայություններ, «դավադիր պայմանավորվածություն», նպատակաուղղված թերացումներ ընտրությունների նախապատրաստական շրջանում, հոգեբանական ճնշումներ, քվեների հաշվման գործընթացի հայեցողական լուսաբանում, տեղամասային ընտրությունների անվավերացման ակցիաներ և սրանց հետ փոխկապակցված այլ տեխնոլոգիաներ, այդ թվում և «կարուսելը»:

Նասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաներ: Նասարակական կարծիքի զանգվածային կարգավորման տեխնոլոգիաները նպատակ ունեն կառավարել հասարակական կարծիքի ձևավորման գործընթացը այնպիսի եղանակներով, որոնք չնայած ունեն բարձր էֆեկտիվություն, սակայն չեն բխում, կամ հակասում են դեմոկրատականությանը: Այս տեխնոլոգիան տարբեր ձևով է դրսևորվում ինչպես նախընտրական ժամանակաշրջանում, այնպես էլ ընտրությունների ժամանակ և դրանից հետո: Այս տեխնոլոգիաները ներառում են դեզինֆորմացիան, ինֆորմացիոն շրջափակումը, կարծիքի թելադրումը կամ ինֆորմացիոն քաոսը: Առանձնահատուկ նշանակություն ունի այս տեխնոլոգիաներում հեղինակություն վայելող արժեքների շահարկումը, ինչպիսին է գիտականությունը: Վերջինս դրսևորվում է պսևդոսոցիոլոգիական հարցումների զանգվածային հրապարակումներում: Այս տեխնոլոգիաները հենվում են քաղաքական ուժերի համար լրատվամիջոցների անահավասար մատչելիության և լրատվության անպատասխանատվության վրա: Առաջինը պայմանավորված է հեռարձակման ալիքների բաշխման սկզբունքով: Վերջինիս կշիռը մեծ է հատկապես պոպուլիզմի և լրատվամիջոցների գործառնության սենսացիոն սկզբունքներով առաջնորդման, ինչպես նաև դեզինֆորմացիայի ժամանակ:

Այս տեխնոլոգիաների կիառումը առաջացնում է երկակի արդյունք: Առաջինը կայանում է այն բանում, որ ընտրողները կողմնորոշվում են միակողմանի ինֆորմացիայի վրա հենվելով: Երկրորդ դեպքում առաջանում է հիասթափություն և թերահավատություն զանգվածային լրատվամիջոցների նկատմամբ և մեծանում է այլընտրանքային տեղեկատվության եղանակների, մասնավորապես, ասեկոսների և միջանձնային տեղեկատվության դերը կարծիքի ձևավորման գործում:

Ընտրության արդյունքների իրացում: Ընտրության արդյունքների իրացումը ենթադրում է հասարակական կարծիքի մշակում լեգիտիմացման նպատակներով և արդյունքների վրա ազդելու հնարավորություն ունեցող ուժերի հետ բանակցություններ: Երկու գործունեությունն էլ նպատակ ունեն կանխել ընտրության արդյունքների հետ անհամաձայնությամբ պայմանավորված միջամտությունները, որոնք կարող են խանգարել արդյունքների հասարակական հետևանքներին: Այս գործընթացում կարևոր

նշանակություն ունեն հակամիտինգային տեխնոլոգիաները, որոնք հենվում են քաղաքական ուժերի ինստրումենտալիզմի, միտինգային տեխնոլոգիաների վերջնարդյունքի ձևափոխման պարբերական պրակտիկայի, կարծիքի զանգվածային թելադրման տեխնոլոգիաների ուղղորդումը հակահարված քարոզչության համար, կանխարգելիչ գործունեության և մակրոտեխնոլոգիաների վրա, ինչպիսիք են էլեկտրատի պատակտումը կամ սցենարները:

Միտինգային տեխնոլոգիաներն իրենք ենթադրում են հակամիտինգային տեխնոլոգիաներ, այն առումով, որ դրանք օգտագործվում են սոցիալական լարվածության թուլացման նպատակով: Միևնույն ժամանակ այդ տեխնոլոգիաների կանխարգելման նպատակով իրականացվում է «մեդիակոնցիպիայի մեծ ծավալի ապահովման» գործոնը, ինչը արդյունավետ է հնարավոր բողոքները կանխելու առումով: Վերոնշյալ տեխնոլոգիաների քիչ արդյունավետության դեպքում կիրառվում է ամբոյսի վարքի կառավարման ուժային մեթոդներ՝ ամբոյսի ձևավորումը, վարքը և վտանք ներկայացնող ակցիաները կանխելու նպատակով:

Մակրոտեխնոլոգիաներ: Մակրոտեխնոլոգիաները ենթադրում են ընտրագործընթացի հիմնական խնդրի լուծումը մակրոմակարդակում: Դրանց հաջող իրականացումը հնարավորություն է տալիս կիրառողին լինել հաղթող ընտրությունների իրական ընթացքից անկախ: Այս տեխնոլոգիաների շարքում կարելի է նշել սցենարները, որոնց իրականացման տարբեր մոդելներից ՀՀ-ում հավանական ենք համարում երեքը՝ սիտուատիվ սցենարներ սիտուատիվ յուրայնացված դերակատարներով, կանխամտածված սցենարներ ի սկզբանե յուրայնացված կամ նպատակային դերակատարներով կամ դրանց միախառնված տարբերակը: Հաջող մակրոտեխնոլոգիան դեմոկրատականություն չապահովող ընտրահիստիտուտի հայեցակարգն է, որը հնարավորություն է տալիս էականորեն շեղել ներկայացուցչական մարմինների և ներկայացված ընտրագանգվածի համապատասխանությունը, ինչպես նաև վերջիններիս շահերի աղեկված ներկայացումը առաջինների կողմից: Դրան են նպաստում մեծագույն փոքրամասնության իշխանության էֆեկտը, այլընտրանքային երեսփոխանությունը և ավելցուքային ձայների յուրացումը մեծ ուժերի կողմից: Մակրոտեխնոլոգիաների կորևոր տեսակ է հանդիսանում վերալուծական կառույցների իշխանության հակադեմոկրատականությունը ՀՀ-ում, որը ենթադրում է դրանց կամ դրանք ներկայացնող կառույցների շահադիտական գործունեություն և մեծ ազդեցության շնորհիվ արվող թելադրանքներ, որոնք կանխորոշում են ընտրությունների ընթացքը:

Ընդհանուր գործոններ: ՀՀ-ում կիրառվող բոլոր հակադեմոկրատական տեխնոլոգիաները խթանվում են յուրահաստուկ և ընդհանուր գործոններով: Յուրահաստուկ գործոնները ազդում են միայն տվյալ տեխնոլոգիայի կամ տեխնոլոգիաների խմբի վրա, իսկ ընդհանուրը բոլոր տեխնոլոգիաների վրա: Ընդհանուր գործոններ են իշխանության երեք թևերի վերահսկողության և անկախության պրոբլեմը, քաղաքական դաշտի չկայացվածությունը և քաղաքական ուժերի հակվածությունները և հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ պայքարելու քաղաքական կամքի անբավարարությունը հաղթահարելու համար հակառակ քաղաքական կամքը:

Հակադեմոկրատական տեխնոլոգիաների դեմ պայքարի հանարավոր եղանակները ՀՀ-ում: Տեխնոլոգիաների դեմ պայքարը ունի մի քանի ուղղություններ՝ օրենսդրական փոփոխություններ, տեղեկատվական և խորհրդատվական աշխատանքներ, քարոզչություն մենթալիտետային հղկման համար, քաղաքական լուծումներ և վերոնշյալ բոլոր մոտեցումների արդյունավետ սինթեզման հնարավորություն տվող ինստիտուցիոնալ ինժեներիա:

Օրենսդրական փոփոխություններն են՝

2. Իշխանության երեք թևերի փոխադարձ վերահսկման մեխանիզմների կատարելագործում և ադապտացիա ՀՀ առանձնահատկությունների հետ
3. Հանձնաժողովի ձևավորման կարգի փոխում

4. Հանձնաժողովում իշխանության և ընդհանրության փոխադարձ վերահսկողության ապահովում՝ երկկողմանի ազդեցության լծակների ապահովում
5. Մեծամասնական տեղերի նվազեցում
6. Ընտրական հանձնաժողովների պրոֆեսիոնալիզմի վրա հենվող ինստիտուտի ստեղծում
7. Ընտրական հանձնաժողովների ինստիտուտի ստեղծում պետ ծառայության համակարգում
8. Ազգային վիճակագրական ծառայության ներառում գործընթացին
9. Պայքարը այլընտրանքային երեսփոխանության դեմ ետկանչի մեխանիզմների ստեղծմամբ
10. Անցողիկության շեմի իջեցում, ինչը թույլ կտա խուսափել փոքր քաղաքական ուժերի ձայների յուրացումից մեծերի կողմից և կդարձնի ընտրահամակարգը ավելի զգայուն փոքր սոցիալական խմբերի շահերի ներկայացվածության առումով
11. Օրենսդրությամբ նախատեսել պրակտիկայում ավելի կիրառելի սանկցիաներ կաշառքի գործընթացին բոլոր մասնակիցների նկատմամբ
12. Ընտրության գաղտնիության ապահովում
13. Պայմանական նշանների հնարավորության բացառում
14. Խախտումների նկատմամբ սանկցիաների պատշաճ խստացում
15. Ընտրատեղամասերում հանձնաժողովների կողմից ընտրաձայների հաշվարկման մեխանիզմների կատարելագործում, մասնավորապես պարբերական միջանկյալ կնքման և ամփոփման մեխանիզմի ներմուծմամբ

Քարոզչական աշխատանքներն ուղղված են՝ նյութական կաշառքի, ճնշումների, պարտավորեցման, անտարբերության քաղաքական կեցվածքի, հանձնաժողովի աշխատանքների, պաշտոնյաների, լրատվամիջոցների գործառնությանը խոչընդոտող մտածելակերպի տարրերի դեմ: Դրանք ներառում են որոշակի ուղղվածության դրույթների ամրապնդումը ընտրասուբյեկտի դիրքորոշումներում: Աշխատանքը նույնիսկ արդեն ներառում այս դրույթների որոշակի խմբի առանձնացման և դրանց հիման վրա նպատակային քարոզչական նյութերի պատրաստման փորձը, որի կիրառման ընթացքը կտա փորձառություն և հիմք կհանդիսասանա հիմնական աշխատանքների ավելի մեծ և բազմապրոֆիլ ձևով իրականացնելու և ամբողջական արդյունք ստանալու համար:

Դասընթացները պետք է անցկացնել հետևյալ ուղղություններով՝

1. Հանձնաժողովի անդամների համար հատուկ մասնագիտացված որակավորման լիազորությամբ դասընթացների անցկացման մոնոպոլիայի վերացում
2. Հատուկ մասնագիտացված դասընթացների անցկացում վստահված անձանց համար միջազգային կամ հասարակական կազմակերպությունների կողմից, որ նպատակ ունի մեծացնել ընդհանուր իրազեկության և հոգեբանական պատրաստվածության աստիճանը տեխնոլոգիաների դեմ պայքարելու համար
3. Հատուկ մասնագիտացված դասընթացների անցկացում վստահված անձանց համար քաղաքական ուժերի ֆինանսավորմամբ, որ նպատակ ունի քաղաքական ուժերի համար պատրաստել արդյունավետ գործող վստահված անձանց
4. Ընտրասուբյեկտների իրազեկության բարձրացում հոգեբանական ճնշումների և ապատեղեկատվության դեմ պայքարելու համար

Ընդհանուր փոփոխություններն են՝

1. Ընտրողներին ավելի իրատեսական, կոնկրետ և ընկալելի խոստումներ
2. Վստահված անձանց և հանձնաժողովի անդամների միջոցով օպերատիվ կապի ապահովում խախտումների արագ արձագանքում ապահովելու համար
3. Դիտորդների քանակի ավելացում, որ կբերի կեղծիքների «զնի թանկացման»

4. Մեծամասնականի ազդեցության նվազեցում և համամասնականի ավելի կազմակերպվածություն

Հիմնական քաղաքական լուծումներն են՝

1. Քաղաքական ուժերի պայքարը հակառակորդներին առավելություն տվող տեխնոլոգիաների դեմ:
2. Քաղաքական ուժերի՝ տեխնոլոգիաների չկիրառման մեջ շահագրգիռ մասի համախմբված պայքար՝ ներկուսակցական դեմոկրատիա և պայքար ապաքաղաքական ուժերի դեմ:
3. Տեխնոլոգիաների դեմ պայքարի ռեֆորմիստական քայլերը, որպես քաղաքական ուժի հեղինակության բարձրացման և ընտրարշավի միջոց:
4. Արտաքին ճնշում համապատասխան քաղաքական կամքի առաջացման համար, ինչը ցանկալի չի համարվում հանրապետության գլոբալ շահերի վնասման նկատառումով:

Ինստիտուցիոնալ ինժեներիա: Ընտրահինստիտուտի շտկման առավել ամբողջական և վերոնշյալ եղանակների առավել արդյունավետ փոխարինողը կարող է հանդիսանալ ինստիտուցիոնալ ինժեներիայի մոտեցումը, որը հենվում է ընտրահինստիտուտի միկրոտոցիոլոգիական վերլուծության և դերաստատուսային մեխանիզմների կիրառման վրա: Այս մոտեցումը ենթադրում է ընտրահինստիտուտի դերերի նորմալ կատարման ապահովումը նորմաարժեքային և սանկցիավորման համակարգի վերակառուցման միջոցով, որ ներառում է մոտիվացման համակարգի վերակառուցում: Այս գործընթացը ընտրահինստիտուտի գործառնության իրավական, սոցիոմշակութային, քաղաքական և այլ տիպի կարգավորիչների ինտեգրումը և փոխադաստացումն է ընտրահինստիտուտի գործառնության կարգավորման մեկ ամբողջական համակարգի մեջ:

*

*

*

Վերջում ավելորդ չէ ասել, որ հակադեմոկրատական տեխնոլոգիաների պրակտիկան ՀՀ-ում մեկ անգամ ևս նորովի է առաջացնում այն հարցը, թե ինչ է դեմոկրատիան: Արդյո՞ք դեմոկրատիան պրակտիկայում մեթոդների ամբողջություն է, որոնցով **ժողովուրդը** իրականացնում է **իր իշխանությունը**: Միգուցե դեմոկրատիան մեթոդների ամբողջություն է, որոնցով իրականացվում է **իշխանություն ժողովրդի վրա**: Իսկ գուցե դեմոկրատիան մեթոդների ամբողջություն է, որոնցով կատարվում է **ցուցադրակա՞ն** իշխանությունը, որով **քողարկվու՞մ** է իրական իշխանությունը:

ՀՀ-ում հակադեմոկրատական ընտրական տեխնոլոգիաների ուսումնասիրության ամփոփումը կրկին հղում է մի գաղափար: Ավելի շուտ, դեմոկրատիան այնպիսի **տեխնոլոգիաների** միջոցով իրականացվող **արդյունավետ իշխանություն է ժողովրդի վրա**, որ թույլ է տալիս գուգահեռաբար իրականացնել **ցուցադրական** այնպիսի **իշխանություն**, որ հասարակությանը **թվա**, թե **ժողովուրդն է իրականացնում իր իշխանությունը**:

